

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



Ավետիք Համետի Հարությունյանը ծնվել է 1985թ. դեկտեմբերի 5-ին ԼՂՀ Ասկերանի շրջանի Շոշ գյուղում՝ մանկավարժի ընտանիքում:

2000թ. գերազանցությամբ ավարտել է Շոշի միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանը, 2002թ.՝ Արցախի պետական համալսարանին (ԱրՊՀ) կից վարժարանը: 2008թ. գերազանցությամբ ավարտել է ԱրՊՀ տնտեսաիրավաբանական ֆակուլտետի «իրավագիտություն» բաժինը, 2010թ.՝ պաշտպանել է «ԼՂՀ Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունները» վերտառությամբ մագիստրոսական թեզը՝ ստանալով մագիստրոսի աստիճան:

2010-2013թթ. սովորել է ԱրՊՀ ասպիրանտուրայում: 2015թ. պաշտպանել է «ԼՂՀ Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունները և սահմանադրականության հետագա զարգացման հիմնախնդիրները» վերտառությամբ ատենախոսությունը՝ ստանալով իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2010թ. առայսօր դասավանդում է ԱրՊՀ-ում, 2014թ.-ից՝ Մեսրոպ Մաշտոց համալսարանում:

2013-2015թթ. եղել է ՀՀ երիտասարդական խորհրդարանի պատգամավոր:

2014-2015թթ. հանդիսացել է ԱրՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ:

2003-2005թթ. ծառայել է ԼՂՀ զինված ուժերում:

2007-2009թթ. աշխատել է մասնավոր ընկերությունում՝ որպես իրավաբան:

2010-2016թթ. ԼՂՀ Նախագահի աշխատակազմում զբաղեցրել է տարբեր պաշտոններ: 2016 թվականից աշխատում է որպես աշխատակազմի Անվտանգության խորհրդի աշխատանքների ապահովման բաժնի վարիչ:

Նրա նախաձեռնությամբ 2015թ. հիմնադրվել է «Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» հասարակական կազմակերպությունը:

Մասնակցել է Արցախում, Հայաստանում և նրա սահմաններից դուրս կազմակերպված երկու տասնյակից ավելի գիտաժողովների, համաժողովների և սեմինարների, պարգևատրվել պատվոգրերով և հավաստագրերով:

20-ից ավելի գիտական հոդվածների հեղինակ է, որոնց մի մասը տպագրվել է արտասահմանյան պարբերականներում:

2006թ. դեկտեմբերի 2-ին Ստեփանակերտում կայացած «Մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները» ուսանողական առաջին գիտական կոնֆերանսում գրավել է առաջին մրցանակային տեղը:

2013 թվականի դեկտեմբերի 3-ին Ռուսաստանի Դաշնության Կրասնոյարսկի մարզի կրթության և գիտության նախարարության ու Երրորդ արբիտրաժային դատարանի կողմից կազմակերպված երիտասարդ իրավաբան-գիտնականների «Իրավաբանական IQ» երկրորդ միջազգային մրցույթում հաղթող է ճանաչվել «ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքի լեգիտիմությունը» աշխատանքի համար:

Ամուսնացած է, ունի մեկ որդի:

ՄԱՍՆԱԿԱՆ ԳԻՏՈՒՄ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄԱՍՆԱԿԱՆ ԳԻՏՈՒՄ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄԱՍՆԱԿԱՆ ԳԻՏՈՒՄ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵՏԻՔ ՀԱՄԵՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՎԵՏԻՔ ՀԱՄԵՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ (ԱՐՅԱԽԻ) ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ



ԱՎԵՏԻՔ ՀԱՄԼԵՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ (ԱՐՑԱԽԻ)
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Երևան
2016

ՀՏԴ 342.5
ԳՄԴ 67.400
Հ 422

Հրատարակության է երաշխավորվել Հայաստանի
Հանրապետության սահմանադրական իրավունքի և
Արցախի գիտական կենտրոնների կողմից

Գիրքը հրատարակվում է ՀՀ Նախագահի հովանու
ներքո իրականացվող Երիտասարդ գիտնականների
աջակցության ծրագրի շրջանակներում՝ Հայաստանի
Երիտասարդական հիմնադրամի ֆինանսավորմամբ:



Գիտական խորհրդատու՝

Գ.Գ. Հարությունյան - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գրախոսներ՝

Գ.Բ. Դանիելյան - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վ.Բ. Ռոմանովսկայա - իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հարությունյան Ավետիք Համլետի

Հ 422 Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունները և սահմանադրականության հետագա զարգացման հիմնախնդիրները / Ավետիք Համլետի Հարությունյան.- Եր.: Անտարես, 2016.- 240 էջ:

Մենագրությունը նվիրված է Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության Սահմանադրության արժեքանական ընկալումների և առանձնահատկությունների բացահայտման, ԼՂՀ սահմանադրական լուծումներում սահմանադրական հիմնարար արժեքների ու սկզբունքների իրացման, ինչպես նաև սահմանադրականության հետագա զարգացման հիմնախնդիրներին: Աշխատության մեջ ուսումնասիրելով քննարկվող հիմնահարցերը՝ Հեղինակի կողմից արվում են ոչ միայն տեսական ընդհանրացումներ, այլև ներկայացվում են մի շարք գործնական առաջարկություններ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության Սահմանադրության, օրենսդրության և իրավակիրառական պրակտիկայի կատարելագործման ուղղությամբ:

Նախատեսված է սահմանադրական իրավունքի, իրավունքի տեսության և փիլիսոփայության, քաղաքագիտության հարցերով հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակի համար:

ISBN 978-9939-51-957-9

ՀՏԴ 342.5
ԳՄԴ 67.400

© Հարությունյան Ա., 2016
© «Անտարես», 2016



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ԳԼՈՒԽ 1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ	
§ 1. «Սահմանադրական արժեքանություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը	10
§ 2. ԼՂՀ Սահմանադրության արժեքանական ընկալումները	36
§ 3. ԼՂՀ Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունների հիմնական բնութագրիչները ...	62
ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԸ ԼՂՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐՈՒՄ	
§ 1. Իրավունքի գերակայությունը որպես սահմանադրական արժեք	77
§ 2. Ժողովրդաիշխանությունը որպես ժամանակակից պետությունների կազմակերպման հիմնարար սկզբունք	98
§ 3. Իշխանությունների տարանջատումը ԼՂՀ սահմանադրական լուծումներում	122
ԳԼՈՒԽ 3. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ	
§ 1. ԼՂՀ Սահմանադրության, առկա իրավական համակարգի և իրավակիրառական պրակտիկայի հակասությունների հաղթահարման ուղիները	141
§ 2. Սահմանադրական արդարադատության համակարգի հետագա զարգացման հիմնախնդիրները	161
ԱՄՓՈՓՈՒՄ	175
ՔԵՅՈՒՄԵ	192
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	207
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	226

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակական հարաբերությունների սահմանադրականացման հիմնախնդիրների լուծումն առանց Սահմանադրության արժեքանական խոր վերլուծությունների՝ գրեթե անհնարին է: Սահմանադրական զարգացումների արդի հիմնախնդիրների մեջ առանձնահատուկ կարևորվում է Սահմանադրության և նրանում ամրագրված սահմանադրական հիմնարար արժեքների ու սկզբունքների բովանդակության բացահայտումը, ընկալումը և իրական կյանքի կանոն դարձնելը, որը վերջնարդյունքում պետք է նպաստի երկրում սահմանադրականության հաստատմանը: Վերջին տասնամյակներում հիշյալ հիմնահարցն իր ուրույն տեղն է զբաղեցրել միջազգային մի շարք գիտաժողովների օրակարգերում, դարձել գիտական հետազոտության առարկա և հրատարակվել գրքի, ամսագրի կամ գիտական հոդվածների ժողովածուի տեսքով:

Այս հիմնախնդիրն առնչվող տեսական և գործնական շատ հարցեր խորը գիտական վերլուծության ու ընդհանրացման անհրաժեշտություն ունեն: Հիմնախնդիրն առավել հրատապ է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, որտեղ սահմանադրական հիմնարար արժեքներն ունեն երկու տասնամյակից ավելի պատմություն, սակայն հատկապես 2006 թվականի դեկտեմբերի 10-ի Սահմանադրության ընդունումից հետո դրանք երբևէ գիտական հետազոտության առարկա չեն դարձել² այն դեպքում, երբ սահմանադրական արժեքները

Նվիրվում է Արցախի Հանրապետության անկախության 25-ամյակին և Սահմանադրության ընդունման 10-ամյակին

¹ Հարությունյան Գ., Սահմանադրական հիմնարար արժեքների իրացման երաշխիքները պետական քաղաքականության մակարդակում և հասարակական պրակտիկայում // Օրենք և իրականություն, թիվ 10, հոկտեմբեր, 2008թ., էջ 1:

² ԼՂՀ Սահմանադրության ընդունումից հետո սահմանադրական հիմնախնդիրներին նվիրված առաջին գիտական աշխատանքն իրականացվել է Ա.Դանիելյանի կողմից, սակայն ոչ արժեքանական տեսանկյունից: Տե՛ս Ա.Դանիելյան, Մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման կարգն ու առանձնահատկությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, Ատենախոսություն, Երևան, 2014, 190 էջ:

կիսալուծումների ձևով իրենց ամրագրումն են գտնում օրենսդրության մեջ ու գրեթե չեն մարմնավորվում իրավակիրառական պրակտիկայում, այնինչ Հայաստանի Հանրապետության և մի շարք այլ երկրների փորձը վկայում է, որ գիտականորեն հիմնավորվելու, շիտակ ընկալվելու և մեկնաբանություն ստանալու դեպքում սահմանադրական արժեքները հավակնում են դառնալ հասարակական հարաբերությունների կարգավորման կորիզն ու երկրում սահմանադրականության հաստատման գրավականը:

Այս առումով առաջին հերթին հարկ է ուշադրություն դարձնել ԼՂՀ Սահմանադրության արժեքանական ընկալման հիմնահարցին, որի աստիճանով է պայմանավորված քաղաքացիների կողմից երկրի Հիմնական օրենքի նկատմամբ համարժեք վերաբերմունքի դրսևորումը: Մյուս կողմից անհրաժեշտ է բացահայտել ԼՂՀ Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունները, որը թույլ կտա հետխորհրդային տարածաշրջանի չճանաչված պետությունների Հիմնական օրենքների հետ համեմատության լույսի ներքո բացահայտել ԼՂՀ Սահմանադրության այն հիմնական արժեքանական գծերը, որոնք կարող են նպաստել մյուս չճանաչված երկրներից շահեկանորեն տարբերվող ժողովրդաիրավական պետության կառուցմանը:

ԼՂՀ Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունների համակողմանի գիտական հետազոտությունը բխում է տեսական ու գործնական բնույթի այնպիսի հարցադրումներին սպառիչ պատասխաններ առաջադրելու անխուսափելիությունից, որոնք կարող են նպաստել սահմանադրականության զարգացման առավել արդյունավետ ուղիների մշակմանը, չճանաչված պետության պարագայում Հիմնական օրենքի արժեքանական առանձնահատկությունների սահմանների հստակեցմանն ու ուղղորդմանը, ինչպես նաև Սահմանադրության արժեքանական ընկալմանն ու նրանում բովանդակվող արժեքների համարժեք իրացմանը:

Հարկ է նկատել, որ Սահմանադրության փաստացի առկայությունն ինքնին դեռևս որևէ հարց չի լուծում, քանի դեռ օրենսդրությունն ամբողջապես չի համապատասխանում Սահմանադրությանը, սահմանադրական արժեքները չեն կազմում օրենսդրության միջուկը, իսկ իրավակիրառական պրակտիկան հիմնված չէ Սահմանադրության և դրա արժեքային համակարգի հաշվառմամբ ստեղծված օրենսդրության անշեղ կատարման վրա: Այս տեսանկյունից և՛ Սահմանադրության, և՛ օրենսդրության մեջ առկա են բացեր, որոնք այս կամ այն չափով խոչընդոտում են ներկայիս բովանդակությամբ Սահմանադրության դրույթների իրացմանն ու երկրում իրական ժողովրդաիրավական կարգերի հաստատմանը:

Վերջին ժամանակներում արժեքները մի տեսակ դարձել են ամբողջ աշխարհի սահմանադրաիրավական զարգացման չափման միավոր, որոնք ներկայիս համաշխարհայնացման գործընթացներում ունեն տարբեր մակարդակների հարաբերությունների կարգավորման յուրահատուկ ներուժ, և առանձին վերցրած այդ սահմանադրական արժեքների իրացման մակարդակով է պայմանավորված երկրում սահմանադրականության հաստատումն ու ամրապնդումը: Այս իմաստով բացառիկ կարևորություն ունեցող քննարկվող հիմնահարցերը սահմանադրագիտության զարգացման ներկա փուլում պահանջում են լուրջ ուսումնասիրություն, ինչն էլ վկայում է ընտրված թեմայի արդիականության մասին:

Թեման արդիական է նաև նրանով, որ սահմանադրական հիմնարար արժեքներն իրենց ուրույն տեղը չեն գտնում սահմանադրական արդարադատության իրականացման ընթացքում, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես՝ դիմող սուբյեկտների պասիվ վարքագծով, առանց երկրի առանձնահատկությունները հաշվի առնելու սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի մոդելի ընտրությամբ, պետության չճանաչվածությամբ ու դրանից բխող մի շարք հանգամանքներով:

Սույն հետազոտությունը փորձ է ուսումնասիրելու երկրի Հիմնական օրենքը, վերլուծելու դրա ընդունումից հետո իրականացված աշխատանքները և, հիմնվելով սահմանադրական արժեքանության վրա, մի կողմից ներկայացնելու ԼՂՀ Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունները, մյուս կողմից՝ նախանշելու այն քայլերը, որոնց իրականացման պարագայում Սահմանադրությունը կդառնա ապրող իրողություն: Ըստ այդմ՝ սույն ուսումնասիրության շրջանակներում արդիական է ոչ միայն բացահայտել սահմանադրական արժեքանության դերն ու նշանակությունը սահմանադրական զարգացումների գործում, այլև գործնական մոտեցումներ մշակել ԼՂՀ-ում սահմանադրականության ամրապնդման հիմնախնդիրների լուծման առնչությամբ:

Աշխատության գիտական նորույթն այն է, որ 2006թ. դեկտեմբերի 10-ին ԼՂՀ Սահմանադրության ընդունումից հետո սա առաջին համալիր հետազոտությունն է, որում բացահայտվել են ԼՂՀ Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունները, սահմանադրական հիմնարար արժեքների տեղն ու դերը միջազգային հանրության կողմից դեռևս չճանաչված³ երկրում սահմանադրական արդարադատության իրականացման ու սահմանադրականության հաստատման գործում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում առաջին անգամ գիտական հետազոտության առարկա է դարձել օրենսդրության մեջ սահմանադրական արժեքների իրացման հիմնախնդիրը: Փաստական նյութի համակողմանի ուսումնասիրությամբ հիմնավորվել է, որ առանց օրենսդրության մեջ համարժեք փոփոխություններ և լրացումներ կատարելու անհնար է իրավական, ժողովրդավարական պետության հիմնարար սկզբունքների և իրավունքի գերակայության իրացումը:

³ Հարկ է նկատել, որ Արցախի Հանրապետության անկախությունը ճանաչել են ԱՄՆ-ի Մասսաչուսեթս, Ռոդ-Այլենդ, Մեն, Լուիզիանա, Կալիֆոռնիա, Ջորջիա, Հավայի նահանգները, Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգը, Բասկերի երկիրը, ինչպես նաև ամերիկյան Լոս Անջելես քաղաքը:

Փորձ է արվել բացահայտել «սահմանադրական արժեքանություն» հասկացության բովանդակությունը և մշակվել է դրա ընդհանուր բնորոշումը, հստակեցվել օբյեկտը, սուբյեկտը և առարկան: Աշխատանքում համակողմանի ուսումնասիրվել են պետության հռչակման օրվանից հիմնարար իրավական փաստաթղթերում սահմանադրական արժեքների ձևավորման ու ամրագրման հարցը, ԼՂՀ-ում սահմանադրական արդարադատության գործառնության և ներկայիս վիճակի հետ կապված հիմնախնդիրները, բացահայտվել սահմանադրական արդարադատության գործունակությանը խոչընդոտող հանգամանքները և ներկայացվել գործնական առաջարկություններ դրանց լուծման ուղղությամբ:

Գիտական որոշակի նորույթ են բովանդակում նաև սահմանադրական և օրենսդրական նորմերի ուսումնասիրության արդյունքում փոփոխություններ կատարելու հիմնավորումներն ու կոնկրետ առաջարկությունները, ինչպես նաև ներկայացվող հավելվածները:

Մենագրության նյութերը կարող են օգտագործվել «սահմանադրական իրավունք», «համեմատական սահմանադրական իրավունք», «սահմանադրական վերահսկողություն», «իրավունքի փիլիսոփայություն», «սահմանադրական մշակույթ» դասընթացներում և հետագա գիտական հետազոտություններում, ինչպես նաև այն բոլոր դասընթացներում, որոնց հետազոտության առարկան որևէ կերպ առնչվում է Սահմանադրության արժեքանական ընկալումներին ու առանձնահատկություններին, սահմանադրական արժեքներին, սահմանադրական արդարադատությանն ու սահմանադրականության հարցերին: Հիմնախնդրի առնչությամբ կատարված վերլուծությունը, ներկայացված առաջարկություններն ու դրանց հիմնավորումները կարող են նպաստել նաև ԼՂՀ Սահմանադրության, օրենսդրության ու սահմանադրական արդարադատության գործընթացի կատարելագործմանը, ինչպես նաև երկրում սահմանադրականության ձևավորմանն ու հաստատմանը:

ԳԼՈՒԽ 1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԱ-ՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

§ 1. «Սահմանադրական արժեքանություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը

Արդի իրողություններում, երբ հասարակական հարաբերություններում տարբեր երևույթներ ձևախեղվելով կամ դրանց բովանդակությունն աղճատվելով կորցնում են իրենց իսկական նշանակությունը, և այդ երևույթները (արժեքները) իմաստավորման և վերաիմաստավորման անհրաժեշտություն ունեն՝ թելադրված հասարակության բնականոն զարգացմամբ և մարդկանց պահանջունքներով, իրավագիտության ոլորտում նորովի է կարևորվում այնպիսի գիտական ուղղության դերն ու նշանակությունը, ինչպիսին է իրավական արժեքանությունը: Հասարակական հարաբերությունների սահմանադրականացմանը զուգընթաց համանման կարևորություն է ստանում նաև սահմանադրական արժեքանությունը:

Վերջին տարիներին աշխարհի տարբեր երկրներում կազմակերպված միջազգային գիտաժողովների⁴ ընթացքում քննարկման առարկա է դարձել իրավական և սահմանադրական արժեքների հիմնախնդիրը, դրա վերաբերյալ հրատարակվել են բազմաթիվ գիտական հետազոտություններ⁵, սակայն այս

⁴ «Իրավունքի գոյաբանություն և արժեքանություն» ամենամյա միջազգային գիտաժողով, 19-20.10.2007թ., ք.Օմսկ: «Հիմնարար սահմանադրական արժեքները և հասարակական պրակտիկան» 13-րդ միջազգային գիտաժողով, 3-5.10.2008թ., ք.Երևան: «Սահմանադրական արժեքներ. բովանդակությունը և իրացման հիմնախնդիրները» միջազգային գիտագործնական կոնֆերանս, 4-6.12.2008թ., ք.Մոսկվա:

⁵ Հարությունյան Գ., Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, Նժար, 2005, 404 էջ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / Ընդհ. խմբ. Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի, Երևան, Իրավունք,

համատեքստում չկա համալիր մոտեցում հատկապես չճանաչված պետություններում սահմանադրական արժեքանության

2010, 1086 էջ: Խաչատրյան Ս., Իրավունքի արժեքավոր հատկությունները (արսիդոլոգիական հիմնահարցեր), Երևան, Արտագես, 2002, 160 էջ: Ստեփանյան Հ., Իրավունքի տեսության հիմնահարցերը. ֆենոմենոլոգիական մոտեցում, Երևան, 2006, 656 էջ: Автономов А., Конституция как ценность // Сравнительное конституционное обозрение, 2008, № 3(64), էջ 50-58: Автономов А., Ценность Конституции // Государство и право, 2009, № 3, էջ 5-11: Альманах, Конституционное правосудие в новом тысячелетии, Ер., Нжар, 2008, 312 էջ: Бабенко А., Правовые ценности и освоение их личностью: Автореф. дис. ... д-ра юрид. наук, М., 2002, 46 էջ: Двадцать лет Конституции Российской Федерации: монография / отв. ред. А.Лисицын-Светланов, М., Норма, 2013, 256 էջ: Жуков В., Введение в юридическую аксиологию: вопросы методологии // Государство и право, 2009, № 6, էջ 20-31.: Зорькин В., Аксиологические аспекты Конституции России // Сравнительное конституционное обозрение, 2008, №4(65), էջ 7-20: Комментарий к Конституции РФ / Под ред. Зорькина В., Лазарева Л. М., Эксмо, 2009, 1056 էջ: Конституционные ценности в теории и судебной практике: Сборник докладов, М., Институт права и публичной политики, 2009, 234 էջ: Конституционные ценности: содержание и проблемы реализации. Материалы Международной научно-теоретической конференции, 4-6 декабря, 2008. В 2-х т. Т.1., Т.2. / Под. ред. Н.Витрука, Л.Нудненко, М., Российская академия правосудия, 2010: Крусс В., Российская конституционная аксиология: актуальность и перспективы // Конституционное и муниципальное право, 2007, №2, էջ 7-14.: Малько М., Предмет конституционной аксиологии // Вестник Челябинского государственного университета, 2010, №19(200), Право. Вып. 24, էջ 34-37: Мартышин О., Проблема ценностей в теории государства и права // Государство и право, №10, 2004, էջ 5-14: Неновски Н., Право и ценности. Пер. с болг./ Вступ. ст. и пер. В.Сафронова. Под ред. В.Зорькина, М., Прогресс, 1987, 248 էջ: Политико-правовые ценности: история и современность. Под. ред. В.Нерсисянца, М.: Эдиториал УРСС, 2000, 256 էջ: Пресняков М., Конституционная аксиология: к вопросу о сущности конституционных ценностей // Современное право, 2009, № 10, էջ 13-17: Снежко О., Правовая природа конституционных ценностей современной России // Сравнительное конституционное обозрение, 2005, №2(51), էջ 13-19: Чиркин В., Общечеловеческие ценности и современное государство // Государство и право, 2002, №2, էջ 5-13: Шарнина Л., Человек, его права и свободы как высшая ценность // Конституционное и муниципальное право, 2009, №11, էջ 23-27: New millenium constitutionalism: paradigms of reality and challenges. Published on the Initiative and with a Foreword of Dr. G.Harutyunyan, NJAR, Yerevan, 2013, 526 էջ:

և նրա առանձին տարրերի իմաստավորման նկատմամբ, որի ուսումնասիրությունն առավել քան արդիական է:

Նախքան իրավական արժեքանության և սահմանադրական արժեքանության սահմանադրաիրավական բովանդակությանն անդրադառնալը, հարկ ենք համարում բացահայտել «արժեքի» և նրա հետազոտությամբ զբաղվող գիտության՝ «արժեքանության» իմացաբանական բնույթն ու նշանակությունը:

Արժեքանությունը⁶ (աքսիոլոգիա) փիլիսոփայության այն բաժիններից է, որը լինելով երիտասարդ գիտաճյուղ՝ իր վրա է սևեռել նաև իրավագետների ուշադրությունը, որի արդյունքներից մեկը կարելի է համարել այն, որ իրավագիտության մեջ նույնպես ձեռք է բերել մեծ հետաքրքրություն, կարևորություն, և վերջին ժամանակաշրջանում մի շարք գիտական աշխատություններում ուղղակի թե անուղղակի անդրադարձ է կատարվել այս խնդիրներին՝ արժեքներին, իրավական ու սահմանադրական արժեքանությանը:

Արտասահմանյան գրականության մեջ օգտագործվող **«աքսիոլոգիա»** բառի հայերեն համարժեքը կարելի է համարել **արժեքանությունը**: Ամենալայն իմաստով **արժեքների** տակ սովորաբար հասկացվում է իրականության (իդեալական և նյութական աշխարհի փաստեր) երևույթներ, որոնք ինչ-որ նշանակություն ունեն հասարակության, նրա խմբերի և առանձին մարդկանց համար: Աքսիոլոգիան (հուն. **axia-արժեք** և **logos-ուսմունք** բառերից, այսինքն՝ **«ուսմունք արժեքների մասին»**) փիլիսոփայական ուսմունք է արժեքների բնության և հասարակության կյանքում դրանց դերի մասին: «Աքսիոլոգիա» եզրույթը մտցվել է 1902թ. ֆրանսիացի փիլիսոփա Պ.Լապիի կողմից, իսկ 1904թ. գերմանացի փիլիսոփա-իռացիոնալիստ Է. ֆոն Հարթմանն աքսիոլոգիան ներկայացրեց որպես փիլիսոփայության ճյուղերից

⁶ Գրականության մեջ որոշ դեպքերում (օրինակ՝ Ս.Հակոբյանի աշխատության մեջ, Վ.Աբրահամյանի թարգմանությամբ Վ.Կանկեի ներքոհիշյալ ձեռնարկում) որպես «աքսիոլոգիա» բառի հայերեն համարժեք օգտագործվում է «արժեքաբանությունը», սակայն մենք կողմնակից ենք «արժեքանություն» եզրույթի օգտագործմանը:

մեկը: Աքսիոլոգիան հաճախ անվանում են արժեքների փիլիսոփայություն կամ արժեքների տեսություն⁷:

Ուսումնասիրելով փիլիսոփայության պատմությունը՝ համոզվում ենք, որ, չնայած արժեքի և դրան մոտ հասկացության՝ բարիքի մասին խոսվել է դեռևս հնադարում, սակայն արժեքանությունը որպես ինքնուրույն ուսմունք ծագել է ավելի ուշ: Խոսելով արժեքանության այդքան ուշ ծագման մասին՝ Ա.Թելունցը գտնում է, որ «Պ.Լապիև և Է. ֆոն Հարթմանը սկզբնավորեցին իմաստասիրության այս նոր բաժինը՝ մտցնելով «արժեքականություն» եզրույթը՝ ի հակակշիռ «գոյության» եզրույթին: Այն կախված չէ փորձից և իմացության մեջ խաղում է ճշմարտության չափանիշի դեր: Ինչո՞վ է բացատրվում արժեքի տեսության ուշ երևան գալը: Հարցն էական է այնքանով, որ աքսիոլոգիայի հարակից իմաստասիրական ճյուղը՝ իմացաբանությունը, 17-րդ դարից ի վեր արդեն ձեռք էր բերել տեսական ինքնուրույնություն⁸: Ս.Հակոբյանը հետաքրքրական տեսակետ է հայտնում արժեքանության ձևավորման դարաշրջանի մասին՝ նշելով, որ «արժեքաբանությունը ձևավորվել է այն դարաշրջանում, երբ «արժեքներ» հասկացությանը տրվել է փիլիսոփայական բովանդակություն⁹: Ս.Խաչատրյանի կարծիքով՝ «թեև արժեքների ու գնահատականների, մարդկային կյանքի, դրա իմաստի ու նպատակի, գաղափարների ու իդեալների, իրավունքի, բարոյականության, կրոնի, հասարակական գիտակցության այլ ձևերի դրսևորումների ու նորմատիվ կարգավորիչ համակարգերի, դրանց դերի ու նշանակության մասին դատողություններ ու հետևություններ արվել են շատ ավելի վաղ՝ անտիկ դարաշրջանում, սակայն Վ.Վինդելբանդը և մյուսներն

⁷ Жуков В., Введение в юридическую аксиологию (вопросы методологии) // Государство и право, 2009, №6, էջ 20:

⁸ Թելունց Ա., Արժեքի իմաստասիրական տեսության կայացումը 19-րդ դարավերջին – 20-րդ դարասկզբին // «Ազգային գաղափար», 2008, №6 սեպտեմբեր, էջ 53:

⁹ Հակոբյան Ս., Փիլիսոփայության տեսություն և պատմություն, Երևան, «ԱՀԱ Պոլիգրաֆ» ՍՊԸ, 2009, էջ 339:

առաջինն էին, որոնք Ի.Կանտի հայացքների հիման վրա բավականին հետևողական ու համակարգված կերպով ստեղծեցին արժեքանական որոշակի, ուրույն ուսմունք, որը հիմք է հանդիսացել մնացած բոլոր, հաճախ նրանց ուսմունքին հակոտնյա, արժեքներն ու գնահատականները տրամագծորեն հակառակ դիրքերից մեկնաբանող արժեքանական տեսությունների ու ուսմունքների առաջացման համար»¹⁰: Իսկ ահա Վ.Չիրկինն այն համոզմանն է, որ «ժամանակակից համամարդկային արժեքների կանխադրույթներն առաջինը ձևավորվել են Վերածննդի դարաշրջանի մարդասիրական գաղափարների և Եվրոպայում ու Հյուսիսային Ամերիկայում հաջորդաձև իրադարձությունների հիման վրա, սակայն ինքնին դրանց բնութագիրը՝ որպես արժեքներ, գիտության մեջ հաստատվել է ավելի ուշ»¹¹:

Արժեքային պրոբլեմատիկան փիլիսոփայության պատմության մեջ հնագույններից մեկն է, չնայած ոչ միշտ է ձևակերպվել: Չնայած այսպիսի բնորոշմանը, գրականության մեջ հայտնվում է նաև այնպիսի կարծիք, համաձայն որի՝ «արժեքների հիմնահարցը առավելագույն լայն նշանակությամբ ծագել է մշակութային ավանդույթների արժեզրկման և հասարակության գաղափարական հիմքերի վարկաբեկման դարաշրջանում»¹²:

Աթենական ժողովրդավարության ճգնաժամը Սոկրատին ստիպել է առաջին անգամ հարց տալ. «Ի՞նչ է բարիքը»: Սա արժեքների ընդհանուր տեսության հիմնական հարցն է: Աքսիոլոգիան, որպես փիլիսոփայական հետազոտությունների ինքնուրույն ոլորտ, առաջացավ այն ժամանակ, երբ «կեցություն» հասկացությունը տրոհվեց երկու տարրերի. իրականությունը և

¹⁰ Խաչատրյան Ա., Իրավունքի արժեքավոր հատկությունները (աքսիոլոգիական հիմնահարցեր), Երևան, Արտագես, 2002, էջ 5:

¹¹ Чиркин В., Общечеловеческие ценности и современное государство // Государство и право, 2002, №2, էջ 6:

¹² Ценностей теория, аксиология // Философский энциклопедический словарь / Гл. редакция: Л.Ф.Ильичев, П.Н.Федосеев, С.М.Ковалев, В.Г.Панов, М.: Сов. Энциклопедия, 1983, էջ 763:

արժեքը որպես զանազան մարդկային ցանկությունների և ձգտումների (նկրտումների) օբյեկտ»¹³:

Վ.Կանկեն արժեքանության առաջացումը բացատրում է հետևյալ կերպ. «արժեքների մասին ուսմունքը՝ արժեքաբանությունը, միանգամից չի առաջացել, այն ձևավորվեց կեցության և բարիքի կատեգորիաների տարանջատումից հետո, Կանտի փիլիսոփայության մեջ: Կանտը բարոյականության ոլորտը հակադրեց բնությանը, իսկ գործնական բանականությունը՝ տեսական բանականությանը: Մարդու համար կեցության նշանակության հարցի առանձնացումը հանգեցրեց արժեքների փիլիսոփայությանը և նրա հիմնական հարցին՝ «Ի՞նչ է արժեքը, ի՞նչ արմատներ ունի այն»¹⁴:

19-րդ դ. երկրորդ կեսից սկսած աքսիոլոգիան դառնում է ինքնուրույն փիլիսոփայական ճյուղ, որի զարգացման մեջ առանձնացնում են երեք ժամանակաշրջան՝

1. նախադասական (1860-80-ական թթ.),
2. դասական (1890-1920-ական թթ.),
3. հետդասական (1930-ական թվականներից առայսօր)¹⁵:

Արժեքների տեսության մեջ հիմնական ավանդը ներդրել են գերմանալեզու իդեալիստ-փիլիսոփաները, որոնց մեծամասնությունը ելնում էր Կանտի փիլիսոփայությունից: Եթե Կանտը արժեքների հիմնահարցին մոտեցրեց միայն եվրոպական փիլիսոփայական միտքը, ապա նախադասական ժամանակաշրջանում Ռ.Լոտցեն, Ա.Ռիտչլը և Ֆ.Բրենտանոն սկսում են արդեն առարկայորեն վերլուծել այն: Շնորհիվ այդ հեղինակների՝ արժեքային պրոբլեմատիկան սկսում է հաստատուն կերպով զբաղեցնել իր հատուկ (չնայած ոչ կենտրոնական) տեղը

¹³ Киссель М., Ценностей теория // Философский энциклопедический словарь / Под ред. А.Л.Геркулова. - М.: Сов. Энциклопедия, 1989, էջ 731:

¹⁴ Կանկե Վ., Փիլիսոփայություն: Պատմական և սիստեմատիկ դասընթաց. Դասագիրք բուհերի համար: Երրորդ հրատ., վերամշակված և լրացված: Մ., «Լոգոս» հրատ., Երևան, «Ձանգակ-97» հրատ., 2001, էջ 173:

¹⁵ Шохин В., Аксиология // Новая философская энциклопедия. В 4-х т. Т.1. М.: 2000, էջ 62-67:

գերմանալեզու գրականության մեջ: Ֆ.Նիցշեի աշխատությունները, որտեղ առաջ քաշվեց «բոլոր արժեքների վերագնահատման» պահանջը, առավել ուժեղացրին հետաքրքրությունը տվյալ թեմայի նկատմամբ¹⁶:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ արժեքանությունն ի սկզբանե ձևավորվել է որպես փիլիսոփայական ուսմունք, իսկ ժամանակի ընթացքում, հատկապես 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբներին, այն բացառիկ կարևորություն է ձեռք բերել նաև իրավագիտության ոլորտում: Կարծում ենք՝ դա մի կողմից պայմանավորված է արդի իրավամտաճողության վրա խարսխված Սահմանադրությունների ընդունմամբ և դրանցում ամրագրված հիմնարար սկզբունքներին փիլիսոփայական ու արժեքային երանգ տալու անհրաժեշտությամբ, իսկ մյուս կողմից բնական և պոզիտիվ իրավունքների միջև առկա հակասությունների հաղթահարման արդյունքում մարդու և նրա իրավունքների ու ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքի ձևակերպմամբ ու պաշտպանությամբ¹⁷:

Արժեքի և արժեքանության մասին առավել ընդհանրական պատկերացում կազմելու նպատակով անհրաժեշտ ենք համարում ներկայացնել դրանց վերաբերյալ տարբեր հեղինակների կողմից և հանրագիտարաններում տրված բնորոշումներ: Սակայն նախքան այդ հարկ ենք համարում անդրադառնալ «արժեք» հասկացության ստուգաբանությանը:

«Արժեք» հասկացության բառակազմական կամ էտիմոլոգիական (ստուգաբանական – Ա.Հ.) իմաստը բավականին պարզ է և համապատասխանում է կենցաղում՝ մարդկանց կողմից օգտագործվող «արժեք» բառի իմաստին և այն չպետք է շփոթել ռուսերեն «**СТОИМОСТЬ**» բառի իմաստի հետ, որը վերաբերում է

¹⁶ Տե՛ս Վ.Ժուկովի նշվ. հոդվածը, էջ 21:

¹⁷ Բնական և պոզիտիվ իրավունքների միջև առկա սահմանագիծը սահմանադրական արժեքանության միջոցով հաղթահարելու տեսակետ է հայտնել նաև Մ.Պերմիլովսկին: Ավելի մանրամասն տե՛ս Пермиловский М., Основы конституционной аксиологии: структура ценности // Государственная власть и местное самоуправление, 2014, N 2, էջ 3-7:

արժեքներից կամ նրա տեսակներից միայն մեկին՝ ապրանքին, և շատ ավելի նեղ հասկացություն է, քան «**արժեք**»-**ценность** հասկացությունը¹⁸: Պատահական չէ, որ եվրոպական լեզուների մեծամասնությունում «գին» և «արժեք» հասկացությունները ստուգաբանորեն իրար մոտ են, իսկ գերմաներենում «**արժեք**»-**ценность** և «**գին**»-**стоимость** հասկացությունները մինչ օրս նշանակում են մեկ բառով¹⁹: Արդի հայերենի բացատրական բառարանում «արժեք» հասկացությանը տրված է տարաբնույթ բացատրություններ, որոնցից և ոչ մեկը լրիվությամբ չի տեղավորվում մեր ուսումնասիրության տիրույթում, անկիրառելի են իրավագիտության մեջ, սակայն մի փոքր ավելի մոտ իմաստ ունի հետևյալ բացատրությունը. «արժեք – նշանակություն, կարևորություն»²⁰:

Փիլիսոփայական բառարանի համաձայն՝ արժեքները շրջապատող աշխարհի օբյեկտների հատուկ սոցիալական որոշարկումներ են, որոնք բացահայտում են նրանց դրական կամ բացասական նշանակությունը մարդու և հասարակության համար (հասարակական կյանքի կամ բնության երևույթների մեջ պարունակվող բարիքը, բարին և չարը, գեղեցիկը և այլանդակը)²¹: Մարդու համար արժեք է այն ամենը, ինչ նրա կյանքում որոշակի նշանակություն, անձնական կամ հասարակական իմաստ ունի²²: «Արժեք» հասկացությունն արտահայտում է որևէ օբյեկտի, իրի, արարքի և իրադարձության օգտակարությունը և արժեքավոր լինելը մարդկային կյանքի համար²³: Կամ էլ արժեքը, ինչպես և

¹⁸ Խաչատրյան Ա., Իրավունքի արքիոլոգիան և հայկական իրավունքի զարգացման երկու ուղիները // «Օրենք և իշխանություն», 1999թ., №1(27), էջ 28:

¹⁹ Перов Ю., Перов В., Философия ценностей и ценностная этика // Гартман Н. Этика, СПб., 2002, էջ 10:

²⁰ Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1976, էջ 132:

²¹ Փիլիսոփայական բառարան: Մ.Բոգենտալի խմբագրությամբ, Երևան, «Հայաստան» հրատ., 1975, էջ 41-42:

²² Կանկե Վ., Փիլիսոփայություն: Պատմական և սիստեմատիկ դասընթաց. Դասագիրք բուհերի համար: Երրորդ հրատ., վերամշակված և լրացված: Մ., «Լոգոս» հրատ., Երևան, «Ձանգակ-97» հրատ., 2001, էջ 173:

²³ Հակոբյան Ա., Փիլիսոփայության տեսություն և պատմություն, Երևան, «ԱՀԱ Պոլիգրաֆ» ՍՊԸ, 2009, էջ 340:

ճշմարտությունը, հանդիսանում է ոչ թե հատկանիշ, այլ մտքի և իրականության միջև վերաբերմունք²⁴:

Ն.Բոնդարի կարծիքով՝ «արժեքը» բազմակողմանի (համընդհանուր) և բազմաչափ հասկացություն է, որն ընդգրկում է սոցիալական կենսագործունեության բոլոր, այդ թվում՝ սահմանադրաիրավական ներգործության ոլորտում գտնվող կողմերն ու մակարդակները: Այս կամ այն երևույթի (օբյեկտի) հանդեպ արժեքային մոտեցումների ձևավորումը պահանջում է գնահատականի վերարտադրում, այսինքն սուբյեկտիվ-կամային գործողություններ՝ ուղղված օբյեկտի օգտին ճանաչելու ընտրված մասշտաբին համապատասխան որոշակի օգտակարություն, օբյեկտիվ և (կամ) սուբյեկտիվ անհրաժեշտություն: Հետևաբար, **օբյեկտի (երևույթի) կարևորությունը (արժեքականությունը)**, որն արտահայտվում է նրա արժեքի միջոցով, **առաջանում է այդ օբյեկտի և այն գնահատող սուբյեկտի միջև առկա (իրական) հարաբերությամբ** (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.): Դա թույլ է տալիս սահմանադրական կարգավորման ոլորտում հայտնաբերել (երևան հանել) ինչ-որ իդեալականացված արժեքանական սահմանադրական սկզբունքների և հարաբերությունների պատճեն (մոդել), որն ունի անմիջական նորմատիվ ձևակերպում սահմանադրական օրենսդրությունում²⁵: Ա.Բաբենկոն իրավական արժեքները սահմանում է որպես «հասարակության իրավական համակարգի նկատմամբ մարդկանց ապրած և մշակույթով որոշվող դրական վերաբերմունքի ձև, որոնք պայմանավորում են այդ համակարգին համապատասխանող վարքագծի ընտրությունը, ինչպես նաև իրադարձությունների իրավաբանական գնահատականը»²⁶:

²⁴ Ивин А., Аксиология, М.: Высш. шк., 2006, էջ 8:

²⁵ Бондарь Н., Конституционные ценности в практике Конституционного Суда России: опыт разрешения социальных противоречий и конфликтов // Альманах, Конституционное правосудие в новом тысячелетии, Ереван, Нжар, 2008, էջ 65-66:

²⁶ Бабенко А., Правовые ценности и освоение их личностью: Дис. ... д-ра юрид. наук, М., 2002, էջ 48:

Բուլղարացի իրավագետ Ն.Նենովսկին, ով իրավունքի և արժեքների հարաբերակցության, արժեքների տեսության մասին իր «Право и ценности» աշխատության մեջ մանրամասն անդրադարձել է արժեքանության հիմնախնդիրներին, փորձելով բացահայտել արժեքի էությունը, նշում է, որ «գերիշխում է այն հայացքը, որ արժեքներն առարկաներ, երևույթներ և դրանց հատկություններն են, որոնք բավարարում են մարդկային պահանջմունքները: Արժեքն իր (вещь), երևույթ է՝ ինքնին վերցրած, որն անկախ է մարդուց: Արժեքներն իրեր են, որոնք ուղղված են մարդուն: Այդ իմաստով արժեքը ոչ թե ինքը առարկան է (նյութական կամ հոգևոր, բնական կամ հասարակական, իրական կամ մտացածին), այլ արժեքն առարկան է՝ մարդու հետ կապի մեջ, մարդու համար նրա նշանակալիության տեսանկյունից»²⁷:

Ամփոփելով վերոհիշյալ բնորոշումները և դրա հետ համադրելով սեփական դիրքորոշումը՝ կարծում ենք, որ արժեքները հասարակության մեջ գոյություն ունեցող այն նշանակալի երևույթներն են, որոնք մարդու համար ունեն անփոխարինելի ու հիմնարար նշանակություն և կենսունակություն են ստանում իրավական համակարգում ամրագրվելու և մարդու կողմից համարժեք վերաբերմունք դրսևորվելու դեպքում: Մեր համոզմամբ՝ «արժեք» հասկացությունն իր մեջ ներառում է մի շարք հատկանիշներ, մասնավորապես՝

– օգտակարություն,

²⁷ Неновски Н., Право и ценности. Пер. с болг. В.Сафронова; Под ред. В.Зорькина, М.: Прогресс, 1987, էջ 2: Ի դեպ, Ն.Նենովսկու նման տեսակետի հետ միաժամանակ առկա է նաև հակառակ մոտեցումը, ըստ որի՝ «արժեքներն ավելի շուտ ձև են, քան բովանդակություն. դրանք պատմական և մշակութային առումով հարաբերական են, բայց դրանց էությունը անհավասարությամբ և սոցիալական անարդարացված սահմանափակումներով լի աշխարհում ազատության և մարդկային արժանապատվության բացահայտման մեջ է: Մարդկային արժանապատվությունը, որը արժեքների համակարգ կառուցելու բացահայտ և բանական կետն է, դառնում է եվրոպական արժեքանության և մշակույթի հիմնարար արժեքը»: St' u Bunikowski D., Axiology and the Treaty on a Constitution for Europe: URL: http://www.atlantic-community.org/app/webroot/files/articlepdf/ Values_2.pdf (դիմելու ամսաթիվը՝ 01.06.2015):

- դրական նշանակություն (եթե ասում ենք արժեք, ապա դա երբեք և ոչ մի դեպքում չի կարող բացասական լինել),
- արժեքայնություն (կախված կոնկրետ մարդու, հասարակության և պետության համար ունեցած նշանակալիության աստիճանից, պետք է առանձնացնել արժեքի արժեքայնության հատկանիշը),
- ըստ արժեքայնության հատկանիշի էլ տարբերում են արժեքի գործնական կիրառության և վերացական (չկիրառվող) հատկությունները:

Ըստ փիլիսոփայական բառարանի բնորոշման՝ արժեքանությունը արժեքների էության փիլիսոփայական հետազոտությունն է²⁸:

Արժեքների տեսությունը՝ արժեքանությունը (աքսիոլոգիա), փիլիսոփայական ուսմունք է արժեքների բնության, իրականության մեջ նրանց տեղի և արժեքային աշխարհի կառուցվածքի, այսինքն՝ տարբեր արժեքների սոցիալական և մշակութային գործոնների միջև և անձի կառուցվածքի հետ կապի մասին²⁹:

Համաձայն մեկ այլ բնորոշման՝ աքսիոլոգիան փիլիսոփայական ճյուղ է, որը զբաղվում է արժեքների՝ որպես մարդկային գործունեության իմաստակազմիչ հիմքի հետազոտությամբ, որոնք ուղղվածություն և հիմնավորում են տալիս մարդկային կյանքին, գործունեությանը և կոնկրետ գործերին ու արարմունքներին³⁰:

Ինչպես նշվեց վերևում, արժեքը ոչ թե իրը, առարկան է, այլ դրան վերագրվող հատկանիշը: Այսպես, օրինակ՝ ոսկին, պլատինը կամ ադամանդն իրենցից նույնպես արժեք են ներկայացնում, սակայն՝ նյութական իմաստով, քանի որ դրանք ունեն դրամական որոշակի արտահայտություն, իսկ իրավական արժեքներն այդպիսի հատկությամբ օժտված չեն: Դրանք (արժեքները)

²⁸ Տե՛ս Մ.Բոգենտալի խմբ. նշվ. աշխ., էջ 41:

²⁹ Ценностей теория, аксиология // Философский энциклопедический словарь / Гл. редакция: Л.Ф.Ильичев, П.Н.Федосеев, С.М.Ковалев, В.Г.Панов - М.: Сов. Энциклопедия, 1983, էջ 763:

³⁰ Аксиология // Всемирная энциклопедия: Философия / Гл. науч. ред. и сост. А.А.Грицанов, М.: АСТ, Мн.: Харвест, Современный литератор, 2001, էջ 26:

որևէ երևույթի տրվող գնահատականն են, մյուսներից տարբերակող (առավելություն ներկայացնող) հատկանիշը:

Տեսականորեն և գործնականում բոլոր արժեքների նկատմամբ միատեսակ մոտեցում չի ցուցաբերվում: Դրանք որքան էլ իրենց որոշակի հատկանիշներով կամ հետապնդած նպատակներով (առաքելությամբ) իրար նման են, այնքան էլ տարբեր են: Հենց դա է այն հիմքերից մեկը, որով արժեքները դասակարգվում, տարբերվում են իրարից:

Արժեքների աստիճանակարգության (հիերարխիայի) սահմանումը ենթադրում է դրանց բաշխում (դասավորում, բաժանում)՝ կախված մարդու համար ունեցած նշանակության աստիճանից: Արժեքների դասակարգումը միշտ էլ աշխարհայացքային դիրքորոշում է, աշխարհայացքային ընտրություն, համաձայն որի՝ արժեքները կարող են բաժանվել բարձրագույնի և ցածրագույնի, բացարձակի և հարաբերականի, հավերժականի և ժամանակավորի, դրականի ու բացասականի և այլն³¹: Այս առումով ընդունելի է Ն.Նենոլսկու այն մոտեցումը, որ «արժեքները արտահայտում են մարդու համար առարկայի նշանակալիությունը, սակայն միայն այն նշանակալիությունը, որը կրում է **դրական բնույթ** (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.): Մարդու և հասարակության համար նշանակություն ունեն նաև վնասակար, անցանկալի երևույթները (պատերազմ, հանցագործություններ, հիվանդություններ և այլն), սակայն դրանք ամենևին էլ արժեքներ չեն»³²: Իսկ բացասական երևույթները որպես արժեք ընկալելու հանգամանքը պայմանավորված է մարդու գիտակցությամբ, աշխարհայացքով և դավանվող արժեհամակարգով: Արժեքները, բացի վերոհիշյալ հիմքով դասակարգելուց, առանձնացվում են նաև ըստ իրավական հիմքի:

Օ.Մարտիշինը նշում է, որ «արժեքները հավերժական չեն: Դարերի և հազարամյակների ընթացքում դրանց հավաքակազմը և բնույթը բազմիցս փոխվել են: Արժեքների մի մասը հնացել է և

³¹ Տե՛ս Վ.Ժուկովի նշվ. հոդվածը, էջ 25:

³² Неновски Н., Право и ценности. Пер. с болг. В.Сафронова; Под ред. В.Зорькина, М.: Прогресс, 1987, էջ 28:

դարձել անցյալի սեփականությունը, մյուսները վերաիմաստավորվել են, երրորդներն առաջին անգամ են ի հայտ եկել»³³: Ըստ նրա՝ «հավերժական արժեքների թվին կարելի է դասել, թերևս, միայն արդարությունը (և նրան մոտ գտնվող առաքինությունը), ընդհանուր բարիքը (բարեկեցությունը որպես նրա տարբերակ) և դրա հետ սերտորեն կապված կարգուկանոնն ու անվտանգությունը: Ինդիքը միայն այն է, որ տարբեր դարաշրջաններում և նույնիսկ նույն դարաշրջանում տարբեր խմբերի և մարդկանց կողմից դրանք, ինչպես և մյուս արժեքների մեծամասնությունը, տարբեր ձևով են հասկացվում»³⁴: Կա տեսակետ, ըստ որի՝ իրավաբանական արժեքները որպես արժեքների հատուկ տեսակ ճանաչելը նույնքան օրինաչափ է, որքան արժեքները որպես բարոյագիտական, գեղագիտական, գիտական, կրոնական, քաղաքական, ազգային, նյութական, հոգևոր և այլն ճանաչելը (թվարկումը կարող է անչափ երկար լինել): Այստեղ դասակարգման հիմքը մարդկային գործունեության ոլորտն է, որը միշտ ծնում է իր առարկայական և սուբյեկտային արժեքները³⁵:

Սահմանադրական սկզբունքները, նորմերը կամ դրույթները որպես արժեք որակելու գործում հանդես է գալիս մարդը, իսկ մարդիկ, բնական է, օժտված են իրավագիտակցության տարբեր մակարդակով, աշխարհայացքով, դատողությամբ, իրավաընկալմամբ, երևույթների վերաբերյալ տարբեր պատկերացումներով, և որպեսզի խուսափենք նույն երևույթի (տվյալ դեպքում՝ արժեքի) վերաբերյալ տարաբնույթ գնահատականներից, պետք է սահմանել այդ սկզբունքը, նորմը կամ դրույթը որպես արժեք որակելու չափանիշները: Կարծում ենք՝ որպես իրավական արժեքի հատկանիշ (չափանիշ) կարող են հանդես գալ՝

- օբյեկտիվությունը,
- առաջնային, հիմնարար, այսինքն ոչ ածանցյալ բնույթը,

³³ Мартышин О., Проблема ценностей в теории государства и права // Государство и право, №10, 2004, էջ 7:

³⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 8:

³⁵ Տե՛ս Փիլոսոփիա փրկության. Курс лекций: учебное пособие: в 2 т. Т.1; отв. Ред. М.Марченко, М.: Проспект, 2013, էջ 323:

- կիրառելիությունը, իրացվելիությունը (արժեքի իրացման հնարավորություն, այլ ոչ թե վերացականություն),
- օգտագործման անհրաժեշտությունը (պիտանելիություն),
- անձնական և հասարակական օգտակարությունը:

Օրինակ, արժեքի պիտանելիությունը կապված է ոչ միայն նրա իսկական, իրական, օբյեկտիվ արժեքի (հատկանիշի) հետ, այլև նրա հետ, թե որքանով է մարդը պատրաստակամ, ի վիճակի իրագործելու, իրացնելու այն:

Ինչ վերաբերում է իրավական արժեքներին, ապա մեր կարծիքով դրանք տարբեր են, և կարելի է դասակարգել որոշակի խմբերի.

- բարձրագույն (մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները),
- հիմնարար կամ համընդհանուր (ազատություն, արդարություն, հավասարություն),
- հատուկ կամ ճյուղային արժեքներ, որոնք յուրահատուկ են իրավունքի կոնկրետ ճյուղին (սահմանադրական արժեքներ, քաղաքացիական, քրեական իրավունքի արժեքներ և այլն),
- օժանդակող կամ նպաստող (զինված ուժերը՝ անվտանգության համար, իսկ վերջինս՝ մարդու կյանքի ապահովման համար կամ տեղական ինքնակառավարումը՝ ժողովրդաիշխանության համար և այլն):

Օրինակ, անվտանգությունն այն արժեքը կամ հատկանիշն է, որն ընկած է մարդու՝ որպես բարձրագույն արժեքի պաշտպանության հիմքում և առանց դրա լիարժեք իրացման հնարավոր չէ խոսել այդպիսի արժեքի ամբողջականության մասին: Շրջանավորում է նաև այնպիսի կարծիք, ըստ որի՝ «իրավական արժեքները սոցիալական նշանակություն և կարևորություն են ձեռք բերում այն ժամանակ, երբ իրենց դրսևորմամբ պաշտպանում են մեկ այլ կարևորագույն իրավական արժեք, այն է՝ մարդու կյանքը»³⁶:

³⁶ Пресняков М., Конституционная аксиология: к вопросу о сущности конституционных ценностей // Современное право, 2009, №10, էջ 14:

Միքելե դե Սալվիան արժեքները դասակարգում է լիովին այլ հիմքով: Նրա կարծիքով՝ կարելի է երևան բերել արժեքներ, որոնք ենթակա չեն կամ համարյա ենթակա չեն «նսեմացման»³⁷: Այլ խոսքերով՝ կան արժեքներ, որոնք ընկած են պետության հիմքում և հիմնված են իրավունքի գերակայության և մարդու արժանապատվությունը բարձրագույն արժեք ճանաչելու վրա, և արժեքներ, որոնք նույնպես հիմնական են, սակայն որոնց պաշտպանությունն իրականացվում է անհատական շահերի և հասարակության օրինական պահանջների միջև հաշվեկշռին հետևելով: «Նսեմացման» ոչ ենթակա կամ համարյա ոչ ենթակա արժեքների թվին են դասվում կյանքի, ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը, ստրկության և հարկադիր աշխատանքի արգելքը, հանցագործության համար օրենքով սահմանված պատասխանատվության և պատժի համաչափության սկզբունքը, ազատությունը և արդար դատաքննությունը, մասնավոր և ընտանեկան կյանքի հարգումը և կարծիքի արտահայտման ազատությունը: Կարևորելով կյանքի իրավունքը՝ նա նշում է նաև մահապատժի բացառման մասին³⁸:

Տեսության մեջ կա կարծիք, որ իրավաբանական արժեքները ստեղծվում են իրավաբանական-իշխանական գործունեության ոլորտում, այնտեղ, որտեղ մարդիկ ինքնիրացվում են, բավարարում իրենց հետաքրքրությունները պետության և իրավունքի օգնությամբ: **Բազային իրավաբանական արժեքները, անշուշտ, պետությունը և իրավունքն են** (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.) և դրանցից աժանցված քաղաքական-իրավական իրականության երևույթները՝ իշխանությունը, իրավական նորմերը, պետության և իրավունքի ձևը, իրավակարգը, իրավահարաբերությունները, իրավաբանական ընթացակարգը և այլն: Կողմնակի արժեքներ

³⁷ Միքելե դե Սալվիայի կողմից հողվածում օգտագործվում է ռուսերեն «умаление» եզրույթը, որը թարգմանաբար հայերենում ավելի մոտ ենք համարում «նսեմացում» եզրույթին:

³⁸ Микеле де Сальвиа, Размышления об аксиологическом подходе в практике Европейского Суда по правам человека // Сравнительное конституционное обозрение, 2012, №5(90), էջ 72-76:

կարող են դառնալ այն երևույթները, որոնք գնահատվում են իրավաբանական-իշխանական գործունեության պրիզմայի միջով: Օրինակ՝ արդարությունը, ազատությունը, հավասարությունը, համերաշխությունը, հայրենասիրությունը, քննելով իրավաբանական-իշխանական լույսի ներքո, դառնում են իրավաբանական արժեքներ³⁹:

Համարյա համանման տեսակետ է հայտնել պրոֆեսոր Օ.Մարտիշինը՝ նշելով, որ «պետաիրավական երևույթների համեմատ ինստրումենտալ արժեքները կարելի է անվանել իրավական կամ իրավաբանական: Նրանց միջև նույնպես գոյություն ունի աստիճանակարգություն: **Պետությունը և իրավունքն իրենցից ներկայացնում են առավել կարևոր ընդհանուր իրավական արժեքներ** (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.): Դա հասարակական կյանքի կազմակերպման անհրաժեշտ ձևեր են, որոնք կոչված են ապահովելու բարձրագույն համընդհանուր արժեքները՝ արդարությունը, հավասարությունը, ազատությունը, ընդհանուր բարիքը, կարգուկանոնը, անվտանգությունը կամ դրանցից որոշները»⁴⁰:

Վերոհիշյալ կարծիքների մեջբերմանը զուգահեռ չենք կիսում պրոֆեսորներ Վ.Ժուկովի և Օ.Մարտիշինի հայտնած այն մտտեցումը, ըստ որի՝ «պետությունը և իրավունքը հանդես են գալիս որպես բազային կամ առավել կարևոր ընդհանուր արժեքներ», քանի որ, ինչպես վկայում են, օրինակ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (Նախաբան, կետ 5), աշխարհի մի շարք երկրների Սահմանադրությունների համապատասխան դրույթները, ինչպես նաև ԼԴՀ Սահմանադրության Նախաբանի 3-րդ մասն ու 2-րդ հոդվածը, պետության մեջ «բարձրագույն արժեք են մարդը, նրա կյանքն ու անվտանգությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները»: Մարդու կողմից է ստեղծվում պետությունը, պոզիտիվ իրավունքը, իսկ բնական իրավունքը նրա սեփական նախաձեռնությամբ կարող է ամրագրվել կամ չամրագրվել Սահմանադրության մեջ, բայց միևնույն է՝ այն

³⁹ Տե՛ս Վ.Ժուկովի նշվ. հողվածը, էջ 30:

⁴⁰ Տե՛ս Օ.Մարտիշինի նշվ. հողվածը, էջ 14:

գոյություն ունի: Իսկ եթե մարդը չի համարվում բարձրագույն կամ առավել կարևոր արժեք, ապա նրա կողմից կառավարվող կամ ղեկավարվող պետությունն ինչպե՞ս կարող է այդպիսին կոչվել: Այստեղից հետևում է, որ արժեքների բուրգի գագաթին կանգնած է մարդը, իսկ պետությունը ստորադասվում է վերջինիս և կոչված է պաշտպանելու հիշյալ բարձրագույն արժեքը:

Բնական է, որ սույն աշխատության շրջանակներում հնարավոր չէ լրիվությամբ և բազմակողմանիորեն ներկայացնել արժեքախնայության ձևավորման և նրա հետագա զարգացման մասին նյութը, ինչը մեր ուսումնասիրության շրջանակներից դուրս է, սակայն վերը շարադրված նյութի հիման վրա փորձենք բացահայտել իրավական ու սահմանադրական արժեքախնայության բովանդակությունն ու տարրերը:

Իրավական արժեքախնայության ծագման ու զարգացման հիմքերից մեկը կարելի է համարել այն, որ պոզիտիվ իրավունքը լայնամասշտաբ կերպով թափանցել էր մարդկանց կյանքը, նրանց հարաբերությունները և դրանով հանդերձ ոչ միշտ էր արտացոլում օբյեկտիվ իրականությունը, ինչպես նաև պոզիտիվ իրավունքի օրեցօր զարգացումը կարծես թե սովեր էր սփռում բնական իրավունքի դերի ու կարևորության վրա: Իրավական արժեքախնայությունը, կարելի է ասել, իր նպաստն է բերել բնական իրավունքի համընդհանուր ամրագրման, զարգացման ու պաշտպանության գործում:

Ակադեմիկոս Վ.Ներսեսյանցի կարծիքով՝ իրավաբանական արժեքախնայության առարկայական բնագավառը և հիմնական թեմատիկան իրավունքի՝ որպես արժեքի (որպես նպատակի, անհրաժեշտության, իմպերատիվ պահանջի և այլնի) հասկացման ու մեկնաբանության և փաստացի տրված օրենքի (պոզիտիվ իրավունքի) ու պետության իրավական նշանակության մասին (այսինքն արժեքային իմաստով՝ իրավունքի տեսանկյունից) համապատասխան արժեքային դատողությունների (և գնահատականների) հիմնահարցն է: Իրավաբանական արժեքախնայությունը, ինչպես իրավունքի փիլիսոփայությունն ու իրավաբանական

գիտությունն ամբողջությամբ, իրավունքի հետ միասին իր հետազոտության առարկայի մեջ է ներառում նաև պետությունը որպես իրավական երևույթ, որպես տվյալ հասարակության ազատ անդամների հանրային իշխանության իրավական կազմակերպություն (կազմակերպության իրավական ձև)⁴¹:

Խոսելով իրավաբանական արժեքախնայության մասին՝ ակադեմիկոս Վ.Ներսեսյանցն այն բաժանում է բնաիրավականի և ազատական-իրավաբանականի՝ դրանց հիմքում դնելով համապատասխանաբար բնաիրավական տեսության և իր կողմից զարգացվող ազատական-իրավաբանական հայեցակարգի դրույթները: Նրա կարծիքով՝ պոզիտիվիզմը հերքում է ըստ էության բուն իրավական արժեքները և ճանաչում է միայն օրենքի (պոզիտիվ իրավունքի) արժեքը, իսկ օրենքի պոզիտիվիստական «արժեքը» նրա պաշտոնական համապարտադրականությունն է, իշխանական իմպերատիվությունը, այլ ոչ թե նրա ընդհանուր նշանակությունն ինչ-որ օբյեկտիվ (ոչ իշխանական-հրամայական) հիմքով: Ընդ որում, Վ.Ներսեսյանցի կարծիքով՝ **ազատական արժեքախնայությունը կամ իրավաբանական արժեքախնայությունը** հիմնված է իրավունքի և օրենքի (պոզիտիվ իրավունքի) տարբերակման և հարաբերակցման ընդհանուր տեսության շրջանակներում իրավահասկացողության ազատական հայեցակարգի վրա⁴²:

Ինչ վերաբերում է ուսումնասիրման առարկային, ապա Մ.Մալկոն գտնում է, որ իրավական արժեքախնայության ուսումնասիրման առարկան ոչ միայն իրավունքն է, այլև պետությունը⁴³: Մենք կիսում ենք այս կարծիքն այն հիմնավորմամբ, որ նախ՝ պետությունը սերտորեն կապված է իրավունքի հետ, և իրավագիտության հիմնախնդիրներն ուսումնասիրելիս դրանք քննարկվում են միասին, երկրորդ՝ պետությունը կոչված է երաշխավորելու

⁴¹ Нерсесянц В., Философия права: Учебник для вузов, М.: Норма, 2005, էջ 53:

⁴² Տե՛ս նույն տեղում, էջ 57-59:

⁴³ Малько М., Предмет конституционной аксиологии // Вестник Челябинского государственного университета, 2010, №19(200), Право, Вып. 24, էջ 34:

և պաշտպանելու նրա տարածքում իրավունքի գործողությունը և զարգացումը, սակայն պետք է նկատի ունենալ, որ պետությունն իրավունքի հանդեպ չի կարող ունենալ առաջնային դերակատարություն:

Եթե իրավական մշակույթի օրըստօրե զարգացումը հանգեցրել է սահմանադրական մշակույթի ծննդին, ապա այդ նույն տրամաբանությամբ էլ իրավական արժեքանությունը պարարտ հիմքեր է ստեղծել սահմանադրական արժեքանության առաջացման համար: Սահմանադրական արժեքանության գոյությունը նախ և առաջ պայմանավորված է Սահմանադրության առկայությամբ, որոնք իրար հետ գտնվում են անքակտելի կապի մեջ, ուստի սահմանադրական արժեքանությունը չի կարող գոյություն ունենալ վերացական ձևով, այն պետք է լինի հստակ ու առարկայական:

Չնայած այն հանգամանքին, որ սահմանադրական արժեքանությունը երիտասարդ գիտական ուղղություն է և, ենթադրվում է, որ, որպես նոր գիտաճյուղ և հետազոտություն կատարելու մեծ մասշտաբներ ունեցող ոլորտ, այն իր վրա պետք է սկենդի գիտնականների ուշադրությունը, ու դրան նվիրված բազմաթիվ աշխատանքներ պետք է կատարված լինեն, պարզվում է, որ դրանք հիմնականում նվիրված են իրավական ու սահմանադրական տարբեր արժեքների, որոնցում չի կոնկրետացվում սահմանադրական արժեքանության բովանդակությունն ու վերջինիս առանձին տարրերը: Ինչպես արդարացիորեն նկատում է պրոֆեսոր Գ.Հարությունյանը, «ցավոք, սահմանադրական արժեքանությունը մեր իրականության մեջ որպես ինքնուրույն գիտական ուղղություն դեռևս չի ձևավորվել, և այս ոլորտում հետազոտություններ գրեթե չկան: Սակայն հասարակական հարաբերությունների սահմանադրականացման հիմնախնդիրների լուծումն առանց Սահմանադրության արժեքանական խոր վերլուծությունների՝ գրեթե անհնարին է»⁴⁴: Այս համատեքստում տեղին է մեջ-

⁴⁴ Հարությունյան Գ., Սահմանադրական հիմնարար արժեքների իրացման երաշխիքները պետական քաղաքականության մակարդակում և

բերել Վ.Կրուսի այն միտքը, որ «ռուսական սահմանադրական արժեքանությունը գործնականորեն չի հայտարարել իր՝ որպես ինքնուրույն ուղղության մասին»⁴⁵: Առաջադրելով արժեքների վերաբերյալ մի շարք հարցեր ու չունենալով դրանց միանշանակ պատասխանները՝ Հ.Հաջիևը գալիս է այն հետևության, որ սահմանադրական արժեքանությունը նոր է ծնունդ առնում⁴⁶: Վերոհիշյալ կարծիքներն ամփոփելով՝ գալիս ենք այն հետևության, որ գիտական աշխարհում այս նոր ուղղությունն իր ծանրակշիռ տեղը չի զբաղեցրել ինչպես Ռուսաստանում, որտեղ քննարկվող հիմնահարցի վերաբերյալ վերջին ժամանակներս զգալի հետազոտություններ են իրականացվել, այնպես էլ Հայաստանում ու Արցախում:

Կարծում ենք՝ այս հարցի հետ կապված առկա են որոշակի պատճառներ: Դրանցից, թերևս, կարելի է նշել այն, որ սահմանադրական արժեքանությունն ունի ոչ հարուստ պատմություն, իրավունքի այդ ճյուղի հիմնախնդրով զբաղվող մասնագետներն այնքան էլ շատ չեն, իսկ արժեքանությունը որպես փիլիսոփայության բաժին, ավելի հիմնարար ուսումնասիրության է ենթարկվել, քան իրավագիտության բնագավառում և այլն:

հասարակական պրակտիկայում // Օրենք և իրականություն, թիվ 10, հոկտեմբեր, 2008թ., էջ 1:

⁴⁵ Красс В., Российская конституционная аксиология: актуальность и перспективы // Конституционное и муниципальное право, 2007, №2, էջ 8:

⁴⁶ Հ. Հաջիևին մտահոգող հիմնական հարցերը հետևյալն են. ինչու՞ ՌԴ Սահմանադրության մեջ բարձրագույն են ճանաչվում մարդը, նրա իրավունքներն ու ազատությունները, արդյոք մարդը, նրա իրավունքներն ու ազատությունները մեկ արժեք են կամ էլ, օրինակ, մարդու կյանքը. մարդը մեկ արժեք է, իսկ կյանքի իրավունքը՝ մեկ այլ արժեք, արդարությունը որպես բարոյականության հիմք, արդյոք հանդիսանում է արժեք սահմանադրական իրավունքի համար և այլն: Շարունակելով միտքը՝ Հ.Հաջիևը գտնում է, որ դեռևս ապացուցման անհրաժեշտություն ունի հիմնարար դրույթն այն մասին, որ սահմանադրական արժեքները ենթակա են գնահատման ամենից առաջ բարոյական արժեքների կողմից: Ինքնին իրավունքի գաղափարը հիմնված է գնահատականի, մտածողության գնահատողական կերպի վրա: Տե՛ս Гаджиев Г., Онтология права (критическое исследование юридического концепта действительности): - М.: Норма: ИНФРА-М, 2013, էջ 272-273:

Հայկական իրավական իրականության մեջ սահմանադրական արժեքների տեղի, դերի ու բովանդակության բացահայտման առումով վիթխարի նշանակություն ունի ՀՀ Սահմանադրության 15-ամյակին նվիրված «ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ» ստվարածավալ գիտական աշխատությունը⁴⁷, որում փորձ է արվել վեր հանել Սահմանադրության կարևորությունն ու բովանդակությունը տարբեր ասպեկտներից, մասնավորապես՝ արժեքանական:

Ճիշտ է, սահմանադրական արժեքանությունը տակավին երիտասարդ գիտաճյուղ է, սակայն դա ամենևին էլ չի նշանակում, որ սահմանադրական արժեքանության ուսումնասիրության կորիզը կազմող Սահմանադրությունը որպես արժեք նախկինում գիտնականների ուսումնասիրությունների առանցքում չի եղել կամ էլ անտեսվել է. պարզապես Սահմանադրության կարևորության ու դերակատարության մասին խոսվել է, սակայն ոչ սահմանադրական արժեքանության տեսանկյունից: Այս կարծիքին է նաև Վ.Կրուսը՝ նշելով, որ «սահմանադրական արժեքանությանը՝ որպես իրական սահմանադրականության մոդելի և պրակտիկայի հանդեպ անմիջական հարաբերության ձև, զանազանում է, ամենից առաջ, նրա աղբյուրի՝ Սահմանադրության բացառիկ կարգավիճակը, որի իմաստավորումն ու իրացումը ենթադրում է արժեքանական մեկնաբանության պահը»⁴⁸:

Քանի որ աշխատության սկզբնական մասում խոսվել է արժեքանության՝ որպես փիլիսոփայության ճյուղի մասին, ուստի սահմանադրական արժեքանության մասին կարծիքների հնարավոր երկակիությունից խուսափելու նպատակով տեղին ենք համարում հստակեցնել սահմանադրական արժեքանության գիտաճյուղային պատկանելության մասին հարցը: Այս առումով գտնում ենք, որ վերջինս խառն իրավաբանական գիտաճյուղ է, քանի որ արժեքների ուսումնասիրությամբ զբաղվող

⁴⁷ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / Ընդհ. խմբ. Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010, 1086 էջ:

⁴⁸ Красс В., Теория конституционного правопользования. М., 2007, էջ 184:

գիտությունը՝ արժեքանությունը, որը հանդիսանում է փիլիսոփայության բաժիններից մեկը, սահմանադրական իրավունքի բնագավառում զբաղվում է զուտ սահմանադրական արժեքների բովանդակության բացահայտմամբ, իրացման հնարավորությունների հստակեցմամբ ու հասարակական հարաբերությունների վրա ունեցած ազդեցության գնահատմամբ:

Այստեղ կարող է տրամաբանական հարց առաջանալ, թե ինչու՞մն է կայանում սահմանադրական արժեքանության էությունը:

Որոշ հեղինակներ⁴⁹ անդրադարձել են սահմանադրական արժեքանության տարբեր ասպեկտներին, բայց այդ հեղինակների մոտ նախ՝ բացակայում է սահմանադրական արժեքանության նկատմամբ համալիր մոտեցումը, երկրորդ՝ նրանց աշխատանքներում սահմանափակ ու հպանցիկ է անդրադարձ կատարվում իրավական կամ սահմանադրական արժեքներին՝ առանց կոնկրետացնելու հողվածի վերնագրում տեղ գտած սահմանադրական արժեքանության բովանդակության բացահայտման հարցը: Կան մի շարք ատենախոսական հետազոտություններ⁵⁰, որոնցում սահմանադրական արժեքանության պրիզմայի լույսի ներքո բացահայտվում է այս կամ այն սահմանադրական արժեքը:

⁴⁹ Красс В., Российская конституционная аксиология: актуальность и перспективы // Конституционное и муниципальное право, 2007, №2, էջ 7-14. Малько М., Предмет конституционной аксиологии // Вестник Челябинского государственного университета, 2010, №19(200), Право, Вып. 24, էջ 34-37. Пресняков М., Конституционная аксиология: к вопросу о сущности конституционных ценностей // Современное право, 2009, № 10, էջ 13-17:

⁵⁰ Джантуханов В., Равенство и справедливость как конституционные ценности гражданского общества: Автореф. дис. ... канд-та юрид. наук. - Махачкала, 2006, 30 էջ: Ереклинцева Е., Суверенитет и демократия как конституционные ценности современной России: Автореф. дис. ... канд-та юрид. наук. - Челябинск, 2010, 26 էջ: Колоцей И., Право на охрану здоровья и медицинскую помощь как конституционная ценность: Автореф. дис. ... канд-та юрид. наук. М., 2010, 22 էջ: Магадов Ш., Нравственность как конституционная ценность в Российской Федерации: Автореф. дис. ... канд-та юрид. наук. -М., 2012, 26 էջ: Ройзман Г., Ценности в конституционном праве Российской Федерации: Автореф. дис. ... канд-та юрид. наук. - Челябинск, 2012, 25 էջ:

Այս առումով հատկանշական է, որ կատարած ուսումնասիրությունների ժամանակ որևէ տեղ չենք հանդիպել «սահմանադրական արժեքանություն» հասկացության բնորոշմանը: Հաշվի առնելով այս հարցի արդիականությունը՝ այժմ փորձենք տալ սահմանադրական արժեքանության սեփական բնորոշումը:

Սահմանադրական արժեքանությունը գիտաճյուղ է, որը կոչված է բացահայտելու Սահմանադրության (կամ սահմանադրական օրենքների) մեջ բովանդակվող արժեքները և սահմանելու օրենսդրության մեջ ամրագրման ճանապարհով դրանք իրավակիրառական պրակտիկայում իրացնելու, մարդկանց կենսակերպի անքակտելի մասը դարձնելու կառուցակարգերը, ինչպես նաև այդ արժեքների իրացման միջոցով երկրում սահմանադրականություն հաստատելու ուղիները: Առավել լայն ընկալմամբ՝ սահմանադրական արժեքանությունը գիտաճյուղ է սահմանադրականության մասին:

Ընդ որում՝ սահմանադրական արժեքանության գիտաճյուղի գլխավոր առաքելություններից մեկը երկրում սահմանադրականության հաստատումն ու դրա հետագա զարգացումն է:

Սահմանադրական արժեքանության բովանդակության բացահայտումից հետո տեղին է անդրադառնալ ինչպես օբյեկտի և սուբյեկտի, այնպես էլ առարկայի հարցին:

Գիտության օբյեկտի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ: Այսպես, Վ.Ներսեսյանցի բնորոշմամբ՝ «օբյեկտն այն է, որ դեռևս ենթակա է ուսումնասիրման համապատասխան գիտության ճանաչողական միջոցների և հնարքների օգնությամբ: Գիտության օբյեկտն այն է, ինչ մենք դրա մասին գիտենք մինչև դրա գիտական ուսումնասիրումը, իսկ առարկան ուսումնասիրված օբյեկտն է, այսինքն՝ այն, ինչ մենք դրա մասին գիտենք գիտական ճանաչումից հետո»⁵¹: Իսկ մեկ այլ բնորոշման համաձայն՝ «օբյեկտն առարկա կամ երևույթ է, որ մարդը ձգտում է ճանաչել և դեպի

⁵¹ Տե՛ս Ներսեսյանց Վ., Իրավունքի և պետության տեսություն, Երևան, Նաիրի, 2001, էջ 17-18:

որն ուղղված է նրա գործունեությունը»⁵²: Ըստ փիլիսոփայական բառարանի՝ «օբյեկտ ասելով հասկացվում է այն, ինչին ուղղված է սուբյեկտի ճանաչողական և այլ գործունեությունը»⁵³: Այստեղից էլ կարելի է գալ այն հետևության, որ սահմանադրական արժեքանության օբյեկտը Սահմանադրության մեջ ամրագրված սկզբունքներն ու արժեքներն են:

Ինչ վերաբերում է սահմանադրական արժեքանության սուբյեկտին, ապա որպես այդպիսիք հանդես են գալիս պետությունը՝ ի դեմս պետական իշխանության տարբեր մարմինների, ինչպես նաև քաղաքացիները:

Սահմանադրական արժեքանությունը սերտորեն կապված է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են Սահմանադրության բովանդակությունը, էությունը և մեկնաբանությունը: Ինչպես ինքը՝ սահմանադրական արժեքանությունը, համարվում է սահմանադրական իրավունքի և ինքնին Սահմանադրության բովանդակության բնութագրերից մեկը, այնպես էլ նրա առարկան կարելի է համադրել սահմանադրական իրավունքի առարկայի հետ⁵⁴: Շարունակելով միտքը՝ Մ.Մալկոն նշում է, որ «սահմանադրական արժեքանության առարկան կարելի է համարել հասարակության առավել լայն շրջանակի արժեքների սահմանումը և ամրագրումը Սահմանադրության մեջ, որոնք իրենց հերթին հանդիսանում են պետական, տնտեսական և սոցիալական քաղաքականության կառուցման և վարման հիմք»⁵⁵:

Սահմանադրական արժեքանության և դրա միջոցով երկրում սահմանադրականություն հաստատելու հարցն անուշադրության չի մատնվել նաև հայ գիտնականների կողմից, սակայն հայ իրականության մեջ վերոհիշյալ հիմնախնդրին առավել

⁵² Քաղաքական համառոտ բառարան, կազմող-հեղինակ Ի.Լեխին, թարգմանությամբ՝ Ս.Խաչատրյանի, Երևան, «Հայաստան», 1968, էջ 320-321:

⁵³ Փիլիսոփայական բառարան, Մ.Բոզենտալի խմբագրությամբ, Երևան, «Հայաստան» իրատ., 1975, էջ 395:

⁵⁴ Малько М., Предмет конституционной аксиологии // Вестник Челябинского государственного университета, 2010, №19(200), Право, Вып. 24, էջ 34:

⁵⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 34:

հիմնարար կերպով մոտեցել է իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ.Հարությունյանը, ում աշխատանքները⁵⁶ ներկայացվել են ինչպես միջազգային մի շարք գիտաժողովներում ու խորհրդաժողովներում, այնպես էլ հրատարակվել տարբեր պարբերականներում, լույս տեսել մենագրության⁵⁷ տեսքով: Այդ աշխատանքների կարմիր թելն այն է, որ ցանկացած երկրի Սահմանադրության ընդունման համար ելակետ պետք է հանդիսանա նրա սահմանադրական մշակույթը, որը ենթադրում է հասարակական պրակտիկայում և պետական քաղաքականության մակարդակում սահմանադրական արժեքների առկայության որոշակի աստիճան: Այդ արժեքները պետք է ամրագրվեն երկրի Հիմնական օրենքում, որոնք իշխանությունների և հասարակության կողմից ներդաշնակ ընկալվելուց հետո պետք է իրացվեն առօրյա կյանքում: Իսկ իրացման արդյունքը կլինի երկրում սահմանադրականության հաստատումը:

⁵⁶ Հարությունյան Գ., Սահմանադրական հիմնարար արժեքների իրացման երաշխիքները պետական քաղաքականության մակարդակում և հասարակական պրակտիկայում // Օրենք և իրականություն, թիվ 10, հոկտեմբեր, 2008, էջ 1-4: [Էլեկտրոնային տարբերակ]. – Մուտքի ռեժիմ http://concourt.am/armenian/structure/president/articles/yerevan2008_am.pdf - 02.04.2014, Հարությունյան Գ., Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենքը և դրա դերը եվրոպական սահմանադրականության զարգացման գործում. [Էլեկտրոնային տարբերակ]. – Մուտքի ռեժիմ – http://concourt.am/armenian/structure/president/articles/germany60_en.pdf - 02.04.2014., Арутюнян Г., Основополагающие конституционные ценности, общественная практика, конституционный суд: парадигмы реальности. [Электронный вариант]. –Режим доступа - <http://concourt.am/armenian/structure/president/articles/riga2011.pdf> - 29.03.2012., Арутюнян Г.Г., Аксиологическая природа конституционализма в контексте исторической эволюции конституционной культуры. [Էլեկտրոնային տարբերակ]. – Մուտքի ռեժիմ – <http://concourt.am/armenian/structure/president/articles/article-sbornik-2012.pdf> - 02.04.2014., Հարությունյան Գ., Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Սահմանադրության արժեքաչափի հիմնարար առանձնահատկությունները - [Էլեկտրոնային տարբերակ]. – Մուտքի ռեժիմ – <http://concourt.am/123.pdf> - 21.08.2014:

⁵⁷ Арутюнян Г., Конституционализм: уроки, вызовы, гарантии: сб. избр. публ. и выступлений на междунар. форумах, посвящ. дан. проблематике, Киев, Логос, 2011, 308 էջ. [Электронный вариант]. – Режим доступа - <http://concourt.am/armenian/library/cclibrary/2011/book2011.pdf> - 21.08.2014.

Սահմանադրական արժեքանության կարևորության արձանագրմանը զուգահեռ շեշտվում է նաև սոցիալական իրականությանը բնորոշ ախտանիշներից մեկի՝ սահմանադրական արժեքանության աղճատված ընկալման բացասական հանգամանքի մասին: Ընդ որում՝ սահմանադրական արժեքանության հենքն են կազմում մարդկային համակեցության իրավական ու բարոյական հիմնարար արժեքները, որոնք հատկապես վերափոխվող հասարակական համակարգերում պետք է գործառնեն առանց ձևախեղումների: Այս առումով պրոֆեսոր Գ.Հարությունյանը ձևախեղումները պայմանականորեն դասում է 3 խմբերի.

1. առաջադիմական իրավական արժեքների մեխանիկական փոխառում կամ պատճենավորում՝ առանց դրանց իրացման անհրաժեշտ նախադրյալների ստեղծման, որն իրական կյանքում հանգեցնում է սահմանադրական հիմնական սկզբունքների տարաբնույթ ձևախեղումների,
2. սահմանադրաիրավական խեղված լուծումներ,
3. իրավամտաձողության և իրավակիրառական պրակտիկայի իներցիա⁵⁸:

Ցանկացած գիտություն արժեվորվում է այն դեպքում, երբ հաջողությամբ լուծում է իր առջև դրված խնդիրները կամ դրանց զգալի մասը: Հենց այս համատեքստում պետք է տեսնել սահմանադրական արժեքանության դերը երկրում սահմանադրականության հաստատման գործում: Այստեղ տեղին է հիշատակել Մ.Պրեսնյակովի այն համոզմունքը, որ արժեքն ամենից առաջ իդեալ է, որը ցույց է տալիս ոչ թե «ինչպես անել», այլ «ինչին ձգտել»⁵⁹: Սահմանադրության մեջ ամրագրված նորմ-սկզբունքներն ու նորմ-նպատակները կազմում են այն հենասյուններն ու

⁵⁸ Այս հիմնախնդրի վերաբերյալ առավել մանրամասն տե՛ն Գ.Հարությունյան, Սահմանադրական զարգացումների արժեքանական հիմնախնդիրներն արդի մարտահրավերների դիտանկյունից, URL: <http://www.concourt.am/armenian/structure/president/articles/article-harutyunyan-2014.pdf> (դիմելու ամսաթիվը՝ 22.01.2015):

⁵⁹ Пресняков М., Конституционная аксиология: к вопросу о сущности конституционных ценностей // Современное право, 2009, №10, էջ 17:

կողմնորոշիչները, որոնք իրենցից արժեք են ներկայացնում, և որոնց վրա հիմնվելով պետությունը պետք է որոշակիորեն ուրվագծի իր հետագա զարգացման հայեցակարգը: Հենց այս համատեքստում է կարևորվում սահմանադրական արժեքանության դերակատարությունը: Իսկ վերջինս իր վերջնական նպատակին կարող է հասնել միայն այն ժամանակ, երբ սահմանադրական արժեքները գիտակցաբար ընկալվում և հետևողականորեն իրացվում են և՛ պետական իշխանության մարմինների ներկայացուցիչների⁶⁰, և՛ քաղաքացիների կողմից:

Սույն հետազոտությունը փորձ է՝ մի կողմից բացահայտելու սահմանադրական արժեքանության բովանդակությունը, նրա դերն ու նշանակությունը երկրում սահմանադրականության զարգացման գործում, ինչպես նաև սահմանադրական հիմնարար արժեքների ու սկզբունքների իրացումը ԼՂՀ սահմանադրական լուծումներում, իսկ մյուս կողմից՝ նախանշելու սահմանադրականության հետագա զարգացման հիմնախնդիրներն Արցախի իրավական իրականությունում: Հետագա շարադրանքում կփորձենք հիմնավորել, որ սահմանադրականությունը չի կարող վերացական լինել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, քանի որ առկա հիմնախնդիրների հետ միաժամանակ երկրում առկա են դրանց լուծման համար բոլոր բարենպաստ նախադրյալները:

§ 2. ԼՂՀ Սահմանադրության արժեքանական ընկալումները

Ցանկացած պետության՝ իրավական ոլորտում ձեռք բերած նվաճումների և հետագա անելիքների մասին պատկերացում կարելի է կազմել՝ ուսումնասիրելով նրա Սահմանադրությունը

⁶⁰ Այս տեսանկյունից սահմանադրական արժեքներից իրավունքի գերակայության համակողմանի քննարկմանն էր նվիրված 2013թ. հուլիսի 3-5-ը երևանում իրավիրված «Իրավունքի գերակայության եվրոպական չափանիշները և իշխանությունների հայեցողության սահմանները Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում» թեմայով համաեվրոպական խորհրդաժողովը: Խորհրդաժողովի նյութերը տե՛ս Ալմանախ, Конституционное правосудие в новом тысячелетии, Ер., Нжар, 2013, 184 էջ:

և առանձնակի ուշադրություն դարձնելով նրա արժեքային համակարգին: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ յուրաքանչյուր պետություն սահմանում է սահմանադրական այս կամ այն դոկտրինան, ապա դժվար չէ տեսականորեն պատկերացնել այն հասարակարգը (հասարակությունը), որը պատրաստակամ է ապրելու այդ արժեհամակարգով: Այստեղ, սակայն, հարցը ոչ միայն այդ արժեհամակարգը երկրի Հիմնական օրենքում ամրագրելն է, այլև դրա կենսունակության ապահովումը, իսկ տվյալ պարագայում որպես շղթայի սկզբնական օղակ պետք է հանդիսանա քաղաքացիների կողմից այդ արժեքների ընկալումը:

Ընդհանրապես մարդն իրեն շրջապատող աշխարհն ու երևույթները յուրացնում է տարբեր եղանակներով: Դրանցից մեկն էլ ընկալումն է: «Ընկալումը տեղեկատվության ընդունման և փոխակերպման բարդ գործընթաց է, որն ապահովում է օբյեկտիվ իրականության արտացոլումն ու կողմնորոշումը շրջակա աշխարհում»⁶¹: Մարդու կողմից շրջակա աշխարհի ընկալումը, յուրացման ձևերը, այս աշխարհի ճանաչումը կախված են մարդու օրգանիզմի հոգեկան-ֆիզիկական կառուցվածքից, ընկալման օրգանների կառուցվածքից, բարձրագույն նյարդային գործունեությունից և ուղեղից⁶²: Եթե Սահմանադրության կամ իրավական ակտերի ընկալումը կախված է մարդկանց գիտակցությունից և կամքից, ապա նրա դրույթների իրացումը՝ մարդկանց պատրաստակամությունից, իրավագիտակցության մակարդակից ու պետականորեն երաշխավորված բարենպաստ մթնոլորտից: Սակայն այստեղ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ մարդկանց մի մասը Սահմանադրությունն ընկալում ու ուսումնասիրում է սեփական նախաձեռնությամբ (օրինակ՝ կապված ուսումնառության, աշխատանքային կամ մասնագիտական գործունեության հետ), իսկ մյուս մասին այն հասու է դառնում Սահմանադրության նորմերի քարոզչության շնորհիվ, որը կարող է

⁶¹ Большой Энциклопедический словарь, 2000. <http://dic.academic.ru/dic.nsf/enc3p/92786> - 12.01.2015.

⁶² Третий закон. Восприятие мира человеком. Эмоции. Зрительное восприятие, его роль в композиции. <http://www.idlazur.ru/art79.php> - 24.12.2014.

լինել ինչպես նախքան Հիմնական օրենքի ընդունումը, այնպես էլ դրանից հետո հասարակական և պետական հատվածներում Սահմանադրության դրույթների վերաբերյալ տեղեկատվություն տարածելու եղանակով:

ԼՂՀ Սահմանադրության ընկալումը և կիրառումը ոչ միայն պետության, այլև ամբողջությամբ վերցրած քաղաքացիների գործունեության առանցքն ու նպատակը պետք է հանդիսանա, ովքեր իրենց առօրյա կենսագործունեության ընթացքում իրավական բնույթի հարցերի առնչությամբ պետք է առաջնորդվեն հենց Հիմնական օրենքի նորմերով: Այս համատեքստում ընկալում ասելով պետք է հասկանալ Սահմանադրության մեջ բովանդակվող բոլոր դրույթների յուրացումը՝ անկախ դրա մակարդակից:

Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ երկրի ամեն մի քաղաքացի հնարավոր է ընթերցի Սահմանադրությունը, ապա կարող է տրամաբանական հարց առաջանալ. արդյո՞ք ԼՂՀ Սահմանադրությունը գրված է մատչելի լեզվով և կարո՞ղ են բոլոր քաղաքացիները՝ անկախ գրագիտության աստիճանից, հասկանալ վերջինիս դրույթների էությունը: Երկրի Հիմնական օրենքի մանրակրկիտ ուսումնասիրումը և այլ պետությունների Սահմանադրությունների հետ համեմատումը թույլ է տալիս եզրահանգել, որ Սահմանադրության տեքստը շարադրված է մատչելի լեզվով, ընթերցողը կարող է հասկանալ ամրագրված դրույթների էությունը, իսկ ավելի խորությամբ իմանալու համար, բնականաբար, պետք է դիմել համապատասխան մասնագետի՝ իրավագետի օգնությանը:

Քաղաքացիների կողմից Սահմանադրության մասին հստակ և միանշանակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է, որպեսզի հնարավորինս իրական արժեքը ներկայացվի նրանց, Սահմանադրությունն առավել հասու դարձվի, մոտեցվի քաղաքացիներին: Այս նպատակի իրագործման հիմքերը ԼՂՀ-ում դրվել են դեռևս Սահմանադրության ընդունման նախօրեին, իսկ ավելի ստույգ՝ 2006թ. նոյեմբերի

15-ին, երբ Հեղինակի կողմից առաջարկություն է ներկայացվել ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Ա.Ղուլյանին՝ նախքան ԼՂՀ Սահմանադրության ընդունումը բացատրական, քարոզչական աշխատանքներ տանել Հանրապետության առավել խիտ բնակեցված բնակավայրերում, որի նպատակը կհանդիսանա ազգաբնակչության հետ անմիջական հանդիպումների, շփումների միջոցով երկրի Հիմնական օրենքի առավել կարևոր դրույթներին մեկնաբանություն տալն ու նրանց առաջադրած հարցերին պատասխանելը: Ինչպես ինքնին Սահմանադրությունն էր նոր երևույթ ԼՂՀ քաղաքացիների կյանքում, այնպես էլ այդպիսի հանդիպումները, որոնք, կարելի է ասել, նոր տիպի մշակույթ ձևավորելու հիմքերը դրեցին Հանրապետությունում: Նման ծրագրի իրականացման հիմնական իմաստը կայանում էր նրանում, որպեսզի Հիմնական օրենքն ընկալված, գիտակցված և իմաստավորված ընդունվի քաղաքացիների կողմից: Ընդ որում՝ հիշյալ քարոզչությունը լայնորեն լուսաբանվել է ինչպես Արցախի հանրային հեռուստատեսությամբ⁶³, այնպես էլ Հանրապետությունում հրատարակվող մի շարք թերթերի միջոցով⁶⁴:

Ուսումնասիրելով ԼՂՀ դատական պրակտիկան, ԼՂՀ Նախագահի աշխատակազմ ներկայացված դիմում-բողոքները և հաշվի առնելով հայցերի, դիմում-բողոքների մի զգալի մասի ոչ գրագետ ձևակերպված լինելու հանգամանքը և դրանից բխող քաղաքացիների ոչ բավարար իրավագիտակցության մակարդակը՝ կարող ենք արձանագրել, որ ԼՂՀ քաղաքացիների զգալի մասն օժտված չէ տարրական գիտելիքներով Սահմանադրության ու օրենսդրության մասին ընդհանրապես և իրենց իրավունքների, ազատությունների ու պարտականությունների մասին՝ մասնավորապես: Այս ոլորտում դրական տեղաշարժեր

⁶³ Այս կապակցությամբ կարելի է դիտել Արցախի հանրային հեռուստատեսության 03-09.12.2006թ. հաղորդումները:

⁶⁴ Մասնավորապես տե՛ս ԼՂՀ-ում հրատարակվող «Ազատ Արցախ», «Ապառաժ», «Ակունք», «Հայրենիք», «Հայկի Սերունդ» թերթերի 2006թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների համարները:

արձանագրելու և Սահմանադրությամբ հռչակված բազմաթիվ իդեալների կենսագործման նպատակով ԼՂՀ իշխանության բոլոր թևերի կողմից պետք է իրականացվեն համալիր միջոցառումներ, որոնց հաջողությունը պայմանավորված կլինի ընտրված գործիքակազմով ու դրանց շարունակականության ապահովմամբ:

Քանի որ Սահմանադրության գաղափարի և նրա արժեհամակարգի յուրացումը, ժամանակատար գործընթաց լինելով հանդերձ, մեծ ջանքեր է պահանջում ինչպես անհատից, այնպես էլ հասարակությունից ու պետությունից, առաջարկվում է, որ ԼՂՀ հանրակրթական բոլոր դպրոցներում «Հասարակագիտություն» առարկայի կամ լրացուցիչ դասաժամի շրջանակներում ուսումնասիրվեն ԼՂՀ Սահմանադրության վերաբերյալ նախնական նյութեր⁶⁵, իսկ ավելի բարձր դասարաններում՝ արդեն հնարավորինս ավելի խորությամբ: Ընդ որում՝ սահմանադրական արժեքանության միջոցով Սահմանադրության ընկալումն ու իրացումը պետք է դառնա ոչ միայն դպրոցների, միջին մասնագիտական ու բարձրագույն ուսումնական հաստատությունների ծրագրերի անբաժանելի մասը, այլև իր հետագա շարունակությունը գտնի նաև իշխանության տարբեր օղակներում պետական աշխատողների որակավորման բարձրացման ժամանակ: Այս համատեքստում հարկ ենք համարում նշել, որ հանրակրթական դպրոցներում դասավանդվող «Հասարակագիտություն» դասագրքում, որի միջոցով աշակերտները ձեռք են բերում սկզբնական իրավական գիտելիքներ, համապարփակ տեղեկատվություն չի ներկայացվում ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ

⁶⁵ Գաղտնիք չէ, որ և՛ Հայաստանի Հանրապետության, և՛ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դպրոցներում «Հասարակագիտություն» առարկան դասավանդվում է հիմնականում պատմության ուսուցիչների կողմից, իսկ վերջիններս չեն կարող իրավաբանի հմտությամբ ու խորությամբ աշակերտներին ներկայացնել առարկայի շրջանակներում քննարկվող հիմնախնդիրները, տալ անհրաժեշտ պարզաբանումներ, որն էլ կասկածի տակ է դնում ստացված գիտելիքների արժանահավատությունը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունների վերաբերյալ⁶⁶:

Հանրակրթական դպրոցներում Սահմանադրության ուսումնասիրումը (դասավանդումը) ոչ միայն իրավագիտակցության բարձրացման նպատակ է հետապնդում, այլև քաղաքացիների՝ առավելագույնս Սահմանադրության սահմանած նորմերով իրենց կյանքը կառուցելու անհրաժեշտություն և հրամայական է: Այն քաղաքացիներին ուղղորդում է, որպեսզի գործեն Սահմանադրության սահմանած նորմերով և դուրս չգան դրա սահմաններից, այլապես նրանց նկատմամբ կկիրառվի պատասխանատվության համապատասխան միջոցներ:

Սահմանադրության վերաբերյալ գիտելիքների առկայության պարտադիր պայմանով է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ քաղաքացիական ծառայության ոլորտ ընդունվող քաղաքացիները քննություն հանձնելիս և ատեստավորման ժամանակ ստուգվում է նաև Սահմանադրության ոլորտի վերաբերյալ նրանց գիտելիքների մակարդակը⁶⁷:

Ինքնին Սահմանադրության ընկալումն անքակտելիորեն կապված է գիտակցության որոշակի դրսևորումների հետ: Լինելով իրավաքաղաքական փաստաթուղթ՝ Սահմանադրությունը ոչ միայն իրավական, այլև քաղաքական մտածողության սահմանադրականացման առաջին գրավականը պետք է հանդիսանա: Այս տեսանկյունից անհրաժեշտ ենք համարում արձանագրել Սահմանադրության ընդունման նախօրեին երկրի Հիմնական օրենքի նախագծի առնչությամբ տեղի ունեցած քննարկումների

⁶⁶ Հիշյալ հիմնախնդիրն առավել ակնհայտ է դարձել այն ժամանակ, երբ Ստեփանակերտի ավագ դպրոցներ այցելության և դասախոսություն կարդալու ժամանակ աշակերտների մոտ ակնհայտորեն նկատվել է ԼՂՀ Սահմանադրության վերաբերյալ գիտելիքների պակաս:

⁶⁷ Ն.Իսաևան այն համոզմանն է, որ սահմանադրական արժեքանությունը պետք է դառնա կրթական ծրագրերի անբաժանելի մասը՝ սկսած դպրոցից և վերջացրած դատավորների, պետական ու մունիցիպալ աշխատողների որակավորման բարձրացմամբ: St' u Isaeva H. B., Конституционные ценности в правовой идентичности личности: к постановке проблемы // Конституционное и муниципальное право, 2009, N 16, էջ 5:

կարևորությունն ու քաղաքացիների կողմից Սահմանադրության ընկալունակության աստիճանի բարձրացմանն ուղղված քայլերը: Քննարկումներին իրենց անմիջական մասնակցությունն են ունեցել ինչպես քաղաքական կուսակցություններն ու հասարակական կազմակերպությունները, այնպես էլ քաղաքացիները՝ վերջիններիս հետ հանդիպումների ձևաչափով: Ի դեպ, 2006թ. սեպտեմբերի 29-ին ԼՂՀ Ազգային ժողովում տեղի ունեցած խորհրդարանի գլխադասային պետաիրավական հարցերի և պաշտպանության, անվտանգության և օրինապահպանության մշտական հանձնաժողովների՝ ԼՂՀ Սահմանադրության նախագծի շուրջ հերթական քննարկումներին հրավիրված էին Հանրապետությունում գործող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, ովքեր Սահմանադրության նախագծի վերաբերյալ առաջարկություններով հանդես գալու հնարավորություն են ունեցել⁶⁸: Այստեղից հետևում է, որ քաղաքացիների կողմից ԼՂՀ Սահմանադրության՝ որպես արժեքի ընկալման առաջին հնարավորությունն ընձեռվել է հենց Սահմանադրության նախագծի քննարկման, իսկ այնուհետև նաև քարոզչության ժամանակ:

Հատկանշական է, որ ԼՂՀ Սահմանադրության նախագիծը ԼՂՀ Ազգային ժողովի 06.10.2006թ. լիազումար նիստում առաջին ընթերցմամբ ընդունվելուց հետո հանրապետական «Ազատ Արցախ» թերթի թիվ 122 (1937) առ 12.10.2006թ. հատուկ թողարկման մեջ տպագրվել է Ազգային ժողովի դիմումը, որում ակնկալվում էր քաղաքացիների ակտիվ և շահագրգիռ մասնակցությունը երկրի Հիմնական օրենքի նախագծի հանրային քննարկմանը: Քաղաքացիներն իրենց նկատառումները, դիտողությունները և առաջարկությունները կարող էին ուղարկել ԼՂՀ օրենսդիր մարմին կամ ԼՂՀ Սահմանադրական հանձնաժողովի աշխատանքային խմբին: Դիմումի տեքստը պարբերաբար հեռարձակվում էր Արցախի հանրային հեռուստատեսությամբ:

⁶⁸ «Կաճառ» գիտական կենտրոնի ամենամյա «Կաճառ» տեղեկագիր, թիվ 7, սեպտեմբեր 2006, էջ 1-2:

Ընդհանրացնելով վերոհիշյալը՝ կարծում ենք, որ Սահմանադրությունը և՛ պետական իշխանության, և՛ քաղաքացիների կողմից պետք է ընկալվի ու իրացվի հավասարապես և միանշանակորեն, այլ ոչ թե վերապահումներով, նպատակահարմարության հաշվառմամբ, խեղաթյուրված կամ ձևախեղված, այլապես չենք կարող խոսել Սահմանադրության՝ որպես ամբողջական արժեքային համակարգի մասին, չէ՞ որ վերջինիս ընդունման հիմնական նպատակներից մեկն է դառնալ անխտիր բոլոր քաղաքացիների կենսակերպի անքակտելի մասը, իսկ եթե դա չի իրականացվում, ուրեմն Սահմանադրությունն ապրող իրողություն լինել չի կարող:

Ինչպես արդարացիորեն նշում է պրոֆեսոր Գ.Հարությունյանը, Սահմանադրությունից՝ սահմանադրականության, ցանկալից իրականին հասնելու ճանապարհն անցնում է հասարակական հարաբերությունների սահմանադրականացման միջով⁶⁹: Այս տրամաբանությամբ էլ ԼՂՀ Սահմանադրության ընդունման նախօրեին քաղաքական տարբեր շրջանակներում կառուցողական մթնոլորտում տեղի ունեցած բազմաշերտ քննարկումները, թերևս, վկայությունն են այն բանի, որ այդ ոլորտի ներկայացուցիչները ոչ միայն պատրաստակամ են սահմանադրականացնել քաղաքական մտածողությունն ու իրենց քաղաքական գործունեությունը, այլև դրանով հանդերձ մի կողմից նպատակ են ունեցել սահմանադրականացնել հասարակական հարաբերությունները, իսկ մյուս կողմից ցույց տալ, որ քաղաքական իրականությունը (շահը) պետք է համապատասխանի և հետևի իրավականին, այլ ոչ թե հակառակը:

⁶⁹ Հարությունյան Գ., Սահմանադրականության գումարելիները՝ իրավունքի գերակայություն, կայուն զարգացում // Օրենք և իրականություն, հ. 3, մարտ, 2011թ., էջ 4. [Էլեկտրոնային տարբերակ]. – Մուտքի ռեժիմ- <http://concourt.am/armenian/structure/president/articles/harutyunyan2011.pdf> – 02.04.2012: Арутюнян Г., Слагаемые конституционализма: верховенство права, стабильное развитие // Журнал Конституционное правосудие, Выпуск 2(52), 2011, էջ 16:

Քաղաքական մտածողության սահմանադրականացումը պետք է կարողանա սահմանադրական արժեքանությունն այն աստիճանի յուրացրած, ընկալած լինի, որ դրա սահմանադրական ամրագրումը բուն Սահմանադրությունը դարձնի ինքնաբավ, Սահմանադրության ներսում արժեքանական մոտեցումները հիմնարար սկզբունքների և կոնկրետ սահմանադրական կանոնակարգումների միջև հակասություններ չառաջացնեն, բացառվեն ներսահմանադրական հակասությունները կամ գոնե ամրագրված լինեն այնպիսի հնարավորություններ, որոնց միջոցով դա հաղթահարելի լինի: Բնական է նաև, որ կատարյալ Սահմանադրություն գոյություն ունենալ չի կարող, քանի որ նախ՝ Սահմանադրություն ստեղծողը՝ մարդը, կատարյալ չէ, և երկրորդ՝ հասարակական հարաբերություններն այնքան արագ են զարգանում, որ հնարավոր չէ կանխատեսել, թե գալիք սերունդը կամ իշխանությունը սահմանադրական ո՞ր արժեքների հանդեպ հավատարմություն կցուցաբերի՝ դրանք թողնելով անփոփոխ, և որոնք կվերափոխվեն կամ կլրացվեն նորերով: Ամեն դեպքում հիշյալ հարցը լավագույնս կարգավորելու համար անհրաժեշտ է երկրի Սահմանադրությունն օժտել ինքնաբավության հատկանիշով: Վ.Պողոսյանը, խոսելով Սահմանադրության ինքնաբավության մասին և արձանագրելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը, ըստ որի՝ «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն», նշում է, որ «ցանկացած Սահմանադրություն, որի սկզբունքներն ու դրույթները օժտված են միևնույն բարձրագույն իրավաբանական ուժով, չի կարող ունենալ ներքին հակասություն, հակառակ դեպքում անհրաժեշտություն կառաջանա հարցի լուծումը փնտրել Սահմանադրությունից դուրս՝ արտասահմանադրական եղանակներով, ասենք, քաղաքական ճանապարհով, որը կարող է բերել սահմանադրական փոփոխությունների կամ նոր Սահմանադրության ընդունման»⁷⁰:

⁷⁰ Погосян В., Самодостаточна ли Конституция? // Конституционное правосудие, № 1(47), 2010, էջ 57:

Հասարակական հարաբերությունների սահմանադրականացմանը ոչ միայն քաղաքական ուժերն էին հակված, այլև հենց քաղաքացիները, որի ապացույցն է քաղաքացիների ակտիվ մասնակցությունը 2006թ. դեկտեմբերի 10-ի սահմանադրական հանրաքվեին, իսկ դրա արդյունքում նրանց ճնշող մեծամասնության՝ 99,58 %-ի դրական դիրքորոշումը ԼՂՀ Սահմանադրության ընդունմանը վկայում է ինչպես հասարակական հարաբերությունները սահմանադրականացնելուն քաղաքացիների պատրաստակամության, այնպես էլ քաղաքացիների քաղաքական հասունության մասին:

Քանի որ յուրաքանչյուր երկիր որդեգրում է սահմանադրական արժեքանության իր դոկտրինան, ուստի ԼՂՀ Սահմանադրության արժեհամակարգի բացահայտումից առաջ պետք է նկատի առնել, որ այն արժեքների մեծ մասը, որոնք ամրագրված են ԼՂՀ Սահմանադրության մեջ, Երկրի ու ժողովրդի կյանքում արմատավորվել են դեռևս ԼՂՀ կազմավորման տարիներին, մասնավորապես՝ 1991 թվականի սեպտեմբերի 2-ին ընդունված «ԼՂՀ հռչակման մասին» Հռչակագրում⁷¹, 1992թ. հունվարի 6-ին ընդունված «ԼՂՀ պետական անկախության մասին» Հռչակագրում⁷², դրանից հետո ընդունված սահմանադրական օրենքներում և մոտ 15 տարվա «փորձաշրջան» անցնելուց հետո իրենց «հանգրվանն» են գտել ԼՂՀ Սահմանադրության մեջ, ինչը վկայում է ոչ միայն դրանց անհրաժեշտության ու կենսունակության, այլև այն մասին, որ այդ արժեքները փոխառված չեն միջազգային հիմնարար փաստաթղթերից, այլ երկրների Սահմանադրություններից ու տարիների ընթացքում դարձել են մարդկանց կենսակերպի անբաժանելի մասն ու իրավակարգավորիչ տարրը: Ուշագրավ է, որ ներկայիս Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կազմավորվել է պատմական Արցախ նահանգի մի մասի վրա, որտեղ

⁷¹ «ԼՂՀ հռչակման մասին» Հռչակագրի բնօրինակը տե՛ս ԼՂՀ Պետական արխիվ, ֆ.1, ց.2, կ.28, պ.մ.309, թ. 63-64: Տե՛ս նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի պաշտոնական կայքէջում <http://www.president.nkr.am/am/nkr/nkr1> հասցեով:

⁷² Տե՛ս ԼՂՀ Ազգային ժողովի ընթացիկ արխիվը:

դեռևս 5-րդ դարում Վաչագան Բարեպաշտի հրավիրած ժողովի ժամանակ ընդունվել էր Աղվենի Կանոնական Սահմանադրությունը, որի մեջ առաջին անգամ հայ իրականության մեջ օգտագործվել է «Սահմանադրություն» բառը, որն էլ նպաստել է թե՛ Արցախում, և թե՛ ընդհանրապես Հայաստանում սահմանադրական մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը⁷³:

Խոսելով արժեքների ձևավորման ու արմատավորման մասին՝ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հնարավոր չէ համեմատել ներկա պատկերացումների և իրավամտաճողության հիման վրա ձևավորված իրավական արժեքներն ավելի վաղ ժամանակաշրջանում կիրառվող արժեքների հետ, առավել ևս, եթե անցել են տարիներ և հասարակարգեր: Սակայն արդի իրավական արժեքները տվյալ տարածքում իրացվելու աստիճանը կախված է նաև դրա նախադրյալների ու նախկինում ունեցած կենսունակության միջև եղած ներդաշնակությունից: Տվյալ պարագայում խոսքն Ադրբեջանական ԽՍՀ կազմում ԼՂԻՄ-ի գոյության, կարգավիճակի և հասարակության ունեցած դերակատարության մասին է, որն անհամեմատելի է ներկայիս Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության սահմանադրարվական զարգացումների ու որդեգրած արժեհամակարգի հետ:

Այստեղից հետևում է, որ սահմանադրական արժեքները Սահմանադրության մեջ ամրագրելու գործընթացը ոչ թե պետք է կատարվի այլ երկրների Սահմանադրություններից ներմուծելու ճանապարհով, այլ առաջին հերթին այդ արժեքներով կամ դրանց որևէ դրսևորումներով պետք է ապրած լինի տվյալ ժողովուրդը, բխի ժողովրդի կամքից ու նպատակներից, կազմի նրա

⁷³ Տե՛ս Հարությունյան Գ., Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, Նժար, 2005, 404 էջ: Ղազինյան Գ., Վաղարշյան Ա., Հայոց իրավունքի պատմության հիմնահարցերը: Հին շրջանից մինչև մեր օրերը, Երևան, ԵՊՀ հրատ., 2014, 416 էջ: Ղահրամանյան Կ., Հովհաննիսյան Վ., 1500-ամյա հայկական Սահմանադրությունը (ընդունման հանգամանքները և նշանակությունը), Երևան, 1999, 61 էջ: Петикян С., Эволюция источников армянского права с древнейших времен до середины 19-го века. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Н.Новгород, 2011, 207 էջ:

սահմանադրական մշակույթի մասը, որովհետև օտար տարրեր պարունակելու հանգամանքը կարող է խորթ ու անընդունելի լինի հասարակությանը, և արդյունքում դրական տեղաշարժերի փոխարեն այդ արժեքներն աղճատվեն կամ խեղաթյուրվեն, ինչն էլ կարող է հանգեցնել անկանխատեսելի բացասական հետևանքների:

Քանի որ սահմանադրական արժեքներ կրող գլխավոր աղբյուրը Սահմանադրությունն է, վերջինիս արժեքն ավելի ընկալելի լինելու և նրա խորքային հատկանիշները բացահայտելու համար հարկ է ներկայացնել նրա բնորոշումներից մի քանիսը, այսինքն Սահմանադրությունը դիտարկել նրա արժեքային հատկանիշների տեսանկյունից: Այս առումով պետք է նկատել, որ սահմանադրագիտության մեջ չկա միասնական կարծիք Սահմանադրության բնորոշման մասին: Տարբեր սահմանումներն իրար հետ համադրելու միջոցով երևի թե հնարավոր կլինի վեր հանել այն կարևորը, որը պարփակված է Սահմանադրության՝ որպես արժեքի մեջ:

Այսպես, Ս.Ավագյանի կարծիքով՝ Սահմանադրության տակ հասկացվում է պետության Հիմնական օրենքը, որն ամբողջությամբ արտահայտում է ժողովրդի կամ հասարակության առանձին սոցիալական խավերի (խմբերի) կամքն ու շահերը և նրանց շահերում ամրագրում է համապատասխան երկրի հասարակական կարգի ու պետական կազմակերպության կարևորագույն սկզբունքները⁷⁴: Սահմանադրությունը երկրի Հիմնական օրենքն է, որը որոշում է պետական իշխանության իրականացման սահմանները և իրենից ներկայացնում է իրավական նորմերի համակարգ, որը կանոնակարգում է երկրի պետական կարգը, պետության իրավական համակարգի սկզբունքները և բնակչության հետ նրա փոխհարաբերությունների հիմքերը⁷⁵: Իսկ պրոֆեսոր

⁷⁴ Авакьян С., Конституция России: природа, эволюция, современность, 2-е изд., М., 2000: URL: <http://www.pravoteka.ru/lib/konstitucionnoe-pravo/0003/> (դիմելու ամսաթիվը՝ 10.02.2014):

⁷⁵ Конституционное право зарубежных стран: Учебник для вузов / Под общ. ред. чл.-корр. РАН, проф. М. В. Баглая, д. ю. н., проф. Ю. И. Лейбо и д. ю. н., проф. Л. М. Энтина, М.: Норма, 2004, էջ 53:

Գ.Հարությունյանը Սահմանադրությանը տալիս է տարբերվող ու ինքնատիպ բնորոշում, այն է՝ «Սահմանադրությունը հասարակական համաձայնություն է կենսագոյի հիմնարար կանոնների շուրջ»⁷⁶: Վերջին սահմանումն առավել մոտ է մեր աշխատանքի ոգուն, քանի որ կենսագոյի հիմնարար կանոններ ասելով առաջին հերթին հասկացվում են այն կարևորագույն արժեքները, որոնցով ապրում է մարդը և որոնք հնարավորինս պետք է ամրագրվեն նաև Սահմանադրության մեջ՝ կազմելով նրա կորիզը:

Կարծում ենք՝ Սահմանադրության արժեքանական իմաստը նրա էության, ընդունման նպատակների բացահայտումն է, նրա խորքային հատկանիշների, դրական կողմերի վերհանումը: Կա կարծիք, որ «ժամանակակից Սահմանադրության հասկացության բնորոշման համար բավարար չէ միայն դրա իրավական հատկանիշների թվարկումը, որով վերջինս, որպես իրավաբանական ակտ, տարբերվում է մյուս իրավական ակտերից: Սահմանադրության հասկացությունը բնորոշելիս անհրաժեշտ է նկատի առնել նաև նրա էությունը կազմող այնպիսի բաղադրամասեր, ինչպիսիք են պետական իշխանությունը սահմանափակելու և որոշակի շահեր արտահայտելու հատկանիշները»⁷⁷:

ԱՄՆ Սահմանադրության 200-ամյակի կապակցությամբ հրատարակած իր ուսումնասիրության մեջ Դ.Լևինն առանձնապես կարևորում է այն հանգամանքը, որ Սահմանադրությունը՝ դա տեքստ չէ, այն արժեքային համակարգ է, արժեքներ, որոնք ապրում են, վերարտադրվում, ուղղորդում հասարակական կյանքը⁷⁸: Սահմանադրության արժեքը կայանում է նաև նրանում, թե որքանով են դրանում տեղ գտել կարևորագույն իրավական արժեքներ և ստեղծվել այնպիսի կառուցակարգեր, որոնց

⁷⁶ Հարությունյան Գ., Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, Նժար, 2005, էջ 11-19:

⁷⁷ Այվազյան Ն., Այվազյան Ա., Սահմանադրության էությունը և բովանդակությունը (համեմատական սահմանադրական վերլուծություն), Երևան, Տիգրան Մեծ, 2005, էջ 13-14:

⁷⁸ Representing popular sovereignty: the constitution in american political culture by Daniel Lessard Levin. Albany: State University of New York Press, 1999, www.bsos.umd.edu/gvpt/lpbr/subpages/reviews/levin99.html - 31.01.2014.

միջոցով պետությունը և հասարակությունը կմղվեն դեպի զարգացում՝ դրանով իսկ կատարելով իր հիմնական, այդ թվում նաև արժեքանական գործառույթները⁷⁹:

Յուրաքանչյուր Սահմանադրություն ինքնին հանդես է գալիս որպես արժեք արդեն այն ուժով, որ արտացոլում է տվյալ հասարակության կոնկրետ պատմական պայմաններում գերիշխող արժեքները և իրենից ներկայացնում է իրավաբանական հիմք այդ արժեքների գոյության համար⁸⁰: Պրոֆեսոր Ա.Ավտոնոմովը կարծում է, որ «Սահմանադրությունը՝ որպես արժեք բնութագրում են. պետության իրավական համակարգում գերակայությունը, նրանում ամրագրված նորմերի ուղղակի գործողությունը, մարդու իրավական կարգավիճակի ապահովումը, հասարակության և պետության կենսագործունեության հիմքերի սահմանումը, որը ծառայում է որպես իրավունքի բոլոր ճյուղերի կառուցման հիմք, պետական մարմինների համակարգի և հանրային իշխանության իրականացման կարգի ամրագրումը և այլն»⁸¹:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ Սահմանադրությունը հստակ արժեհամակարգի վրա խարսխված, բարձրագույն իրավաբանական ուժով օժտված իրավական փաստաթուղթ է, որի ընդունման նպատակն է կարգավորել հասարակական հարաբերությունները, երաշխավորել մարդու՝ որպես բարձրագույն արժեքի բնականոն

⁷⁹ Իրավագիտության բնագավառում արժեքների հանդեպ աճող հետաքրքրության ու սահմանադրական արժեքանության ճնշվածության հետ միաժամանակ խոսվում է նաև Սահմանադրության արժեքանական գործառույթի մասին, ըստ որի՝ մի կողմից Սահմանադրության նորմերի բովանդակությունը կանխորոշված է սոցիալական արժեքներով, մյուս կողմից Սահմանադրության նորմերը հասարակության մեջ արմատավորում են որոշակի արժեքներ՝ դրանով իսկ իրականացնելով արժեքանական գործառույթ (արժեքային կողմնորոշման գործառույթ): Տե՛ս Таева Н., Нормы Конституции Российской Федерации как форма выражения социальных ценностей // Конституционное и муниципальное право, 2009, N 5, էջ 4:

⁸⁰ Автономов А., Ценность Конституции // Государство и право, № 3, 2009, էջ 5:

⁸¹ Автономов А., Конституция как ценность // Сравнительное конституционное обозрение, №3(64), 2008, էջ 57:

կենսագործունեությունը և զարգացումը հասարակությունում, այդ նպատակով ստեղծել բարենպաստ մթնոլորտ, պաշտպանել նրա իրավունքներն ու ազատությունները, սահմանել պետության կառուցվածքն ու գործառնությունը:

Կարևոր է ոչ միայն Սահմանադրության արժեքի բացահայտումը, ճանաչումը, այլև պահպանումը: Սահմանադրության արժեքի պահպանման գործում իրենց հսկայական ներդրումը կարող են ունենալ նաև իրավաբանները, քանի որ արդի իրավամտաճողությամբ ու գիտելիքներով օժտված ցանկացած իրավաբանի համար Սահմանադրության հարգումը և նրա նորմերի հետևողական կենսագործումը պետք է կազմի նրա արհեստավարժ գործունեության առանցքը, որն էլ պետք է կրի շարունակական բնույթ: Այս կապակցությամբ տեղին է մեջբերել ՌԴ սահմանադրական դատարանի նախագահ, պրոֆեսոր Վ.Զորկինի այն դիտարկումը, ըստ որի՝ «պահանջվում է հասարակության, այդ թվում պրակտիկ իրավաբանների իրավագիտակցության արմատական վերափոխում: Այսօր Ռուսաստանի Սահմանադրական դատարանը բախվում է այն հիմնախնդիրներին, որոնք արևմտաեվրոպական երկրների սահմանադրական դատարանների առջև ծագել են մոտ 30 տարի առաջ. ամենից առաջ այդ հիմնախնդիրը ոչ միայն շարքային քաղաքացիների, այլև իրավաբանների, պետության պաշտոնատար անձանց և նույնիսկ մյուս դատարանների դատավորների իրավագիտակցության «սահմանադրականացումն է»⁸²:

Սահմանադրության արժեքանական հիմնական բնորոշիչները, որպես կանոն, նախ արտացոլվում են Հիմնական օրենքի նախաբանում՝ հիմնականում նորմ-նպատակների ձևով: Դրանք իրենց հետագա համակարգված արտացոլումն են գտնում սահմանադրական նորմ-սկզբունքներում, ինչպես նաև հիմնարար իրավահարաբերություններ կարգավորող նորմերում

⁸² Зорькин В., Россия и Конституция в XXI веке. 2-е изд., доп. М.: Норма, 2008, էջ 92:

ու դրույթներում⁸³: ԼՂՀ Սահմանադրության արժեքանական բովանդակության բացահայտումը պետք է սկսել հենց նախաբանից: Այն ունի պատմաիրավական և հոգևոր-մշակութային հիմքերի վրա խարսխված արժեքանական կուռ համակարգ: Պարզելու համար, թե ինչքանով են Սահմանադրության նախաբանում տեղ գտած դրույթները համարվում արժեքներ կամ ո՞րն է նախաբանի կարևորությունը կամ արդյո՞ք այն ունի նորմատիվային բովանդակություն, այժմ դիմենք մասնագիտական գրականությանը: «Սահմանադրության նախաբանի իրավաբանական հստակ նշանակությունը լուրջ բանավեճի առարկա է: Ոմանք գտնում են, որ Սահմանադրության նախաբանն ունի միայն քաղաքական նշանակություն, հետևաբար, այդ մասում տեղ գտած հասկացությունները միայն բացատրում են Սահմանադրության էությունը: Սահմանադրագետների մեկ այլ խումբ իրավագիտորեն գտնում է, որ դրանք լինելով սահմանադրական արժեքներ՝ գերակայություն ունեն ցանկացած այլ իրավական նորմի նկատմամբ»⁸⁴: Կա կարծիք, ըստ որի՝ «նախաբանը, առանձնապես նրա կառուցվածքը, իրավաբանական ուժն ու բովանդակությունը պահպանում են որոշակի նորմատիվային նշանակություն»⁸⁵, իսկ մեկ այլ կարծիքի համաձայն՝ «որպես կանոն, Սահմանադրությունները սկսվում են նախաբաններով, որոնք կրում են հանդիսավոր-հոշակագրային բնույթ և չունեն իրավաբանական ուժ»⁸⁶: Նախաբանը համարվում է Սահմանադրության բաղկացուցիչ մասը և օրենսդիր ու գործադիր իշխանության համար ունի ոչ միայն

⁸³ Հարությունյան Գ., Սահմանադրական հիմնարար արժեքների իրացման երաշխիքները պետական քաղաքականության մակարդակում և հասարակական պրակտիկայում // Օրենք և իրականություն, թիվ 10, հոկտեմբեր, 2008թ., էջ 1:

⁸⁴ Գյուլումյան Ա., «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»-ի նախաբանի մեկնաբանությունը: Ընդհ. խմբ. Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010, էջ 37:

⁸⁵ Комментарий к Конституции Российской Федерации (под общ. ред. Л.В. Лазарева), Новая правовая культура, 2009 г., <http://constitution.garant.ru/science-work/comment/5366634/chapter/1/#5555> – 23.12.2013.

⁸⁶ Баглай М., Конституционное право Российской Федерации: учеб. для вузов, 6-е изд., изм. и доп. М.: Норма, 2007, էջ 84:

բարոյական, այլև իրավաբանական ուժ, իսկ դատարանների կողմից պետք է ընկալվի որպես փորձաքար, որի օգնությամբ ստուգվում է Սահմանադրության բաժիններում, գլուխներում և հոդվածներում բովանդակվող սահմանադրական նորմերի մեկնաբանման համապատասխանությունը⁸⁷:

Վերոհիշյալ մոտեցումներից կարելի է հանգել այն եզրակացության, որ զուտ ձևակերպման իմաստով ԼՂՀ Սահմանադրության նախաբանը միգուցե հոչակագրային բնույթ է ստանում, բայց այն ավելի խորությամբ հետազոտելու պարագայում համոզվում ենք, որ ունի սահմանադրաիրավական բովանդակություն, որոշ առումով նաև նորմատիվային բնույթ, քանի որ նախաբանում թվարկվում են այն կարևոր իրավական փաստաթղթերը, որոնք հիմք են հանդիսացել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմավորման համար և այն նպատակները, որոնց կյանքի կոչման համար ընդունվում և հոչակվում է Սահմանադրությունը, ուստի անտրամաբանական կլինի դրանք որակել որպես լոկ հոչակագրային բնույթ ունեցող նորմեր կամ դրույթներ:

ԼՂՀ Սահմանադրության նախաբանի առանձնահատուկ գծերից մեկն էլ այն է, որ վերջինս ունի քաղաքական, գաղափարախոսական և արժեքական ծանրաբեռնվածություն, որն արտահայտվում է ամենից առաջ նրանում, որ «որպես ազատ, իրավահավասար քաղաքացիների ինքնիշխան պետություն՝ բարձրագույն արժեքներ են ճանաչվում մարդը, նրա կյանքն ու անվտանգությունը, իրավունքներն ու ազատությունները»⁸⁸, բայց ինչպես բոլոր սահմանադրությունների նախաբանները, այն չի առաջացնում անմիջական իրավական հետևանքներ, չնայած այն բանին, որ նրանում սովորաբար հղում է կատարվում տարբեր իրավական փաստաթղթերին: Նախաբանի առանձնահատուկություններից մեկն էլ այն է, որ նրանում ամրագրված է

⁸⁷ Эбзеев Б., Комментарий к преамбуле Конституции РФ. В кн. Комментарий к Конституции Российской Федерации / Под. ред. В.Д.Зорькина, Л.В.Лазарева, М.: Эксмо, 2009, էջ 39:

⁸⁸ Տե՛ս ԼՂՀ Սահմանադրության նախաբանի 3-րդ մասը:

այնպիսի դրույթ, որն ունենա պարտադիր բնույթ և լինի անմիջականորեն գործող:

ԼՂՀ Սահմանադրության տեքստը նախաբանի հետ համեմատելիս ի հայտ է գալիս հետևյալ անհամապատասխանությունը. ԼՂՀ Սահմանադրության նախաբանում տեղ գտած «մարդը որպես բարձրագույն արժեք» ձևակերպումն իր ուրույն տեղը չի գտել Սահմանադրության բուն տեքստում, իսկ սա, կարծում ենք, Սահմանադրության հետագա կատարելագործման ելակետերից մեկը պետք է հանդիսանա, ինչպես դա արված է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածում:

Եթե ԼՂՀ Սահմանադրությունն ամբողջության մեջ դիտարկենք որպես ներկա նվաճումների և ապագա պատկերացումների միասնականություն, ապա Սահմանադրության նախաբանում արտացոլված է այն անցած ճանապարհը, որը հնարավորություն է տալիս բնութագրել հասարակությունը պատմական զարգացման արդի ժամանակաշրջանում, որդեգրած արժեքները և այն հիմքերը, որոնց վրա խարսխվելով ընդունվում է Սահմանադրությունը, և դրանով հանդերձ կանխորոշվում նրա հետագա ճակատագիրը:

Սահմանադրական այս կամ այն դոկտրինայի ընդունումը տվյալ երկրի համար ինքնին սահմանադրաիրավական որոշակի արժեքների համակարգի ընդունում է, որն արտահայտում է պետական մակարդակում, ինչպես նաև հանրային գիտակցության մեջ ընկալված և իմաստավորված պատկերացումները պետության և հասարակության կամակերպման ու զարգացման մասին⁸⁹:

Սահմանադրական արժեքանությունն իմաստազուրկ կլինի, եթե տեսականորեն Սահմանադրության մեջ ամրագրված արժեքները միս ու արյուն չդառնան մարդկանց առօրյա կյանքում:

⁸⁹ Հարությունյան Գ., Սահմանադրական հիմնարար արժեքների իրացման երաշխիքները պետական քաղաքականության մակարդակում և հասարակական պրակտիկայում // Օրենք և իրականություն, թիվ 10, հոկտեմբեր, 2008թ., էջ 1:

Իսկ այդ ամբողջ գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել իրար անպայմանորեն հաջորդող հետևյալ փուլերի՝

1. պատմականորեն ձևավորված և սերնդեսերունդ փոխանցված արժեքների ամրագրում ինչպես Սահմանադրության, այնպես էլ օրենսդրության մեջ,
2. արժեքների ընկալում,
3. արժեքների իրացման համար կառուցակարգերի սահմանում,
4. արժեքների իրացման համար պետության կողմից երաշխիքների ապահովում:

Սահմանադրության արժեքը բացահայտելու համար առաջին հերթին անհրաժեշտ է հստակեցնել այն արժեքների ցանկը, որոնք հիմք են տալիս Հիմնական օրենքը որակել որպես այդպիսին: Սահմանադրության մեջ բովանդակվող արժեքները պայմանավորված են տվյալ հասարակարգի որդեգրած արժեհամակարգով, իսկ Սահմանադրության իրական արժեքն ուղիղ համեմատական է երկրում սահմանադրականության հաստատման մակարդակին. որքան բարձր է սահմանադրականության մակարդակը, այնքան ավելի մեծ է Սահմանադրության արժեքը:

Ուսումնասիրելով ԼՂՀ Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքներ» գլուխը, գալիս ենք այն եզրակացության, որ սահմանադրական արժեքների զգալի մասն ամրագրված է հենց այդ գլխում, իսկ սահմանադրական կարգի հիմունքների ամբողջությունը Սահմանադրության մեջ ունի բացառիկ կարևորություն, քանի որ ծանրաբեռնված է հասարակության և պետության համար կենսական համարվող արժեքային կողմնորոշիչներով:

Խոսելով ԼՂՀ Սահմանադրության մեջ արժեքների ամրագրվածության մասին, նախ և առաջ պետք է հայացք ձգել ԼՂՀ կազմավորման պահից ի վեր ընդունված կարևորագույն իրավական փաստաթղթերին (Հռչակագրեր, սահմանադրական օրենք և այլն) և տեսնել՝ արդյոք այդ սահմանադրական արժեքները, պատմականորեն ձևավորված լինելով հանդերձ, ամրագրվել են

ազգային օրենսդրության մեջ, որից հետո նոր՝ Սահմանադրության մեջ, թե՛ անմիջականորեն իրենց ամրագրումն են ստացել Սահմանադրությունում՝ անդրադարձ չկատարելով դրա ծագման ակունքներին: Տեղին է հիշատակել Վ.Կրուսի այն կարծիքը, համաձայն որի՝ «նուսական սահմանադրական արժեքները նույնպես անկրկնելի են ու բացառիկ, ինչպես ամեն մի ինքնիշխան ժողովրդի մոտ»⁹⁰: ԼՂՀ-ի պարագայում այդ անկրկնելիությունը պետք է դրսևորվի ոչ միայն դրանց ձևավորման, Սահմանադրության և օրենսդրության մեջ ամրագրման, այլև իրացման ժամանակ: Սահմանադրական արժեքի անկրկնելիության հետ անքակտելիորեն կապված են դրա ի հայտ գալու հիմքը կամ հանգամանքները:

Այսպես, ազատության, անկախության, իրավահավասարության ձգտման մասին դրույթն ամրագրված է «ԼՂՀ հռչակման մասին» Հռչակագրի 1-ին կետում: «ԼՂՀ պետական անկախության մասին» Հռչակագրի 2-րդ կետը վերաբերում է ժողովրդաիշխանությանը, 3-րդ կետը՝ քաղաքացիների իրավունքների ու ազատությունների երաշխավորմանը, 7-րդ կետը՝ ինքնիշխանությանը, իսկ 11-րդ կետը՝ խտրականության բացառմանն ու իրավահավասարությանը:

«ԼՂՀ պետական անկախության հիմունքների մասին» ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածը նվիրված է ժողովրդավարությանը և իշխանությունն օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի բաժանմանը, 4-րդ և 5-րդ հոդվածները՝ ինքնիշխանությանը, իսկ 9-րդ հոդվածի 2-րդ մասը՝ խտրականության բացառմանն ու իրավահավասարությանը:

Իր կառուցվածքով ԼՂՀ Սահմանադրությունը բաղկացած է նախաբանից, 12 գլուխներից, որոնք իրենց մեջ բովանդակում են 142 հոդվածներ: ԼՂՀ Սահմանադրության մեջ ամրագրված արժեքներից կարելի է առանձնացնել հետևյալները.

- ինքնիշխանություն (հոդված 1, մաս 1),

⁹⁰ Кресс В., Российская конституционная аксиология: актуальность и перспективы // Конституционное и муниципальное право, 2007, №2, էջ 10:

- ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետություն (այդպիսի պետության կառուցում) (հոդված 1, մաս 1),
- մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները որպես անօտարելի և բարձրագույն արժեքներ, ազատության, արդարության և խաղաղության հիմք (հոդված 2),
- ժողովրդաիշխանություն (հոդված 3, 4),
- իրավունքի գերակայություն (հոդված 5, հոդված 6, մաս 2),
- իշխանությունների բաժանում և հավասարակշռում (հոդված 6, մաս 1),
- Սահմանադրության՝ բարձրագույն իրավաբանական ուժով օժտված լինելն ու նրա նորմերի անմիջական գործողությունը (հոդված 7, մաս 1),
- գաղափարախոսական բազմակարծություն և բազմակուսակցություն (հոդված 8),
- տնտեսական գործունեության ազատություն և ազատ տնտեսական մրցակցություն (հոդված 9),
- տեղական ինքնակառավարում (հոդված 13),
- կյանքի իրավունքի երաշխավորում և մահապատժի բացառում (հոդված 18),
- իրավահավասարություն (հոդված 21),
- ազատություն, արդարություն, պառլամենտարիզմ և այլն:

Սահմանադրական արժեքները տարբեր երկրների և միջազգային կառույցների Սահմանադրություններում արտահայտվում են տարբեր ձևով. օրինակ, Եվրոպական Միության երկրների վավերացմանը ներկայացրած Սահմանադրական համաձայնագրի 2-րդ հոդվածում ամրագրված էին Միության արժեքները, համաձայն որի՝ «Միությունը հիմնված է այնպիսի արժեքների վրա, ինչպիսիք են մարդկային արժանապատվությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքների հարգումը: Այդ արժեքներն ընդհանուր են Անդամ պետությունների համար, որոնցում հասարակությանը բնորոշ են անխտրականությունը, բազմակարծությունը, հանդուրժողականությունը,

արդարադատությունը և համերաշխությունը»: Հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանն սկսվում է հետևյալ տողերով. «Քանզի մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն աշխարհի ազատության, արդարության և խաղաղության հիմքն է...», իսկ ԼՂՀ Սահմանադրության 2-րդ հոդվածը հռչակում է, որ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ճանաչում է մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները որպես անօտարելի և բարձրագույն արժեքներ, ազատության, արդարության և խաղաղության հիմք»: Այս հոդվածում ընդգծվում է այն կարևորագույն հանգամանքը, որ Սահմանադրության մակարդակով բարձրագույն են ճանաչվում միայն վերոհիշյալ արժեքները:

ԼՂՀ Սահմանադրության վերոհիշյալ հոդվածի հետ կապված պետք է կատարել մի քանի նկատառումներ.

Նախ՝ խոսքը մարդու, այլ ոչ թե քաղաքացու հիմնական իրավունքների մասին է, իսկ Սահմանադրության իմաստով «մարդ» հասկացությունն ավելի լայն է, քան «քաղաքացի» հասկացությունը,

Երկրորդ՝ բարձրագույն են ճանաչվում միայն հիմնական իրավունքներն ու ազատությունները, իսկ հիմնական իրավունքների տակ հասկացվում են բնական իրավունքները, որոնք մարդուց անօտարելի են, իսկ ԼՂՀ Սահմանադրության մեջ ամրագրված այդ իրավունքներից կարելի է նշել կյանքի, անձեռնմխելիության, աշխատանքի ընտրության ազատության, մասնավոր սեփականության իրավունքները և այլն: Այստեղից հետևում է, որ ԼՂՀ Սահմանադրության մեջ բարձրագույն արժեք համարվող իրավունքները միայն բնական իրավունքներն են,

Երրորդ՝ այդ հիմնական իրավունքները պետք է հիմք ծառայեն ազատության, արդարության և խաղաղության համար, ինչպես նախատեսված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում:

Ըստ Վ.Չերվոնյուկի՝ հիմնական իրավունքներն ու ազատություններն այդպես են կոչվում, որովհետև

- պաշտպանում են անձի հիմնական, բազային արժեքներն ու շահերը,
- համարվում են ընդհանուր առանց բացառության բոլորի համար՝ անկախ սեռից, ռասայից, ազգությունից, դավանանքից և այլն,
- բնութագրվում են կարգավորման հատուկ իրավաբանական ձևով, ամրագրվում են պետության Հիմնական օրենքում,
- օժտված են առավել բարձր իրավաբանական ուժով⁹¹:

Լ.Շարնինան որպես բարձրագույն արժեքներ է դիտարկում ՌԴ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների հետևյալ ցանկը՝ կյանքի, անձի արժանապատվության, մասնավոր կյանքի անձեռնմխելիության, անձնական և ընտանեկան գաղտնիքի, պատվի և բարի համբավի պաշտպանության, առանց իր համաձայնության անձի մասնավոր կյանքի մասին տեղեկատվության հավաքման, պահպանման, օգտագործման և տարածման արգելքի իրավունք, խղճի և դավանանքի ազատություն⁹²: Այսպես, օրինակ, ՌԴ Սահմանադրության 2-րդ հոդվածում սահմանված է. «Մարդը, նրա իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեք են: Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ճանաչումը, հետևումը և պաշտպանությունը պետության պարտականությունն է»⁹³: Այս կապակցությամբ Լ.Շարնինան նկատում է, որ «նրանում ակնհայտորեն մատնանշվում է այն, թե որ իրավունքներն են համարվում բարձրագույն արժեք. դա մարդու իրավունքներն են: Չէ՞ որ հոդվածում խոսքը մարդու, նրա իրավունքների և ազատությունների մասին է»⁹⁴: Նկատենք

⁹¹ Червонюк В., Конституционное право России. М.: Термика, Инфра-М, 2004, <http://www.alleng.ru/d/jur/jur018.htm> - 12.12.2013.

⁹² Шарнина Л., Человек, его права и свободы как высшая ценность // Конституционное и муниципальное право, №11, 2009, էջ 26:

⁹³ Конституция Российской Федерации, М.: Проспект, 2010, էջ 3:

⁹⁴ Шарнина Л., Человек, его права и свободы как высшая ценность // Конституционное и муниципальное право, №11, 2009, էջ 24:

նաև, որ Ռուսաստանում և Հայաստանում մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները որպես բարձրագույն արժեք դիտարկելու միտումը սկիզբ է առել 2000-ականների սկզբներին⁹⁵:

Հարյուրամյակներ պահանջվեց, որպեսզի մարդկությունը հանգի այն ճշմարտությանը, որ հանրային կյանքում բացի իրավական ձևից՝ չկա և սկզբունքորեն չի կարող լինել հավասարության, ազատության ու արդարության արտահայտության և կեցության որևէ այլ ձև: Իսկ վերջինիս էությունը հանգում է մարդու բնական իրավունքների՝ որպես բարձրագույն արժեքի, անմիջականորեն գործող իրավունքի և պոզիտիվ իրավունքի հիմքի ճանաչմանը⁹⁶:

Չնայած այն հանգամանքին, որ ԼՂՀ Սահմանադրության մակարդակով մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները հռչակված են որպես անօտարելի և բարձրագույն արժեքներ, այնուհանդերձ դրանք չեն կարող լինել բացարձակ, քանի որ դրա հետևանքով կարող են տուժել մարդկանց որոշակի խումբ, հասարակությունը, պետությունը, ուստի երկրի Հիմնական օրենքով նախատեսված է դրանց սահմանափակման հնարավորություն, մասնավորապես՝ 52 հոդվածի համաձայն՝ «Սահմանադրության 23-25-րդ, 27-31-րդ հոդվածներում, 32-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում, 34-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա պիտանի, անհրաժեշտ և համարժեք է պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց իրավունքների և

⁹⁵ Ерицян А., Конституционное регулирование прав и свобод человека и гражданина в республике Армения: Автореф. дис. ... д-ра юрид. наук, М., 1999, էջ 7:

⁹⁶ Հարությունյան Գ., «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»-ի 3-րդ հոդվածի մեկնաբանությունը: Ընդհ. խմբ. Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010, էջ 63:

ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար»: Վ.Ջորկինի կարծիքով՝ սահմանափակումները պետք է սահմանվեն օրենսդրի կողմից ոչ թե կամայականորեն, այլ Սահմանադրության հիման վրա: Առանց այս պայմանների կատարման իրավունքի գերակայությունն անհնար է⁹⁷:

Սահմանադրական արժեքանության հիմքերը պարզելը շատ կարևոր է, քանի որ դրանց զարգացմամբ է պայմանավորված իրավական կյանքում սահմանադրական արժեքանության պահանջվածության ու կենսունակության հարցը: Սակայն հարց է ծագում, թե որո՞նք են այդ հիմքերը և ինչպե՞ս կարող է կյանքի կոչվել այդ առաքելությունը: Քանի որ սահմանադրական արժեքանության ուսումնասիրության օբյեկտներն արժեքներն են, այն էլ՝ սահմանադրական, ուստի դրանք բացահայտելով մենք պետք է տեսնենք դրանց փոխառնչությունն ու փոխկապվածությունը երկրում սահմանադրական արժեքանության միջոցով սահմանադրականություն հաստատելու հետ: Այստեղ միայն արձանագրել, որ սահմանադրական արժեքանության հիմքերը կազմում են սահմանադրական արժեքները, բավարար չէ: Կարևոր է նաև, թե այդ արժեքներն ինչպե՞ս են առարկայանում, միս ու արյուն դառնում օրենսդրության մեջ, իրացվում իրավակիրառական պրակտիկայում, որով էլ պայմանավորված է այդ արժեքների կենսունակության աստիճանը:

Սահմանադրության արժեքանական որակները դրսևորվում են նրանում ամրագրված նորմ-նպատակների, նորմ-սկզբունքների և կոնկրետ ու հիմնարար իրավահարաբերություններ կանոնակարգող դրույթների միջոցով⁹⁸: ԼՂՀ Սահմանադրության մեջ բովանդակվող արժեքները հիմնականում ամրագրված են 1-ին և 2-րդ գլուխներում, որոնք համապատասխանաբար անվանվում են «Սահմանադրական կարգի հիմունքները» և «Մարդու և քա-

⁹⁷ Зорькин В., Аксиологические аспекты Конституции России // Сравнительное конституционное обозрение, №4(65), 2008, էջ 9:

⁹⁸ Գյուլումյան Ա., «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»-ի նախաբանի մեկնաբանությունը: Ընդհ. խմբ. Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010, էջ 35:

ղաքացու հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականությունները»: Սահմանադրության 1-ին և 2-րդ գլուխներում տեղ գտած նորմ-նպատակներն ու նորմ-սկզբունքները նորմ-արժեքներ կամ պարզապես սահմանադրական արժեքներ որակելը պայմանավորված է նրանով, որ հենց այդ սկզբունքներն են ելակետ հանդիսանում ինչպես Սահմանադրության հետագա գլուխների շարադրանքի, այնպես էլ ամբողջ օրենսդրական դաշտի ձևավորման համար, իսկ դրանից չնչին իսկ շեղումը նշանակում է ոչ միայն հակասություն Սահմանադրության հետ, այլև Սահմանադրության մակարդակով որդեգրած արժեքների արհամարհում, ոտնահարում: Իսկ այդ ելակետային սկզբունքներից կարելի է նշել հատկապես ԼՂՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածները: Նշենք, որ ԼՂՀ և ՀՀ Սահմանադրությունների 1-3 հոդվածները համարյա ամբողջությամբ համընկնում են: Ամենևին էլ պատահական չէ այդ հոդվածների հիշատակումը. նախ՝ դա պայմանավորված է նրանով, որ այդ հոդվածներից մեկում նշվում է մարդու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքի մասին, երկրորդ՝ դրանցում ամրագրված են այնպիսի կարևորագույն և անփոխարինելի գաղափար-արժեքներ (օրինակ՝ ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության կառուցումը, ժողովրդաիշխանության սկզբունքը և այլն), որոնց իրագործման համար էլ ընդունվում է երկրի Հիմնական օրենքը⁹⁹:

Սահմանադրական արժեքանության և Սահմանադրության մեջ բովանդակվող արժեքների հարաբերակցության հետ կապված հարցերի հարցը մնում է այն, թե ինչպես կարող են սահմանադրական արժեքներն իրացվել՝ դրանով իսկ զարգացում ապահովելով կենսագործունեության բոլոր ոլորտներում: Մեր կարծիքով՝ այդ արժեքները պետք է ամրագրվեն

⁹⁹ ՀՀ Սահմանադրության 1-3 հոդվածների մեկնաբանությունները տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդհ. խմբ. Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010, էջ 40-71:

իրավաստեղծ գործունեություն իրականացնելիս և իրացվեն իրավակիրառական պրակտիկայում, որի անշեղ կատարման համար պետք է սահմանվեն վերահսկողական կառուցակարգեր թե՛ քաղաքացիների, թե՛ պետական մարմինների համար:

§ 3. ԼՂՀ Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունների հիմնական բնութագրիչները

Ցանկացած երկրի սահմանադրություն արժեքանական չափանիշներով գնահատելու համար, առաջին հերթին, անհրաժեշտ է այն համեմատության մեջ դնել տվյալ երկրի զարգացվածությանն ավելի մոտ կամ նույն կարգավիճակում գտնվող կամ էլ հարևան պետությունների Հիմնական օրենքների հետ ու վեր հանել այն էական գծերը, որոնք հիմք կտան բացահայտելու սահմանադրության արժեքանական առանձնահատկությունների հիմնական բնութագրիչները:

Ուսումնասիրելով ԼՂՀ Սահմանադրությունը՝ առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, որ այն նման է այլ երկրների սահմանադրություններին, և բացակայում է այն յուրահատկությունն ու ինքնատիպությունը, որով այն կարող է առանձնանալ իր տեսակի մեջ: Խորությամբ ու բազմակողմանիորեն ուսումնասիրելու և այլ պետությունների (այդ թվում նաև չճանաչված) Հիմնական օրենքների հետ համեմատելու պարագայում պարզ է դառնում, որ ԼՂՀ Սահմանադրությունն ունի մի շարք կարևորագույն արժեքանական առանձնահատկություններ, որոնցից են՝

1. ԼՂՀ Սահմանադրությունը չճանաչված պետության սահմանադրություն է,
2. չնայած չճանաչվածությանը, Արցախն իր որդեգրած արժեհամակարգով չի զիջում ոչ միայն չճանաչված, այլև միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ հանդիսացող պետություններին,

3. ԼՂՀ Սահմանադրության մակարդակով պետությունը պատրաստակամություն է հայտնել և կամավոր կերպով պարտավորություն ստանձնել հետևելու միջազգային պայմանագրերին ու միջազգային իրավունքի նորմերին, չնայած այն բանին, որ դեռևս միջազգայնորեն ճանաչված չէ: Հատկանշական է, որ միջազգային փաստաթղթերի մի շարք կարևորագույն դրույթներ ամրագրված են ԼՂՀ օրենսդրության մեջ, իսկ վերջին շրջանում ԼՂՀ-ն միացել է մի շարք միջազգային փաստաթղթերի¹⁰⁰ և կամավոր ճանաչել դրանց իրավազորությունը ԼՂՀ տարածքում:
4. հետխորհրդային տարածաշրջանի չճանաչված երկրներից Արցախի Հանրապետությունը միակն է, որն իրեն հռչակել է նաև որպես սոցիալական պետություն, երաշխավորվում է կյանքի իրավունքը և միանշանակորեն վերացված է մահապատիժը,
5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը մյուս չճանաչված երկրներից տարբերվում է նաև նրանով, որ Սահմանադրության մեջ մարդու հիմնական իրավունքները և ազատությունները հռչակվել են որպես բարձրագույն արժեք (համանման դրույթ կարելի է հանդիպել նաև Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության Սահմանադրության մեջ),
6. չնայած այն հանգամանքին, որ քննարկվող չճանաչված երկրներից առաջինն անկախություն հռչակել ու սահմանադրություն է ընդունել Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետությունը, այնուհանդերձ, արժեքանական

¹⁰⁰ Խոսքը Եվրոպական մշակութային Կոնվենցիան, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային Դաշնագիրը, Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին Կոնվենցիան, Հնագիտական ժառանգության պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիան ու Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիան վավերացնելու մասին ԼՂՀ օրենքների մասին է, որոնք ընդունվել են 2014-2015թթ. ընթացքում:

ծանրաբեռնվածությամբ աչքի է ընկնում Արցախի Սահմանադրությունը, իսկ վերջինիս հիման վրա երկրում իրականացվող ժողովրդավարական գործընթացները, հատկապես տարբեր մակարդակների ընտրություններն ու հանրաքվեներն արժանանում են միջազգային դիտորդների բարձր գնահատականին և համարվում օրինակելի¹⁰¹, այսինքն՝ սահմանադրական արժեքները (տվյալ պարագայում՝ ընտրական գործընթացներին առնչվող) ԼՂՀ-ում ոչ թե հոչակագրային բնույթ են կրում, այլ ապրող իրողություն են: Այժմ վերոհիշյալ արժեքանական առանձնահատկությունների կանդիդատանք առանձին-առանձին:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեռևս չճանաչվածությունն ամենևին էլ չի նշանակում, որ երկիրը համակեցության սահմանված կանոններով չի ապրում: ԼՂՀ-ն ունի միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող պետություններին ներհատուկ բոլոր ատրիբուտները¹⁰², և երկրի հոչակման պահից մինչ օրս պետական իշխանության մարմինները ձևավորվում են օրինական ձևով՝ կա՛մ ընտրությունների, կա՛մ նշանակման ճանապարհով:

Արցախի Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունների հիմնական բնութագրիչները բացահայտելուց առաջ տեղին ենք համարում կատարել հետևյալ հարցադրումը. արդյոք երկրի չճանաչված լինելը հի՞մք է սահմանադրության արժեքանական առանձնահատկությունների մասին խոսելու վերապահումով, և ի՞նչ տրամաբանական կապ կա այդ երկու

¹⁰¹ Միջազգային դիտորդների եզրակացություններին ու կարծիքներին կարելի է ծանոթանալ ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքէջում (<http://cecncr.am>):

¹⁰² 1933թ. դեկտեմբերի 26-ին Մոնտեվիդեոյում ստորագրված և 1936թ. դեկտեմբերի 26-ին ուժի մեջ մտած Պետությունների իրավունքների և պարտականությունների մասին Մոնտեվիդեոյի Կոնվենցիայի 1-ին հոդվածում նշված են միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող պետության հետևյալ հատկանիշները. մշտական բնակչություն, որոշակի տարածք, կառավարություն և այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու կարողություն:

իրողությունների միջև: Այս նպատակով տեղին ենք համարում այն համեմատության մեջ դնել մի կողմից չճանաչված, իսկ մյուս կողմից հենց Հարավային Կովկասի որոշ երկրների սահմանադրությունների հետ:

Համեմատելով ԼՂՀ Սահմանադրությունն այլ երկրների Հիմնական օրենքների հետ՝ անհրաժեշտ ենք համարում արժեքանական առանձնահատկությունների հիմնական բնութագրիչները ներկայացնել երկու ասպեկտներից.

1. սահմանադրության մակարդակով որոշ իրավական հասկացություններ կամ ինստիտուտներ արժեք կամ բարձրագույն արժեք որակելու տեսանկյունից,
2. այլ երկրների Սահմանադրություններում ամրագրված հանրաճանաչ իրավական հասկացությունները կամ ինստիտուտները, որոնք վերջին ժամանակներս ակտիվ կերպով քննարկվում են միջազգային տարբեր գիտաժողովներում կամ գիտական աշխատություններում, որպես իրավական կամ սահմանադրական արժեքներ դիտարկելու տեսանկյունից:

Հարավային Կովկասի քաղաքական քարտեզին նայելիս տեսնում ենք, որ կան երեք չճանաչված պետություններ՝ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետություն, Աբխազիայի Հանրապետություն և Հարավային Օսեթիայի Հանրապետություն:

Հարկ է նշել, որ Հարավային Կովկասի չճանաչված պետություններից առաջինն իր անկախությունը հոչակել է Հարավային Օսեթիայի Հանրապետությունը՝ 1990թ. սեպտեմբերի 20-ին, որին հաջորդել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ 1991թ. սեպտեմբերի 2-ին, իսկ վերջում՝ Աբխազիայի Հանրապետությունը՝ 1994թ. նոյեմբերի 26-ին: Այս երկրներից առաջինը Հարավային Օսեթիայի Հանրապետությունն է ընդունել Սահմանադրություն՝ 1993թ. նոյեմբերի 2-ին համաժողովրդական հանրաքվեի միջոցով, իսկ գործող Սահմանադրությունն ընդունվել է 2001թ. ապրիլի 8-ին՝ հանրաքվեով: Աբխազիայի Սահմանադրությունն ընդունվել է Աբխազիայի Հանրապետության Գերագույն խորհրդի

1994թ. նոյեմբերի 26-ին կայացած 12-րդ նստաշրջանում, վավերացվել՝ 1999թ. հոկտեմբերի 3-ին տեղի ունեցած համաժողովրդական հանրաքվեով: Իսկ ահա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունն¹⁰³ ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 10-ին կայացած համաժողովրդական հանրաքվեի միջոցով:

Իսկ ընդհանրապես հետխորհրդային տարածաշրջանի չճանաչված պետություններից առաջինը Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետությունն է հռչակել իր անկախությունը՝ 1990թ. սեպտեմբերի 2-ին, ինչպես նաև վերոհիշյալ երկրների մեջ առաջինն ընդունել Սահմանադրություն՝ 1991թ. սեպտեմբերի 1-ին: 1995թ. դեկտեմբերի 24-ին ընդունվել է երկրորդ սահմանադրությունը, որով երկիրը հռչակվել է ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական պետություն՝ կառավարման խորհրդարանական-նախագահական ձևով¹⁰⁴:

Քննարկվող երկրների անկախության հռչակման ու սահմանադրությունների ընդունման փաստերի միջև առկա է այնպիսի կապ, որն առավել շատ վերաբերում է Հիմնական օրենքի արժեքանական կողմին. հիշյալ երկրների մեծամասնությունը

¹⁰³ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության ընդունման անհրաժեշտության մասին խոսվում էր դեռևս Հանրապետության հռչակման առաջին օրերին: Այսպես, ԼՂՀ ժողովրդական պատգամավորների խորհրդի գործկոմը 1991թ. նոյեմբերի 28-ին տեղի ունեցած 17-րդ նիստի ժամանակ ընդունեց թիվ 4/146 որոշումը «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հիմնական օրենքի՝ ԼՂՀ Սահմանադրության մշակման հանձնաժողովի կազմավորման մասին» (տե՛ս ԼՂՀ ՊԱ, ֆ.1, ց.2, կ.28, պ.մ.330, թ.10-11), իսկ ԼՂՀ Գերագույն խորհուրդը 1992թ. հունիսի 5-ին ընդունեց թիվ Ն-0045ա-1 որոշումը «ԼՂՀ Սահմանադրության մշակման հանձնաժողով ստեղծելու մասին» (տե՛ս ԼՂՀ Ազգային ժողովի ընթացիկ արխիվը), սակայն նորահռչակ ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանի սկսած լայնամասշտաբ ագրեսիայի պատճառով հիշյալ որոշումներն ի կատար չեն ածվել, քանի որ առավել մեծ ուշադրություն դարձվում էր երկրի անվտանգության և ազգաբնակչության խաղաղ գոյակցության հարցերին:

¹⁰⁴ Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության կազմավորման ու կայացման մասին ավելի մանրամասն տե՛ս Брусалинская Г., Органы законодательной и исполнительной власти Приднестровской Молдавской Республики на современном этапе. – Тирасполь: Изд. Приднестр. ун-та, 2008, 208 էջ:

սահմանադրությունն ընդունել է պետության հռչակման առաջին իսկ տարիներին ու ամրագրել այնպիսի սահմանադրական արժեքներ, որոնցով նախկինում չի ապրել կամ ընդհանրապես որևէ իրավական փաստաթղթում ամրագրված չի եղել, իսկ Արցախի պարագայում հարցին մոտեցել են այլ տեսանկյունից. սահմանադրական արժեքները սկզբից ամրագրվել են հռչակագրերում, օրենքներում, որոնք տարիների ընթացքում ապացուցել են իրենց կենսունակությունը, որից հետո նոր տեղ են գտել ԼՂՀ Սահմանադրության մեջ:

Այժմ խոսենք վերոնշյալ ասպեկտներից առաջինի մասին: Հարավային Կովկասի երեք չճանաչված երկրների սահմանադրությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ միայն Արցախի Սահմանադրության մեջ է ամրագրված այնպիսի ձևակերպում, ըստ որի՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ճանաչում է մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները որպես անօտարելի և բարձրագույն արժեքներ, ազատության, արդարության և խաղաղության հիմք»: Իսկ 1995թ. ընդունված Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության Սահմանադրության 16 հոդվածում ամրագրվեց կարևոր մի դրույթ, ըստ որի՝ «Մարդը, նրա իրավունքները և ազատությունները հասարակության և պետության բարձրագույն արժեք են»: Հարկ է նշել, որ սահմանադրության մեջ այդպիսի նորմի բացակայությունը հաճախ ենթարկվում է քննադատության: Օրինակ՝ կա կարծիք, որ Աբխազիայի Սահմանադրության 1-ին գլխում իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեք ճանաչելու մասին հոդվածի բացակայությունը կարելի է դասել Սահմանադրության բացերի շարքին¹⁰⁵:

Ինչ վերաբերում է Հարավային Կովկասի մյուս երկրներին (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան), որոնց Սահմանադրությունների որոշ դրույթներ նույնպես կհամեմատենք ԼՂՀ

¹⁰⁵ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Миканба С., Специфика норм отдельных институтов Конституции Абхазии, Государство и право, №7, 2011, էջ 104-106:

Սահմանադրության հետ, պետք է նշել, որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է»¹⁰⁶: Վրաստանի Սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն՝ «Վրաստանը ճանաչում և հետևում է մարդու հանրաճանաչ իրավունքներին ու ազատություններին, որպես անանց և բարձրագույն մարդկային արժեքներ»: Իսկ ահա Ադրբեջանի սահմանադրության մեջ արժեքի կամ բարձրագույն արժեքի մասին անգամ խոսք չկա այն դեպքում, երբ դրա մեջ երկու անգամ (2002թ. օգոստոսի 24-ին և 2009թ. մարտի 18-ին) փոփոխություններ և լրացումներ են կատարվել, ու այդ մասով որևէ դրական տեղաշարժ չի արձանագրվել:

Այս համատեքստում տեղին ենք համարում կատարել մի կարևոր շեշտադրում. մենագրության մեջ ներկայացված Հավելված 1-ից պարզ երևում է, որ դիտարկվող բոլոր երկրներն իրենց հոչակել են որպես ժողովրդավարական և իրավական: Քանի որ ժողովրդավարական պետության կառուցման կարևորագույն սկզբունքներից առաջինը ժողովրդաիշխանությունն է, ընդ որում՝ այդ սկզբունքը ևս բոլոր սահմանադրություններում ամրագրված է, հարց է առաջանում, թե որքանով է սահմանադրության բուն տեքստում այն ներդաշնակ մյուս դրույթների հետ համադրության ֆոնին: Այս գաղափարն առաջացել է այն բանից հետո, երբ բացահայտել ենք, որ հիշյալ երկրներից միայն Ադրբեջանում է, որ հատուկ գործող նախագահի պատվերով փոփոխություն է մտցվել երկրի Հիմնական օրենքի մեջ¹⁰⁷, որով հանվել է

¹⁰⁶ Հատկանշական է, որ ՀՀ նախկին Սահմանադրության 3-րդ հոդվածը սահմանադրական արժեքանության տեսանկյունից ավելի ընդարձակ կարգավորում ուներ, այն է՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»:

¹⁰⁷ Ադրբեջանի 1995թ. Սահմանադրության 101-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող երկու անգամից ավելի ընտրվել Ադրբեջանի Հանրապետության նախագահի պաշտոնում»: 2009թ. մարտի 18-ի հանրաքվեով նշված դրույթը փոխարինվել է հետևյալ նախադասությամբ՝ «Եթե պատերազմի պայմաններում ռազմական գործողությունների

նույն անձի կողմից երկու անգամից ավելի նախագահի պաշտոնում ընտրվելու արգելքը, ինչը նրան հնարավորություն է տալիս նույն պաշտոնում ընտրվել անսահմանափակ թվով: Նկատենք, որ նույն անձի կողմից երկու անգամից ավելի երկրի նախագահի պաշտոնում ընտրվելը սահմանափակված է աշխարհի շատ զարգացած ու անցումային երկրների Հիմնական օրենքներում, այդ թվում նաև ԱՄՆ-ի (1951թ. կատարված 22-րդ լրացում), Գերմանիայի (հոդված 54, մաս 2), Ուկրաինայի (հոդված 103, մաս 3), Խորվաթիայի (հոդված 95, մաս 2), Լեհաստանի (հոդված 127, մաս 2) սահմանադրություններում:

Սրանով հանդերձ Ադրբեջանում բարձրաձայն հայտարարվում է, որ սահմանադրությամբ հոչակված գաղափարներն ու իրականությունն իբր համապատասխանում են իրար: Այս ու մի շարք այլ իրողությունների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ այդ երկրում քաղաքական ռեժիմը ոչ թե ժողովրդավարական է, այլ բռնատիրական: Դրանից զատ, Ադրբեջանում բռնատիրական կարգեր տիրելու հարցում կարող ենք համոզվել տարբեր միջազգային պարբերականների, հեռուստաալիքների կամ փորձագետների հայտնած կարծիքներն ուսումնասիրելով, սակայն բավարար է մեջբերել Amnesty International¹⁰⁸ և Freedom House¹⁰⁹ հեղինակավոր կազմակերպությունների գնահատականներն Ադրբեջանի վերաբերյալ, որպեսզի համոզվենք, որ այդ

անցկացումը թույլ չի տալիս ընտրել Ադրբեջանի Հանրապետության նախագահ, ապա Ադրբեջանի Հանրապետության նախագահի լիազորությունների ժամկետը երկարաձգվում է մինչև ռազմական գործողությունների ավարտը: Դրա մասին որոշումն ընդունվում է Ադրբեջանի Հանրապետության սահմանադրական դատարանի կողմից՝ ընտրությունների (հանրաքվեների) անցկացումն ապահովող պետական մարմնի դիմումի հիման վրա»:

¹⁰⁸ Amnesty International: В Азербайджане усиливаются репрессии - <http://www.radioazadlyg.org/content/article/24392559.html>; Amnesty International недовольна властью Азербайджана <http://www.zerkalo.az/2012/amnesty-international-nedovolna-vlastyu-azerbaydzhana/> - 11.11.2014.

¹⁰⁹ Report of Freedom House - <http://www.freedomhouse.org/sites/default/files/resources/FOTN%202012%20Full%20Report.pdf>; Freedom House: Демократия в Азербайджане терпит регресс, в Армении - прогресс, в России - неизменна - belarus.regnum.ru/news/1539115.html - 11.11.2014.

երկրում ոչ միայն ժողովրդավարությունը, այլև քաղաքակիրթ աշխարհին ներհատուկ շատ արժեքներ կենսունակ չեն. ընդամին, դրանց ոտնահարումը կրում է ամենօրյա բնույթ: Այստեղից տրամաբանորեն հետևում է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, չնայած իր չճանաչվածության հանգամանքին, ավելի ժողովրդավարական է, քան Ադրբեջանը:

Հարկ է նշել, որ ժամանակին նույն անձի կողմից երկու անգամից ավելի նախագահի պաշտոնում ընտրվելու արգելքի վերացման քայլին է գնացել նաև Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության նախկին նախագահ Ի.Սմիռնովը, սակայն, ի տարբերություն Ադրբեջանի նախագահի, նրան չի հաջողվել իրականացնել իր այդ մտադրությունը:

Եթե հարցը քննարկելու լինենք երկրորդ ասպեկտից, ապա ԼՂՀ Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունները կարելի է ներկայացնել ինչպես դրանում բնական իրավունքների ամրագրվածության ու երաշխավորված իրացնելու հնարավորության, այնպես էլ մյուս իրավական հասկացություններն ու ինստիտուտները համեմատության լույսի ներքո դիտարկելու տեսանկյունից:

ԼՂՀ Սահմանադրության մեջ բնական իրավունքները թվարկված են ոչ թե մեկ առանձին, այլ տարբեր հոդվածներում, օրինակ՝ հոդված 18, 19, 22 և այլն:

Հանրահայտ է, որ մարդու բնական իրավունքներից առաջինը կյանքի իրավունքն է: Բացի այն, որ մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները համարվում են բարձրագույն արժեքներ, ԼՂՀ Սահմանադրության 18 հոդվածում նշված է այդ դրույթի կենսագործումը երաշխավորող անկյունաքարային հոդվածներից առաջինը. «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող դատապարտվել մահապատժի»:

Աբխազիայի Հանրապետության սահմանադրության 13 հոդվածում ամրագրված է. «Մարդու բնական իրավունքներն ու ազատություններն են՝ կյանքի, ազատության, անձեռնմխելիության, մասնավոր սեփականության իրավունքը», սակայն որևէ

նշում չկա մահապատժի վերացման մասին: Իսկ Հարավային Օսեթիայի Հանրապետության սահմանադրության մեջ բացակայում է որևէ դրույթ կյանքի իրավունքի ամրագրման կամ մահապատժի վերացման մասին: Քննարկվող չճանաչված երկրների շարքում հիշյալ հիմնախնդրի քննարկման տեսանկյունից ոչ բարենպաստ վիճակում է գտնվում Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետությունը, որի սահմանադրության 19 հոդվածի առաջին մասում նշված է, որ «յուրաքանչյուրն ունի կյանքի իրավունք», իսկ երկրորդ մասում՝ «մահապատժը մինչև նրա վերացնելը կարող է կիրառվել օրենքին համապատասխան՝ որպես բացառիկ պատժաչափ կյանքի դեմ ուղղված ծանր հանցագործության համար և միայն դատարանի դատավճռով»: Կարծում ենք՝ այստեղ առկա է հակասություն ոչ միայն հոդվածի ներսում, այլև 16 հոդվածի հետ, որում խոսվում է մարդու՝ որպես բարձրագույն արժեքի մասին: Իսկ ահա Ադրբեջանի Սահմանադրության 27 հոդվածի 1-ին մասում նշված է, որ «յուրաքանչյուրն օժտված է կյանքի իրավունքով», իսկ 3-րդ մասում՝ «մահապատժը մինչև նրա լրիվ վերացնելը որպես բացառիկ պատժաչափ կարող է սահմանվել օրենքով միայն պետության, մարդու կյանքի և առողջության դեմ ուղղված առանձնապես ծանր հանցագործության համար»: Քննարկվող երկու դեպքերում էլ, կարծում ենք, առկա է հակասություն տվյալ հոդվածի ներսում, ինչպես նաև սահմանադրական կարգի հիմունքների միջև: Դրանից զատ պետք է նկատի ունենալ, որ նման պարագայում խոսքը գնում է ոչ թե այս կամ այն դրույթի փաստացի ամրագրման, այլ այն մասին, թե պետությունը սահմանադրության ընդունմամբ ինչպիսի մոտեցում է ցուցաբերում իր քաղաքացիների նկատմամբ. պետական մակարդակով մարդասպանություն է իրականացնում, թե՞ պահպանում է իր քաղաքացիների կյանքն ու լծվում իրավադաստիարակչական գործառնությունը նրանց հանցագործություններ կատարելուց հետ պահելու գործին:

Սահմանադրության արժեքանական առանձնահատկություններից մեկն էլ այն է, թե ինչ ձևով է այն ընդունվում և

դրանում փոփոխություններ կատարվում, այսինքն այստեղ խոսքը սահմանադրության կոշտ կամ ճկուն լինելու մասին է: Եթե դիտարկենք Հավելված 1-ի 5-րդ կետը, ապա դժվար չէ նկատել, որ չճանաչված երեք երկրների Սահմանադրությունների նկատմամբ ԼՂՀ Հիմնական օրենքն ունի որոշակի առավելություններ, ինչը դրսևորվում է Սահմանադրության մեջ փոփոխությունները բացառապես հանրաքվեի միջոցով կատարելու մեջ, այսինքն Սահմանադրությունը չի կարող դառնալ քաղաքական նպատակահարմարության գործիք և ամեն պատեհ կամ անպատեհ առիթ օգտագործելով՝ դրանում կատարել փոփոխություններ կամ լրացումներ:

Ինչ վերաբերում է սահմանադրությունների մեջ կատարվող փոփոխություններին, ապա Աբխազիայի Հանրապետության սահմանադրությունը մեկ անգամ է ենթարկվել փոփոխության, Հարավային Օսեթիան մինչ օրս ունեցել է երկու սահմանադրություն. վերջինը փոփոխության չի ենթարկվել, իսկ ահա Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության գործող Սահմանադրության մեջ չորս անգամ փոփոխություններ և լրացումներ են կատարվել: Իսկ ԼՂՀ Սահմանադրությունն ընդունվելու պահից՝ 2006թ. դեկտեմբերի 10-ից հետո, փոփոխության չի ենթարկվել: Սակայն ոչ մի սահմանադրություն կատարյալ չէ, ուստի չի բացառվում, որ, հասարակական հարաբերությունների փոփոխմամբ պայմանավորված, դրանում շտկումներ կատարելու անհրաժեշտություն առաջանա, որը միտված պիտի լինի բացառապես հասարակության ու պետության զարգացմանը, ինչպես նաև երկրի անվտանգության ամրապնդմանը:

Հայտնի է, որ յուրաքանչյուր նոր ժամանակաշրջան ստեղծում է իր արժեքները, որոնք կա՛մ նախորդի լրիվ կամ մասնակի բացասումն են, կա՛մ նախորդների ձևափոխված, նոր ձևով վերարտադրված արդյունքը, կա՛մ լիովին այլ արժեքներ: Այս տրամաբանությամբ էլ պետք է նկատել, որ այն ժամանակահատվածին, երբ ԼՂՀ-ը գտնվում էր Ադրբեյջանական ԽՍՀ կազմում, որտեղ մարդուն, նրա իրավունքներին ու ազատություններին

հատուկ կարևորություն չէր տրվում, հաջորդեց այնպիսի մի միջավայրի (հասարակարգի) ստեղծումը, որտեղ դրանք հոչակված են որպես բարձրագույն արժեքներ և ամրագրված երկրի Հիմնական օրենքում: Դրանից բացի, ԼՂԽՄ-ի գոյության ժամանակ առկա էր մեկ գաղափարախոսություն և մեկ քաղաքական ուժ, իսկ ներկայումս, համաձայն Արցախի Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի՝ ԼՂՀ-ում ճանաչվում են գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցությունը: Այս հոդվածի կենսագործման մասին է, թերևս, վկայում այն, որ 2015թ. մայիսի 3-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքներով ԼՂՀ-ում գործող կուսակցություններից հինգը ներկայացված են Արցախի Հանրապետության օրենսդիր մարմնում՝ 2010թ. երեք կուսակցությունների փոխարեն:

Վերոհիշյալ օրինակի հիման վրա կարելի է փաստել, որ ԼՂՀ-ի կազմավորումից հետո ընկած ժամանակահատվածում արմատականորեն փոխվեց երկրի հասարակարգը, ընդ որում՝ ձգտումն ու ցանկությունը դարձավ գաղափար, հետո ամրագրվեց օրենսդրության մեջ, իսկ այնուհետև սկսվել ու մինչ օրս շարունակվում է այդ գաղափարների կենսագործման գործընթացը, այսինքն մարդ-պետություն հարաբերություններում առաջնությունը տրվում է մարդուն, այլ ոչ թե պետությանը, ինչպես որ գոյություն ուներ մինչև Արցախի հոչակումը:

ԼՂՀ Սահմանադրության արժեքանական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ չնայած ԼՂՀ-ն չի ինտեգրվել պետությունների միջազգային հանրությանը, միջազգային կազմակերպությունների անդամ չէ, չի մասնակցում միջազգային երկկողմ և բազմակողմ պայմանագրերի կնքմանը, սակայն մինչև ԼՂՀ-ի վերջնական ճանաչումը և դրանից հետո Երկիրը պատրաստակամ է բարեխղճորեն կատարել (և վաղուց արդեն կատարում է) միջազգային իրավունքի այն բոլոր նորմերի և սկզբունքների պահանջները, որոնք վերաբերում են միջազգային խաղաղության և անվտանգության, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության հարցերին: Ընդ որում՝ դա ոչ թե քաղաքական

կամ պետական գործչի կողմից արված հայտարարություն է, այլ առաջին հերթին ամրագրված է երկրի Հիմնական օրենքում ու կյանքի է կոչվում պետական իշխանության մարմինների կողմից:

ԼՂՀ Սահմանադրության վերջին՝ 142-րդ հոդվածն արժեքանական տեսանկյունից ունի առանցքային կարևոր նշանակություն: Տվյալ պարագայում խոսքն այն մասին է, որ չճանաչված պետություններից և ոչ մեկի սահմանադրության մեջ այդպիսի ձևակերպում չկա: Դա երկրի ինքնիշխանությունը ժողովրդի հավաքական կամաարտահայտության ուժով ամրապնդող ու երաշխավորող հոդված է, քանի որ ըստ 142 հոդվածի՝ «Մինչև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական տարածքի ամբողջականության վերականգնումը և սահմանների ճշգրտումը հանրային իշխանությունն իրականացվում է այն տարածքում, որը փաստացի գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավագործության ներքո», իսկ պետական տարածքը կարող է փոփոխվել միայն հանրաքվեի միջոցով՝ ժողովրդի կողմից, ինչը երկրի կարգավիճակի որոշակիացման կարևոր կռվաններից մեկն է:

Կարծում ենք՝ ԼՂՀ Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունների կենսունակությունը լավագույնս կապացուցվի ժամանակի փորձությամբ, և տարիներ անց միայն կարող ենք խոսել դրանում փոփոխություններ կատարելու նպատակահարմարության կամ արդեն իսկ կատարված փոփոխությունների արդյունավետության մասին:

Մենագրության մեջ ներկայացված Հավելված 1-ում Արցախի Հանրապետության Սահմանադրությունը մի կողմից համեմատվում է հետխորհրդային տարածաշրջանի չճանաչված, իսկ մյուս կողմից ԼՂՀ-ին սահմանակից պետությունների սահմանադրությունների հետ: Համեմատության չափանիշներն ընտրելիս (որոնք սպառնիչ չեն, այլ ընդհանուրի մի մասն են կազմում) հիմք են ծառայել սահմանադրության այն հատկանիշները, որոնք արժեքանական հետաքրքրություն են ներկայացնում: Համեմատության ընդհանուր ֆոնին կան առանձնահատկություններ, որոնք

առկա են միայն ԼՂՀ-ում, իսկ կան որոշները, որոնք այլ երկրներում կիսալուծումներ են կամ անորոշ ձևով են ներկայացված: Այսպես, Արցախի Հանրապետությունը չճանաչված երկրներից միակն է, որ հռչակված է նաև որպես սոցիալական պետություն, երաշխավորվում է կյանքի իրավունքը և միանշանակորեն վերացված է մահապատիժը, այնինչ Աբխազիայի Հանրապետության սահմանադրության մեջ կյանքի իրավունքը նշված է բնական իրավունքների շարքում, սակայն ոչ մի խոսք չկա մահապատժի կիրառման կամ վերացման մասին, իսկ Հարավային Օսեթիայի սահմանադրության մեջ կյանքի իրավունքը առանձին հոդվածով սահմանված չէ, այլ 19 հոդվածի 1-ին մասում նշված է, որ «մարդու հիմնական իրավունքներն ու ազատություններն անօտարելի են և պատկանում են յուրաքանչյուրին ծննդյան պահից», իսկ մահապատժի կիրառման կամ վերացման մասին խոսք չկա:

Արցախի Հանրապետությունն ու Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետությունը մյուս երկրներից տարբերվում են նաև նրանով, որ Սահմանադրության մեջ մարդու հիմնական իրավունքները և ազատությունները հռչակված են որպես բարձրագույն արժեքներ:

Համեմատության չափանիշներից մեկն էլ ընտրել ենք նախագահի՝ երկուսից ավելի անգամ նույն պաշտոնում ընտրվելու արգելքը, որն առավել արդիական է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեյջանի Հանրապետության միջև առկա դեռևս չլուծված հակամարտության համատեքստում: Հարևան երկրի կողմից իրենց երկրի ղեկավարի՝ նախագահի պաշտոնում անսահմանափակ թվով ընտրվելու հնարավորության ընձեռումը, որը սահմանադրության մեջ կատարվել է հատուկ պատվերով, նպատակ է հետապնդում պահպանել բռնատիրական իշխանությունը և փոխանցել ժառանգաբար:

Այս և մի շարք այլ փաստարկներով հիմնավորվում է, որ Արցախի Հանրապետության իրավական համակարգը շահեկանորեն տարբերվում է հիշյալ պետություններում ձևավորված

իրավական համակարգերից: Ինչպես չճանաչված պետությունների, որոնց մի մասում անգամ դեռևս չի ամրագրվել կյանքի իրավունքը, այնպես էլ ադրբեջանական իրավական համակարգերն աղերսներ չունեն հիշյալ իրավունքի չափանիշների հետ, և տեսականորեն ղարաբաղյան խնդրի՝ իրենց տարբերակով լուծման պարագայում, անխուսափելի են դառնում իրավունքների ու ազատությունների ամրագրման ու դրանց պաշտպանության և երաշխավորման էական սահմանափակումներն ու հետընթաց զարգացումները:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է միանշանակորեն պնդել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ոչ միայն չի կարող գոյություն ունենալ հարևան երկրի կազմում, այլ դավանվող արժեհամակարգերն իրար հակապատկեր են՝ Արցախի Հանրապետության՝ ժողովրդավարական ու իրավական պետություն կառուցելու ընդգծված առավելությամբ:

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԸ ԼՂՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐՈՒՍ

§ 1. Իրավունքի գերակայությունը որպես սահմանադրական արժեք

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամանակակից շատ պետություններ, հիմնվելով սահմանադրական արժեքանության վրա, իրենց Սահմանադրությունների անկյունաքարային արժեքներից կարևորագույնն են համարում հատկապես իրավունքի գերակայությունը, ժողովրդաիշխանությունը և իշխանությունների տարանջատումը¹¹⁰ (կամ ինչպես բանաձևված է ԼՂՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասում՝ իշխանությունների բաժանումը և հավասարակշռումը), սույն գլխում կփորձենք բացահայտել հենց հիշյալ սահմանադրական արժեքների բովանդակությունը, անդրադառնալ ԼՂՀ սահմանադրական և օրենսդրական լուծումներում դրանց ամրագրվածությանն ու իրավակիրառական պրակտիկայում իրացման հետ կապված որոշ հարցերի:

«Պատմական խոր արմատներ ունի տեսական բանավեճը բերված հարցադրումների առանցքը կազմող՝ «իրավունքի գերակայությունն», թե՛ «օրենքի գերակայություն» հասկացությունների շուրջ...»¹¹¹, ուստի սահմանադրական այս արժեքին կանդրադառնանք՝ հիմնվելով այն հարցերի վրա, որոնք առաջ է քաշել պրոֆեսոր Գ.Հարությունյանը 2013թ. հուլիսի 3-5-ը Երևանում կայացած գիտաժողովի ընթացքում: Դրանք են՝

¹¹⁰ Օրինակ, Վ.Ջորկին իրավական պետության էական հատկանիշների թվին է դասում՝ 1. իրավունքի գերակայությունը (ներառյալ մարդու իրավունքների առաջնայնությունը և իրավական օրենքի գերակայությունը), 2. ժողովրդաիշխանությունը, 3. իշխանությունների տարանջատումը (Зорькин В., Конституционно-правовое развитие России, М.: Норма: ИНФРА М, 2011, էջ 53):

¹¹¹ Հարությունյան Գ., Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, Երևան, Նժար, 2003, էջ 16:

առաջին՝ որքանո՞վ է իրավաբանորեն հստակ իմաստավորված և ձևակերպված իրավունքի գերակայության սկզբունքը,

երկրորդ՝ որքանո՞վ է այդ սկզբունքի էությունը դարձել տվյալ երկրի իրավական և քաղաքական մշակույթի ելակետային տարրը,

երրորդ՝ ինչպիսի՞ արտացոլում է այն գտել սահմանադրական որոշումների մակարդակում,

չորրորդ՝ այդ սկզբունքի իրացման երաշխիքները որքանո՞վ են օրենսդրորեն ամրագրված,

հինգերորդ՝ ինչպե՞ս է իրավակիրառման համակարգն ընկալում և իրացնում իրավունքի գերակայության սկզբունքը,

վեցերորդ՝ որքանո՞վ են այդ սկզբունքը դարձել մարդու և քաղաքացու սոցիալական վարքագծի անհրաժեշտ, իմաստավորված և բնականորեն իրացվող տարր,

յոթերորդ՝ ինչպե՞ս է պետության և քաղաքացիական հասարակության կողմից իրականացվում այդ սկզբունքի իրացման մշտադիտարկումը և դրան խոչընդոտող հանգամանքների հաղթահարումը¹¹²:

Սահմանադրական հիմնարար արժեքները կյանքի են կոչվում սահմանադրական իրավունքների, ազատությունների և սահմանադրական այլ ինստիտուտների միջոցով, որոնց միջև առաջացող կոլիզիայի հաղթահարումը Սահմանադրության երաշխավորման կարևորագույն խնդիրներից մեկն է՝ հիմքում ունենալով իրավունքի գերակայության սկզբունքը¹¹³: Իրավունքի գերակայության սկզբունքը (այսուհետ նաև իրավունքի գերակայությունը) սահմանադրական ու օրենսդրական մակարդակների հիմնախնդիրներ լուծելու միջոց կարող է ծառայել այն դեպքում,

¹¹² Арутюнян Г., Место и роль верховенства права в социальном поведении человека и гражданина, Альманах, Конституционное правосудие в новом тысячелетии, Ереван, Нжар, 2013, էջ 29-30:

¹¹³ Հարությունյան Գ., Սահմանադրական հիմնարար արժեքների իրացման երաշխիքները պետական քաղաքականության մակարդակում և հասարակական պրակտիկայում // Օրենք և իրականություն, թիվ 10, հոկտեմբեր, 2008թ., էջ 2:

երբ ամրագրված լինի Սահմանադրության մեջ կամ ենթադրելի լինի դրա բովանդակությունը, և ստեղծված լինեն անհրաժեշտ ու բավարար կառուցակարգեր դրա կենսագործումն ապահովելու համար:

Պետությունների մի մասն իրենց սահմանադրություններում բառացիորեն ամրագրել է իրավունքի գերակայության սկզբունքը¹¹⁴, որի արմատները խորն են և տանում են դեպի Անգլիա: Այսպես, իրավունքի գերակայության սկզբունքը սկզբնական տեսքով ի հայտ է եկել Անգլիայում և որոշ այլ պետություններում 12-13-րդ դդ. և կապում են աշխարհիկ ու օրենքով կառավարվող (իրավական) պետության գաղափարների հետ: Հետևաբար, տվյալ հայեցակարգը բնութագրվում էր նրա հատկանիշների միջոցով. օրենքների համակարգի հրատարակում, դատական համակարգի ստեղծում և իրավունքի միջոցով կառավարում: Ավելի ուշ ավելացվել է իշխանությունների տարանջատման հատկանիշը¹¹⁵:

Իրավունքի գերակայության հատկանիշների վերաբերյալ առկա են տարբեր մոտեցումներ: Այսպես, «The world justice project» ծրագիրն իրավունքի գերակայությունը գնահատում է հետևյալ ինդիկատորների օգտագործմամբ՝ 1. պետական ապարատի սահմանափակ լիազորություններ, 2. կոռուպցիայի բացակայություն, 3. կարգուկանոն և անվտանգություն, 4. հիմնական իրավունքներ, 5. բաց կառավարություն, 6. պատշաճ իրավակիրառություն, 7. քաղաքացիական դատավարություն, 8. քրեական դատավարություն¹¹⁶:

¹¹⁴ Նկատենք, որ իրավունքի գերակայությունն ամրագրված է, օրինակ, Չինաստանի ժողովրդական Հանրապետության 1982թ. Սահմանադրության (հոդված 5), Խորվաթիայի Հանրապետության 1990թ. Սահմանադրության (հոդված 3), Բոսնիայի և Հերցեգովինայի 1995թ. Սահմանադրության (հոդված 1.2), Եթովպիայի դաշնային ժողովրդավարական Հանրապետության 1995թ. Սահմանադրության (Սահմանադրության նախաբան), Ուկրաինայի 1996թ. Սահմանադրության (հոդված 8.1), Անգոլայի 1992թ. Սահմանադրության (հոդված 2, 6.2) մեջ և այլն:

¹¹⁵ Берман Г.Дж., Западная традиция права: эпоха формирования / Пер. с англ. М., 1994, էջ 278-280:

¹¹⁶ Agrast M. D. et al. The WJP Rule of Law Index 2012, The World Justice Project (2012) at 17.

Վենետիկի հանձնաժողովի զեկույցում իրավունքի գերակայությունը բնորոշվում է 6 տարրերով՝

1. օրինականություն, այդ թվում օրենքների ընդունման գործընթացի թափանցիկություն, հաշվետվողականություն և ժողովրդավարություն,
2. իրավական որոշակիություն,
3. կամայականության անթույլատրելիություն,
4. անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իրականացվող արդարադատության մատչելիություն, որն իր մեջ ներառում է վարչական կարգով ընդունվող ակտերի դատական վերահսկողություն,
5. մարդու իրավունքների պահպանում,
6. անխտրականություն և հավասարություն օրենքի առջև¹¹⁷:

1990թ. մարտին Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում իրավունքի գերակայությանը նվիրված սեմինարին ամերիկացի պրոֆեսոր Ջոն Նորտոն Մուրն իր զեկույցում առանձնացրեց իրավունքի գերակայության հինգ հիմնական սկզբունքներ.

- ժողովրդի կառավարություն, որը կառավարվում է ժողովրդի կողմից և գոյություն ունի ժողովրդի համար,
- իշխանությունների տարանջատում և օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների միջև փոխադարձ կապի սկզբունք,
- ներկայացուցչական ժողովրդավարություն, մասնավոր անձանց դեմ ուղղված (անձնական ազատության և անձնական արժանապատվության պաշտպանություն) կառավարության գործողությունների նկատմամբ ընթացակարգային և էական սահմանափակումներ,
- սահմանափակ կառավարություն և ֆեդերալիզմ,

¹¹⁷ Доклад о верховенстве права. Принято на 86 пленарном заседании Венецианской Комиссии (Венеция, 25-26 марта 2011 года), CDL-AD (2011) 003rev. Tom Bingham, The rule of Law (2010).

- դատական մարմինների անկախ համակարգի դատաքննություն որպես սահմանադրական օրենքները կյանքի կոչելու կենտրոնական կառուցակարգ¹¹⁸:

Արցախում բավական հետաքրքիր ու կիրառական նշանակություն կարող են ունենալ Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում իրավունքի գերակայության վերաբերյալ ներկայացված մոտեցումները, որը ենթադրում է.

- մարդու իրավունքները պետք է լինեն սահմանադրորեն ամրագրված, օրենսդրորեն երաշխավորված, համարժեք կառուցակարգային լուծումներով ապահովված ու պաշտպանված,
- պետք է հարգվի ու երաշխավորվի իրավական օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը,
- օրենքները և այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին, լինեն կանխատեսելի, հստակ, զերծ՝ բացերից ու երկիմաստություններից,
- իշխանության իրականացումը պետք է խարսխված լինի գործառույթների և լիազորությունների ներդաշնակումը երաշխավորելու վրա,
- հանրային իշխանության իրականացման հիմքում պետք է ընկած լինի օրինականության սկզբունքը,
- պետք է երաշխավորվի կամայականության արգելքի սկզբունքը, և հստակեցված լինեն հանրային իշխանության մարմինների հայեցողության սահմանները,
- պետությունը պետք է պոզիտիվ պարտականություն կրի իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության հարցում և ստանձնի համարժեք հանրային-իրավական պատասխանատվություն,

¹¹⁸ Протасов В., Теория права и государства. Проблемы теории права и государства: Вопросы и ответы, М.: Новый Юрист, 1999, էջ 119.

- հիմնական իրավունքներին ցանկացած միջամտություն և իշխանության ցանկացած գործողություն պետք է բխեն համաչափության սկզբունքից,
- իրավական վեճերը պետք է ունենան բացառապես իրավական ճանապարհով արդյունավետ լուծման անհրաժեշտ կառուցակարգեր,
- արդարադատությունը պետք է լինի անկախ ու անկողմնակալ¹¹⁹:

Վերջին մի քանի տարիների ընթացքում հրատարակված իրավաբանական գրականության ամփոփ վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավունքի գերակայության էության ու բովանդակության վերաբերյալ միատեսակ մոտեցում չկա¹²⁰: Այսպես, Հ.Հաջինն իրավունքի գերակայությունը դիտարկում է որպես դատական դոկտրինա¹²¹, Ա.Յիմմերմանը նշում է, որ իրավունքի գերակայության սկզբունքը ենթադրում է իրավական նորմերի և մարդու սոցիալական վարքագծի միջև պատշաճ փոխկապվածություն¹²², մի շարք գիտնականներ «իրավունքի գերակայու-

¹¹⁹ Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, Տիգրան Մեծ, 2014, էջ 31-32:

¹²⁰ Alder John. Constitutional and administrative law, 2nd ed., Macmillan, 1994, 452 էջ: Арутюнян Г., Слагаемые конституционализма: верховенство права, стабильное развитие // Журнал Конституционное правосудие, Выпуск 2(52), 2011, էջ 5-23: Баренбойм П. Соотношение доктрин верховенства права и правового государства как главный вопрос философии права и конституционализма. М., ЛУМ, 2013, 128 էջ: Доктрины Правового Государства и Верховенства Права в современном мире: Сборник статей / Под. ред. В.Зорькина, П.Баренбойма – М., ЛУМ, Юстицинформ, 2013, 560 էջ: Ասատրյան Ա., Իրավունքի գերակայության սկզբունքը արդի իրավական համակարգի խորապատկերում, Երևան, Հայրապետ, 2013, 192 էջ:

¹²¹ Гаджиев Г., Российская судебная доктрина верховенства права: двадцать лет спустя // Доктрины Правового Государства и Верховенства Права в современном мире: Сборник статей / Под. ред. В.Зорькина, П.Баренбойма, М., ЛУМ, Юстицинформ, 2013, էջ 213-237:

¹²² Циммерман А. В ожидании Верховенства права: юридические и вне-юридические причины, тормозящие реализацию принципа Верховенства права в Бразилии // Доктрины Правового Государства и Верховенства

թյուն» հասկացությունը բացահայտում են «իրավական պետություն» կատեգորիայի¹²³ հարաբերակցության լույսի ներքո¹²⁴, իսկ իրավունքի տեսության դասագրքերում իրավունքի գերակայության սկզբունքը հաճախ դիտարկվում է որպես իրավական պետության տարր¹²⁵: Այս ամենի վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ իրավունքի գերակայության վերաբերյալ միասնական մոտեցման բացակայությունը որոշ դեպքերում պայմանավորված է հիշյալ իրավական հիմնախնդիրը տարբեր իրավական

Права в современном мире: Сборник статей / Под. ред. В.Зорькина, П.Баренбойма – М., ЛУМ, Юстицинформ, 2013, էջ 508-531:

¹²³ Պրոֆեսոր Գ.Դանիելյանը նշում է, որ սահմանադրական ցանկացած արժեք այս կամ այն չափով հակասության մեջ է սահմանադրական արժեհամակարգի բաղադրիչների հետ: Զարգացնելով այս գաղափարը՝ հեղինակը նշում է, որ, օրինակ, իրավաչափ չի կարող համարվել «իրավական պետություն» և «իրավունքի գերակայություն» եզրույթների միջև հավասարության նշան դնելը: Այս մասին տե՛ս Դանիելյան Գ., Հասարակության ներքին հակասությունների սահմանադրաիրավական արտացոլումը, URL: http://www.y-su.am/files/01G_Danielyan.pdf (դիմելու ամսաթիվը՝ 27.01.2015):

¹²⁴ Տե՛ս Недзел Н., Верховенство права или Правовое государство: откуда мы пришли и куда мы идем?, Виноградов В., Правовое государство и верховенство права: доктрины, конкуренция юрисдикций, обеспечение правовой свободы. Позиции Конституционного Суда РФ в отношении правового государства, Мазаев В., Правовое государство, верховенство права и конституционные основы экономики // Доктрины Правового Государства и Верховенства Права в современном мире: Сборник статей / Под ред. В.Зорькина, П.Баренбойма, М., ЛУМ, Юстицинформ, 2013, էջ 108-148: 373-395; 532-542: Шарандин Ю., Кравченко Д., Верховенство права, Правовое государство и другие международные правовые доктрины: лингвистические аспекты конвергенции и разграничения // Международные правовые доктрины: поиск взаимопонимания: Сборник статей / Под ред. Е.Тарло, Д.В. Кравченко, М.: ЛУМ, 2013. էջ 65-72:

¹²⁵ Տե՛ս Нерсисянц В., Общая теория права и государства: Учеб. для вузов. М., 2010, էջ 308-310; Теория государства и права. Учеб. / Под. ред. А.Пиголкина и Ю.Дмитриева. М., 2010. Учеб. для вузов. М., 2010, էջ 575-579: Рассказов Л.Теория государства и права. Учеб. для вузов. М., 2010, էջ 147-149: Теория государства и права. Учеб. / Отв. ред. В.Перевалов. М., 2011, էջ 372-376: Сырых В., Теория государства и права. Учеб. для вузов. М., 2012, էջ 538-542:

համակարգերի և ազգային սահմանադրական մշակույթների դիրքերից մեկնաբանելու հանգամանքով:

Իրավունքի գերակայության սկզբունքը հանդիսանում է ժամանակակից իրավական և ժողովրդավարական պետության ուղի ընտրած երկրների կարևորագույն արժեքներից մեկը, սակայն միշտ չէ, որ պետության Սահմանադրությունն առանձին նորմ է նախատեսում իրավունքի գերակայության վերաբերյալ, բայց եթե կան դրույթներ իրավական ու ժողովրդավարական պետության մասին, և տվյալ երկրում ընդունելի են պետության բնորոշման ժամանակակից մոտեցումները, ապա կարելի է ասել, որ իրավունքի գերակայությունը Սահմանադրության մեջ ամրագրված է **ոչ բառացիորեն**, ինչպես, օրինակ, ԼՂՀ Սահմանադրության մեջ: Հիշյալ սկզբունքը բխում է ԼՂՀ Սահմանադրության հետևյալ հոդվածներից, հոդված 1՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն է», հոդված 2՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ճանաչում է մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես անօտարելի ու բարձրագույն արժեքներ, ազատության, արդարության և խաղաղության հիմք», հոդված 5՝ «Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է այդ իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք», հոդված 6 մաս 2՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով»¹²⁶: Համեմատության համար նշենք, որ «ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ» աշխատության մեջ քննարկվող հոդվածները, որոնք նույնպես տեղ են գտել ՀՀ

¹²⁶ ԼՂՀ Սահմանադրություն (10 դեկտեմբերի 2006թ.), Ստեփանակերտ, Դիզակ պլյուս, 2006, էջ 3-4:

նախկին Սահմանադրության մեջ, հայ սահմանադրագետների կողմից¹²⁷ մեկնաբանվում են որպես իրավունքի գերակայության սկզբունքի ամրագրում, չնայած ՀՀ նախկին Սահմանադրության մեջ իրավունքի գերակայության սկզբունքը նույնպես բառացիորեն ամրագրված չէ¹²⁸:

Կարծում ենք, որ ԼՂՀ-ի պարագայում անհրաժեշտ է ոչ թե պատճենել ու տեղայնացնել հիշյալ սահմանադրական արժեքը, այլ պետության սահմանադրական մշակույթի վրա հիմնվելով՝ ձևակերպել Արցախի իրավական կյանքում իրավունքի գերակայության հայեցակարգը՝ հաշվի առնելով դրա վերաբերյալ սահմանադրագիտության արդի նվաճումները, որոնք կարող են նպաստել այդ արժեքի լիարժեք իրացմանն ու դրա հիման վրա հասարակական կյանքն իրավունքի գերակայության վրա

¹²⁷ Հարությունյան Գ., «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»-ի 1-ին հոդվածի մեկնաբանությունը: Ընդհ. խմբ. Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010, էջ 83-98:

¹²⁸ 1995թ. հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքի գերակայությունը»: Դեռևս 1999թ. իր դոկտորական ատենախոսության մեջ հայ սահմանադրագետ Գ.Հարությունյանն առաջարկել էր ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի շարադրանքը ենթարկել փոփոխության՝ դարձնելով «Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է իրավունքի գերակայությունը»: Այս միտքն իր հետագա զարգացումը և գիտականորեն հիմնավորված ամրագրումն է ստացել նշված հեղինակի 2003թ. հրատարակած «Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները» աշխատության մեջ (Երևան, Նժար, 2003, 72 էջ), որում նորանկախ Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ լայնորեն լուսաբանվել է իրավունքի գերակայության էությունը և այն մեր կյանքի անբաժանելի մասը դարձնելու հրամայականը: 2005թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում ևս մեկ դրական քայլ է կատարվել՝ 6-րդ հոդվածի 1-ին մասն ուժը կորցրած ճանաչելով: Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի 2.1. կետը վերաբերում է սահմանադրական լուծումներում իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորմանը, ապահովմանն ու իրացմանը (տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, Տիգրան Մեծ, 2014, էջ 29-33):

կառուցմանը¹²⁹: Ուստի իրավունքի գերակայության վերաբերյալ միանշանակ մոտեցում և պատկերացում ձևավորելու նպատակով առաջարկվում է ԼՂՀ Սահմանադրության մեջ իրավունքի գերակայությունն ամրագրել բառացիորեն, ինչպես դա արտացոլված է բազմաթիվ երկրների սահմանադրություններում, օրենսդրության մեջ տալ դրա բնորոշումը և սահմանել որպես սկզբունք, իսկ գործադիր իշխանության կողմից մշակել և ընդունել դրա իրացման գործնական հայեցակարգ¹³⁰: Կարծում ենք, որ Սահմանադրության մեջ իրավունքի գերակայության բառացի ամրագրման դեպքում պետական իշխանության մարմինները սահմանադրորեն պարտավորված կլինեն հետևել այդ սկզբունքին ու ստեղծել դրա հաստատման համար բարենպաստ պայմաններ¹³¹:

Եթե ԼՂՀ Սահմանադրության մեջ իրավունքի գերակայության սկզբունքի ամրագրման առումով գոնե կիսալուծում առկա է, ապա նույնը չենք կարող ասել օրենսդրության առումով,

¹²⁹ Նման հայեցակարգի մշակման ժամանակ պետք է հաշվի առնվեն «The World Justice Project» միջազգային անկախ ոչ առևտրային կազմակերպության կողմից ամենամյա հրապարակվող «Իրավունքի գերակայության ինդեքս» հետազոտության արդյունքներն ու դրա անցկացման ժամանակ կիրառվող չափանիշները (ինդիկատորները): 2015թ. Իրավունքի գերակայության ինդեքսը տե՛ս http://worldjusticeproject.org/sites/default/files/roli_2015_0.pdf:

¹³⁰ ԼՂՀ-ում նման հայեցակարգի ընդունման ժամանակ պետք է հաշվի առնվեն ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի շրջանակներում իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորման, ապահովման ու իրացման հետ կապված համակարգային մոտեցումները: ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը տե՛ս http://www.justice.am/page/constitutional_reforms:

¹³¹ Հատկանշական է, որ հայրենական մասնագիտական գրականության մեջ տեսակետ է հայտնվում, ըստ որի՝ «նպատակահարմար կլիներ, եթե իրավունքի գերակայության սկզբունքը, այնուամենայնիվ, իր միանշանակ ամրագրումն ստանար ՀՀ Սահմանադրությունում, ինչը կկանխորոշեր առավել բարձր իրավական մշակույթ»: Նման տեսակետի հիմքում դրվում է այն փաստարկը, որ «ՀՀ Սահմանադրությամբ հստակ ամրագրված չէ իրավունքի գերակայության սկզբունքը» (այս մասին տե՛ս ՀՀ սահմանադրական իրավունք / պատ. Խմբագիր՝ Ն.Այվազյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 107):

որտեղ այդ շղթայի շարունակականությունը ևս պետք է ապահովվեր որպես Սահմանադրության պահանջ:

Արցախի Հանրապետության մի շարք օրենքներում, մասնավորապես՝ «Հարկային ծառայության մասին» ԼՂՀ օրենքի (ընդունվել է 2002թ. սեպտեմբերի 14-ին) 7-րդ հոդվածում, «Քաղաքացիական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի (ընդունվել է 2003թ. նոյեմբերի 26-ին) 5-րդ հոդվածում, «Բնապահպանական վերահսկողության մասին» ԼՂՀ օրենքի (ընդունվել է 2006թ. մարտի 22-ին) 6-րդ հոդվածում, «ԼՂՀ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքի (ընդունվել է 2012թ. դեկտեմբերի 19-ին) 5-րդ հոդվածի 1-ին մասում որպես սկզբունք նշված է «**օրենքների գերակայությունը**»:

Նմանաբնույթ հիմնախնդիր առկա է նաև ԼՂՀ դատական օրենսգրքում (ընդունվել է 2008թ. դեկտեմբերի 17-ին, ուժի մեջ է մտել 2009թ. հունվարի 1-ից), որի 93-րդ հոդվածում ամրագրված է դատավորի երդման տեքստը, ըստ որի՝ «Ստանձնելով դատավորի բարձր պաշտոնը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի առջև երդվում եմ ... սրբորեն պահպանել դատավորի կարգավիճակին ներկայացվող բոլոր պահանջները՝ ապահովելով Սահմանադրության և **օրենքի գերակայությունը** և բարձր պահելով դատական իշխանության հեղինակությունը» (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.): Այս իրավակարգավորման համաձայն՝ դատավորը մի կողմից պարտավոր է առաջնորդվել ԼՂՀ Սահմանադրությամբ, որի մեջ թեկուզ ոչ բառացիորեն ամրագրված է իրավունքի գերակայության գաղափարը, իսկ մյուս կողմից երդվում է ապահովել օրենքի գերակայությունը: Եթե դատավորի գործունեության ընթացքում երաշխավորվում է օրենքի գերակայությունը, ապա դատավորը մի տեսակ վեր է ածվում մեխանիկական աշխատանք կատարող ու պարզապես օրենքը կիրառող սուբյեկտի, այնինչ դատավորի հիմնական առաքելությունն արդարադատություն իրականացնելիս իրավունքին միս ու արյուն հաղորդելն է: Այս առումով ՌԴ Սահմանադրական

դատարանի դատավոր Հ.Հաջինը նկատում է, որ «իրավունքի գերակայությունը Ռուսաստանում զարգանում է ամենից առաջ որպես դատական դոկտրինա՝ գործնականում օրենսդրի պասիվ մասնակցությամբ, այսինքն դա ոչ թե հայեցակարգ է, այլ հենց դատական դոկտրինա»¹³²: Համանման կարծիք է հայտնել նաև Ի.Ստյուարտը՝ նշելով, որ իրավական պետության և իրավունքի գերակայության հայեցակարգերի միջև տարբերությունը կայանում է նրանում, որ առաջինը բովանդակվում է կոդիֆիկացված օրենսդրական ակտերում, իսկ երկրորդը՝ առավելապես դատական ակտերում¹³³: Կարծում ենք, որ իրավունքի գերակայությունը ոչ միայն դատական դոկտրինա է, այլև գործադիր իշխանության գործունեության ընթացքում է դրսևորվում, իսկ վերջինս իրավունքի զարգացմանը կարող է նպաստել՝ իրացնելով ԼՂՀ Սահմանադրությամբ իրեն վերապահված օրենսդրական նախաձեռնության իրավունքը, հետևելով օրենքների կատարման ընթացքին և ըստ անհրաժեշտության դրանց սահմանադրականությունը որոշելու հարցով դիմելով ԼՂՀ Գերագույն դատարանի սահմանադրական պալատ:

Քննարկվող հիմնախնդրի լուծման համատեքստում պետք է հատուկ ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքների վրա. դատավորի երդման տեքստում առկա «օրենքի գերակայություն» ձևակերպումը, որը ոչ թե լոկ բառակապակցություն է, այլ ամբողջական հասկացողություն և հայեցակարգ, հակասում է ԼՂՀ Սահմանադրության բովանդակությանը և ենթակա է համակարգային փոփոխության: Դրանից զատ, «իրավունք» և «օրենք» ասելով հասկանում ենք տարբեր իրավական հասկացություններ (տե՛ս Հավելված 2), ու դրանք շփոթելն ու ոչ ճիշտ կիրառելը

¹³² Гаджиев Г., Российская судебная доктрина верховенства права: двадцать лет спустя // Доктрины Правового Государства и Верховенства Права в современном мире: Сборник статей / Под. ред. В.Зорькина, П.Баренбойма, М., ЛУМ, Юстицинформ, 2013, էջ 214:

¹³³ Баренбойм П., Соотношение доктрин верховенства права и правового государства как главный вопрос философии права и конституционализма. М., 2013, էջ 5:

կարող է հանգեցնել անկանխատեսելի բացասական հետևանքների, ընդհուպ մինչև մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների անհիմն սահմանափակման: Նկատենք, որ ինչպես բժշկության մեջ է հույժ կարևորվում «Հիպոկրատի երդումը», այնպես էլ արդարադատության մեջ է առանձնակի իմաստ ստանում «Դատավորի երդումը»:

Կատարված ուսումնասիրությունների ժամանակ հանդիպել ենք ևս մի հակասական փաստի. խոսքն այն մասին է, որ «Փաստաբանության մասին» ԼՂՀ օրենքի (ընդունվել է 2005թ. հոկտեմբերի 19-ին) 18-րդ հոդվածի 2-րդ մասում նշված էր, որ «Փաստաբանն աջակցում է հասարակության մեջ **իրավունքի գերակայության** ամրապնդմանը, իրականացնում է օրինականության քարոզչություն՝ մարդու իրավունքներն ու ազատությունները հարգելու և միջազգային հանրաճանաչ նորմերը ամրապնդելու ուղղությամբ» (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.): Ընդ որում, նշված օրենքում իրավունքի գերակայության ամրագրումը ոչ թե փոփոխության արդյունք է, այլ օրենքն ընդունվել է այդ տեսքով, չնայած այն հանգամանքին, որ դա տեղի է ունեցել մինչև ԼՂՀ Սահմանադրության ընդունումը: Ուշագրավն այն է, որ այս դրույթն իր ուժը կորցրել է 2013թ. հոկտեմբերի 22-ի փոփոխությամբ, հետևաբար՝ չի գործում:

Այս համատեքստում անհրաժեշտ ենք համարում կատարել երկու շեշտադրում. նախ՝ սկզբունքների շարքում մի տեղ նշվում է Սահմանադրության, օրենքների, իսկ որոշ տեղերում միայն օրենքի գերակայություն, երկրորդ՝ քննարկվող սկզբունքն անխտիր բոլոր օրենքներում և ԼՂՀ դատական օրենսգրքում ամրագրվել է այդ ակտն ընդունելիս, այլ ոչ թե կատարված փոփոխության արդյունքում:

01.08.2016թ. դրությամբ ԼՂՀ-ում գործում են Արցախի օրենսդիր մարմնի կողմից ընդունված թվով 12 օրենսգրքեր¹³⁴:

¹³⁴ ԼՂՀ հողային օրենսգիրք (30.04.2002), ԼՂՀ ջրային օրենսգիրք (26.11.2003), ԼՂՀ անտառային օրենսգիրք (27.09.2006), ԼՂՀ դատական օրենսգիրք (17.12.2008), ԼՂՀ քրեական դատավարության օրենսգիրք (17.12.2008), ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք

Ուսումնասիրելով դրանք, հատկապես սկզբունքների մասով, որևէ տեղ չենք հանդիպել, որ, ի թիվս այլ սկզբունքների, ամրագրված լինի նաև իրավունքի գերակայության սկզբունքը: Իսկ այն, որ օրենսգրքերի և օրենքների ներածական մասում նշվում է ԼՂՀ Սահմանադրության վրա հիմնվելու հանգամանքը, չի կարող խոչընդոտ հանդիսանալ կամ երկրորդական համարվել դրանցում նաև իրավունքի գերակայության սկզբունքի ամրագրման համար, քանի որ այդ նույն տրամաբանությամբ օրենսգրքերում և օրենքներում տեղ գտած շատ սկզբունքներ բառացիորեն ամրագրված են հենց Սահմանադրության մեջ:

Գործնական առումով իրավունքի գերակայությունն առկա է այնքանով, որքանով վտանգված չէ իրավունքի վրա խարսխված իշխանության լեգիտիմությունը, օրենքներն իրավական են և բխում են օբյեկտիվ նախադրյալներից, իսկ դատական իշխանությունն անկախ է ու անաչառ¹³⁵: ԼՂՀ-ում իրավունքի գերակայության գործողության ու հաստատման համար անհրաժեշտ է ունենալ նաև իրավական օրենքներ, որի տակ հասկանում ենք մարդու բնական իրավունքների պահանջների ու սոցիալական կյանքի օբյեկտիվ իրականության հաշվառմամբ ընդունված նորմատիվ-իրավական ակտերը: Ընդ որում՝ իրավական օրենքներ ունենալուն զուգահեռ դրանցում պետք է ամրագրել ոչ թե օրենքի գերակայության, այլ իրավունքի գերակայության սկզբունքը: Իսկ այն հարցին, թե արդյո՞ք ԼՂՀ-ում ընդունված օրենքներն իրավական են, թե՛ ոչ, կարելի է մոտենալ հետևյալ տեսանկյունից. իրավական օրենքների առկայության դեպքում ենթադրվում է դրանց սահմանադրականության վիճարկման սակավաթիվություն կամ իսպառ բացակայություն, իսկ Լեռնային Ղարաբաղի

(17.12.2008), ԼՂՀ վարչական դատավարության օրենսգիրք (17.12.2008), ԼՂՀ ընտանեկան օրենսգիրք (29.03.2012), ԼՂՀ քրեական օրենսգիրք (25.04.2013), Ընդերքի մասին ԼՂՀ օրենսգիրք (27.11.2013), ԼՂՀ ընտրական օրենսգիրք (29.10.2014), ԼՂՀ քաղաքացիական օրենսգիրք (24.02.2016):

¹³⁵ Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, Տիգրան Մեծ, 2014, էջ 32:

Հանրապետության իրավական կյանքում սահմանադրական արդարադատության ներկայիս վիճակը կա՛մ հաստատում է նման վարկածի ճշմարտացիությունը, կա՛մ լուրջ խնդիրներ կան քաղաքացիների կամ նրանց համար սահմանադրական ատյան դիմող փաստաբանների իրավագիտակցության ու արհեստավարժության առումով: Կարծում ենք, որ ԼՂՀ օրենսդիր մարմնի գործունեությունը պետք է ուղղված լինի նրան, որպեսզի ընդունվեն բացառապես իրավական օրենքներ, որոնք հանդիսանում են իրավունքի գերակայության հաստատման կարևորագույն գրավականներ:

Ստացվում է այնպես, որ ԼՂՀ Սահմանադրության մեջ իրավունքի գերակայության սկզբունքն ամրագրված է՝ թեկուզ ոչ բառացիորեն, սակայն ԼՂՀ օրենսդրության մեջ միանշանակորեն գործում է օրենքի գերակայության սկզբունքը: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ առաջարկվում է, որպեսզի ԼՂՀ-ում ընդունվող բոլոր օրենսգրքերում և օրենքներում ամրագրվի այն դրույթը, որ օրենքն ընդունվում է իրավունքի գերակայության հիման վրա, և եթե օրենքի որևէ դրույթ հակասի վերջինիս, ապա պետք է գործի իրավունքի գերակայության չափանիշները, իսկ այն օրենսգրքերն ու օրենքները, որոնցում ամրագրված է օրենքի գերակայության սկզբունքը, անպայմանորեն պետք է ենթարկել փոփոխությունների՝ ամրագրելով իրավունքի գերակայության սկզբունքը: Այստեղ խոսքը ոչ միայն օրենսդրությունը ԼՂՀ Սահմանադրության հետ համապատասխանեցնելու և ներդաշնակեցնելու, այլև աշխարհում տեղի ունեցող սահմանադրական զարգացումներին համաքայլ ընթանալու մասին է:

ԼՂՀ-ում իրավունքի գերակայության գործառնության խնդիրը գլխավորապես կապված է ոչ թե Սահմանադրության և օրենսդրության մեջ դրա ամրագրվածության, այլ, որ առավել կարևոր է, դրա մասին իմացության, ընկալունակության և դրան հետևելու հետ:

ԼՂՀ Սահմանադրության մեջ իրավունքի գերակայության սկզբունքը բառացիորեն ամրագրվելուց բացի, անհրաժեշտ է

նպատակաուղղված աշխատանքներ տանել մարդու և քաղաքացու կյանքում դրա կարևորության և հիմնարար նշանակության, դրանով ապրելու և ղեկավարվելու գաղափարի արմատավորման, ինչպես նաև քաղաքացիների մոտ իրավագիտակցության բարձր ու պահանջվող մակարդակ ապահովելու, քաղաքացիների կողմից իրավունքի գերակայության ընկալման ու իրավական և քաղաքական մշակույթի ելակետային տարր դարձնելու ուղղությամբ՝ դրան զուգահեռ վստահություն ու հարգանք դրսևորելով իրավակիրառ մարմինների նկատմամբ: «Դժբախտաբար, անցումային հասարակության իրողություններից է և այն, որ իրավունքի գերակայության ընկալման հարցում կա աղճատված պատկերացում, տիրապետող է ձևախեղված պոզիտիվիստական իրավամտաճողությունը, որը լուրջ արգելք է մարդու իրավունքների պաշտպանության հուսալի և արդյունավետ գործող երաշխիքների համակարգ ապահովելու ճանապարհին»¹³⁶: Այս հիմնախնդրի ճիշտ ընկալման ու գիտակցված իրացման առումով անփոխարինելի դերակատարություն ունեն իրավագիտակցության բարձրացումն ու իրավական դաստիարակության արմատավորումը: «Իրավունքի գերակայության ապահովման կարևոր գործոն լիբերալները համարել են բնակչության բավականին բարձր իրավագիտակցության մակարդակը, որը դրսևորվում է ամենից առաջ քաղաքացիների՝ իրենց իրավունքները խախտվելու դեպքում դրանք պաշտպանելու պատրաստակամության մեջ»¹³⁷: Վ.Զորկինը նույնպես իրավունքի գերակայության արմատավորման կարևոր պայման է դիտում իրավագիտակցության էական ձևափոխությունը կյանքում¹³⁸: Իրավագիտակցության բարձրացումը պետք է իրականացվի ոչ թե որոշակի խումբ անձանց համար, այլ ընդգրկի հասարակության առավել

¹³⁶ Հարությունյան Գ., Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, Երևան, Նժար, 2003, էջ 3-4:

¹³⁷ Вострикова В., Принцип верховенства права как основополагающая идея либеральной модели правового государства (конец XIX – начало XX вв.), Альманах современной науки и образования, 2009, № 7 (26), էջ 44:

¹³⁸ Зорькин В., Аксиологические аспекты Конституции России // Сравнительное конституционное обозрение, 2008, №4 (65), էջ 16:

լայն շրջանակներ: Այդ իսկ պատճառով «զանգվածային զարգացած իրավագիտակցությունը, հասուն իրավագիտակցությունը և առանձին քաղաքացիների իրավական ակտիվությունը հիմք են հանդիսանում քաղաքակիրթ հասարակությունում իրավունքի գերակայության զարգացման համար»¹³⁹:

ԼԴՀ Սահմանադրության 20 հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ազատ է անելու այն ամենը, ինչն արգելված չէ Սահմանադրությամբ կամ օրենքով և չի խախտում այլոց իրավունքներն ու ազատությունները»: Եթե հասարակության յուրաքանչյուր անդամ գիտակցի իր իրավունքների ու ազատությունների սահմաններից դուրս գալու արգելքը և առաջնորդվի այն սկզբունքով, որ կարևոր է ոչ միայն սեփական, այլև մյուսների իրավունքներն ու ազատությունները հարգելը, ապա դրանով իսկ հասարակության մեջ կդրվեն իրավունքի գերակայության հարգման ու միաժամանակ հաստատման ամուր հիմքեր: Իսկ որպեսզի այդ շղթան անընդհատ ու ամբողջական լինի, այսինքն իրավագիտակցությունից մինչև իրավունքի գերակայության արմատավորում տանող ուղին լինի հարթ, անհրաժեշտ է ապահովել իրավագիտակցության այնպիսի մակարդակ, որը նախ՝ կհանգեցնի իրավական և սահմանադրական մշակույթի զարգացմանը, որից հետո միայն՝ իրավունքի գերակայության համարժեք ընկալմանն ու կիրառմանը: Քաղաքացիների սահմանադրաիրավական հարաբերությունների անշեղ կարգավորման առումով կարևոր է նաև սահմանադրական իրավագիտակցության ձևավորումն ու զարգացումը, որը Գ.Հարությունյանի բնորոշմամբ՝ «ամենաընդհանուր գծերով ենթադրում է հասարակական հարաբերություններում սահմանադիր նորմերի անհրաժեշտության գիտակցում, դրանց սահմանում, այդ նորմերով ապրելու ու գործելու, դրանք հարգելու ու պաշտպանելու պատրաստակամություն»¹⁴⁰:

¹³⁹ Հարությունյան Ա., Բնակչության իրավագիտակցության բարձրացումը որպես մարդու իրավունքների պաշտպանության երաշխիք, Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, հ. 2(13), 2006, էջ 145:

¹⁴⁰ Հարությունյան Գ., Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, Նժար, 2005, էջ 31:

Ամենևին էլ պատահական չէ, որ Վ.Զորկինը նշում է լավ օրենքների ներքո իրավական առումով առողջ քաղաքացիների անհրաժեշտության մասին: Ըստ նրա՝ «մենք ունենք Սահմանադրություն, ստեղծված է հիմնականում ընդունելի օրենսդրական համակարգ: Այժմ մեր առջև դրված է առաջադրանք իրավունքի գերակայության սկզբունքի հիման վրա ապահովել օրինականություն գործադիր և դատական իշխանությունների իրավակիրառ գործունեության մեջ, քաղաքացիների վարքագծում: Դրա համար անհրաժեշտ է մտցնել իրավական դաստիարակության արդյունավետ և համապարփակ համակարգ»¹⁴¹:

Ունենալով իրավագիտակցության պատշաճ մակարդակ՝ քաղաքացին պետք է իրավունքի գերակայությունը դարձնի իր սոցիալական վարքագծի անքակտելի բաղադրատարրը: Այստեղ տեղին է մեջբերել Հ.Հաջիևի այն տեսակետը, ըստ որի՝ «իրավունքի գերակայությունն իրավակիրառության այնպիսի հայեցակարգ է, որը պահանջում է իրավունքի սոցիալականացում»¹⁴²: Իրավունքի սոցիալականացումը բարդ գործընթաց է, որը սկիզբ է առնում իրավունքի հետ անձի առաջին շփումից և ուղեկցում ամբողջ կյանքի ընթացքում, այս իսկ պատճառով խիստ կարևոր է, որպեսզի այն կոլեկտիվում ու միջավայրում, որտեղ անձն առնչվում է իրավունքի հետ, առավելագույնս պահպանվի օրինականության մթնոլորտ, հակառակ դեպքում անձի մոտ կնվազի իրավունքի նկատմամբ հարգանքը և դրա միջոցով սեփական խնդիրները լուծելու հավատը:

Որոշ գիտնականներ իրավունքի գերակայությունը կապում են անձի բարոյական հատկանիշների հետ: Ըստ Գ.Հարությունյանի՝ «այն հասարակությունում, որտեղ և՛ պետության, և՛ անհատի

¹⁴¹ Зорькин В., Аксиологические аспекты Конституции России // Сравнительное конституционное обозрение, 2008, №4 (65), էջ 16:

¹⁴² Гаджиев Г., Российская судебная доктрина верховенства права: двадцать лет спустя // Доктрины Правового Государства и Верховенства Права в современном мире: Сборник статей / Под. ред. В.Зорькина, П.Баренбойма – М., ЛУМ, Юстицинформ, 2013, էջ 229:

համար ելակետն իրավունքի գերակայությունն է, օրինապահությունը, ամոթը և խիղճն ունեն անհամեմատելի մեծ ու որոշիչ ազդեցություն անձի վարքագծի վրա, քան պատիժը և նրա կանխարգելիչ նշանակությունը»¹⁴³, իսկ մեկ այլ կարծիքի համաձայն՝ «իրավունքի գերակայությունն այդպես էլ կմնա անհասանելի իդեալ, քանի դեռ մենք չգտնենք հակաթույն և չսկսենք բուժել այն արատները (փառասիրություն, շահամոլություն, անպատկառություն, նախանձ, տգիտություն և վախ), որոնք քայքայում են իրավունքի հյուսվածքը»¹⁴⁴:

Ի մի բերելով վերոհիշյալ տեսակետները՝ կարելի է փաստել, որ առանց իրավունքի էության համարժեք ընկալման, այն անձի սոցիալական վարքագիծը դարձնելու պատրաստակամության, իրավագիտակցության պատշաճ մակարդակի ու օրինապահության ապահովման անհնար է իրավունքի գերակայությունը դարձնել իրապես գործող ու կենսունակ սկզբունք:

ԼԴՀ Սահմանադրության և օրենսդրության մեջ իրավունքի գերակայության ամրագրվածության ու գործնական կիրառության հարցը պետք է դիտարկել նաև միջազգային հարթությունում տեղի ունեցող գործընթացների և Արցախի Հանրապետության՝ դրա հետ առնչության համատեքստում: Այս տեսանկյունից ԼԴՀ-ն առանձնակի կարևորություն է տալիս միջազգային հանրության կողմից համընդունելի և պետության կազմավորման առաջին իսկ տարիներին ընդունված փաստաթղթերում ամրագրված ժողովրդավարական արժեքները Սահմանադրության ու օրենսդրության մեջ ամրագրելուն ու դրանցով ապրելուն: Սակայն, խոսելով ԼԴՀ-ում իրավունքի գերակայության գործողության մասին, պետք է նշել, որ սահմանադրական այս արժեքն ունի մի կարևոր առանձնահատկություն, այն է՝ գործում է դեռևս

¹⁴³ Арутюнян Г., Место и роль верховенства права в социальном поведении человека и гражданина, Альманах, Конституционное правосудие в новом тысячелетии, Ереван, Нжар, 2013, էջ 29:

¹⁴⁴ Лафитский В., Принцип верховенства права в этико-правовом измерении, Журнал российского права, № 9, էջ 53-58:

դե-յուրե չճանաչված պետության սահմաններում¹⁴⁵: Ուշագրավն այն է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, չնայած միջազգայնորեն դեռևս ճանաչված չէ, չունի միջազգային պարտավորություններ, տարածաշրջանային կամ միջազգային կազմակերպությունների անդամ չէ, սակայն այդ կառույցների կողմից ընդունված ու միջազգային ճանաչում ստացած փաստաթղթերում ամրագրված մի շարք սահմանադրական արժեքներին հետևելու պատրաստակամություն հայտնել է դեռևս պետության կազմավորման առաջին իսկ տարիներին¹⁴⁶:

Դա դրսևորվել է նաև նրանում, որ 2006թ. դեկտեմբերի 10-ի ընդունված ԼՂՀ Սահմանադրության մեջ տեղ են գտել միջազգային փաստաթղթերում ամրագրված սահմանադրական արժեքները: Առավել ևս, 2014թ. հոկտեմբերի 29-ին ԼՂՀ Ազգային ժողովն ընդունել է «Եվրոպական մշակութային կոնվենցիան վավերացնելու մասին» ԼՂՀ օրենքը, որով սկսվել է միջազգային պայմանագրերին ու կոնվենցիաներին միակողմանիորեն միանալու գործընթացը, որն այսօր էլ կրում է շարունակական բնույթ:

Միջազգային մի շարք կառույցների և նրանց կողմից ընդունված փաստաթղթերում¹⁴⁷ իրավունքի գերակայության սկզբունքի

¹⁴⁵ Հետխորհրդային տարածաշրջանի չճանաչված պետությունների սահմանադրությունների համեմատական վերլուծությունը վկայում է, որ Աբխազիայի և Հարավային Օսեթիայի սահմանադրություններում ամրագրված չէ իրավունքի գերակայությունը, իսկ Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության Սահմանադրության նախաբանում ամրագրված է օրենքի գերակայությունը:

¹⁴⁶ Խոսքն այն մասին է, որ դեռևս 1992թ. նոյեմբերի 26-ին Լեռնային Ղարաբաղի Գերագույն Խորհուրդը որոշում է ընդունել միանալու «Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին», «Մարդու իրավունքների համընդհանուր» հռչակագրերին, ինչպես նաև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրին ու կից ֆակուլտատիվ արձանագրությանը: Այդ որոշման տեքստը ուղարկվել է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին և ՄԱԿ-ի անդամ բոլոր պետություններին: Տե՛ս ԼՂՀ Ազգային ժողովի ընթացիկ արխիվը:

¹⁴⁷ ՄԱԿ-ի 24.09.2012թ. ընդունած «Իրավունքի գերակայության մասին», Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 1594 (2007) բանաձևերը, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 21.11.2008թ.

ամրագրվածությունը խոսում է այն մասին, որ վերջինս ունի առանցքային նշանակություն պետության կազմակերպման, գործառնության և նրանում անհատ-հասարակություն-պետություն հարաբերությունների իրավակարգավորման համատեքստում մարդուն որպես հատուկ իրավական արժեք դիտարկելու տեսանկյունից: Այդ իսկ պատճառով հույժ կարևոր է իրավունքի գերակայության ոլորտում միջազգային փորձի և ազգային իրավական համակարգի ներդաշնակումը:

Միջազգային հարթությունում քննարկվող սահմանադրական արժեքի խնդրահարույց լինելու հանգամանքով է պայմանավորված մի շարք միջազգային խորհրդաժողովների անցկացումը, որոնց քննարկման թեման եղել է հենց իրավունքի գերակայությունն ու դրա կենսագործման հիմնախնդիրները¹⁴⁸:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է եզրակացնել, որ իրավունքի գերակայությունը որպես սահմանադրական արժեք իրենից ներկայացնում է Աստծո կողմից տրված բնական իրավունքի առաջնայնություն պետության սահմաններում, որը ենթադրում է նաև օրենքների համապատասխանություն վերջինիս բովանդակության հետ, իրավունքով անհատի և հանրային իշխանության մարմինների հայեցողության սահմանների սահմանափակվածություն, որն էլ նպաստում է «անհատ-հասարակություն-պետություն» շղթայի ամեն մի բաղադրիչի հավասարակշռության ապահովմանն ու համաչափ զարգացմանը:

Իրավաստեղծ ու իրավակիրառ գործունեության ընթացքում հաճախ անհրաժեշտություն է առաջանում հստակ տարանջատել իրավունքն օրենքից: Հարցն ավելի է սրվում, երբ փորձ է կատարվում օրենքի գերակայությունը տարանջատել իրավունքի

CM(2008)170 հանձնարարականը, Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի 04.04.2011թ. CDL-AD(2011)003rev. զեկույցը և այլն:

¹⁴⁸ «Իրավունքի գերակայության սկզբունքը սահմանադրական արդարադատության պրակտիկայում», 15-16.10.2004թ., Երևան: «Իրավունքի գերակայությունը որպես գործնական հայեցակարգ», 02.03.2012թ., Լոնդոն: «Իրավունքի գերակայության եվրոպական չափանիշները և իշխանությունների հայեցողական սահմանները Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում», 03-04.07.2013թ.:

գերակայությունից: Իրավագետները նշում են, որ իրավունքը չի կարելի նույնացնել օրենքի հետ¹⁴⁹, այդ երկու կատեգորիաներն իրար հետ հարաբերակցվող ու իրարից տարբերվող երևույթներ են¹⁵⁰: Կիսելով նշված ու մի շարք այլ գիտնականների տեսակետները՝ մեր կողմից փորձ է արվել ներկայացնել այն հատկանիշներն ու առանձնահատկությունները, որոնք ունեն իրավունքի և օրենքի գերակայությունները, ինչպես նաև այն չափանիշները, որոնց հիմքով վերջիններս տարբերվում են իրարից: Այդպիսի չափանիշներ են ընտրվել իրավունքի/օրենքի աղբյուրը, ձևավորման հիմքում դրված կամքը, սահմանափակվելու հնարավորությունը, դրանց փոխկապվածությունը, իրավական տարրի գոյությունն իրավունքում/օրենքում, իրավունքի/օրենքի միջոցով արտահայտվող կամքը, ինչպես նաև այն սուբյեկտների շրջանակը, որոնց վրա տարածվում է իրավունքը/օրենքը: Հավելված 2-ում ներկայացված մոտեցումը, բնականաբար, չի հավակնում դառնալ վերոհիշյալ երկու հասկացությունները տարբերող համընդհանուր միջոց, այլ գիտական շրջանառության մեջ դնելու փորձ է:

§ 2. Ժողովրդաիշխանությունը որպես ժամանակակից պետությունների կազմակերպման հիմնարար սկզբունք

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության կառուցման պարտադիր ու անփոխարինելի սահմանադրական սկզբունքներից ու արժեքներից մեկն է համարվում ժողովրդաիշխանությունը, որն իր ամրագրումն էր ստացել դեռևս ԼՂՀ կազմավորման հիմնարար փաստաթղթերում¹⁵¹, իսկ ԼՂՀ Սահ-

¹⁴⁹ Եսայան Ա., Պետության և իրավունքի տեսություն: Ուս. ձեռն. բուհերի համար, Երևան, Տիգրան Մեծ, 2012, էջ 69-70:

¹⁵⁰ Нерсесянц В., Философия права: либертарно-юридическая концепция // Вопросы философии, 2002, N 3, էջ 3-15:

¹⁵¹ 1992թ. հունվարի 6-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված «ԼՂՀ պետական անկախության մասին» Հոչակագրի 2-րդ կետում նշված է, որ «ԼՂՀ ամբողջ իշխանությունը պատկանում է ԼՂՀ ժողովրդին, որն իր

մանադրության 3-րդ հոդվածում ամրագրված է, որ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների եղանակով, ինչպես նաև Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Իշխանության յուրացումը հանցագործություն է»¹⁵²: Սահմանադրական արժեքանության տեսանկյունից բուն ժողովրդաիշխանության սկզբունքի ամրագրվածությունն Արցախի Սահմանադրության մեջ նույնպես հետաքրքրական է: Բանն այն է, որ եթե Սահմանադրության 1-ին հոդվածն անդրադառնում է կառուցվելիք պետության հայեցակարգին, ապա 2-րդ հոդվածում նշվում է պետության տարածքում բարձրագույն ճանաչված արժեքների մասին, որին անմիջապես հաջորդում է այն, թե այդ գաղափարներն ինչպե՞ս ու գլխավորապես ո՞ր սկզբունքի հիման վրա պետք է իրացվեն, այսինքն զուտ մեթոդաբանական առումով ԼՂՀ Սահմանադրությունը համապա-

իշխանությունն ու կամքը իրագործում է համաժողովրդական հանրաքվեի կամ ներկայացուցչական մարմինների միջոցով» («ԼՂՀ պետական անկախության մասին» հոչակագիրը տե՛ս URL: <http://www.president.nkr.am/am/nkr/nkr2> (դիմելու ամսաթիվը՝ 03.02.2014): Իսկ նույն Հոչակագրի հիման վրա ընդունված «ԼՂՀ պետական անկախության հիմունքների մասին» ԼՂՀ օրենքի 1-ին կետում ամրագրված է այն դրույթը, ըստ որի՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն անկախ, ժողովրդավարական պետություն է, որն ինքնուրույն կերպով է որոշում այլ պետությունների հետ համագործակցության ձևերը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ամբողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին և ելնում է ժողովրդից, որն այն իրականացնում է ինչպես անմիջականորեն, այնպես էլ իր կողմից կազմավորվող ներկայացուցչական մարմինների միջոցով: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնիշխանությունն արտահայտվում է իր ամբողջ տարածքում օրենսդիր, գործադիր և դատական բարձրագույն իշխանության ինքնուրույն իրականացման ձևով՝ ի շահ հանրապետությունում ապրող բոլոր ազգերի» (Օրենքն ընդունվել է 1992թ. հունվարի 8-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից: Տե՛ս ԼՂՀ Ազգային ժողովի ընթացիկ արխիվը):

¹⁵² Տե՛ս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրություն, Ստեփանակերտ, Դիզակ պլյուս, 2006, էջ 3:

տասխանում է այնպիսի պետության կառուցման վերաբերյալ արդի պատկերացումներին, որին ձգտում է ԼՂՀ ժողովուրդը և որոնք նմուշային են համարվում զարգացած և զարգացող երկրների համար:

Ժողովրդաիշխանության սկզբունքին վերաբերող սույն պարագրաֆը փորձ կարվի շարադրել հետևյալ գաղափարի շուրջ. «Պետությունն իշխանությունն ստանում է ժողովրդից, իրականացնում է ժողովրդով, հանուն ժողովրդի»¹⁵³:

Ինչպես իրավունքի գերակայության, այնպես էլ ժողովրդաիշխանության սկզբունքի առանցքը մարդն է, մարդկանց հանրոյթը՝ ժողովուրդը, որը հանդես է գալիս և՛ որպես իշխանության աղբյուր ու կրող, և՛ որպես իշխանության սահմանափակիչ: Ժողովրդաիշխանությունն իրավունքի գերակայության հետ միասին հանդես է գալիս որպես երկրում սահմանադրականության հաստատման կարևորագույն բանալիներից մեկը: Ըստ պրոֆեսոր Գ.Հարությունյանի՝ ժողովրդաիշխանությունը նշանակում է ժողովրդի գերակայություն որպես իշխանության աղբյուր և կրող, նրա իրավունքը՝ ինքնուրույն որոշել իր ճակատագիրը, հիմնադրել պետական իշխանության համակարգ, մասնակցել իր պետության քաղաքականության ձևավորմանը, պետական մարմինների կազմավորմանը, վերահսկել պետության գործունեությունը: Ժողովրդի ինքնիշխանությունից կամ ժողովրդաիշխանությունից բխում են ժողովրդի հետևյալ հիմնական իրավունքները՝

- լինել գերագույն իշխանության աղբյուր և կրող պետության մեջ,
- ձևավորել իշխանության ներկայացուցչական մարմինները,
- պատվիրակել սեփական լիազորություններն իշխանության ներկայացուցչական մարմիններին,

¹⁵³ Հարությունյան Գ., «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»-ի 2-րդ հոդվածի մեկնաբանությունը: Ընդհ. խմբ. Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010, էջ 56:

- ունենալ Սահմանադրությամբ ամրագրված կարգավիճակ,
- մասնակցել օրենսդրական գործունեությանը, պետության կառավարմանը և այլն¹⁵⁴:

Ժողովրդաիշխանության՝ որպես ժամանակակից պետությունների կազմակերպման հիմնարար սկզբունքի և սահմանադրական արժեքի, լիարժեքությունը պայմանավորված է ամենից առաջ նրանով, թե այդ սկզբունքի և արժեքի միջոցով գործառնող ինստիտուտները (ազատ ընտրություններ, հանրաքվեներ) իրականում ի՞նչ դերակատարություն ունեն, այդ սկզբունքի իրացման արդյունքում ընդունված որոշումները որքանո՞վ են կյանքի կոչվում, դառնում պարտադիր բոլորի համար և որքանո՞վ են համապարփակ ձևով կարգավորում հասարակական հարաբերությունները՝ դրանով իսկ նպաստելով իրավական, ժողովրդավարական պետության ու իրավական հասարակության կայացմանը:

Քննարկվող սահմանադրական արժեքն արտահայտվում, իր դերը և նշանակությունը կատարում է որոշակի ձևերի և ինստիտուտների միջոցով, որոնք կազմում են ժողովրդաիշխանության համակարգը: Ժողովուրդը հասարակական և պետական գործերի լուծմանը մասնակցում է բազմազան ձևերով: Կախված ժողովրդի կամքի արտահայտման ձևից՝ տարբերվում են անմիջական և ներկայացուցչական ժողովրդաիշխանության ձևերը¹⁵⁵:

Սույն պարագրաֆի շրջանակներում մենք ավելի մանրամասն կբացահայտենք անմիջական ժողովրդաիշխանության ձևերից հանրաքվեի և տեղական հանրաքվեի բովանդակությունը, կանդիդատանք սահմանադրական ու օրենսդրական մակարդակներում դրանց ամրագրվածության ու իրացման որոշ հիմնահարցերի:

¹⁵⁴ Նույն տեղում, էջ 56:

¹⁵⁵ Հարությունյան Գ., «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»-ի 2-րդ հոդվածի մեկնաբանությունը: Ընդհ. խմբ. Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010, էջ 56-57:

«Հանրաքվե» հասկացությունը ծագում է լատիներեն «referendum» բառից, որը նշանակում է «այն, ինչ պետք է հաղորդվի»¹⁵⁶: Հանրաքվեն ժողովրդաիշխանության բարձրագույն ձևն է: Այն պետական և հասարակական գործերի ժողովրդավարական կառավարման բարձրագույն, հիմնարար ձևն է, որի դեպքում քաղաքացիները, ուղղակիորեն արտահայտելով իրենց կամքը, քվեարկության միջոցով ընդունում են պետական, հասարակական և տեղական նշանակության կարևոր հարցերով որոշումներ¹⁵⁷:

Սահմանադրական իրավունքի գիտության մեջ գոյություն ունեն հանրաքվեի տարբեր բնորոշումներ: Այսպես, Ա.Միշինը հանրաքվեն բնորոշում է որպես դիմում ընտրազանգվածին ինչ-որ օրենսդրական կամ սահմանադրական հարցի վերջնական լուծման համար¹⁵⁸: Մ.Բագլայը գտնում է, որ հանրաքվեն քաղաքացիների կողմից գաղտնի քվեարկության ճանապարհով իրականացվող ինչ-որ փաստաթղթի կամ որոշման նախագծի հաստատումն է կամ (չհաստատումը), համաձայնությունը (կամ անհամաձայնությունը) պառլամենտի, պետության գլխի կամ կառավարության այս կամ այն գործողությունների հետ¹⁵⁹: Վ.Չիրկինը պնդում է, որ հանրաքվեն ընտրողների քվեարկությունն է, որի միջոցով ընդունվում է համապետական կամ տեղական նշանակություն ունեցող պետական կամ ինքնակառավարման բնույթի որոշում¹⁶⁰: Իսկ «Հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Հանրաքվեն (համաժողովրդական

¹⁵⁶ Арутюнян Г., Баглай М.В., Конституционное право: Энциклопедический словарь, М., Норма, 2006, էջ 398:

¹⁵⁷ Հարությունյան Գ., «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»-ի 2-րդ հոդվածի մեկնաբանությունը: Ընդհ. խմբ. Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010, էջ 57:

¹⁵⁸ Конституционное (государственное) право зарубежных стран, Мишин А., Учебник, 17-е изд., исп. и доп., М., Статут, 2013, URL: <http://www.alleng.ru/d/jur/jur537.htm> (դիմելու ամսաթիվը՝ 17.12.2014):

¹⁵⁹ Баглай М., Конституционное право Российской Федерации: учеб. для вузов / М. В. Баглай. 6-е изд., изм. и доп., М., Норма, 2007, էջ 434:

¹⁶⁰ Чиркин В., Конституционное право зарубежных стран. М., 1997, էջ 227:

քվեարկությունը) ժողովրդի կողմից անմիջականորեն իշխանության իրականացումն է՝ Սահմանադրություն ընդունելու կամ դրանում փոփոխություններ կատարելու, օրենքներ ընդունելու, ինչպես նաև պետության համար կարևոր նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքը բացահայտելու եղանակով»¹⁶¹:

Հանրաքվեի նշանակության համար հաճախ որպես հոմանիշ օգտագործվում է «պլեբիսցիտ» հասկացությունը (լատ. plebs – հասարակ ժողովուրդ և scitum – որոշում, վճիռ, այսինքն՝ ժողովրդի որոշում): Որոշ երկրներում նախընտրում են օգտագործել «հանրաքվե» (Ֆրանսիա, Իտալիա, Իսպանիա, Ռուսաստան, Սլովակիա և այլն), իսկ մյուսներում (Չիլի, Էկվադոր, Կոստա-Ռիկա և այլն) «պլեբիսցիտ» տերմինները¹⁶²: Իրավաբանական տեսանկյունից հանրաքվեի և պլեբիսցիտի միջև էական տարբերություններ չկան, դրանք հոմանիշներ են: Այս երկու եզրույթների միջև առկա աննշան տարբերությունը հետևյալն է. պլեբիսցիտ հիմնականում անվանում են երկրի կամ տարածաշրջանի համար ճակատագրական բնույթ ունեցող հարցերով հանրաքվեն: Օրինակ, եթե ընտրողների քվեարկությամբ ձևականորեն և (կամ) ըստ էության որոշվում է վիճելի տարածքի պետական պատկանելության, կառավարման ձևի, կառավարող ռեժիմի հետագա գոյության, երկրի առաջնորդի հանդեպ վստահության և

¹⁶¹ Պետք է նկատել, որ ԼՂՀ Ազգային ժողովի կողմից 23.03.2005թ. ընդունված «Հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքում հանրաքվեին տրված էր հետևյալ բնորոշումը. «Հանրաքվեն (համաժողովրդական քվեարկությունը) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների կողմից անմիջականորեն ժողովրդի իշխանություն իրականացնելու, Սահմանադրություն ընդունելու կամ դրանում փոփոխություններ կատարելու, օրենքներ ընդունելու եղանակ է»: 2010թ. փետրվարի 17-ին կատարված փոփոխությամբ այն ևս ենթարկվել է նկատելի փոփոխությունների, մասնավորապես, հանրաքվեն ոչ թե քաղաքացիների, այլ ժողովրդի կողմից անմիջական իշխանության իրականացման եղանակ է, երկրորդ, այն նաև պետության համար կարևոր նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքը բացահայտելու եղանակ է:

¹⁶² Енгибарян Р., Сравнительное конституционное право: Учебное пособие, Ростов н/Д, Феникс, 2007, էջ 361:

այլնի մասին հարցը, ապա այդպիսի հանրաքվեն հաճախ պաշտոնապես կամ ոչ պաշտոնապես անվանում են պլեբիսցիտ¹⁶³:

«Պլեբիսցիտ» եզրույթը ԼՂՀ Սահմանադրության և օրենսդրության մեջ բացակայում է, սակայն դրա միջոցով լուծվող հարցերի շրջանակը կարող է կարգավորվել ԼՂՀ Սահմանադրության 135 հոդվածի 1-ին մասով նախատեսված դրույթով, ըստ որի՝ «Պետության համար կարևոր նշանակություն ունեցող հարցերը հանրաքվեի են դրվում Ազգային ժողովի կամ կառավարության առաջարկությամբ՝ հարցադրումների տեսքով՝ Սահմանադրության 133-րդ հոդվածով սահմանված կարգով»:

Հանրաքվեի և պլեբիսցիտի միջև գոյություն ունեցող նմանության և տարբերության վերաբերյալ շրջանառվում է երկու կարծիք. գիտնականների մի խումբը¹⁶⁴ կարծում է, որ այդ ինստիտուտների միջև ոչ մի տարբերություն չկա, իսկ մյուս խումբը¹⁶⁵ հակված է այն տեսակետին, որ դրանց միջև, այնուամենայնիվ, առկա է տարբերություն:

Գ.Սինցովը կարծում է, որ հանրաքվեի և պլեբիսցիտի միջև տարբերությունը կրում է զուտ գիտական, դոկտրինալ բնույթ, դրանց միջև տարբերությունը հանգեցվում է բառօգտագործման ավանդույթներին: Գործնականում այդ ինստիտուտները կարող են կարգավորվել նորմատիվ ակտերի միասնական համակարգով, անց են կացվում միասնական սկզբունքների վրա հիմնված ընթացակարգով և ունեն պարտադիր բնույթ: Այս ամենը թույլ է

¹⁶³ Страшун Б., Конституционное (государственное право) зарубежных стран: В 4 т. Тома 1–2. М., 2000 // URL: <http://www.alleng.ru/d/jur/jur476.htm> (դիմելու ամսաթիվը՝ 03.02.2014):

¹⁶⁴ Коток В., Проблемы развития непосредственной демократии в Советском государстве. М., 1965, էջ 584: Баглай М., Туманов В., Референдум: малая энциклопедия конституционного права. М., 1998, էջ 401-403:

¹⁶⁵ Дюги Л., Конституционное право. Общая теория государства. М., 1908, էջ 397: Волова Л., Плебисцит в международном праве. М., 1972, էջ 53: Маклаков В., Избирательное право и избирательные системы буржуазных развивающихся стран. М., 1987, էջ 61:

տալիս եզրակացնել, որ պլեբիսցիտը ըստ առարկայի հանրաքվեի տեսակ է¹⁶⁶:

Հիշյալ հեղինակների աշխատությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ եթե հանրաքվեի դրվող հարցերը հիմնականում վերաբերում են Սահմանադրությանը և օրենքներին, ապա պլեբիսցիտի դրվող հարցերը տարբեր են. օրինակ, նախագահի կամ կառավարության քաղաքական գծի հանդեպ վստահության, պետության տարածքի հետ կապված հարցեր և այլն: Կարծում ենք, որ այդ երկու հասկացությունների միջև առկա էական տարբերությունը մի կողմից դրսևորվում է հանրաքվեի կամ պլեբիսցիտի դրվող հարցերի բնույթով, իսկ մյուս կողմից նրանով, որ հանրաքվեն հիմնականում ունի պարտադիր բնույթ, իսկ պլեբիսցիտը՝ խորհրդատվական:

Ժողովրդաիշխանության՝ որպես սահմանադրական արժեքի՝ ԼՂՀ օրենսդրության մեջ արտացոլման ամբողջ գործընթացը կարելի է պայմանականորեն բաժանել 3 փուլերի՝

1. Ժողովրդաիշխանության սկզբունքի կամ արժեքի ամրագրում «ԼՂՀ պետական անկախության մասին» Հոչակագրում, այնուհետև օրենքներում (սկզբունքն ամրագրվել է առաջին անգամ),
2. սահմանադրական այս արժեքի ամրագրում ԼՂՀ Սահմանադրության մեջ,
3. Սահմանադրությունից հետո այդ ոլորտում ձեռք բերված նվաճումների կամ կուտակված փորձի, ներկա վիճակի և օրենսդրության կատարելագործման փուլ, որը կրում է շարունակական բնույթ:

Ժողովրդաիշխանության ձևերից հանրաքվեն և ընտրությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կենսունակ ինստիտուտներ են եղել պետության կազմավորման պահից մինչ օրս, իսկ ժողովրդի կողմից անմիջական և

¹⁶⁶ Синцов Г., Проблемы разграничения понятий института референдума и плебисцита в законодательстве зарубежных стран // Пробелы в российском законодательстве, М., 2010, № 4, էջ 84:

ներկայացուցչական ժողովրդաշխատանքի սկզբունքի իրացման իրական մասշտաբների մասին պատկերացում կազմելու համար բավական է լոկ թվարկել տարբեր մակարդակների այն ընտրություններն ու հանրաքվեները, որոնք կայացել են վերջին 25 տարիների ընթացքում: Այսպես, սկսած 1991թ. սեպտեմբերի 2-ից մինչև 2015թ. մայիսի 3-ը ԼՂՀ-ում տեղի են ունեցել համապետական երկու¹⁶⁷, տեղական երկու¹⁶⁸ հանրաքվեներ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի հինգ¹⁶⁹, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խորհրդարանի վեց¹⁷⁰, տեղական ինքնակառավարման մարմինների հինգ¹⁷¹ ընտրություններ:

¹⁶⁷ 1991թ. դեկտեմբերի 10-ի անկախության հանրաքվե և 2006թ. դեկտեմբերի 10-ի ԼՂՀ Սահմանադրության ընդունման հանրաքվե:

¹⁶⁸ 2009թ. սեպտեմբերի 27-ին Տանձուտի համայնքը Ծիծեռնականքի համայնքին միավորելու և 2014թ. հուլիսի 20-ին Ճարտար և Ղուզե Ճարտար համայնքները մեկ՝ Ճարտար համայնքում միավորելու նպատակով անցկացված տեղական հանրաքվեներ:

¹⁶⁹ 1996թ. նոյեմբերի 24-ին ԼՂՀ Նախագահ է ընտրվել Ռոբերտ Քոչարյանը, պաշտոնը ստանձնել է 1996թ. դեկտեմբերի 23-ին, 1997թ. սեպտեմբերի 1-ին՝ Արկաղի Ղուկասյանը, պաշտոնը ստանձնել է 1997թ. սեպտեմբերի 8-ին, 2002թ. օգոստոսի 11-ին՝ Արկաղի Ղուկասյանը, պաշտոնը ստանձնել է 2002թ. սեպտեմբերի 7-ին, 2007թ. հուլիսի 19-ին՝ Բակո Սահակյանը, պաշտոնը ստանձնել է 2007թ. սեպտեմբերի 7-ին, 2012թ. հուլիսի 19-ին՝ Բակո Սահակյանը, պաշտոնը ստանձնել է 2012թ. սեպտեմբերի 7-ին:

¹⁷⁰ ԼՂՀ Գերագույն խորհրդի, իսկ այնուհետև Ազգային ժողովի ընտրությունները տեղի են ունեցել 1991թ. դեկտեմբերի 28-ին, 1995թ. ապրիլի 30-ին՝ վաղաժամկետ, 2000թ. հունիսի 18-ին, 2005թ. հունիսի 19-ին, 2010թ. մայիսի 23-ին և 2015թ. մայիսի 3-ին: Պետք է նշել, որ ընտրությունների ընթացքում եղել են կրկնական, նոր և լրացուցիչ ընտրություններ: ԼՂՀ-ում կայացած բոլոր ընտրությունների և հանրաքվեների մասին ավելի մանրամասն տե՛ս Օհանջանյան Մ., Անկախության քայլերը, Ստեփանակերտ, Սոնա գրահրատարակչություն, 1998, 64 էջ: Դավթյան Ս., Ժողովրդավարության ուղիով, Ստեփանակերտ, «Ազատ Արցախ» հրատ., 2002, 72 էջ: Նասիբյան Ս., ԼՂՀ. Ժողովրդավարության զարգացման և պետականության ամրապնդման ճանապարհին, Պոլիգրաֆ, Ստեփանակերտ, 2010, 220 էջ:

¹⁷¹ ԼՂՀ-ում ՏԻՄ ընտրությունները տեղի են ունեցել 1998թ. սեպտեմբերի 27-ին, 2001թ. սեպտեմբերի 5-ին, 2004թ. օգոստոսի 8-ին, 2007թ. հոկտեմբերի 14-ին, 2011թ. սեպտեմբերի 18-ին և 2015թ. սեպտեմբերի 13-ին:

Հանրաքվեի ինստիտուտի կարևորագույն հարցերից մեկը վերաբերում է դրա անցկացման համար նախաձեռնության իրավունքով օժտված սուբյեկտների շրջանակին: Սովորաբար այդպիսի նախաձեռնություն կարող է բխել պետության ղեկավարից, խորհրդարանից, պատգամավորների խմբից, կառավարությունից, ընտրողների խմբից կամ քաղաքացիներից:

1991թ. նոյեմբերի 27-ի նիստի ժամանակ ընդունված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հանրաքվե անցկացնելու մասին» ժամանակավոր կանոնակարգի 4-րդ հոդվածի համաձայն՝ «ԼՂՀ ամբողջ տարածքում հանրաքվեի անցկացման նախաձեռնությունը պատկանում է բացառապես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդական պատգամավորների խորհրդին¹⁷²»:

Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն անկախության գործընթացը սկսել են համարյա միաժամանակ և մինչ օրս գտնվում են իրավական նույն հարթության վրա: Ուշագրավն այն է, որ հիշյալ բնագավառը կարգավորող իրավական ակտը՝ 1991թ. ապրիլի 2-ի «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը, հանրաքվեի անցկացման նախաձեռնության իրավունքը վերապահում էր ՀՀ քաղաքացիներին¹⁷³ և ՀՀ Գերագույն խորհրդին, իսկ նորանկախ ԼՂՀ-ում քաղաքացիներին նման իրավունք վերապահված չէր:

Նախքան ԼՂՀ Սահմանադրության հանրաքվեի անցկացումն ընդունված «Հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 2-րդ գլխում (7-81 հոդվածներ), որը նվիրված է հանրաքվեի անցկացման նախաձեռնությամբ հանդես գալուն, ժողովուրդը նույնպես չէր

¹⁷² Հարկ է նկատել, որ ԼՂՀ ժողպատգամավորների խորհուրդը 150 ժողպատգամավորներից բաղկացած ներկայացուցչական մարմին էր, որն ընտրվելուց հետո ձևավորում էր գործադիր մարմին՝ ի դեմս Գործադիր կոմիտեի (Գործկոմի):

¹⁷³ Ձարմանակին այն է, որ ՀՀ կազմավորման առաջին տարիներին ընդունված օրենքով ՀՀ քաղաքացիները համարվում էին հանրաքվեի նախաձեռնության սուբյեկտ, իսկ 1995թ. հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրությամբ (2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխություններով հանդերձ) ժողովուրդը զրկվեց այդ իրավունքից:

հանդիսանում հանրաքվեի նախաձեռնության սուբյեկտ: Ընդ որում՝ եթե նախկինում այդ իրավունքը վերապահված էր միայն ԼՂՀ ժողպատգամավորների հորհրդին, ապա ԼՂՀ-ում Նախագահի ինստիտուտի ստեղծմամբ տեղի ունեցավ լիազորությունների տարանջատում Ազգային ժողովի ու Նախագահի միջև, և ժամանակի ընթացքում այդ նախաձեռնության իրավունքը եզակիից դարձել է երկակի ու այժմ, եթե Սահմանադրության ընդունման կամ դրանում փոփոխություններ կատարելու նախաձեռնությամբ օժտված է Հանրապետության Նախագահը կամ Ազգային ժողովը, ապա օրենքները և պետության համար կարևոր նշանակություն ունեցող հարցերը հանրաքվեի են դրվում Ազգային ժողովի կամ կառավարության առաջարկությամբ:

Ի տարբերություն որոշ երկրների սահմանադրությունների և հանրաքվեի ոլորտը կարգավորող օրենսդրությունների¹⁷⁴ ԼՂՀ Սահմանադրությամբ նախատեսված չէ հանրաքվեի անցկացում ժողովրդական նախաձեռնությամբ, սակայն «Տեղական հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ «տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնության իրավունք ունեն այդ հանրաքվեին մասնակցելու

¹⁷⁴ Վրաստանի 1995թ. Սահմանադրության 74 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պառլամենտի, առնվազն 200 հազար ընտրողների պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ Վրաստանի Նախագահը Սահմանադրությամբ և օրգանական օրենքով սահմանված հարցերով այդ պահանջը ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում նշանակում է հանրաքվե»: Ուկրաինայի 1996թ. Սահմանադրության 72 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Համաուկրաինական հանրաքվե հայտարարվում է ժողովրդական նախաձեռնությամբ ձայնի իրավունք ունեցող Ուկրաինայի առնվազն 3 միլիոն քաղաքացիների պահանջով՝ պայմանով, որ հանրաքվեի նշանակման վերաբերյալ ստորագրությունները հավաքվեն ոչ պակաս քան շրջանների 2/3-ում, և յուրաքանչյուր շրջանում ոչ պակաս, քան 100 հազար ստորագրություն»: Ռուսաստանի Դաշնությունում հիշյալ բնույթի հարաբերությունը կարգավորվում է 2004թ. հունիսի 28-ի «Ռուսաստանի Դաշնության հանրաքվեի մասին» Ռուսաստանի Դաշնության դաշնային սահմանադրական օրենքի 14 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, ըստ որի՝ «հանրաքվեի անցկացման նախաձեռնությունը պատկանում է Ռուսաստանի Դաշնության՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող ոչ պակաս, քան 2 միլիոն քաղաքացիներին...»:

իրավունք ունեցող անձինք, ինչպես նաև տվյալ համայնքի ավագանին և ղեկավարը»: Այս հոդվածի մեկնաբանությունից բխում է, որ ամեն դեպքում տեղական հանրաքվեի նախաձեռնության իրավունքի իրացմանը մասնակցում են քաղաքացիները, ինչը չենք կարող ասել հանրաքվեի մասին:

Կատարված վերլուծությունից բխում է, որ հանրաքվեն անմիջական ժողովրդաիշխանության իրացման ձև է, սակայն դրա անցկացման նախաձեռնությունը պատկանում է բացառապես ժողովրդի կողմից ընտրված Հանրապետության Նախագահին և Ազգային ժողովին, ինչպես նաև վերջիններիս կողմից ձևավորված կառավարությանը, իսկ քաղաքացիների կողմից այդպիսի նախաձեռնության իրավունք պարզապես ամրագրված չէ, որը պարզապես ժամանակի ընթացքում դրա կարևորության անխուսափելիությունն զգալու արդյունքում Արցախի Սահմանադրության և օրենսդրության մեջ ամրագրման խնդիր է:

Ինչ վերաբերում է հանրաքվե նախաձեռնելու համար քաղաքացիների ստորագրությունների թվին, ապա այդ թիվը տարբեր երկրներում տարբեր է: Որպես օրինակ նշենք, որ Շվեյցարիայի Սահմանադրությամբ այդ թիվը 100 հազար է, Մակեդոնիայի Սահմանադրությամբ՝ 150 հազար, Վրաստանի Սահմանադրությամբ՝ 200 հազար, Բելառուսի Սահմանադրությամբ՝ 450 հազար, Իտալիայի Սահմանադրությամբ՝ 500 հազար¹⁷⁵ և այլն:

Կարծում ենք, որ ԼՂՀ-ում այդ խնդրի լուծման համար առավել նպատակահարմար է Սահմանադրությամբ սահմանել հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ընդհանուր թվի առնվազն 10 տոկոսի ստորագրությունների առկայության պահանջ¹⁷⁶: Նշենք, որ 2015թ. մայիսի 3-ի դրությամբ ԼՂՀ-ում

¹⁷⁵ Տե՛ս Շվեյցարիայի 1999թ. Սահմանադրության 138 հոդվածը, Մակեդոնիայի 1991թ. Սահմանադրության 130 հոդվածը, Վրաստանի 1995թ. Սահմանադրության 74 հոդվածը, Բելառուսի 1994թ. Սահմանադրության 74 հոդվածը, Իտալիայի 1947թ. Սահմանադրության 138 հոդվածը:

¹⁷⁶ Համեմատության համար նշենք, որ «Տեղական հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Տեղական հանրաքվե նշանակելու համար անհրաժեշտ ստորագրությունների նվազագույն

ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների թիվը կազմում է շուրջ 102 հազար¹⁷⁷: Կարծում ենք, որ ստորագրությունների հստակ թիվ նշելն այնքան էլ արդարացված չէր լինի, քանի որ երկրի բնակչության թվաքանակի աճի կամ նվազման հետ զուգահեռ այդ թիվը մնալու է անփոփոխ, որը ոչ համամասն է լինելու ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների փաստացի թվա-կազմին:

Ինչպես տեսնում ենք, որոշ երկրներում կա ժողովրդական նախաձեռնությամբ հանրաքվե անցկացնելու իրավունք, ինչը սակայն բացակայում է ԼՂՀ Սահմանադրության մեջ: Իսկ այն, որ Ազգային ժողովը, լինելով նաև ներկայացուցչական մարմին, ներկայացնում է բնակչության շահերն ու պահանջները և դրանով իսկ արտահայտում ժողովրդի տեսակետը, նույնպես չի կարող դիտվել որպես ժողովրդի մասնակցություն հանրաքվեի նախաձեռնության իրացմանը, չէ՞ որ հանրաքվեն ենթադրում է անմիջական նախաձեռնություն և մասնակցություն: Նշենք, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ԼՂՀ օրենքով նախատեսված չէ այնպիսի ընթացակարգ, որի դեպքում ժողովուրդը կարողա-նա դիմել իր կողմից ընտրված պատգամավորներին՝ հանրաքվե նախաձեռնելու խնդրանքով կամ պահանջով:

ԼՂՀ-ում հանրաքվեի նախաձեռնության իրավունքի հետ կապված խնդիրը ոչ միայն ժողովրդին է վերաբերում, այլ նաև Նախագահին: Խոսքն այս դեպքում օրենսդրական հանրաքվեի մասին է: ԼՂՀ Սահմանադրության 134 հոդվածի 1-ին մասի հա-մաձայն՝ «Օրենքները հանրաքվեի են դրվում Ազգային ժողովի կամ Կառավարության առաջարկությամբ՝ Սահմանադրության 133-րդ հոդվածով սահմանված կարգով»: Նման ձևակերպում առկա էր նաև ՀՀ նախկին Սահմանադրության 112 հոդվածի

քանակը տվյալ տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ընդհանուր թվի 5 տոկոսից պակաս չպետք է լինի»:

¹⁷⁷ 2015թ. մայիսի 3-ի ԼՂՀ Ազգային ժողովի ընտրության քվեարկության ար-դյունքների ամփոփ տվյալները տե՛ս URL: <http://cec.nkr.am/%D5%A8%D5%B6%D5%A4%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D6%80/#> (դիմելու ամսաթիվը՝ 12.05.2015):

1-ին մասում: Համեմատության համար նշենք, որ այս դրույթը ՀՀ նախկին Սահմանադրության տրամաբանության մեջ տեղա-վորվում է, քանի որ համաձայն վերոհիշյալ Սահմանադրության 75 հոդվածի 1-ին մասի՝ «Ազգային ժողովում օրենսդրական նա-խաձեռնության իրավունքը պատկանում է պատգամավորներին և կառավարությանը», այսինքն ՀՀ Նախագահին օրենսդրական նախաձեռնության իրավունքով օժտված չէ, հետևաբար օրենսդ-րական հանրաքվե նախաձեռնելու իրավունք ևս վերապահված չէ, սակայն ԼՂՀ Սահմանադրության լուծումներում այս իրա-վակարգավորումը էականորեն տարբերվում է, քանի որ համա-ձայն ԼՂՀ Սահմանադրության 90 հոդվածի՝ «Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է Հանրապետության Նախագահին, պատգամավորներին և կա-ռավարությանը»¹⁷⁸: Նշենք, որ ԼՂՀ Նախագահի՝ օրենսդրական նախաձեռնության իրավունքով օժտված լինելը ամրագրված էր դեռևս 1994թ. դեկտեմբերի 21-ի «ԼՂՀ Նախագահի մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասում¹⁷⁹: Այս տրամաբանությու-նից ելնելով կարելի է ասել, որ ԼՂՀ Ազգային ժողովում օրենսդ-րական նախաձեռնության իրավունք ունեցող սուբյեկտների և օրենսդրական հանրաքվեի նախաձեռնության իրավունքով օժտված սուբյեկտների կազմը չպետք է իրարից տարբերվեն, ու

¹⁷⁸ Իրավաբանական գրականության մեջ կա կարծիք, համաձայն որի՝ ժո-ղովրդին ևս պետք է օժտել օրենսդրական նախաձեռնության իրավուն-քով, որին սկզբունքորեն դեմ չենք, սակայն ԼՂՀ-ում այդ ինստիտուտը կգործի այն դեպքում, երբ քննարկվող ժողովրդահիշխանության ձևերը կսկսեն տեսական մակարդակից տեղափոխվել գործնական հարթու-թյուն, որի հիմքում ներկա պահին առավել շատ ընկած են իրավա-գիտակցության ու իրավական իրազեկվածության խնդիրները (Տե՛ս Нудненко Л. К вопросу о правовом регулировании народовластия в России // Государство и право, 2012, N 7, էջ 20-21):

¹⁷⁹ Հիշյալ օրենքն ուժը կորցրել է՝ համաձայն ԼՂՀ Սահմանադրության 141 հոդվածի 3-րդ մասի (ի դեպ, Սահմանադրության 141 հոդվածի 3-րդ մա-սում վրիպակ է թույլ տրված. «ԼՂՀ Նախագահի մասին» ԼՂՀ օրենքը թվագրված է 1994թ. դեկտեմբերի 22, այնինչ ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից այն ընդունվել է 1994թ. դեկտեմբերի 21-ին): Տե՛ս ԼՂՀ Ազգային ժողովի ընթացիկ արխիվը:

քննարկվող դրույթները բուն Սահմանադրության տրամաբանության առումով պետք է համապատասխանեցվեն իրար:

Չնայած օրենսդրական հանրաքվեի՝ ԼՂՀ Սահմանադրության մեջ ամրագրվածության փաստին, վերջին 10 տարիների ընթացքում երբևէ օրենսդրական հանրաքվե չի անցկացվել այն դեպքում, երբ ԼՂՀ Ազգային ժողովի կողմից ընդունված որոշ օրենքներ, օրինակ՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքը ԼՂՀ-ում գործողության մեջ դնելու մասին ԼՂՀ օրենքը կարելի էր ընդունել օրենսդրական հանրաքվեի եղանակով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված օրենքը շոշափում է Հանրապետության բոլոր ավտոտրանսպորտային միջոցներ օգտագործողների իրավունքները և անհրաժեշտ է, որպեսզի բոլորի դիրքորոշումն արտահայտվի այդ որոշման կայացման մեջ, առավել ևս, երբ խոսքը գնում է վերջիններիս կողմից կատարվող ֆինանսական ծախսերի ու պարտադիր բաղադրիչի մասին: Այդ նույն կերպ կարելի է վարվել նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» ԼՂՀ օրենքի նախագծի դեպքում, որը մոտ ապագայում պետք է ներառվի ԼՂՀ Ազգային ժողովի օրակարգում: Նման օրինագծերը օրենսդրական հանրաքվեի ճանապարհով լուծելը տարբեր շահարկումներից զերծ մնալու և հասարակության լայն շրջանակներին հուզող հարցներն իրավական հարթությունում իրավակարգավորելու լավագույն միջոցներից է:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ ԼՂՀ-ում օրենսդրական հանրաքվեի ինստիտուտն անարդյունավետ է գործում, մինչդեռ այդ ինստիտուտի միջոցով հնարավոր էր լուծել հասարակության առավել լայն շերտերին հուզող խնդիրներ:

ԼՂՀ Սահմանադրության կատարելագործման և քննարկվող հիմնախնդիրների լուծման նպատակով առաջարկվում է.

- 133 հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Սահմանադրությունն ընդունվում կամ դրանում փոփոխություններ կատարվում են հանրաքվեի միջոցով՝

Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի կամ ժողովրդի նախաձեռնությամբ՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ընդհանուր թվի առնվազն 10 տոկոսի ստորագրությունների առկայության դեպքում»:

- 134 հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Օրենքները հանրաքվեի են դրվում Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, Կառավարության առաջարկությամբ կամ ժողովրդի նախաձեռնությամբ՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ընդհանուր թվի առնվազն 10 տոկոսի ստորագրությունների առկայության դեպքում՝ Սահմանադրության 133-րդ հոդվածով սահմանված կարգով»:
- 135 հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Պետության համար կարևոր նշանակություն ունեցող հարցերը հանրաքվեի են դրվում Ազգային ժողովի, Կառավարության առաջարկությամբ կամ ժողովրդի նախաձեռնությամբ՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ընդհանուր թվի առնվազն 10 տոկոսի ստորագրությունների առկայության դեպքում՝ հարցադրումների տեսքով՝ Սահմանադրության 133-րդ հոդվածով սահմանված կարգով»:

Այս լրացումներն իրենց արտացոլումը պետք է գտնեն նաև օրենսդրության մեջ, հատկապես «Հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքում: Նշված լրացումների կատարումը թույլ կտա մի կողմից հարթել ներսահմանադրական հակասությունը, որը դրսևորվում է ԼՂՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 133, 134, 135 հոդվածների 1-ին մասերի միջև առկա անհամապատասխանությամբ¹⁸⁰, իսկ մյուս կողմից հանրաքվեն՝ որպես անմիջական

¹⁸⁰ ԼՂՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների եղանակով, ինչպես նաև Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով», իսկ 133 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սահմանադրությունն ընդունվում կամ դրանում փոփոխություններ կատարվում են հանրաքվեի միջոցով՝ Հանրապետու-

ժողովրդաիշխանության ձև, դարձնել իրական, այլ ոչ թե ձևական գործող ինստիտուտ:

Բնակչության մոտ համապետական և տեղական հարցերի լուծման եղանակը ոչ միայն հանրաքվեն է, այլև տեղական հանրաքվեն: ԼՂՀ-ում տեղական հանրաքվեի ինստիտուտը կարգավորող հիմնական իրավական ակտը «Տեղական հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքն է, որն ընդունվել է 2008թ. սեպտեմբերի 17-ին:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե որքանով է տեղական հանրաքվեի մասին օրենսդրությունը ներդաշնակ իրավակիրառ պրակտիկայի հետ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Տեղական հանրաքվեի մասին» օրենքի ընդունման պահից անցել է մոտ 8 տարի, սակայն փոփոխությունների կամ լրացումների չի ենթարկվել ու այդ ընթացքում տեղի է ունեցել ընդամենը երկու տեղական հանրաքվե¹⁸¹: Այստեղից տրամաբանորեն առաջ են գալիս մի շարք հարցեր, մասնավորապես. որքանով է տվյալ օրենքը կենսունակ, որքանով է այն համակողմանիորեն կարգավորում տվյալ իրավահարաբերությունները, արդյո՞ք օրենքում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն կա՞ և ո՞ր մասով. սրանք այն հարցերն են, որոնք պետք է կազմեն մեր հետագա վերլուծության առանցքը:

Առաջին հարցը, որին պետք է անդրադառնանք, այն է, թե ինչպիսի՞ հարցեր կարող են դրվել տեղական հանրաքվեի: «Տեղական հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Տեղական հանրաքվեի կարող են դրվել Սահմանադրությամբ նախատեսված և օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերապահված,

թյան Նախագահի կամ Ազգային ժողովի նախաձեռնությամբ»: Նույնիսկ այս հոդվածների բառացի մեկնաբանությունը թույլ է տալիս փաստել, որ հանրաքվեի եղանակով ժողովրդի կողմից իր իշխանությունն իրականացնելու այս դրույթն իր կոնկրետացումը չի գտել Սահմանադրության հետագա տեքստում, որն էլ առաջ է բերել ներսահմանադրական կոլիզիա:

¹⁸¹ Հարկ է նկատել, որ ՀՀ-ում առաջին անգամ տեղական հանրաքվե անցկացվել է 2015թ. մայիսի 17-ին Լոռի, Սյունիք և Տավուշ մարզերի մի շարք համայնքներում՝ մի քանի բնակավայրեր մեկ համայնքում միավորվելու նպատակով: Առավել մանրամասն տե՛ս <http://www.elections.am/> կայքում:

ինչպես նաև օրենքով նախատեսված հարցերը»: Այստեղ, ինչպես նկատում ենք, հստակ նշված չեն այն հարցերի շրջանակը, որոնք կարող են դրվել տեղական հանրաքվեի, այսինքն՝ առավել շատ անորոշություն կա այս դրույթում, քան հստակություն, իսկ դրա փոխարեն 2-րդ մասում թվարկվում են այն հարցերը, որոնք **չեն կարող դրվել հանրաքվեի** (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.)¹⁸²: Կարծում ենք՝ քննարկվող հոդվածի 1-ին մասում պետք է ամրագրվեն տեղական հանրաքվեի դրվող հարցերի թեկուզ ոչ սպառիչ ցանկը, որպեսզի դրա նախաձեռնության իրավունք ունեցող անձինք ճիշտ կողմնորոշվեն, թե իրենց հուզող հարցի լուծմանն ի՞նչ ճանապարհով կամ օրենսդրական կառուցակարգով կարող են հասնել: Այդպիսի հարցեր կարող են լինել համայնքի սոցիալ-տնտեսական կամ այլ ոլորտների զարգացման ռազմավարական ծրագրերը, տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքը սահմանելը, տվյալ համայնքի վարչական սահմանների փոփոխությունը, համայնքի կանոնադրության ընդունումը, համայնքի համար ֆինանսական մեծ ծախսեր ենթադրող ծրագրերի նախագծերը և այլն:

Ինչ վերաբերում է տեղական հանրաքվեի նախաձեռնության իրավունք ունեցող սուբյեկտներին, ապա պետք է նշել, որ

¹⁸² «Տեղական հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Տեղական հանրաքվեի չեն կարող դրվել՝ 1) Սահմանադրությամբ կամ օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների բացառիկ իրավասությանն ուղղակիորեն վերապահված հարցերը, 2) մարդու և քաղաքացու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին, դրանց իրականացումն ապահովող սահմանադրական երաշխիքների վերացմանը կամ սահմանափակմանը վերաբերող հարցերը, 3) պետական մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորություններին առնչվող հարցերը, 4) համայնքի ղեկավարի աշխատակազմի ձևավորմանը վերաբերող հարցերը, 5) համայնքի բյուջեի ընդունման կամ փոփոխման, ինչպես նաև համայնքի ֆինանսական պարտավորությունների կատարման կամ փոփոխման մասին հարցերը, 6) համայնքի սեփականության օտարման մասին հարցերը, 7) բնակչության առողջությունն ու անվտանգությունն ապահովող արտակարգ և շտապ միջոցառումներ ձեռնարկելու մասին հարցերը, 8) պատմության, մշակույթի, բնության հուշարձաններին և արգելանոցներին վնաս հասցնող հարցերը:»:

համաձայն «Տեղական հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնության իրավունք ունեն այդ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձինք, ինչպես նաև տվյալ համայնքի ավագանին և ղեկավարը»:

Ինչպես նկատում ենք, Արցախի Սահմանադրության մակարդակով հանրաքվեի և տեղական հանրաքվեի միջև աններդաշնակություն է ստեղծվել: Հարցն այն է, որ առանձին համայնքների բնակիչները տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունք ունեն, իսկ այդ բոլոր համայնքների բնակիչները համահավաք ձևով չեն կարող լինել հանրաքվեի նախաձեռնության սուբյեկտ: Դրանից բացի, գտնում ենք, որ տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակն ընդլայնելու անհրաժեշտություն կա: Խոսքը հասարակական միավորումներին նման իրավունք վերապահելու մասին է: Ժողովրդավարության և հատկապես ընտրական գործընթացների հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունները նույնպես կարող են հետաքրքրված կամ մտահոգված լինել տեղական նշանակության որևէ հարց տեղական հանրաքվեի դնելու կամ դրան աջակցելու հիմնահարցով: Այդ իրավունքը հասարակական միավորումներին վերապահելու հիմնավորումներից մեկն էլ այն է, որ նրանք ավելի խորությամբ ու արհեստավարժորեն կարող են մոտենալ քննարկվող հիմնախնդիրներին և դրա առկայության դեպքում իրենց նախաձեռնությամբ կարող են համայնքային նշանակության հարց դնել տեղական հանրաքվեի, որը միտված կլինի համայնքի զարգացմանը: Համեմատության համար նշենք, որ օրենսդրական նման կարգավորում հանդիպում ենք «Ռուսաստանի Դաշնությունում տեղական ինքնակառավարման կազմակերպման ընդհանուր սկզբունքների մասին» Ռուսաստանի Դաշնության դաշնային օրենքի 22 հոդվածում¹⁸³:

¹⁸³ Федеральный закон «Об общих принципах организации местного самоуправления в Российской Федерации» от 06.10.2003 N 131-ФЗ (с послед. изм. и доп.) // Собрание законодательства РФ, 06.10.2003, N 40:

Մարդկային կենսագործունեության ոլորտն այնքան լայն ու ընդգրկուն է, որ քաղաքային ու գյուղական համայնքներում¹⁸⁴ առկա իրավագիտակցության ներկա մակարդակի պայմաններում հնարավոր չէ հստակորեն իմանալ, թե կոնկրետ ինչպիսի հարցեր կարող են դրվել տեղական հանրաքվեի և որոնք կարող են նպաստել համայնքների բնակչության պահպանմանը, ժողովրդագրական աճին ու համայնքների զարգացմանը: Այս համատեքստում առկա է նաև համայնքի ղեկավարի, ավագանու կամ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց կողմից օրենսդրությանը ոչ պատշաճ տեղեկացված լինելու կամ դրա մասին ոչ հստակ պատկերացում ունենալու իրողությունը, այսինքն առկա է իրավական իրազեկվածության ու տեղական նշանակության հարցերն ավելի քաղաքակիրթ ճանապարհով լուծելու խնդիր: Դրա մասին է վկայում տեղերում նախաձեռնողականության նվազ մակարդակը, իսկ որպես փաստ՝ «Տեղական հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի ընդունման պահից մինչ օրս տեղի ունեցած ընդամենը երկու տեղական հանրաքվեները:

ԼՂՀ-ում տեղական հանրաքվեի ինստիտուտի չկայացած լինելու պատճառներից մեկը կարող է լինել այն, որ հանրաքվեի նախաձեռնումից մինչև իրականացումն ընկած գործընթացը բարդ ու ժամանակատար է: Այս ամենի հաշվառմամբ տվյալ ոլորտի ուսումնասիրման ժամանակ չենք հանդիպել այնպիսի մի դեպքի, երբ որևէ համայնքի կողմից ցուցաբերվի տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնություն, սակայն պետական իրավասու մարմինների կողմից աջակցություն չստանա: Բացի այդ, տեղական հանրաքվե չանցկացնելու պատճառ չի կարող լինել նաև ֆինանսական միջոցների հատկացումը¹⁸⁵:

¹⁸⁴ Խոսքն ինչպես մայրաքաղաք Ստեփանակերտի, այնպես էլ շրջկենտրոնների ու գյուղական համայնքների մասին է:

¹⁸⁵ Որպես օրինակ նշենք, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաղաքապետի շրջանի Տանձուտի համայնքը Ծիծեռնավանքի համայնքին միավորելու տեղական հանրաքվեի նախապատրաստման և անցկացման ծախսերը ֆինանսավորելու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեով ընտրությունների համար նախատեսված միջոցներից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ԿԸՀ-ին հատկացվել է 458190 դրամ:

Առանձնակի կարևորելով տեղական հանրաքվեի կայացումն ու զարգացումը և հաշվի առնելով ԼՂՀ համայնքների առանձնահատկությունները¹⁸⁶ կարծում ենք, որ ԼՂՀ-ում առավել արդյունավետորեն կգործի մեկ այլ ժողովրդավարական ինստիտուտ՝ **քաղաքացիների ժողովը**, որին պետք է տրվի օրենսդրական կարգավորում, մասնավորապես՝ ամրագրվի «Տեղական ինքնակառավարման մասին» ԼՂՀ օրենքում: Վերջինիս բովանդակությունը կայանում է նրանում, որ սահմանված թվից (օրինակ՝ 100-ից կամ 500-ից) ոչ ավելի բնակչություն ունեցող համայնքներում տեղական նշանակության հարցերի լուծման նպատակով անցկացվում է քաղաքացիների ժողով: Քաղաքացիների ժողովն իրավագոր է, եթե նրան մասնակցում է ձայնի իրավունք ունեցող համայնքի բնակիչների կեսից ավելին: Այն կարող է հրավիրվել ինչպես համայնքի ղեկավարի, այնպես էլ առնվազն 10 հոգուց բաղկացած նախաձեռնող խմբի կողմից: Քաղաքացիների ժողովում ընդունված որոշումները ենթակա են պարտադիր կատարման համայնքի տարածքում: Որպես օրինակ կարող ենք նշել «Ռուսաստանի Դաշնությունում տեղական ինքնակառավարման կազմակերպման ընդհանուր սկզբունքների մասին» Ռուսաստանի Դաշնության դաշնային օրենքի 25 հոդվածում ամրագրված դրույթը¹⁸⁷: Այս ինստիտուտի ներդրմամբ հնարավոր կլինի տեղական նշանակության

¹⁸⁶ Ըստ ԼՂՀ կառավարության աշխատակազմի տարածքային կառավարման բաժնի կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2015թ. հունվար ամսվա դրությամբ մինչև 100 բնակիչ ունեցող գյուղական համայնքների թիվը կազմում է 37, 100-300՝ 115, 301-500՝ 22, 501-700՝ 21, 701-1000՝ 8, 1001-1500՝ 7, 1501-2000՝ 6, 2001-2500՝ 1: Եթե ԼՂՀ օրենսդրության մեջ ներդրվի հիշյալ ինստիտուտը, ապա կարելի է նախնական սահմանային թիվ ամրագրել 500-ը, քանի որ 217 գյուղական համայնքներից 174-ը մինչև 500 բնակիչ ունեցող գյուղական համայնքներն են: Այս մասին տես նաև ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրատարակված «Լեռնային Ղարաբաղը թվերով – 2013» վիճակագրական գրքույկը, Ստեփանակերտ, 2013, 102 էջ: URL: http://stat-nkr.am/files/publications/LXH_tverov_2013.pdf (դիմելու ամսաթիվը՝ 10.02.2015):

¹⁸⁷ Федеральный закон «Об общих принципах организации местного самоуправления в Российской Федерации» от 06.10.2003 N 131-ФЗ (с послед. изм. и доп.) // Собрание законодательства РФ, 06.10.2003, N 40.

հրատապ հարցերին սեղմ ժամկետներում տալ լուծում և ավելի ակտիվացնել համայնքի ղեկավարի ու ավագանու գործունեությունը:

ԼՂՀ-ում «հանրաքվե» երևույթի մասին հստակ պատկերացում ձևավորելու, այդ ինստիտուտը կենսունակ դարձնելու ու դրան զուգահեռ օրենսդրությունը կատարելագործելու ամբողջ փիլիսոփայությունը պետք է կառուցվի հետևյալ հաջորդականությամբ՝

- օրենսդրության մեջ կատարել առաջարկվող փոփոխությունները, մասնավորապես՝ հստակեցնել տեղական հանրաքվեի դրվող հարցերի շրջանակը և ընդլայնել տեղական հանրաքվեի նախաձեռնության սուբյեկտների կազմը,
- ներդնել քաղաքացիների ժողովի ինստիտուտը,
- համայնքների բնակիչներին բոլոր հնարավոր և թույլատրելի միջոցներով իրազեկ դարձնել տեղական հանրաքվեի և քաղաքացիների ժողովի ինստիտուտների միջոցով լուծվող հարցերի շրջանակի մասին,
- տեսական մակարդակից անցնել գործնականի, այսինքն տեղերում խթանել նախաձեռնողականությունը՝ դրա սկզբնական փուլում մեթոդական օգնություն ցույցաբերելով նախաձեռնողներին,
- վերոհիշյալի հետևողական իրագործումը թույլ կտա ԼՂՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարվելու դեպքում հիշյալ առաջարկությունները ներառել որպես ժողովրդաիշխանության ոլորտի կատարելագործմանն ուղղված քայլեր, որոնք էլ կապահովեն քննարկվող ինստիտուտների կենսունակությունը՝ դրանով հանդերձ ժողովրդաիշխանությունը քննարկվող տեսանկյունից դարձնելով գործող սահմանադրական արժեք:

Վերջին ժամանակներում փիլիսոփայական, հրապարակախոսական գրականության մեջ առաջ է քաշվում ներկայացուցչական ժողովրդավարությունից հրաժարվելու և այն ուղղակի կամ անմիջական ժողովրդաիշխանությամբ փոխարինելու

գաղափարը¹⁸⁸: Այս կապակցությամբ Յու.Օռլովը նշում է, որ ուղղակի ժողովրդաիշխանության կամ անմիջական ժողովրդավարության գաղափարը, ի հակադրություն ներկայացուցչական ժողովրդավարության, պետք է դառնա նոր Ռուսաստանի գլխավոր գաղափարը¹⁸⁹:

Գ.Կաչուրան առաջարկում է հետևյալ կառուցակարգը. ժողովուրդն ընտրում է պատգամավորներին, պատգամավորները մշակում են օրենքների այլընտրանքային նախագծեր, քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները և քաղաքացիները քննարկում են օրենսդրական նախաձեռնությունները, և օրենքներն ընդունվում են համաժողովրդական քվեարկությամբ¹⁹⁰: Համանման կարծիք է արտահայտել նաև Ա.Կոստյուկը¹⁹¹: Այս կապակցությամբ Ն.Նուդնենկոն գտնում է, որ նշված հայեցակարգը բովանդակում է ինչ-որ անորոշության պարադոքս և այսօրվա դրությամբ այն բազմաթիվ պատճառների ուժով ուսուպիական է: Ներկայացուցչական ժողովրդավարությունից հրաժարվելը դժվար թե հնարավոր լինի: Բայց անկասկած է, որ պետք է ընդլայնել ժողովրդաիշխանության ուղղակի ձևերը և կատարելագործել ներկայացուցչական ժողովրդաիշխանությունը հոգուտ ժողովրդի, այլ ոչ թե օլիգարխիայի և բյուրոկրատիայի շահերի ներկայացման¹⁹²:

Մենք խորապես համոզված ենք, որ անմիջական ժողովրդաիշխանության ներկայացվող հայեցակարգի ներդրմանը զուգահեռ հնարավոր չէ հրաժարվել ներկայացուցչական

¹⁸⁸ Нудненко Л., К вопросу о правовом регулировании народовластия в России // Государство и право, 2012, N 7, էջ 14:

¹⁸⁹ Орлов Ю., Прямое народовластие как идея. URL: http://mexnar.info/articles.php?article_id=121 (դիմելու ամսաթիվը՝ 10.02.2014):

¹⁹⁰ Качура Г., Вместо представительной демократии – прямое народовластие. URL: http://mexnar.info/articles.php?article_id=165 (դիմելու ամսաթիվը՝ 10.02.2014):

¹⁹¹ Костюк С., Проект информационно-коммунарной эволюции общества. URL: http://mexnar.info/articles.php?article_id=600 (դիմելու ամսաթիվը՝ 10.02.2014):

¹⁹² Нудненко Л., К вопросу о правовом регулировании народовластия в России // Государство и право, 2012, N 7, էջ 15:

ժողովրդավարությունից: ԼՂՀ-ի պայմաններում վերջինիս կատարելագործման հետ միաժամանակ անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել անմիջական ժողովրդավարության այն ձևերը, որոնք առավել կենսունակ կլինեն Արցախի պայմաններում:

Չնայած սույն պարագրաֆի շրջանակներում անմիջական ժողովրդաիշխանության ձևերից անդրադարձել ենք միայն հանրաքվեին, սակայն չենք կարող ձեռնպահ մնալ այն հարցի քննարկումից, որը, մեր կարծիքով, ԼՂՀ Սահմանադրության բացերից մեկն է: Խոսքը հետևյալի մասին է. ԼՂՀ Սահմանադրության 32 հոդվածի 1-ին մասում ամրագրված է այն դրույթը, որ «Տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն հանրաքվեներին մասնակցելու և ընտրելու իրավունք»: Եթե հիշյալ դրույթը համեմատենք, օրինակ, ՀՀ նախկին Սահմանադրության 30 և ՀՀ բարեփոխված Սահմանադրության 48 հոդվածների հետ, ապա կտեսնենք, որ հիշյալ հարաբերությունն այլ կարգավորում է ստացել՝ «Հայաստանի Հանրապետության՝ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք»: Իսկ ՌԴ Սահմանադրության 32 հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներն իրավունքն ունեն մասնակցելու պետության կառավարմանն ինչպես անմիջականորեն, այնպես էլ իրենց ներկայացուցիչների միջոցով: Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներն ունեն ընտրելու և պետական իշխանության մարմիններում և տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք»: Հատկանշական է, որ ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև պետական կառավարմանը մասնակցելու իրավունքն իր ամրագրումն է ստացել շատ երկրների Սահմանադրություններում¹⁹³:

¹⁹³ Տե՛ս Ֆիլյանդիայի 1999թ. Սահմանադրության 14 հոդվածի 1-ին մասը, Նիդեռլանդների 1983թ. Սահմանադրության 4 հոդվածը, Պորտուգալիայի 1976թ. Սահմանադրության 15 հոդվածի 5-րդ մասը և այլն:

ԼՂՀ Սահմանադրության վերլուծությունից հետևում է, որ ԼՂՀ քաղաքացիներն ունեն միայն հանրաքվեների մասնակցելու և ընտրելու իրավունք, այնինչ այդ իրավունքների հետ անխզելիորեն կապված է նաև պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունքի վերապահումը: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության փորձը և այն, որ Սահմանադրության մեջ պարտադիր ձևով պետք է ամրագրվի խնդրո առարկա հիմնահարցը՝ առաջարկվում է ԼՂՀ Սահմանադրության 32 հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն հանրաքվեների մասնակցելու և ընտրելու իրավունք: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրվելու և անմիջականորեն կամ իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք»:

§ 3. Իշխանությունների տարանջատումը ԼՂՀ սահմանադրական լուծումներում

Իշխանությունների տարանջատման սկզբունքը¹⁹⁴, որպես ժողովրդավարական ու իրավական պետությանը ներհատուկ

¹⁹⁴ Վերնագրում տեղ գտած «իշխանությունների տարանջատում» ձևակերպումը համընդունելի է միջազգային պրակտիկայում, իսկ ԼՂՀ Սահմանադրության մեջ ամրագրված է «իշխանությունների բաժանում և հավասարակշռում»: Այստեղ չենք անդրադառնա հիշյալ ձևակերպումների հարաբերակցությանը և նրան, թե դրանցից որի՞ գործածությունն է ավելի տեղին, սակայն պետք է նշել, որ «տեսական գրականության մեջ և սահմանադրական տեքստերում օգտագործվում է ինչպես իշխանությունների «տարանջատում», այնպես էլ «բաժանում» հասկացությունները: Միաժամանակ, վերջինիս պարագայում շեշտվում է նաև «հավասարակշռում» հանգամանքը: «Տարանջատում» և «բաժանում ու հավասարակշռում» եզրույթները, կարծում է Գ.Հարությունյանը, արտահայտում են նույն իրավական բովանդակությունը: Իշխանությունների բաժանումն իմաստավորվում է, եթե վերջիններս հավասարակշռում են միմյանց, և իրական գործոն է դառնում հակակշիռների և զսպումների համակարգը: Եթե բաժանման արդյունքում չի ապահովվում հավասարակշռությունը, ապա առկա է որևէ ուժի ձեռքին իշխանության կենտրոնացման պարագան: Նույնը վերաբերում է նաև տարանջատմանը, որն իրականացվում է

հատկանիշ, սահմանադրական արժեքանության դիրքերից քննության առարկա դարձնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում պարզել, թե իշխանության ճյուղերից յուրաքանչյուրն ինչպե՞ս է կազմավորվում, ի՞նչ գործունե կառուցակարգեր են առկա նրանց միջև իշխանությունը զսպելու և հակակշռելու համար, ինչպես նաև որքանո՞վ է այն ներդաշնակ ժողովրդաիշխանության սկզբունքի հետ¹⁹⁵:

Իշխանությունների տարանջատումը և դրանց ներդաշնակ գործակցության ապահովումն անխուսափելի անհրաժեշտություն են, և այն պետք է իրականացվի «**գործառույթ-ինստիտուտ-լիազորություն**» եռամիասնության համակարգային ներդաշնակության ապահովման, յուրաքանչյուր սահմանադրական ինստիտուտի համար **գործառնական, հակակշռող և զսպող** լիազորությունների օպտիմալ հաշվեկշռի ամրագրման, վերջինիս միջոցով դինամիկայում սահմանադրական հավասարակշռության երաշխավորված պաշտպանման, ժողովրդավարության ու իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքների անվերապահորեն պահպանման ու սահմանադրորեն ապահովման շրջանակներում¹⁹⁶:

Իշխանությունների տարանջատումը որպես սահմանադրական արժեք հանդիսանում է իշխանության իրականացման անքակտելի հիմքն ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետությունում, ինչպիսին Լեռնային

միասնական իշխանության շրջանակներում» (տե՛ս Հարությունյան Գ., «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»-ի 5-րդ հոդվածի մեկնաբանությունը: Ընդհ. խմբ. Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010, էջ 83):

¹⁹⁵ Պրոֆեսոր Ա.Հարությունյանն այն կարծիքին է, որ «հասարակական հարաբերությունների կարգավորումը նախատեսված է նրա համար, որպեսզի մարդը զարգանա առավել արդյունավետ, որի արդյունքում կբացահայտի իր լավագույն որակները: Դա հնարավոր է միայն հակակշիռների, այլ ոչ թե գերակշիռների համակարգի պայմաններում» (տե՛ս Арутюнян А., Грамматика свободы (проблемы постсоветского пространства), Ереван, Арт, 2007, էջ 96):

¹⁹⁶ Հարությունյան Գ., «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»-ի 5-րդ հոդվածի մեկնաբանությունը: Ընդհ. խմբ. Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010, էջ 95:

Ղարաբաղի Հանրապետությունն է (ԼՂՀ Սահմանադրություն, հոդված 1):

ԼՂՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա»: Մի փոքր պատմական ակնարկ կատարելով՝ հարկ է նկատել, որ ԼՂՀ-ում իշխանությունների տարանջատման սկզբունքի գաղափարը և կիրառությունը սկիզբ են առնում դեռևս ԼՂՀ կազմավորման առաջին իսկ տարիներից: Այսպես, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության հիմունքների մասին» ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածում ամրագրված է, որ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնիշխանությունն արտահայտվում է իր ամբողջ տարածքում օրենսդիր, գործադիր և դատական բարձրագույն իշխանության ինքնուրույն իրականացման ձևով՝ ի շահ հանրապետությունում ապրող բոլոր ազգերի»: Իսկ նույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհուրդն է, իսկ նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջաններում՝ Գերագույն խորհրդի նախագահությունը»: Այստեղից տրամաբանորեն հետևում է, որ հիշյալ օրենքի ընդունումից հետո իշխանությունն իրականացվում էր եռաթև համակարգով, որոնց մեջ գերակայողը օրենսդիր մարմինն էր, քանի որ երկիրն ընտրել էր կառավարման խորհրդարանական ձևը, սակայն վերջինս էլ երկար կյանք չի ունեցել. հիշյալ օրենքի ընդունումից մոտ յոթ ամիս անց ստեղծվում է Պաշտպանության պետական կոմիտե, որին էլ փոխանցվում է ԼՂՀ նախարարների խորհրդին վերապահված բոլոր պարտականությունները, ինչպես նաև Գերագույն խորհրդի նախագահության մի շարք լիազորություններ:

Նշեք, որ ԼՂՀ Գերագույն խորհրդի թիվ ԹՆ-0105-1 առ 21.12.1994թ. որոշմամբ Արցախի Հանրապետությունում մտցվել է

կառավարման նախագահական ինստիտուտ¹⁹⁷, և նույն օրն ընդունվել է «ԼՂՀ Նախագահի մասին» ԼՂՀ օրենքը, որի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը ընտրվում է Գերագույն խորհրդի ընտրված պատգամավորների թվակազմի ձայների մեծամասնությամբ, գաղտնի քվեարկությամբ 2 տարի ժամկետով»: Ժողովրդավարական պետության կառուցման սաղմերը դրված են եղել նաև նույն հոդվածի 2-րդ մասում, ըստ որի՝ «ԼՂՀ Նախագահի հաջորդ ընտրությունները կիրականացվեն ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ 5 տարի ժամկետով»: Հիշյալի օրենքի հետ միասին ընդունվել են նաև «ԼՂՀ կառավարության մասին» և «ԼՂՀ խորհրդարանի մասին»¹⁹⁸ ԼՂՀ օրենքները: Ինչ վերաբերում է դատական իշխանությանը, ապա 1996թ. մայիսի 15-ին ընդունվել է «ԼՂՀ դատական իշխանության մասին» ԼՂՀ օրենքը:

Այժմ անդրադառնանք իշխանությունների տարանջատման սկզբունքի շրջանակներում Նախագահի տեղի և դերի, ինչպես նաև իշխանության մյուս թևերի հետ նրա հարաբերակցության հարցին: Այս հարցի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ հաճախ կարծիքներ են արտահայտվում Նախագահի՝ չորրորդ իշխանություն կազմելու մասին¹⁹⁹, սակայն առավել

¹⁹⁷ Տե՛ս ԼՂՀ Ազգային ժողովի ընթացիկ արխիվը:

¹⁹⁸ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խորհրդարանի ԹՆ-0089-1 առ 19.03.1998թ. որոշմամբ ԼՂՀ խորհրդարանն անվանակոչվել է «ԼՂՀ Ազգային ժողով»:

¹⁹⁹ Իրավաբանական գրականության մեջ կան կարծիքներ, որ Հանրապետության Նախագահը համարվում է բարձրագույն գործադիր մարմին (տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»-ի 5-րդ հոդվածի մեկնաբանությունը: Ընդհ. խմբ. Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի, Երևան, Իրավունք, 2010, էջ 93) կամ դասվում է գործադիր իշխանության հատուկ սուբյեկտների շարքին (տե՛ս ՀՀ վարչական իրավունք, ընդ. խմբ. Գ.Դանիելյան, Երևան, ԵՊՀ իրատ., 2012, էջ 181-182) կամ էլ հիմնավորվում է, որ «նախագահի ինստիտուտը չի հանդիսանում իշխանության «չորրորդ» թև, քանզի նախագահի ինստիտուտը չի կարելի դասել իշխանության երեք թևերի կողքին իբրև ինքնուրույն ճյուղ՝ առաջին հերթին այն պարզ պատճառով, որ դասակարգման չափանիշները լիովին տարբեր են» (տե՛ս Մինասյան Գ., Նախագահը

հաճախ Նախագահին ներկայացնում են որպես գործադիր իշխանության գլուխ: ԼՂՀ-ում Նախագահի՝ գործադիր իշխանությունը գլխավորելու իրավակարգավորման արմատները ձգվում են դեպի 1994թ., երբ ստեղծվեց ԼՂՀ Նախագահի ինստիտուտը, որին էլ հաջորդեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի մասին» ԼՂՀ օրենքի²⁰⁰ ընդունումը: Հիշյալ օրենքի 1-ին հոդվածում ամրագրված էր, որ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը հանդիսանում է Հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձը և **գլխավորում է հանրապետության գործադիր իշխանությունը** (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.)»: Հիշյալ հոդվածը 1996թ. սեպտեմբերի 28-ին լրացվել է հետևյալ բովանդակությամբ դրույթով՝ «ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը», որն էլ հետագայում իր ուրույն տեղն է գտել ԼՂՀ Սահմանադրության 61 հոդվածի 2-րդ մասում: Նույն Օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «ԼՂՀ Նախագահը **ղեկավարում է ԼՂՀ կառավարության գործունեությունը** (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.), կարող է նախագահել կառավարության նիստերում»: Հարկ է նկատել, որ «ԼՂՀ կառավարության մասին» ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածը սահմանում էր, որ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունն **ապահովում է գործադիր իշխանության իրականացումը** (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում»: Այստեղ մի կարևոր հանգամանքի վրա պետք է ուշադրություն դարձնել. եթե Նախագահը գլխավորում է գործադիր իշխանությունը և ղեկավարում կառավարության գործունեությունը, ապա կառավարությունն ապահովում է գործադիր իշխանության իրականացումը, այսինքն Նախագահը ոչ թե անձամբ էր իրականացնում գործադիր իշխանությունը, այլ իր կողմից ձևավորված կառավարության միջոցով: Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է

որպես օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեության երաշխավոր // Օրենք և իրականություն, թիվ 8, օգոստոս, 2007թ., էջ 8):

²⁰⁰ Օրենքն ուժը կորցրած է ճանաչվել՝ համաձայն ԼՂՀ Սահմանադրության 141 հոդվածի 3-րդ մասի:

եզրահանգել, որ մինչև ԼՂՀ Սահմանադրության ընդունումը երկիրը որդեգրել էր կառավարման նախագահական մոդելը, որին հաջորդել է ներկայիս կառավարման կիսանախագահական ձևը, որը, սակայն, զերծ չէ թերություններից ու սահմանադրական կիսալուծումներից: Վերջինս դրսևորվում է նրանում, որ երաշխավորված չէ միասնական գործադիր իշխանություն և բացակայում է գործադիր իշխանության (Հանրապետության Նախագահ և կառավարություն) իրական քաղաքական պատասխանատվությունը: Դրանից զատ, Հանրապետության Նախագահի ձեռքում կենտրոնացված է քաղաքական մեծ իշխանություն, սակայն գործադիր իշխանության համար Հանրապետության Նախագահը որևէ քաղաքական պատասխանատվություն չի կրում:

Պետական իշխանության համակարգում Նախագահի տեղի և դերի մասին հարցին ավելի կոնկրետ պատասխան է տալիս ԼՂՀ Սահմանադրության 61 հոդվածի 2-րդ մասի դրույթը, ըստ որի՝ «Հանրապետության Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը»: Իրավական այս նորմի տրամաբանական շարունակությունը կարելի է տեսնել Սահմանադրության 67 հոդվածում ամրագրված երդման տեքստի մեջ, որում «Նախագահը երդվում է անվերապահորեն կատարել Սահմանադրության պահանջները ...»: Հատկանշականն այն է, որ 1994թ. «ԼՂՀ Նախագահի մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածում նշված էր, որ «Նախագահը երդվում է լինել Հանրապետության Սահմանադրության ու օրենքների պաշտպանության ... երաշխավորը»²⁰¹: Կարծում ենք՝ այս իմաստով հետընթաց քայլ է կատարվել, և Նախագահին չի վերապահվել Սահմանադրության երաշխավորը լինելու պարտականությունը, իսկ Սահմանադրությանը հետևելը չի կարող նույնացվել Սահմանադրության երաշխավորը լինելու հետ, քանի

²⁰¹ ԼՂՀ Սահմանադրության 61 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հանրապետության Նախագահը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնիշխանության, անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է»:

որ դրանք տարբեր իրավական հասկացություններ են. հետևելու դեպքում դա կատարվում է որպես Նախագահ, անձնապես, իսկ երաշխավորը լինելու պարագայում Նախագահի կողմից երաշխավորվում է Սահմանադրության կիրառումն ու հետևումն ամբողջ բնակչության և պետական մարմինների համար, ինչպես նաև Սահմանադրության նորմերի իրացման համար անհրաժեշտ միջավայրի ստեղծումը: Համեմատության համար նշենք, որ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 80 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ռուսաստանի Դաշնության Նախագահը Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխավորն է»²⁰²:

Նախագահի՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունն ապահովելու իրավակարգավորման շրջանակներում բաց է մնում այն հարցը, թե ի՞նչ եղանակով, կառուցակարգով կամ ինստիտուտի միջոցով է Նախագահն իրականացնում Սահմանադրությամբ իրեն վերապահված այդ լիազորությունները:

ԼՂՀ Նախագահն իշխանության թևերի բնականոն գործունեությունն ապահովում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, այդ թվում իր կողմից կամ առաջարկությամբ գործադիր և դատական իշխանության մարմիններում նշանակումներ կատարելով: Այդ լիազորություններից յուրաքանչյուրի առանձին վերլուծությունից պարզ է դառնում «բնականոն գործունեության ապահովում» երևույթի կենսունակությունը: Կարծում ենք, որ Սահմանադրությամբ Նախագահին վերապահված այդ «առաքելության» իրականացման համար անհրաժեշտ է սահմանել ավելի կոնկրետ ու հստակ կառուցակարգեր:

Սահմանադրության մակարդակով այս կարևորագույն դրույթն ամրագրված է, սակայն գործնականում չկա որևէ մարմին, որի գործունեության առանցքը կլինի երկրի Նախագահի՝ Սահմանադրության պահպանմանը հետևելու նրա

պարտականության ապահովումը, իսկ Նախագահի աշխատակազմի պետաիրավական վարչության գործառույթների մեջ այդպիսին չի մտնում, այլ հիմնականում Նախագահի գործունեության իրավական ապահովումը, որը չենք կարող որակել որպես Սահմանադրության հետևում, քանի որ դա ընդամենն ամբողջի մի մասն է:

Հաշվի առնելով վերոշարադրյալի կարևորությունը և այն, որ ԼՂՀ Սահմանադրության այս դրույթն ինչ-որ չափով կանխորոշում է իշխանությունների բաժանման ու հավասարակշռման իրական սահմանադրական արժեք լինելու հանգամանքը՝ առաջարկվում է ԼՂՀ Նախագահի աշխատակազմում կամ Նախագահին առընթեր ստեղծել մասնագիտացված ստորաբաժանում, որի հիմնական գործունեությունը կհանդիսանա Նախագահի կողմից Սահմանադրության հետևման և իշխանության երեք թևերի բնականոն գործունեության ապահովման ուղղությամբ գիտականորեն հիմնավորված և արհեստավարժորեն իրականացվելիք գործողությունների հիմնավորվածությունը ԼՂՀ Նախագահին ներկայացնելն ու դրանց ընթացքին հետևելը: Նման ստորաբաժանման առկայությունը Նախագահին հնարավորություն կտա նաև Սահմանադրության պահպանման շրջանակներում երկրում իրականացնել սահմանադրականության մշտադիտարկում:

Նախագահի կողմից իշխանության ճյուղերի բնականոն գործունեության ապահովմանն այսպիսի մեծ ուշադրություն հատկացնելը պայմանավորում ենք նրանով, որ շատ դեպքերում հենց երկրի Նախագահից է կախված իշխանության եռաթև ճյուղավորումների միջև բաժանման ու հավասարակշռման արդյունավետությունը:

Նախքան իշխանության երեք թևերին անդրադառնալը, հարկ ենք համարում ընդգծել, որ ԼՂՀ-ում կառավարման կիսանախագահական մոդելի առկայության պարագայում իշխանությունների տարանջատման սկզբունքը լիարժեքորեն չի իրացված, ինչը չենք կարող ասել խորհրդարանական կամ նախագահական հանրապետությունների դեպքում:

²⁰² Конституция Российской Федерации, М., Проспект, 2010, էջ 18:

Համաձայն ԼՂՀ Սահմանադրության՝ օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը (գլուխ 4), որը բաղկացած է մեկ պալատից: Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի՝ Ազգային ժողովը կազմված է 33 պատգամավորից, որոնք ընտրվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ 5 տարի ժամկետով (ԼՂՀ Սահմանադրություն, հոդված 4 և 77):

Պասիվ ընտրական իրավունքի իրացումը կախված է ԼՂՀ Սահմանադրությամբ ամրագրված որոշակի չափանիշներից, մասնավորապես՝ պատգամավոր կարող է ընտրվել 23 տարին լրացած, վերջին 5 տարում ԼՂՀ քաղաքացի հանդիսացող, վերջին 5 տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք:

Սահմանադրության 90 հոդվածի ուժով՝ Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է Հանրապետության Նախագահին, պատգամավորներին և Կառավարությանը:

Երկրի Սահմանադրությամբ Ազգային ժողովին վերապահված լիազորությունները կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

- 1. ԼՂՀ Նախագահի առաջարկությամբ Ազգային ժողովի կողմից իրացվող լիազորություններ.** մասնավորապես՝ վարչապետի թեկնածուության կապակցությամբ համաձայնություն տալը, համաներում հայտարարելը, ԼՂՀ միջազգային պայմանագրերը վավերացնելը, կասեցնելը և դադարեցնելը, պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու որոշում ընդունելը, Գերագույն դատարանի նախագահին և մյուս դատավորներին, գլխավոր դատախազին, վերահսկիչ պալատի նախագահին նշանակելը,
- 2. ԼՂՀ կառավարության առաջարկությամբ Ազգային ժողովի կողմից իրացվող լիազորություններ.** մասնավորապես՝ Հանրապետության վարչատարածքային բաժանման, վարչատարածքային միավորների անվանումների ու

սահմանների սահմանումը, Կառավարության ներկայացմամբ պետական բյուջեի հաստատումը,

- 3. պետական մարմինների և պաշտոնատար անձանց առաջարկությունից կամ ներկայացումից անկախ Ազգային ժողովի կողմից իրացվող լիազորություններ.** զինված ուժերի օգտագործումը, ռազմական և արտակարգ դրությունը դադարեցնելը, մարդու իրավունքների պաշտպանի, արդարադատության խորհրդի երկու իրավաբան անդամների նշանակումը, վերահսկիչ պալատի գործունեության ծրագրի հաստատումը:

Չնայած ԼՂՀ Սահմանադրությամբ Ազգային ժողովին վերապահված են լայն լիազորություններ, այնուհանդերձ, դրանք մի կողմից չկիրառվող են, իսկ մյուս կողմից դրանք իրացվում են մի քանի տարին մեկ անգամ ու ոչ էական ազդեցություն են ունենում գործադիր իշխանության հետ հարաբերակցության վրա: Իրականությունն այն է, որ ԼՂՀ-ում իշխանությունների մեջ առավել ուժեղ է ԼՂՀ կառավարությունը, որը տիրապետում է պետության ֆինանսական միջոցներին և իր կազմի մեջ կամ ենթակայության տակ գտնվող գերատեսչությունների միջոցով իրականացնում է գործադիր իշխանություն: ԼՂՀ Սահմանադրության 92 հոդվածի 1-ին մասով նախատեսված պետական բյուջեի նկատմամբ Ազգային ժողովի իրականացրած վերահսկողությունը հիմնականում կրում է ձևական բնույթ, քանի որ վերահսկողության իրականացման արդյունքում հայտնաբերված թերությունների կամ այլ բացթողումների համար նախատեսված չէ պատասխանատվության որևէ միջոց:

Հաշվի առնելով այն, որ ԼՂՀ օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև հարաբերություններն առավել սերտ դրսևորվում են պետական բյուջեի նախագծի քննարկման, ընդունման և կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ժամանակ, ինչպես նաև այն, որ վերջիններիս միջև զսպումների և հակակշիռների կառուցակարգը կարող է լավագույնս դրսևորվել այս պարագայում, առաջարկում ենք, որ ԼՂՀ պետական

բյուջեով նախատեսված ծախսերի իրականացման արդյունքում յուրաքանչյուր եռամսյակը մեկ կառավարությունը հիմնավորված (փաստաթղթավորված) հաշվետվություն ներկայացնի Ազգային ժողով²⁰³: Կառավարության կողմից տարվա ընթացքում երկու անգամ բյուջեի կատարողականը խախտումներով ներկայացնելը պետք է դառնա նրա հրաժարականի հիմք ու ամրագրվի Սահմանադրության մեջ և «Ազգային ժողովի կանոնակարգ» ԼՂՀ օրենքում: Նման իրավակարգավորումն ինչ-որ չափով կհավասարակշռի Ազգային ժողովի և կառավարության առանց այլ էլ ոչ հավասարակշռված վիճակը:

ԼՂՀ-ում գործադիր իշխանությունն իրականացնում է կառավարությունը (գլուխ 5): Կառավարության ձևավորման համար ԼՂՀ Նախագահն Ազգային ժողովի համաձայնությանն է ներկայացնում վարչապետի թեկնածությունը, որը պարտադիր պայման է իշխանության տվյալ մարմնի ձևավորման գործընթացում:

Պատգամավորների ընդհանուր թվի ծայնների մեծամասնությամբ Ազգային ժողովի համաձայնությանն արժանացած վարչապետը, կառավարության անդամները նշանակվում են Նախագահի կողմից, իսկ գործունեության ծրագիրը հավանության է արժանանում Ազգային ժողովի կողմից Սահմանադրությամբ սահմանված ժամկետներում և կարգով (հոդված 100):

Այլ հետևանքներ են վրա հասնում Ազգային ժողովի կողմից վարչապետի թեկնածությանը համաձայնություն չտալու կամ Ազգային ժողովի համաձայնությամբ նշանակված վարչապետի

²⁰³ «Ազգային ժողովի կանոնակարգ» ԼՂՀ օրենքի 81 հոդվածի 2-րդ մասում նշված է. «Յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ 40 օրվա ընթացքում, կառավարությունն Ազգային ժողով տեղեկանք է ներկայացնում բյուջեի կատարման ընթացքի մասին»: Նկատենք, որ տեղեկանքն իր բնույթով տեղեկատվական է, սովորաբար ընդունվում է ի գիտություն և որևէ իրավական հետևանք չի առաջացնում, ուստի պետության գլխավոր ֆինանսական փաստաթղթի նկատմամբ վերահսկողությունը հատկապես Ազգային ժողովի կողմից պետք է ավելի խստացվի, քանի որ իշխանության այդ երկու թևերը գտնվում են անհավասար պայմաններում:

առաջարկությամբ կազմավորված Կառավարության գործունեության ծրագրին հավանություն չտալու դեպքում:

Հիշյալ հիմքերից մեկի առկայության դեպքում Հանրապետության Նախագահը երկրորդ անգամ է վարչապետի թեկնածությունը ներկայացնում Ազգային ժողովի համաձայնությանը: Համաձայն 100 հոդվածի 1-ին մասի 1.5 կետի՝ Ազգային ժողովը կարող է օգտվել հետևյալ հնարավոր լիազորություններից.

- վարչապետի թեկնածության առնչությամբ երկու անգամ հայտնում է անհամաձայնություն, կամ
- համաձայնություն չի տալիս վարչապետի թեկնածությանը, ինչի հետևանքով հավանություն չի տալիս Ազգային ժողովի համաձայնությամբ նշանակված վարչապետի առաջարկությամբ կազմավորված Կառավարության գործունեության ծրագրին, կամ
- համաձայնություն չի տալիս Ազգային ժողովի համաձայնությամբ նշանակված վարչապետի առաջարկությամբ կազմավորված Կառավարության գործունեության ծրագրին հավանություն չտալուց հետո ներկայացված վարչապետի թեկնածությանը:

Ազգային ժողովի կողմից վերոհիշյալ լիազորություններից մեկի իրացման դեպքում վրա է հասնում հետևյալ հետևանքը. Հանրապետության Նախագահը տասնօրյա ժամկետում նշանակում է վարչապետ և կազմավորում կառավարություն՝ շրջանցելով Ազգային ժողովը:

Հարկ է նկատել, որ ԼՂՀ Սահմանադրության մեջ նշում չկա այն մասին՝ արդյո՞ք ԼՂՀ Նախագահը վարչապետի թեկնածուին առաջին անգամ ներկայացնելուց հետո պարտավոր է երկրորդ անգամ ներկայացնել այլ թեկնածուի կամ իրավունք ունի առաջարկելու նույն անձին: Ինչպես հետևում է 100 հոդվածի 1-ին մասի 1.4 և 1.5 կետերից, ԼՂՀ Նախագահն իրավունք ունի ներկայացնելու նույն թեկնածուին երկու անգամ կամ ամեն անգամ նոր թեկնածու: Սակայն Սահմանադրությունը Նախագահի համար որոշակի սահմանափակում է նախատեսել, որն արտահայտվում

է նրանում, որ արգելվում է վարչապետ նշանակել այն անձին, ում թեկնածությունը երկու անգամ մերժվել է Ազգային ժողովի կողմից (հոդված 100, մաս 1-ին, 1.6 կետ):

Չնայած վերոհիշյալին, անթույլատրելի ենք համարում Ազգային ժողովի կողմից մերժված վարչապետի թեկնածուի կրկնակի ներկայացումը, բացառությամբ Ազգային ժողովի հետ լրացուցիչ բանակցությունների անցկացման և նրանց դիրքորոշումների համաձայնեցման դեպքի: Գտնում ենք, որ վարչապետի նույն թեկնածուին Ազգային ժողովին երկու անգամ ներկայացնելը, որն ինչ-որ տեղ ստիպողական բնույթ է կրում, խախտում է օրենսդիր իշխանության ինքնուրույնությունը, զրկում ընտրության իրավունքից և անհնարին դարձնում կառավարության ձևավորման գործում իրականացնելու այն դերը, որն Ազգային ժողովին վերապահված է ԼՂՀ Սահմանադրությամբ:

Ինչպես բխում է ԼՂՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին 1.5 կետից, վարչապետի թեկնածության կրկնակի մերժման մասին Ազգային ժողովի որոշումը ԼՂՀ Նախագահի համար պարտադիր չէ, քանի որ ԼՂՀ Սահմանադրությունը պետության գլխին հնարավորություն է տալիս միակողմանիորեն հաղթահարել անհամաձայնությունը, ինչի մասին նշված է վերևում և որի արդյունքում Նախագահը նշանակում է վարչապետ և ձևավորում կառավարություն: Ընդ որում, վարչապետի թեկնածությունը կարող է լինել կամ Ազգային ժողովի կողմից մերժված թեկնածուներից, կամ այն անձը, որի թեկնածությունը նախկինում չէր ներկայացվել Ազգային ժողով:

Քաղաքական կայունության ու ժողովրդավարության գրավականներից մեկը կլինի այն, որ Սահմանադրությամբ Նախագահին լիազորություն վերապահվի հաղթահարելու այն արգելքը, որն առաջանում է վարչապետի թեկնածությունն Ազգային ժողովի կողմից երկու անգամ մերժվելու դեպքում: Այս առումով նպատակահարմար ենք համարում ԼՂՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին մասի 1.5 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «սույն հոդվածի 1-ին մասի 1.3-րդ կետով սահմանված

կարգով Ազգային ժողովի կողմից վարչապետի թեկնածության առնչությամբ երկու անգամ համաձայնություն չտալու կամ Ազգային ժողովի կողմից վարչապետի թեկնածությանը համաձայնություն չտալուց հետո Ազգային ժողովի համաձայնությամբ նշանակված վարչապետի առաջարկությամբ կազմավորված Կառավարության գործունեության ծրագրին հավանություն չտալու կամ Ազգային ժողովի համաձայնությամբ նշանակված վարչապետի առաջարկությամբ կազմավորված Կառավարության գործունեության ծրագրին հավանություն չտալուց հետո ներկայացված վարչապետի թեկնածությանը համաձայնություն չտալու դեպքերում Հանրապետության Նախագահը տասնօրյա ժամկետում նշանակում է վարչապետ, կազմավորում կառավարություն **և արձակում Ազգային ժողովը**»:

Կառավարությունն Ազգային ժողովի հավանությանն է ներկայացնում իր գործունեության ծրագիրը՝ դնելով իր վստահության հարցը: Սույն հարցը կարող է դրվել կառավարության ձևավորումից կամ նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի գումարումից հետո (Սահմանադրության 89 հոդված), կամ Կառավարության կողմից օրենքի նախագիծն (այդ թվում նաև պետական բյուջեի նախագիծը²⁰⁴) Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու դեպքում (Սահմանադրության 90 հոդված, մաս 5): Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից կարող է նախաձեռնվել կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագծի քննարկման հարցը, բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի²⁰⁵: Կառավարությանն անվստահություն

²⁰⁴ Սահմանադրության 105 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «... Բյուջեի հաստատման առնչությամբ կառավարությունը կարող է դնել իր վստահության հարցը: Եթե Ազգային ժողովը Սահմանադրության 90-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով կառավարությանն անվստահություն չի հայտնում, ապա պետական բյուջեն, կառավարության կողմից ընդունված ուղղումներով, համարվում է հաստատված»:

²⁰⁵ ԼՂՀ Սահմանադրության 97 հոդվածի ուժով Ազգային ժողովը չի կարող օգտվել կառավարությանն անվստահություն հայտնելու իրավունքից հետևյալ դեպքերում. կառավարության գործունեության ծրագրին

հայտնելու որոշման նախագծի ընդունման համար անհրաժեշտ է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը (Սահմանադրության 89 հոդված, մաս 2): Կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ չներկայացվելու կամ նման որոշում չընդունվելու դեպքերում Կառավարության գործունեության ծրագիրը համարվում է հավանության արժանացած:

Կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշում ընդունելուց հետո առաջացող հետևանք է հանդիսանում վարչապետի կողմից Հանրապետության Նախագահին Կառավարության հրաժարականի մասին դիմումի ներկայացումը (Սահմանադրության 89 հոդված, մաս 4): Համանման հետևանքներ են առաջանում Կառավարության կողմից Ազգային ժողով ներկայացված օրենքի նախագծի քննարկման ժամանակ (մանրամասն տե՛ս Հավելված 3):

Այստեղ մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե ինչպիսի՞ հնարավոր որոշումներ կարող է ընդունել Նախագահը վարչապետի կողմից նման դիմում ստանալուց հետո, մասնավորապես. Նախագահը հայտարարում է կառավարության հրաժարականի մասի՞ն, թե՛ կարող է չհամաձայնել Ազգային ժողովի հետ և արձակել այն:

Նշված հարցերի պատասխանը չի բովանդակվում Արցախի Սահմանադրության մեջ: Հաշվի առնելով իշխանության վերոհիշյալ մարմինների ձևավորման կարգը և Նախագահի դերը տվյալ ընթացակարգում, նպատակահարմար ենք համարում ԼՂՀ Սահմանադրության 89 հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշում ընդունվելու դեպքում վարչապետը նույն օրը Հանրապետության Նախագահին դիմում է ներկայացնում Կառավարության հրաժարականի մասին: Նշված դիմումի

հավանություն տալուց հետո վեց ամսվա ընթացքում, պատերազմի ժամանակ, աղետի դեպքում կամ այլ արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում:

քննարկումից հետո Հանրապետության Նախագահն իրավունք ունի հայտարարել կառավարության հրաժարականի մասին կամ չհամաձայնել Ազգային ժողովի որոշման հետ: Եթե Ազգային ժողովը երկու անգամ անընդմեջ անվստահություն է հայտնում կառավարությանը վերջինիս ծրագրին հավանություն չտալու տեսքով, ապա Նախագահը հայտարարում է կառավարության հրաժարականի մասին կամ արձակում է Ազգային ժողովը»: Ելնելով վերոհիշյալից՝ անհրաժեշտ է համանման փոփոխություններ կատարել 90 հոդվածի 5-րդ մասում կամ ամրագրել Սահմանադրության 89 հոդվածի 4-րդ մասին հղում կատարող նորմ:

ԼՂՀ-ում դատական իշխանությունն իրականացնում են դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան (գլուխ 6):

Համաձայն Սահմանադրության՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական համակարգը բաղկացած է ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարաններից և Գերագույն դատարանից, ինչպես նաև օրենքով նախատեսված մասնագիտացված դատարաններից (Սահմանադրության 109 հոդված): Գերագույն դատարանը, որպես ԼՂՀ բարձրագույն դատական մարմին, որն ապահովում է Սահմանադրության գերակայությունը և օրենքի միատեսակ կիրառումը, բաղկացած է սահմանադրական և վճռաբեկ պալատներից:

Հանրահայտ է, որ պետական իշխանության թևերը չեն կարող իրականացնել իրենց գործառնությունները լրիվ անկախության հիմքով՝ փոխադարձ վերահսկողության և համագործակցության բացակայության պարագայում: Կառավարման ժողովրդավարական սահմանադրական ձևի շրջանակներում նրանք փոխգործակցում են՝ ղեկավարվելով Սահմանադրության համապատասխան դրույթներով²⁰⁶: Օրենսդիր և գործադիր իշխանությունների հետ դատական իշխանության փոխգործակցությունը դրսևորվում է հետևյալ կերպ. ինչպես նշվեց վերևում,

²⁰⁶ Танчев Е., Разделение властей по Конституции Болгарии 1991 г. // Журнал конституционного правосудия, 2012, № 1, էջ 29-37:

Գերագույն դատարանի նախագահը, մյուս դատավորները նշանակվում են Ազգային ժողովի կողմից Հանրապետության Նախագահի առաջարկությամբ և իրենց գործունեության իրականացման շրջանակներում պետք է ղեկավարվեն Սահմանադրությամբ և Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքներով: Մյուս կողմից, Գերագույն դատարանը ստուգում է տարբեր պետական մարմինների և նրանց պաշտոնատար անձանց ընդունած նորմատիվ-իրավական ակտերի համապատասխանությունը ԼՂՀ Սահմանադրությանը: Ինչպես բխում է Արցախի Սահմանադրության 114 հոդվածի 4-րդ մասից՝ Գերագույն դատարանի կողմից օրենքները, Ազգային ժողովի որոշումները, Հանրապետության Նախագահի հրամանագրերը, կարգադրությունները, Կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչվելու դեպքում, այդ իրավական ակտերը կամ դրանց առանձին դրույթներ կորցնում են իրենց իրավաբանական ուժը: Ինչպես նշում է Ն.Բոնդարը, «խոսքը պետաիշխանական գործունեության արդյունքների սահմանադրական գնահատականի մասին է, որն արտահայտվում է նորմատիվությամբ (օրենսդիր և գործադիր իշխանությունների նորմատիվ-իրավական ակտերը դառնում են սահմանադրական վերահսկողության առարկա)»²⁰⁷: Այսպիսով, վերոհիշյալի վերլուծությունից բխում է, որ Գերագույն դատարանի որոշումը համարվում է պարտադիր ԼՂՀ Նախագահի, օրենսդիր, գործադիր, տեղական ինքնակառավարման և ԼՂՀ Սահմանադրության 114 հոդվածի 2-րդ մասով սահմանված մյուս մարմինների համար, որով անվավեր կամ Սահմանադրությանը չհամապատասխանող կարող են ճանաչվել այդ սուբյեկտների կողմից ընդունված նորմատիվ-իրավական ակտերը: Կարելի է նկատել, որ Գերագույն դատարանը որոշակի չափով իրականացնում է նաև իրավաստեղծ մարմնի գործառույթներ: Այս տեսանկյունից առավել տեղին է ԼՂՀ

²⁰⁷ Бондарь Н., Судебный конституционализм в России в свете конституционного правосудия. М.: Норма, 2011 // СПС «КонсультантПлюс»

Գերագույն դատարանը բնութագրել որպես «քվազիիրավաստեղծ մարմին»²⁰⁸:

Խոսելով ԼՂՀ դատական համակարգի մասին՝ պետք է նկատել, որ ԼՂՀ-ում չկա առանձին կազմով գործող սահմանադրական ատյան կամ դատարան, այլ Գերագույն դատարանի կազմում գործում է սահմանադրական պալատ, որի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Սահմանադրական արդարադատության մասին» ԼՂՀ օրենքով (27.05.2009թ. ՀՕ-18-Ն): Հաշվի առնելով սահմանադրական պալատին ընդդատյա գործերը, նրա սահմանադրա-վերահսկողական գործունեությունը, ինչպես նաև սահմանադրական արդարադատության ակտերի իրավաբանական բնույթը, օրենսդիր և գործադիր իշխանությունների համար դրանց պարտադիրությունը՝ անհրաժեշտ ենք համարում բարեփոխել ԼՂՀ դատական համակարգը՝ ապագայում Սահմանադրական ատյանը կամ դատարանը որպես առանձին, ինքնուրույն դատական մարմին գործելու ուղղությամբ:

Այսպիսով, ուսումնասիրելով և վերլուծելով իշխանությունների տարանջատման սկզբունքի իրացումը ԼՂՀ սահմանադրական լուծումներում, գալիս ենք այն եզրահանգման, որ գործադիր իշխանության դուալիզմի, ինչպես նաև իշխանության ճյուղերի միջև զսպումների ու հակակշիռների մեխանիզմի անհստակության պարագայում կառավարման կիսանախագահական մոդելն այդքան էլ արդարացված չէ:

Հաշվի առնելով Արցախում խորհրդարանական կառավարման մոդելի անկենսունակությունը և կիսանախագահական մոդելի հարուցած բազմաթիվ խնդիրները, ինչպես նաև նկատի ունենալով դարաբաղա-ադրբեջանական հակամարտության դեռևս չլուծված լինելու իրողությունը և այս համատեքստում

²⁰⁸ Սույն եզրույթն օգտագործվում է Ն.Բոնդարի կողմից իր աշխատության մեջ ՌԴ Սահմանադրական դատարանը բնութագրելիս: Հաշվի առնելով ԼՂՀ Գերագույն դատարանի դերը, լիազորությունները և վերջինիս կողմից ընդունվող ակտերի էությունը՝ մենք նույնպես օգտագործում ենք սույլալ եզրույթը: Տե՛ս նույն տեղում:

ուժեղ ու կենտրոնաձիգ իշխանության առկայության հրամայականը, ցանկալի է, որպեսզի սահմանադրական բարեփոխումների դեպքում նախապատվությունը տրվի կառավարման նախագահական ձևին: Այս մոտեցումը կարելի է ներկայացնել նաև իրավաբանական գրականության մեջ առկա այն տեսակետով, որ «իշխանությունների բաժանման սկզբունքն առավել էական նշանակություն է ձեռք բերում նախագահական հանրապետություններում, որովհետև հենց կառավարման այս ձևի դեպքում է առավել ընդգծելի դառնում այդ սկզբունքի անհրաժեշտությունը: Այսպես, որպես կառավարման դասական նախագահական երկիր ԱՄՆ-ն իր Սահմանադրության մեջ այդ սկզբունքը համալրեց «գսպումների և հակակշիռների» ազդեցիկ համակարգով, ինչը հնարավորություն տվեց ոչ միայն տարանջատել երեք իշխանությունները, այլև արդյունավետորեն հավասարակշռել դրանք»²⁰⁹:

²⁰⁹ ՀՀ սահմանադրական իրավունք / պատ. խմբագիր՝ Ն.Այվազյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 158-159:

ԳԼՈՒԽ 3. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ

§ 1. ԼՂՀ Սահմանադրության, առկա իրավական համակարգի և իրավակիրառական պրակտիկայի հակասությունների հաղթահարման ուղիները

Սահմանադրության՝ որպես բարձրագույն իրավաբանական ուժով օժտված և բարձրագույն սահմանադրական արժեք հանդիսացող իրավական փաստաթղթի ընդունման նպատակներից մեկը դրանում ամրագրված նորմերի ու արժեքների իրացումն է ու դրանով իսկ երկրում սահմանադրականության հաստատումը: Սակայն Սահմանադրության փաստացի առկայությունն ինքնին դեռևս որևէ հարց չի լուծում, քանի դեռ օրենսդրությունն ամբողջապես չի համապատասխանում Սահմանադրությանը, սահմանադրական արժեքները չեն կազմում օրենսդրության առանցքը, իսկ իրավակիրառական պրակտիկան հիմնված չէ Սահմանադրության և դրա արժեքային համակարգի հաշվառմամբ ստեղծված օրենսդրության անշեղ կատարման վրա:

Սահմանադրության և օրենսդրության մեջ ամրագրվելուց և իրավակիրառական պրակտիկայում մարմնավորվելուց հետո սահմանադրական արժեքների միջոցով երկրում ստեղծվում է այնպիսի միջավայր, որը կարելի է անվանել սահմանադրականություն: Սահմանադրականությունը կարելի է համարել վերջին ժամանակների իրավագիտության և հատկապես սահմանադրագիտության ամենաքննարկվող հիմնախնդիրներից մեկը, որի վերաբերյալ առկա բնորոշումներից մեզ համար առավել ընդունելի է պրոֆեսոր Գ.Հարությունյանի այն տեսակետը, ըստ որի՝ «սահմանադրականությունը սահմանադրական արժեքների համակարգային ու իմաստավորված առկայությունն է հանրային կյանքում, անհատի սոցիալական վարքագծի բոլոր

դրսևորումներում»²¹⁰: Սահմանադրական արդարադատության շրջանակներում սահմանադրական արժեքների իրացման արդյունքում ձևավորվում է դատական սահմանադրականություն, որը Ն.Բոնդարի բնորոշմամբ՝ «սահմանադրական-դատական պրակտիկայի, հասարակության և պետության մեջ սահմանադրական արժեքների նյութականացումն է, Սահմանադրության գերակայության պահանջների, նրա անմիջական գործողության իրական մարմնավորումը կյանքում»²¹¹:

Սահմանադրականությունը որպես իրավական հիմնախնդիր, չի կարող գոյություն ունենալ անօդ տարածությունում, իրավական իրականությունից կտրված, այն լիարժեքորեն գործառնող կենդանի օրգանիզմ կարող է դառնալ միայն այն ժամանակ, երբ նրա բաղադրիչներն առանձին-առանձին վերցրած ապահովում են սահմանադրական զարգացում, առաջընթաց: Այս իմաստով կարևոր ենք համարում ոչ միայն սահմանադրական արժեքների, այլև մյուս նորմերի ու սկզբունքների իմաստավորված իրացումը հասարակության և պետության կյանքում: Ավելին, հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց անհրաժեշտ է հաշվի առնել հասարակության պահանջմունքները և ապահովել սահմանադրական նոր սկզբունքների և արժեքների ամրագրումը Հիմնական օրենքում:

ԼՂՀ Սահմանադրությունը, որպես իրավական համակարգի կենտրոնական տարր, ունի արժեքային կուռ համակարգ, որի մեջ բովանդակվող սահմանադրական արժեքները որոշակի չափաբաժնով ու տարբեր եղանակներով հասնում են օրենսդրական մակարդակ: Այդ արժեքները բազմաթիվ են, որոնց ամբողջովին չենք կարող անդրադառնալ սույն գլխի շրջանակներում:

²¹⁰ Հարությունյան Գ., Հայ սահմանադրականության զարգացման հիմնախնդիրները. [Էլեկտրոնային տարբերակ]. – Մուտքի ռեժիմ – http://concourt.am/armenian/structure/president/articles/karabakh_april_2010.pdf-02.04.2014.

²¹¹ Бондарь Н., Судебный конституционализм в России в свете конституционного правосудия. М.: Норма, 2011 // СПС «КонсультантПлюс»

Ինչպես նշում է պրոֆեսոր Գ. Հարությունյանը՝ «հասարակական վերափոխման հաջող իրականացման գլխավոր խնդիրը հասարակական հարաբերությունների սահմանադրականացման նկատմամբ հետևողականությունն է՝ Սահմանադրության, իրավական համակարգի և իրավակիրառական պրակտիկայի միջև հակասությունների հաղթահարման եղանակով»²¹²: Տվյալ հիմնախնդիրն կարելի է մոտենալ հետևյալ տեսանկյունից. եթե մի պահ տեսականորեն պատկերացնենք, որ ԼՂՀ Սահմանադրության, առկա իրավական համակարգի և իրավակիրառական պրակտիկայի միջև հակասություններ չկան, ապա արդյունքը կլինի այն, որ հասարակական հարաբերությունների սահմանադրականացման միջոցով երկրում սահմանադրականության հաստատման բնագավառում որևէ խնդիր չէր լինի: Բայց քանի որ ԼՂՀ-ում սահմանադրականության հաստատման գործընթացը դեռևս ձևավորման փուլում է, դա նշանակում է, որ տվյալ ոլորտում, այնուամենայնիվ, հակասություններ, բացեր կան: Այս կապակցությամբ մենք ուշադրությունը կկենտրոնացնենք հիմնախնդրի այն կողմին, որը վերաբերում է «Սահմանադրություն-իրավական համակարգ-իրավակիրառական պրակտիկա» շղթայում սահմանադրական արժեքների ամրագրվածության ու կիրառության աստիճանին և ունեցած դերակատարությանը, որն էլ կներկայացվի սահմանադրական արժեքանության դիրքերից:

Քանի որ սահմանադրական արժեքներն առաջին հերթին ամրագրվում են Սահմանադրության մեջ, դրա համար կարևոր պայման է հանդիսանում այդ արժեքների հետագա ամրագրումը նաև օրենսդրության մեջ, որին հաջորդում է այդ արժեքների կենսագործման համար անհրաժեշտ կառուցակարգերի սահմանումը և, վերջապես, այդ արժեքների իրացումը սահմանադրական արդարադատության իրականացման ընթացքում, մարդկանց և պետության կյանքում:

²¹² Арутюнян Г., Конституционализм: уроки, вызовы, гарантии: сб. избр. публ. и выступлений на междунар. форумах, посвящ. дан. проблематике. Киев.: Логос, 2011, էջ 43:

Սույն աշխատության 2-րդ գլխում քննարկման առարկա ենք դարձրել սահմանադրական երեք արժեքներ՝ իրավունքի գերակայություն, ժողովրդաիշխանություն և իշխանությունների տարանջատում, որոնք մի կողմից մասնակիորեն են ամրագրված Արցախի Սահմանադրության մեջ, իսկ մյուս կողմից էլ սահմանադրական, օրենսդրական և իրավակիրառական հարթություններում դրանց իրացվելիությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ են որոշակի փոփոխություններ սահմանադրական և օրենսդրական մակարդակներում, որոնց առնչությամբ որոշակի առաջարկներ են արվում սույն հետազոտության մեջ:

Քննարկվող սահմանադրական արժեքներից այժմ անդրադառնանք միայն իրավունքի գերակայությանը, որը, ինչպես նշվել է 2-րդ գլխում, ԼՂՀ Սահմանադրության մեջ բառացիորեն ամրագրված չէ, սակայն դրա բովանդակությունը ենթադրելի է մի շարք հոդվածների վերլուծությունից: ԼՂՀ մի շարք օրենքներում²¹³ իրավունքի գերակայության փոխարեն ամրագրված է օրենքի գերակայությունը, իսկ ԼՂՀ դատական օրենսգրքում դատավորի երդման տեքստում նշված է դատավորի կողմից սահմանադրության և օրենքի գերակայությունն ապահովելու մասին պահանջ: Այստեղ, ինչպես տեսնում ենք, ԼՂՀ Սահմանադրության և օրենսդրության միջև առկա է աններդաշնակություն:

Հաջորդ հարթությունն իրավունքի գերակայության՝ որպես սահմանադրական արժեքի իրացումն է իրավակիրառական պրակտիկայում: Այստեղ խնդիրը կարելի է ներկայացնել հետևյալ տեսանկյունից. որքանո՞վ են քաղաքացիներն ու պետական իշխանության մարմինների ներկայացուցիչները համարժեք ընկալում իրավունքի գերակայության գաղափարը և որքանո՞վ են շիտակ ձևով կիրառում այն իրենց առօրյա կյանքում և աշխատանքային պարտականություններն իրականացնելիս:

²¹³ Խոսքը, մասնավորապես, «Հարկային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Բնապահպանական վերահսկողության մասին», «ԼՂՀ Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին», «Փաստաբանության մասին» ԼՂՀ օրենքների մասին է:

Իրավունքի գերակայության՝ որպես սահմանադրական արժեքի իրացման կարևոր նախապայմանն, անշուշտ, դրա ընկալումն է: Սակայն միայն ընկալմամբ ամբողջ գործընթացը չի սպառվում: Ինչպես իրավունքը, այնպես էլ իրավունքի գերակայությունը մշտապես զարգացող երևույթ է, հետևաբար այն լավագույնս մարմնավորվում է իրավակիրառ գործունեության ընթացքում:

Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ իրավունքի գերակայության վերաբերյալ ԼՂՀ-ում դեռևս չկա որևէ դոկտրինալ աշխատանք կամ գործնական հայեցակարգ, այն չի հանդիսանում պետական մարմինների գործունեության սկզբունքներից մեկը, չի դառնում տարբեր տիպի գիտական աշխատանքների իրականացման նյութ, ապա ամենևին էլ զարմանալի չէ, որ շատ քչերն են ծանոթ իրավունքի գերակայության բովանդակությանն ու առավել հաճախ օգտագործում են «օրենքի գերակայություն» եզրույթը: Նշենք, որ այս ուղղությամբ ԼՂՀ-ում որոշակի քայլեր իրականացվել են²¹⁴, սակայն արդյունքները դեռևս հեռու են բավարար լինելուց: Հաշվի առնելով այն, որ քննարկվող սահմանադրական արժեքների մեջ իրավունքի գերակայության մասին ԼՂՀ-ում համեմատաբար ավելի քիչ են իրազեկված, մեր կողմից Արցախի պետական համալսարանի իրավագիտության բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների շրջանում

²¹⁴ Հեղինակի կողմից Արցախի պետական համալսարանում դասավանդվող «սահմանադրական մշակույթ» և «իրավունքի փիլիսոփայություն» առարկաների շրջանակներում հաճախակի քննարկվող թեմաներից կարելի է նշել իրավունքի գերակայության, ժողովրդաիշխանության և իշխանությունների տարանջատման հիմնախնդիրը և դրա կենսունակությունը ԼՂՀ-ում: Դրանից գատ, 2014թ. փետրվարի 27-ին հեղինակի նախաձեռնությամբ Արցախի պետական համալսարանում կազմակերպվել են գիտական ընթերցումներ՝ նվիրված ծագումով արցախցի, ակադեմիկոս Վլադիկ Ներսեսյանցի 75-ամյակին, որի շրջանակներում հնչեցված զեկույցների և ելույթների կարմիր թելն անցնում էր իրավունքի գերակայության և օրենքի գերակայության հետ վերջինիս հարաբերակցության ու մերօրյա իրողություններում այն շիտակ ձևով ընկալելու և կիրառելու հարցի միջով: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Карабахский курьер, №2 (44) март-апрель 2014, էջ 18-20:

2014-2015 ուսումնական տարում անց է կացվել հարցում, որի ժամանակ հարցվողները պետք է պատասխանեին հետևյալ հարցին. ի՞նչ գիտեք իրավունքի գերակայության մասին և ո՞րն է դրա բովանդակությունը: Կատարված հարցումների արդյունքներն այնքան էլ գոհացուցիչ չէին²¹⁵:

Սահմանադրական արժեքների ճակատագիրը Սահմանադրության և օրենսդրության մեջ ամրագրվելով չի սպառվում: Դրանք իրական կերպար ու բովանդակություն են ստանում միայն իրավակիրառական պրակտիկայում, մասնավորապես՝ սահմանադրական արդարադատության ընթացքում: Դատական իշխանությունն իրեն բնորոշ հատուկ ընթացակարգով պաշտպանում է մարդու, հասարակության և պետության իրավունքներն ու օրինական շահերը: Ժողովրդավարական պետությունում և քաղաքացիական հասարակությունում դատական իշխանության հիմնական առաքելությունն այն է, որ սոցիալական և իրավական վեճերի ժամանակ երաշխավորի իրավունքի գերակայությունը²¹⁶: Որպեսզի առավել առարկայորեն խոսենք իրավակիրառական պրակտիկայում սահմանադրական արժեքների կենսունակության մասին, այժմ անդրադառնանք ԼՂՀ Գերագույն դատարանի սահմանադրական պալատի կողմից իր գործունեության յոթ տարիների ընթացքում ընդունված սահմանադրական որոշումներին ու դրանցում սահմանադրական արժեքների մարմնավորման հիմնահարցին: Տվյալ դեպքում խոսքը ոչ թե դատական ակտի մեջ սահմանադրական այս արժեքի լոկ արձանագրման, այլ իրավունքի գերակայության փիլիսոփայության կամ գաղափարի շուրջ դատական ակտի ձևավորման մասին է:

Այսպես, Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունը, որպես ինքնուրույն համակարգ, գործում է 2009թ. հունիսի 1-ից, և այդ պահից մինչև

²¹⁵ Հարցմանը մասնակցած 24 մագիստրանտներից դրական են պատասխանել 6-ը, մասնակի՝ 5-ը, բացասական՝ 13-ը:

²¹⁶ Конституционное (государственное) право зарубежных стран. Общая часть. Учебник для вузов. Рук. и отв. ред. профессор Б.Страшун, 4-е издание, обновленное и доработанное, М., 2005, էջ 745:

2016թ. սեպտեմբերի 1-ը ներառյալ ընդունվել են թվով 15 որոշում²¹⁷: Եթե դրանք ներկայացնենք ըստ տարիների, ապա կստանանք հետևյալ պատկերը. 2009թ.՝ 1 որոշում, 2010թ.՝ 3, 2012թ.՝ 2, 2013թ.՝ 4, 2014թ.՝ 1 որոշում, 2015թ.՝ 4 որոշում: Այդ որոշումներից միայն երկուսի դեպքում են իրավական ակտերը ճանաչվել Սահմանադրության պահանջներին հակասող և անվավեր, 6-ի դեպքում կայացվել է որոշում ԼՂՀ Սահմանադրությանը համապատասխանելու մասին, իսկ մնացած 7-ի դեպքում դիմումների քննության ընդունումը մերժվել է, որոնցից 1-ը ԼՂՀ վերաքննիչ դատարանի թվով երեք դատավորների դիմումն էր, իսկ 6-ը՝ անհատական (որոշումներն ավելի մանրամասն տե՛ս Հավելված 4):

ԼՂՀ գերագույն դատարանի սահմանադրական պալատի կողմից 2009-2016թթ. ընթացքում կայացված թվով 15 որոշումներում ոչ միայն որևէ նշում չկա իրավունքի գերակայության մասին, այլև դրա իմաստը ենթադրելի չէ այդ որոշումների բովանդակությունից²¹⁸: Հատկանշական է, որ աշխատության մեջ

²¹⁷ Համեմատության համար նշենք, որ ստեղծման օրվանից հետո 5-ամյա կտրվածքով ՀՀ Սահմանադրական դատարանն ընդունել է թվով 344 որոշում, որոնց մեջ զգալի թիվ են կազմում միջազգային փաստաթղթերում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցերը: Իսկ ինչ վերաբերում է անհատական դիմումներին, ապա այդ ինստիտուտը մինչև 2005թ. սահմանադրական փոփոխությունները չէր գործում, քանի որ ՀՀ Սահմանադրության 101 հոդվածով սահմանված էր, որ սահմանադրական դատարան կարող էին դիմել՝ 1. Հանրապետության Նախագահը, 2. պատգամավորների առնվազն մեկ երրորդը, 3. Հանրապետության Նախագահի և պատգամավորության թեկնածուները՝ ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերով, 4. կառավարությունը՝ Սահմանադրության 59 հոդվածով նախատեսված դեպքերում:

²¹⁸ Համեմատության համար նշենք, որ Բելառուսի Սահմանադրական դատարանի գործունեությունը գնահատելիս Վ.Պոդգրոշան գալիս է այն հետևության, որ դեռևս դժվար է պնդել, որ Բելառուսի Հանրապետության Սահմանադրական դատարանի պրակտիկայում արդեն ձևավորվել է միասնական մոտեցում իրավունքի գերակայության սկզբունքի բովանդակության սահմանման նկատմամբ: Տե՛ս Подгруша В., Некоторые вопросы использования в практике конституционного суда Беларуси принципа верховенства права // Вестник Конституционного суда Республики Беларусь, 2011, № 3, էջ 70:

քննարկվող չճանաչված երկրներից հատկապես Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության սահմանադրական դատարանն է բավականին ակտիվ գործունեություն իրականացնում ու իր որոշումներում անդրադառնում իրավակիրառական պրակտիկայում տարբեր սահմանադրական արժեքների մարմնավորման հարցին²¹⁹: Համեմատության համար նշենք, որ իրավունքի գերակայությունը, որպես իրավակարգավորիչ կարևորագույն սկզբունք, իր արտացոլումն է գտել ՀՀ Սահմանադրական դատարանի մի շարք իրավական դիրքորոշումներում, մասնավորապես՝ 630, 673, 690, 731, 752, 780, 917, 918, 1114, 1120, 1124, 1140 և այլ որոշումներում²²⁰:

Հատկանշական է, որ ամեն տարի ՀՀ Սահմանադրական դատարանն իր գործունեությունն ամփոփում է ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդումների ձևով²²¹: Ի դեպ, Բելառուսի Հանրապետության սահմանադրական դատարանի կողմից նույնպես ամեն տարի ընդունվում է սահմանադրական օրինականության մասին հաղորդումներ, որոնցում հատուկ շեշտադրվում է իրավունքի գերակայության՝ որպես սահմանադրական արժեքների զարգացման և պաշտպանության իրավական կառուցակարգերի մշակմանը նպաստող սկզբունքի մասին²²²: Կարծում ենք, որ նման գործելաոճը պետք է կիրառություն ստանա նաև ԼՂՀ-ում՝ ամեն տարի ընդունելով հաղորդումներ սահմանադրական արդարադատության վիճակի մասին և այն քննարկելով ԼՂՀ Նախագահի և Ազգային

²¹⁹ Քննարկվող չճանաչված երկրներից համացանցում հասանելի են միայն Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումները: Տե՛ս URL: http://www.kspmr.idknet.com/decisions_!.php?RasType=1 (դիմելու ամսաթիվը՝ 15.05.2015):

²²⁰ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներն օրենքների և այլ իրավական ակտերի նորմերի սահմանադրականության վերաբերյալ (1996-2010) թթ., Երևան, Նժար, 2011, 996 էջ:

²²¹ ՀՀ սահմանադրական դատարանի տարեկան հաղորդումները տե՛ս <http://concourt.am/armenian/report/index.htm>:

²²² Բելառուսի Հանրապետության սահմանադրական դատարանի 1994-2013թթ. հաղորդումները տե՛ս <http://www.kc.gov.by/main.aspx?guid=3371>:

ժողովի պատգամավորների հետ՝ որպես ԼՂՀ Գերագույն դատարանի կազմը ձևավորող մարմիններ:

Այժմ դիտարկենք այնպիսի սահմանադրական արժեք, որն իր բառացի ամրագրումն է ստացել ԼՂՀ Սահմանադրության մեջ, օրենսդիր մարմնի կողմից ընդունվել է տվյալ սահմանադրական արժեքի ոլորտը կարգավորող օրենք, սակայն տվյալ արժեքը ԼՂՀ իրավական իրականությունում այնքան էլ կենսունակ չէ: Խոսքը, տվյալ պարագայում, տեղական ինքնակառավարման մասին է:

ԼՂՀ Սահմանադրության 10-րդ գլուխը (123-132 հոդվածներ) վերնագրված է «Տեղական ինքնակառավարումը», որով կարգավորվում են տվյալ ոլորտի առավել առանցքային իրավահարաբերությունները: ԼՂՀ Ազգային ժողովի կողմից 2008թ. դեկտեմբերի 17-ին ընդունվել է օրենք «Տեղական ինքնակառավարման մասին»²²³, որն ուժի մեջ է մտել 2009թ. հունվարի 28-ին և մինչ օրս մի քանի անգամ ենթարկվել է փոփոխությունների ու լրացումների: Հիշյալ օրենքը տվյալ ոլորտը կարգավորող միակ իրավական ակտը չէ, այդպիսին է նաև ԼՂՀ ընտրական օրենսգիրքը, որով կարգավորվում են նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների հետ կապված իրավահարաբերությունները:

Տեղական ինքնակառավարման՝ որպես սահմանադրական արժեքի ոչ լիարժեք իրացման մասին է թերևս վկայում ԼՂՀ համայնքների զարգացվածության ներկայիս մակարդակը, որից էլ բխում են մի շարք հիմնախնդիրներ: Հավանաբար այս խնդրի որոշակի չափով լուծմանն էր ուղղված ԼՂՀ կառավարության կողմից 2013թ. փետրվարի 26-ին ընդունված թիվ 75-Ն որոշումը, որի նպատակն էր նպաստել ԼՂՀ համայնքների ղեկավարների՝ համայնքային նշանակության հարցերը լուծելու և համայնքային սեփականությունը տնօրինելու կարողությունների,

²²³ Հարկ է նշել, որ մինչ տվյալ օրենքի ընդունումը ԼՂՀ-ում գործում էր 1997թ. դեկտեմբերի 29-ին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» ԼՂՀ օրենքը, որն ուժը կորցրել է նոր օրենքի ընդունմամբ:

կառավարչական հմտությունների զարգացմանը և ձեռնհասության մակարդակի բարձրացմանը²²⁴:

Չնայած պետական մակարդակով այս հարցին հատուկ ուշադրություն դարձնելուն, այնուամենայնիվ, մինչ օրս ԼՂՀ համայնքների մեծամասնությունում դեռևս կիսալուծում է համարվում համայնքների ղեկավարների և ավագանու կողմից օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորություններից խելամտորեն օգտվելն ու հօգուտ համայնքի գործելը: Այսպիսի եզրահանգումների հիմքը հեղինակի բազմաթիվ հանդիպումներն են²²⁵ ԼՂՀ տարբեր համայնքների ղեկավարների և ավագանու անդամների հետ, որոնց ընթացքում ձևավորված հիմնական հետևությունն այն է, որ տեղերում պատասխանատուները համարյա տեղյակ չեն իրենց վերապահված իրավասությունների և պարտականությունների մասին²²⁶, հաճախ համայնքի ղեկա-

²²⁴ Համայնքների ղեկավարների համար ընթերցվել են դասախոսություններ առողջապահության, արդարադատության, արտադրական ենթակառուցվածքների, բյուջետային պլանավորման և բյուջետային կարգապահության, գյուղատնտեսության, ընտրական համակարգի, կադաստրի, կառավարչական հմտությունների, հարկային օրենսդրության, վիճակագրության, ՏԻՄ-ի գործավարության, փրկարար ծառայության, քաղաքաշինության ոլորտների՝ ՏԻՄ գործունեությանն առնչվող հարցերի վերաբերյալ:

²²⁵ Խոսքը, մասնավորապես, 2010թ. ԼՂՀ խորհրդարանական ընտրությունների ժամանակ ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Ա.Ղուլյանին շրջաններ ուղեկցելու, ինչպես նաև աշխատանքային գործունեության շրջանակներում 2011 թվականից ԼՂՀ Նախագահ Բ.Սահակյանի հետ Հանրապետության տարբեր համայնքների բնակչության հետ ունեցած հանդիպումների, ինչպես նաև մի շարք համայնքների ղեկավարների հետ ունեցած անձնական շփումների մասին է:

²²⁶ Պարտականությունների մասին անտեղյակությունն անմիջականորեն կապված է տեղերում իրավական գրագիտության մակարդակի հետ. խոսքը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ, ինչպես նաև անհատական իրավական ակտերի որակի մասին է: Դժբախտաբար, ԼՂՀ գյուղական համայնքներում մինչ օրս չկա իրավաբանի հաստիք և, ինչպես ցույց է տալիս իրականությունը, ոչ միշտ է, որ այդ մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերը (հատկապես ԼՂՀ արդարադատության նախարարության կողմից պետական իրավական փորձաքննություն չանցած և պետական գրանցում չստացած) համապատասխանում են իրենցից ավելի բարձր իրավաբանական

վարի պաշտոնում ինքնաառաջադրվում են ոչ թե համայնքի բնակչության հիմնախնդիրները լուծելու, այլ աշխատանքով ապահովված լինելու նպատակով: Համայնքների ղեկավարների հետ կապված ծայրահեղ խնդիրներից մեկը կապված է նրանց գրագիտության կամ համապատասխան կրթական ցենզի հետ: Դրա վառ վկայությունն է այն, որ 2010թ. փետրվարի 17-ին ԼՂՀ ընտրական օրենսգրքի (ընդունվել է 08.12.2004թ., ուժը կորցրել՝ 01.01.2015թ.) 120 հոդվածի 5-րդ մասն ավելացվել է նոր՝ 5-րդ կետով, ըստ որի՝ համայնքի ղեկավարի պաշտոնում ինքնաառաջադրվող քաղաքացին դիմումին կից պետք է ներկայացնի նաև միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ: 2011թ. օգոստոսի 16-ին կատարված փոփոխությամբ հիշյալ կետը և հիշյալ օրենսգրքի 119 հոդվածի 1-ին մասում ամրագրված նույնաբովանդակ բառակապակցությունը կորցրել են իրենց ուժը²²⁷: Հիմնական հետևությունը, որը կա-

ուժով օժտված իրավական ակտերին: Ընդ որում, այդ ակտերը համարյա նույնությամբ կրկնում են մեկը մյուսին, և նոր գաղափար կամ հարաբերությունների կարգավորման նոր մոտեցում չի առաջարկվում, այն դեպքում, երբ յուրաքանչյուր համայնք ունի իր առանձնահատկությունը, և այդ հիմքով պետք է կազմվի իրավական ակտը՝ հիմնված օրենսդրության պահանջների վրա: Այս հիմնախնդրի արդիականությունը հաշվի առնելով՝ առաջարկում ենք. Հանրապետության բոլոր խոշոր բնակավայրերում սահմանել իրավաբանի հաստիք, իսկ իրար մոտ գտնվող մի քանի փոքր բնակավայրերի համար՝ 1 հաստիք: Դրանով իսկ նախ՝ համայնքը կունենա ավելի ճիշտ ու իրավաբանորեն գրագետ ձևակերպված իրավական ակտեր, երկրորդ՝ տվյալ համայնքի բնակիչներն իրենց հուզող իրավական հարցերով կարող են դիմել իրավաբանին ու դրանով իսկ տեղում, առանց ավելորդ ծախսեր կատարելու, ստանալ անմիջական ու արիեստավարժ խորհրդատվություն (մասնավորապես, ժառանգության, համայնքի գործունեության շրջանակներում տարաբնույթ պայմանագրերի կնքման, հողատնտեսության, դրանց օտարման, համայնքի ղեկավարի կողմից «Տեղական ինքնակառավարման մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ գլխով նախատեսված իրավասությունների և այլ հարցերով), երրորդ՝ իրավաբանի հաստիքի սահմանմամբ ինչ-որ չափով լուծվում է նաև զբաղվածության և գյուղական բնակավայրերը զարգացնելու հիմնախնդիրը, որն օրակարգային է ԼՂՀ-ում:

²²⁷ Հարկ է նշել, որ 2014թ. հոկտեմբերի 29-ին ընդունված և 2015թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտած ԼՂՀ նոր ընտրական օրենսգրքի 130 հոդվածում նույնպես բացակայում է կրթական ցենզին վերաբերող պահանջը:

րելի է անել տվյալ պարագայում, այն է, որ ԼՂՀ-ում որոշ պաշտոնների համար առայժմ կրթական ցենզ սահմանելն այնքան էլ արդարացված չէ, քանի որ, ինչպես բազմիցս ենք մենք ակնատես եղել, համայնքներում բարձրագույն կրթություն և որոշ դեպքերում փորձառություն ունեցող մասնագետները խուսափում են համայնքի ղեկավարի պաշտոնում ինքնաառաջադրվելուց՝ հիմքում ունենալով օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: Այսպիսի իրականության բացասական փորձը պետք է հուշի նաև, որ վաղուց արդեն ժամանակն է, որպեսզի ԼՂՀ համայնքները ղեկավարեն հատուկ պատրաստություն և փորձ ունեցող անձինք՝ չխախտելով տեղական ինքնակառավարման ոլորտի միջազգային ու ներպետական իրավական ակտերում ամրագրված սկզբունքների փիլիսոփայությունը:

Ինչ վերաբերում է համայնքի ավագանու ինստիտուտին, ապա ավագանու հազվագյուտ անդամ է մոտենում այն ըմբռնումով, որ ավագանին համայնքի «օրենսդիր մարմինն» է, այն լուծում է այնպիսի կարևորագույն հարցեր, ինչպիսիք են համայնքի զարգացման քառամյա ծրագրի, համայնքի բյուջեի և դրա կատարման հաշվետվության հաստատումը, տեղական հանրաքվեի նախաձեռնումն ու նշանակումը և այլն: Ավագանու որոշ անդամների հետ ունեցած քննարկումների ժամանակ տեսակետ է հայտնվել, որ ավագանու անդամների ոչ ակտիվ ու ոչ արդյունավետ աշխատանքը պայմանավորված է հետևյալ հանգամանքով. տվյալ աշխատանքը չվարձատրվող է և հաճախ առաջադրվում են հարկադրաբար, որպեսզի գյուղական համայնքների ավագանու կազմը լինի համալրված, ու դրա պատճառով նոր ընտրություններ չնշանակվեն:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ հարկ է նշել, որ համայնքի ղեկավարի և ավագանու ինստիտուտներն այն կարևորագույն օղակներն են, որոնք պատասխանատու են Սահմանադրությամբ և օրենսդրությամբ իրենց վերապահված պարտականությունների անշեղ կատարման համար և որոնցով պայմանավորված է համայնքների, հետևաբար՝ նաև պետության զարգացումը:

Համայնքի ղեկավարի և ավագանու ինստիտուտների զարգացվածությամբ և ունեցած դերակատարությամբ է պայմանավորված տեղական ինքնակառավարման՝ որպես սահմանադրական արժեքի կենսունակությունն ու կարևորությունը երկրի կառավարման գործում:

Սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի ամեն մի որոշման մեջ պետք է տեղ գտնեն սահմանադրական արժեքների այն շրջանակը, որոնք ընկած են որոշման կայացման հիմքում: Սահմանադրական արժեքները Սահմանադրության և օրենսդրության մեջ ամրագրվում են, այսպես ասած, տեսականորեն, իսկ դրանք սկսում են գործել, կենդանություն ստանալ իրավակիրառական պրակտիկայում: Սահմանադրական արժեքների կենսունակությունն ակնհայտ է դառնում նաև սահմանադրական արդարադատության ընթացքում դրանք մեկնաբանելու շնորհիվ²²⁸:

Ինչպես արդարացիորեն նշում է Գ.Հարությունյանը՝ «սահմանադրական դատարաններն իրենց իրավական դիրքորոշումներով կոչված են իրական բովանդակություն հաղորդելու սահմանադրական արժեքներին»²²⁹: Սահմանադրական արժեքներն իրական բովանդակություն են ստանում և ապրող իրողություն դառնում այն ժամանակ, երբ ակտիվ կենսադիրք ունեն սահմանադրական ատյան դիմելու իրավունք ունեցող

²²⁸ Ս.Դենիսովը գտնում է, որ մեկնաբանության արդյունքները որոշվում են առաջին հերթին այն գիտական ուղղությամբ, որն ընտրել է հետազոտողը: Այս իմաստով նա առանձնացնում է իրավաբանական պրոգնոստիկա ղարոցի ներկայացուցիչներին, որոնց համար ճշմարիտը Սահմանադրության այն նորմերի մեկնաբանությունն է, որը տրվում է պաշտոնատար անձանց, այդ թվում Սահմանադրական դատարանի կողմից: Իսկ ահա արժեքանական մոտեցման կողմնակիցներն իրենք են արժեքների ու իդեալների կրողները և Սահմանադրության նորմերը մեկնաբանում են այդ իդեալների տեսանկյունից: Այս մասին տես Денисов С. Конституционные ценности как основа для толкования норм Конституции РФ // Конституционное и муниципальное право, 2013, № 9, էջ 14-21:

²²⁹ Арутюнян Г., Конституционализм: уроки, вызовы, гарантии: сб. избр. публ. и выступлений на междунар. форумах, посвящ. дан. проблематике. Киев.: Логос, 2011, էջ 161:

սուբյեկտները: Լիովին կիսում ենք Ն.Բոնդարի այն տեսակետը, համաձայն որի՝ «սահմանադրական դատավորները, ինչպես և Սահմանադրական դատարանն ամբողջությամբ, սահմանադրական արժեքների կենդանի մարմնավորումն են, որոնք իրենց իրացումն են ստանում սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմնի ամենօրյա նորմատիվ-վերահսկողական գործունեությունում»²³⁰: Այստեղ ամենօրյա ասվածն ինչ-որ չափով անսովոր է Արցախի իրականության համար, քանի որ սահմանադրական արդարադատությունը չունի այն տեմպն ու գործունեության ծավալները, որոնք հաճախ ենթադրելի են նմանատիպ մարմինների գործունեության պարագայում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրական արդարադատության պրակտիկայի վերլուծության արդյունքում կարող ենք որոշակի պատկերացում կազմել այն մասին, թե ինչպիսի դերակատարություն ունեն սահմանադրական արժեքները սահմանադրական որոշումների կայացման ժամանակ և որոնք են տվյալ ոլորտում առկա հիմնախնդիրները:

Այս առումով քննարկման առարկա ենք դարձրել իրավական ակտերի սահմանադրականության հարցով Գերագույն դատարանի առաջին և երկրորդ որոշումները, որոնք աչքի են ընկնում որոշակի առանձնահատկություններով. նախ՝ կազմավորման պահից մինչ օրս դրանք այն եզակի որոշումներն են, որոնցով հակասահմանադրական են ճանաչվել թվով 2 իրավական ակտերի դրույթներ, երկրորդ՝ մինչև Գերագույն դատարանի սահմանադրական պալատի որոշման կայացումը, ՀՀ Սահմանադրական դատարանն ավելի վաղ այդ հարցերով կայացրել էր որոշումներ, ընդ որում՝ երկրորդ որոշման կայացման ժամանակ դիմողը, ով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատավոր էր, կասեցրել էր վարույթում գտնվող գործը և դիմել Գերագույն դատարան. ՀՀ Սահմանադրական դատարան դիմած

²³⁰ Бондарь Н., Аксиология судебного конституционализма: конституционные ценности в теории и практике конституционного правосудия. М.: Юрист, 2013, էջ 11:

սուբյեկտը նույնպես առաջին ատյանի դատավոր էր և նույն կերպ էր վարվել՝ կասեցնելով գործի քննությունը:

2009թ. ապրիլի 1-ին, երբ դեռևս կազմավորված չէր ԼՂՀ Գերագույն դատարանի սահմանադրական պալատը, ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմել էր ԼՂՀ Գերագույն դատարան՝ «Սոցիալական ապահովության մասին» ԼՂՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները ԼՂՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով: Դիմելու համար առիթ է հանդիսացել ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ ստացված գրավոր և բանավոր դիմումները, ըստ որոնց՝ սոցիալական քարտ չունենալը խոչընդոտում է քաղաքացիներին ստանալու նպաստ, կենսաթոշակ և իրենց հասանելիք այլ գումար: Հատկանշական է, որ պատասխանող կողմ հանդիսացող ԼՂՀ Ազգային ժողովի ներկայացուցիչները նույնպես նշել են, որ օրենքն ունի ներքին հակասություն, որի հաղթահարման ուղղությամբ ձեռնարկված քայլերը հավանության չեն արժանացել օրենսդիր մարմնի սոցիալական ոլորտը կարգավորող մշտական հանձնաժողովի կողմից:

Ուսումնասիրելով գործում առկա նյութերը և ղեկավարվելով ԼՂՀ Սահմանադրությամբ ու օրենքներով՝ ԼՂՀ Գերագույն դատարանը վիճարկվող դրույթները ճանաչել է Սահմանադրության մի շարք հոդվածների պահանջներին հակասող և անվավեր²³¹: Որոշման վերլուծությունը հիմք է տալիս առանձնացնելու վերջինիս դրական ու թերի²³² կողմերը:

²³¹ Տե՛ս ԼՂՀ պաշտոնական տեղեկագիր, թիվ 16 (126) առ 16.07.2009թ., էջ 12-19:

²³² Սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմնի որոշումը համարյա թե բոլոր երկրներում մեծ կարևորություն ու որոշ դեպքերում հնչեղություն ունեցող իրավական ակտ է, որի մեջ անթույլատրելի են նույնիսկ փոքր սխալները: Որպես օրինակ կարող ենք դիտարկել ԼՂՀ Գերագույն դատարանի առաջին որոշման մեջ տեղ գտած այն սխալը, որտեղ խոսվում է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության հիմունքների մասին» Հոշակագրի մասին (տե՛ս ԼՂՀ պաշտոնական տեղեկագիր, թիվ 16 (126) առ 16.07.2009թ., էջ 17): Նշենք, որ նման վերնագրով 1992թ. հունվարի 8-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվել է սահմանադրական օրենք, իսկ դրանից երկու օր առաջ

Որոշման կայացման հիմքում դրվել են այնպիսի կարևորագույն սահմանադրական սկզբունքներ ու արժեքներ, ինչպիսիք են սոցիալական ապահովության իրավունքի երաշխավորումը, աշխատանքի ընտրության ազատության պաշտպանությունը, ինչպես նաև սոցիալական պետության կառուցման համար հիմք հանդիսացող մի շարք նախադրյալներ, մասնավորապես՝ ընտանիքը, մայրությունը և մանկությունը հովանավորելու, բազմազավակ ընտանիքներին աջակցելու, տարեց մարդկանց արժանապատիվ կենսամակարդակը ապահովելու պետության հիմնական խնդիրները: Որոշման կարմիր թելն անցնում է սեփականության իրավունքի երաշխավորման և հավասար իրավական պաշտպանության միջով:

Կարևորելով սահմանադրական պալատի որոշումների ընդունումը երկրում սահմանադրական արդարադատության արմատավորման ու կայացման գործում՝ այնուամենայնիվ պետք է արձանագրել, որ հենց առաջին որոշումը զերծ չէ որոշակի թերություններից: Սկսած 2009 թվականից՝ իրավական ակտերի սահմանադրականության որոշման հարցերով Գերագույն դատարանի որոշման մեջ ոչ թե նշվել է սահմանադրական պալատի կազմով, այլ Գերագույն դատարանի կազմով գործը քննելու մասին, որն առաջացնում է անորոշություն: Սա առաջին հայացքից կարող է տեխնիկական թվալ, բայց իրականում այն Սահմանադրության և օրենսդրության պահանջ է, որպեսզի հստակ տարանջատվի, թե որ գործերն ինչ կազմով ենք քննվում:

ԼՂՀ-ի պարագայում մի կողմից ողջունելի է, որ Գերագույն դատարանի սահմանադրական պալատի առաջին որոշման մեջ հղում է կատարվում միջազգային փաստաթղթերին²³³, այդ

ընդունվել է Հոչակագիր «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին», այսինքն՝ առանց «հիմունքների» բառի: Հոչակագիրն ու Օրենքը տե՛ս ԼՂՀ Ազգային ժողովի ընթացիկ արխիվը:

²³³ Խոսքը «Երեխայի իրավունքների մասին» 1989թ. նոյեմբերի 20-ի ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի թիվ 44/25 բանաձևին համապատասխան ընդունված Կոնվենցիայի, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966թ. դեկտեմբերի 16-ի միջազգային դաշնագրի, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝ Բուրդոնի ընդդեմ Ռուսաստանի

նորմերը տեղ են գտնում սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմնի իրավական դիրքորոշումներում, իսկ մյուս կողմից ոչ արդարացված ենք համարում այն մոտեցումը, որ դատական որոշումներում հղում կատարվի միջազգային այն փաստաթղթերին ու դրանց առանձին դրույթներին, որոնց դեռևս չի միացել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ թեկուզ միակողմանիորեն, քանի որ հակառակ պարագայում ԼՂՀ-ի համար իրավական որևէ հետևանք չի առաջանա: Նշենք, որ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ԼՂՀ օրենքի ընդունումից (26.03.2014թ.) հետո 01.09.2016թ. դրությամբ ԼՂՀ-ն միացել է 1954թ. Եվրոպական մշակութային կոնվենցիային, 1985թ. Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին և 1992թ. Հնագիտական ժառանգության պահպանության մասին եվրոպական կոնվենցիաներին, ինչպես նաև 1950թ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային ու 1966թ. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրին:

Այն հիմքով, որով ԼՂՀ Գերագույն դատարանը 30.06.2009թ. կայացրել է իր առաջին որոշումը, նույն հիմքով դրանից մոտ երեք տարի առաջ՝ 04.10.2006թ., ՀՀ Սահմանադրական դատարանն էր կայացրել 649 թվակիր որոշումը: Հատկանշականն այն է, որ ԼՂՀ Գերագույն դատարանը համարյա ամբողջովին վերարտադրել է ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման տեքստը, բացառությամբ նրա, որ ՀՀ-ում հիշյալ Օրենքի 11-րդ հոդվածը 23.05.2006թ. լրացվել է 4-րդ մասով²³⁴, որը ԼՂՀ համանուն

գործով որոշման մասին է, որոնց անհարկի հղում է կատարվել ԼՂՀ Գերագույն դատարանի որոշման մեջ, ինչպես նշված է ՀՀ սահմանադրական դատարանի հիշյալ որոշման մեջ:

²³⁴ ՀՀ Սահմանադրական դատարանն իր թիվ 649 առ 04.10.2006թ. որոշման մեջ ընդգծել է, որ քննարկվող սահմանադրական խնդիրներն իրավակիրառական պրակտիկայում հիմնականում ծագել են քաղաքացիների կրոնական համոզմունքների հետևանքով: Այս ուղղությամբ օրենսդրի կողմից 2006թ. կատարվել է լրացում, ըստ որի՝ «Սոցիալական քարտը հոգևոր խնդիրներին չի առնչվում և մարդու խղճի ու կրոնական համոզ-

օրենքում բացակայում էր: Այստեղ խնդիրը կայանում է ոչ միայն ինքնուրույնության բացակայության մեջ, այլև նրանում, որ սահմանադրական արդարադատություն իրականացնելիս այլ երկրների փորձը հաշվի առնելիս պետք է նկատի ունենալ նաև երկրի առանձնահատկություններն ու սահմանադրական մշակույթի մակարդակը՝ այդ համատեքստում ամրապնդելով նաև սեփականը:

Գերագույն դատարանի հաջորդ որոշման կայացման համար հիմք է հանդիսացել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատավորի դիմումը, որով խնդրվում է որոշել ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի և 114 հոդվածի 4-րդ մասին 5-րդ կետի՝ ԼՂՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Այս կապակցությամբ ԼՂՀ Ազգային ժողովի նախագահը 2014թ. փետրվարի 24-ի գրությամբ, ի թիվս այլ հիմնավորումների, ԼՂՀ Գերագույն դատարանին տեղեկացրել է, որ ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ է գտնվում «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով օրենսգրքի վիճահարույց դրույթները ստանում են իրենց օրենսդրական լուծումները, այն է՝ 113 հոդվածը շարադրվում է նոր խմբագրությամբ, որտեղ 9-րդ կետի տարիքային խտրականության դրույթը հանվում է, իսկ 114 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետն ուժը կորցրած է ճանաչվում: Նշենք, որ նախագիծն ընդունվել է 24.06.2010թ., ուժի մեջ մտել 15.07.2010թ.:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ԼՂՀ աշխատանքային օրենսգրքն ու գործում առկա մյուս փաստաթղթերը և ղեկավարվելով Սահմանադրությամբ ու օրենսդրությամբ՝ ԼՂՀ Գերագույն դատարանը վիճարկվող

մունքների դեմ չի կարող օգտագործվել»: ՀՀ ՄԴ իրավական դիրքորոշմամբ՝ Օրենքի այս նորմը գործնականում զուրկ է իրավական բովանդակությունից և հակասում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45 հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

դրույթները ճանաչել է ԼՂՀ Սահմանադրության 21 և 34 հոդվածներին հակասող և անվավեր: Որոշման եզրափակիչ մասի 3-րդ կետով ԼՂՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված դրույթների իրավաբանական ուժը կորցնելու ժամկետը հետաձգվել է մինչև 2010թ. դեկտեմբերի 30-ը՝ ԼՂՀ Ազգային ժողովին հնարավորություն տալով օրենսդրական կարգավորումները համապատասխանեցնել տվյալ որոշման պահանջներին²³⁵: Որոշում կայացնելիս Գերագույն դատարանը հենվել է այնպիսի կարևորագույն սահմանադրական արժեքների վրա, ինչպիսիք են օրենքի առջև բոլորի հավասարության և տարիքից կախված նրանց միջև խտրականության արգելքի սկզբունքը, ինչպես նաև յուրաքանչյուրի՝ աշխատանքի ընտրության ազատությունը:

Այս որոշման կապակցությամբ հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառումներ. եթե Գերագույն դատարանի առաջին որոշման դեպքում օրենքի դրույթ է հակասահմանադրական ճանաչվել, ապա այս պարագայում ԼՂՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր են ճանաչվել օրենսգրքի դրույթները: Ընդ որում՝ այդ օրենսգիրքը ընդունվել է ոչ թե ԼՂՀ, այլ ՀՀ Ազգային ժողովի կողմից: 2005թ. ապրիլի 27-ին ընդունվել է «ՀՀ 2004թ. աշխատանքային օրենսգիրքը ԼՂՀ-ում գործողության մեջ դնելու մասին» ԼՂՀ օրենքը, որի 1-ին հոդվածը սահմանում է. «2005թ. հուլիսի 1-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործողության մեջ դնել 2004թ. նոյեմբերի 9-ին ընդունված Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը (դրա հետագա փոփոխություններով և լրացումներով հանդերձ)՝ այն վերանվանելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք» (այսուհետ՝ օրենսգիրք)»:

Եթե ԼՂՀ-ի համար ուղենիշային է համարվում ՀՀ աշխատանքային օրենսգիրքը՝ փոփոխություններով և լրացումներով հանդերձ, ապա տվյալ դեպքում ԼՂՀ Գերագույն դատարանը

²³⁵ Տե՛ս ԼՂՀ պաշտոնական տեղեկագիր, թիվ 06 (140) առ 19.03.2010թ., էջ 39-45:

պետք է կարճեր գործի վարույթը²³⁶: Այստեղ հիմնական հետևությունն այն է, որ նույն իրավական ակտի նույն դրույթների վերաբերյալ առկա են ՀՀ Սահմանադրական դատարանի և ԼՂՀ Գերագույն դատարանի սահմանադրական պալատի որոշումներ, որոնք ինչ-որ առումով անհամատեղելի են, քանի որ ՀՀ Սահմանադրական դատարանի կայացրած որոշումից²³⁷ հետո ՀՀ Ազգային ժողովը հաշվի է առել որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումը և համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ աշխատանքային օրենսգրքում:

Վերը շարադրվածը և ԼՂՀ Գերագույն դատարանի սահմանադրական պալատի կողմից կայացված մյուս որոշումների ուսումնասիրությունը հիմք են տալիս եզրակացնելու, որ ԼՂՀ-ում սահմանադրական արդարադատության պրակտիկան չունի հարուստ փորձ, դեռևս ձևավորման փուլում է, և դժվար է ասել, թե որքանով են կենսունակ սահմանադրական արժեքները: Դրանից բացի, եթե իրավակիրառական պրակտիկայում սահմանադրական արժեքները խորը վերլուծության առարկա չեն դարձել, այդ արժեքներից ոչ բոլորն են ընկած եղել որոշումների կայացման հիմքում, ապա չենք կարող ասել՝ Գերագույն դատարանը շիտակ ձևով է այն մեկնաբանել, թե ոչ:

Քանի որ աշխատության 2-րդ գլխում քննարման առարկա դարձած սահմանադրական արժեքներն իրավակիրառական պրակտիկայում չեն մարմնավորվել, ուստի հակասությունների հաղթահարման գործում ունեցած դերակատարության մասին նույնպես խոսք լինել չի կարող: Սակայն պետք է նկատի առնել, որ սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի ցանկացած որոշում իր դրական ազդեցությունը պետք է

²³⁶ Նշենք, որ համանման տեսակետ է հայտնել նաև ԼՂՀ Գերագույն դատարանի դատավորներից մեկը՝ այն ներկայացնելով հատուկ կարծիքի ձևով: Այս մասին տե՛ս ԼՂՀ պաշտոնական տեղեկագիր, թիվ 06 (140) առ 19.03.2010թ., էջ 46-47:

²³⁷ ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ 792 առ 24.02.2009թ. որոշումը տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներն օրենքների և այլ իրավական ակտերի նորմերի սահմանադրականության վերաբերյալ (1996-2010) թթ., Երևան, Նժար, 2011, էջ 521-529:

թողնի հասարակության զարգացման վրա: Այստեղից էլ կարելի է հետևություն անել, որ Գերագույն դատարանի սահմանադրական պալատի ընդունած որոշման որակն ուղիղ համեմատական է պետության և հասարակության կյանքում արձանագրված տեղաշարժերին:

§ 2. Սահմանադրական արդարադատության համակարգի հետագա զարգացման հիմնախնդիրները

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես ժողովրդավարական ու իրավական պետության անբաժանելի տարրերից մեկը ենթադրվում է զարգացած սահմանադրական արդարադատության առկայությունը, իսկ վերջինս մասնագիտացված մարմնի կողմից իրականացվող հատուկ գործունեություն է, որի արդյունքում միս ու արյուն են դառնում սահմանադրական արժեքները, և որպես վերջնարդյունք՝ սահմանադրական արդարադատության իրականացման շնորհիվ երկրում ստեղծվում են սահմանադրականության հաստատման նախադրյալներ:

Սահմանադրական արդարադատությունն Արցախի համար տակավին նոր երևույթ է և ունի յոթ տարվա պատմություն: Տվյալ ժամանակահատվածը մի կողմից շատ կարճ է ոլորտում արմատական հաջողություններ արձանագրելու համար, իսկ մյուս կողմից էլ այս տարիների ընթացքում հնարավոր էր համակարգային ձևով ու հետևողականորեն մոտենալ այն հիմնախնդիրներին, որոնք խոչընդոտում են ոլորտի զարգացմանը և որոնց մի մասին փորձ կարվի անդրադառնալ սույն պարագրաֆում:

Որպեսզի ավելի խորը պատկերացնենք գործող սահմանադրական արդարադատության համակարգը, վերլուծենք այդ ոլորտում իրականացվող աշխատանքների արդյունավետությունը, վեր հանենք դրական ու բացասական կողմերը և առաջարկենք համակարգի կատարելագործման ուղիներ, անհրաժեշտ

ենք համարում հակիրճ անդրադառնալ սահմանադրական արդարադատության ինստիտուտի ճնշվածության ու կայացման նախադրյալներին:

Այսպես, Արցախում սահմանադրական արդարադատություն իրականացնում է ԼՂՀ Գերագույն դատարանը, որի գործունեությունը կանոնակարգված է ԼՂՀ Սահմանադրության 6-րդ գլխով, ԼՂՀ դատական օրենսգրքով, «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքով, ինչպես նաև ներքին իրավական ակտերով:

ԼՂՀ Սահմանադրության 140 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 113-րդ հոդվածի 2-րդ մասն ուժի մեջ է մտնում 2009թ. հունիսի 1-ից, իսկ 113 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Գերագույն դատարանը բաղկացած է սահմանադրական և վճռաբեկ պալատներից: ԼՂՀ Սահմանադրության ընդունումից (10.12.2006թ.) հետո մոտ երկուսուկես տարի ժամանակ էր տրվել իրականացնելու նախապատրաստական աշխատանքներ սահմանադրական արդարադատության ոլորտը կարգավորող օրենքի ընդունման և այլ անհրաժեշտ պայմանների ապահովման համար: Քննարկվող ոլորտը կարգավորող «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքն ընդունվել է 2009թ. մայիսի 27-ին, որով էլ ավարտվել է սահմանադրական արդարադատության մեկնարկի համար պահանջվող նախադրյալների ապահովման գործընթացը:

Եթե փորձենք փուլերի բաժանել ԼՂՀ-ում սահմանադրական արդարադատության արմատավորմանն ուղղված հիմքերը, ապա ընդհանրացված ձևով կունենանք հետևյալը.

- ԼՂՀ Սահմանադրության ընդունմամբ սահմանադրական արդարադատության ինստիտուտի ներդրում (2006թ.),
- տվյալ ոլորտը կանոնակարգող իրավական ակտի՝ «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքի ընդունում (2009թ.),
- առաջին որոշման ընդունմամբ սահմանադրական արդարադատության գործընթացի մեկնարկ (2009թ.),

- սահմանադրական արդարադատության լճացում կամ ճգնաժամ,
- սահմանադրական արդարադատության ոլորտում առկա հիմնախնդիրների ուսումնասիրում և դրանց լուծմանն ուղղությամբ համապատասխան քայլերի իրականացում:

Ձևավորման օրվանից մինչ օրս սահմանադրական արդարադատության առջև ծառայած են մի շարք հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտում են վերջինիս բնականոն զարգացմանը: Դրանք կարելի է պայմանականորեն դասակարգել 2 խմբի՝

1. կառուցակարգային,
2. գործառույթային կամ բովանդակային:

Սահմանադրական օրենսդիրը, Սահմանադրությամբ ԼՂՀ-ում առաջին անգամ ներդնելով սահմանադրական արդարադատության ինստիտուտ, դրա գործառույթները վերապահել է մինչ այդ գործող ԼՂՀ բարձրագույն դատական մարմնին՝ Գերագույն դատարանին²³⁸: ԼՂՀ Սահմանադրության 6-րդ գլխի և «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքի վերլուծությունը միանշանակորեն վկայում է, որ ԼՂՀ Գերագույն դատարանը նույն կազմով երկակի գործառույթ է իրականացնում. մի կողմից սահմանադրական արդարադատություն, իսկ մյուս կողմից վճռաբեկության կարգով վերանայում է ստորադաս

²³⁸ Այս կապակցությամբ տեղին է արձանագրել հետևյալը. ԼՂՀ Սահմանադրության 113 հոդվածի 3-րդ մասում և ԼՂՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասում նշված է, որ «Գերագույն դատարանն ապահովում է Սահմանադրության գերակայությունը և օրենքի միատեսակ կիրառումը», իսկ ահա «Սահմանադրական արդարադատության մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում էլ ամրագրված է, որ «Սահմանադրական արդարադատություն իրականացնող բարձրագույն մարմինը Գերագույն դատարանն է, որն ապահովում է ԼՂՀ իրավակարգում Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը» (ընդգծումը մերն է՝ Ա.Հ.): Սահմանադրական արդարադատություն իրականացնելիս ԼՂՀ Գերագույն դատարանին վերապահված կամ ԼՂՀ Սահմանադրության բովանդակությունից բխող «Սահմանադրության գերակայությունն ապահովելու» իրավասությանը հիշյալ օրենքում ավելացվել է ևս մեկը՝ անմիջական գործողությունը, որը չի համապատասխանում Սահմանադրության իրավակարգավորմանը և փոխառված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքից:

ատյանների դատական ակտերը: Մեր խորին համոզմամբ, այս առումով Սահմանադրության մեջ Գերագույն դատարանի առաքելությունը ձևակերպված է աղավաղված ձևով, որից էլ հետևում է գործունեության երկակիությունը: Վերջինս հիմնականում պայմանավորված է դատական սահմանադրական վերահսկողության մոդելի ընտրության հարցով, որը գործառույթների առումով նման է եվրոպական մոդելին, իսկ կառուցվածքի առումով առավել շատ ընդհանրություններ ունի ամերիկյան մոդելի հետ, քանի որ սահմանադրական արդարադատության իրականացումն ու վճռաբեկ բողոքների քննությունն իրականացվում է ԼՂՀ գերագույն դատարանի կողմից, այլ ոչ թե դրա պալատների կողմից առանձին-առանձին: Ուսումնասիրելով սահմանադրական վերահսկողության ամերիկյան ու եվրոպական մոդելները և դրանց հետ համադրելով գործող համակարգը, կարելի է ասել, որ ԼՂՀ-ում որդեգրվել է սահմանադրական վերահսկողության խառը (հիբրիդային) ձևը, որի տիպական օրինակներ են Հունաստանը, Բրազիլիան և այլն²³⁹:

Մասնագիտացված կամ կենտրոնացված դատական սահմանադրական վերահսկողության համակարգը ենթադրում է այն իրականացնող յուրահատուկ կազմակերպական կառուցվածք, որոնցից մեկը Գերագույն դատարանների սահմանադրական պալատն է (Հունաստան, Էստոնիա, Բուրկինա-Ֆասո, Գվինեա, Կոստա-Ռիկա)²⁴⁰: Հետխորհրդային տարածաշրջանի պետություններից ներկայումս սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմիններ գործում են բոլոր երկրներում, բացառությամբ Թուրքմենստանի: Ինչ վերաբերում է հետխորհրդային տարածաշրջանի չճանաչված չորս երկրներին, ապա դրանցից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության և Հարավային Օսեթի-

²³⁹ Клишас А., Конституционный контроль и конституционное правосудие зарубежных стран: Автореф. дис. ... д-ра юрид. наук. М., 2007, 50 էջ:

²⁴⁰ Հարությունյան Գ., Մանասյան Ա., Սահմանադրական վերահսկողություն: Ուս. ձեռնարկ բուհերի համար (լրամշ. հրատ.) խմբ.՝ Վ.Հովհաննիսյան, Երևան, Իրավունք, 2015, 94 էջ:

այի Հանրապետության Սահմանադրություններում տեղ են գտել քննարկվող մարմնի գործունեությունը կանոնակարգող դրույթներ, իսկ Աբխազիայի Հանրապետությունում նման ինստիտուտ հիմնելու նպատակով Սահմանադրության մեջ արդեն կատարվել են համապատասխան լրացումներ, որոնց արդյունքում առանձին կգործի սահմանադրական դատարան²⁴¹:

Արցախի Սահմանադրության մեջ Գերագույն դատարանին վերապահված իրավասության անհստակության հետ սերտորեն կապված է նաև այն հարցը, թե ԼՂՀ-ում ո՞ր մարմնին պետք է վերապահվի սահմանադրական արդարադատություն իրականացնելու լիազորությունը, մասնագիտացված մարմնի կողմից դա պետք է իրականացվի՞, թե ոչ: Եթե առաջին հայացքից հարցը պարզունակ, իսկ պատասխանն ակնհայտ է թվում, ապա իրականում հենց այս հիմնահարցի հետ ենք որոշ չափով կապում ԼՂՀ-ում սահմանադրական արդարադատության ներկայիս «լճացման գործընթացը»:

Դատական սահմանադրական վերահսկողության խառը ձևը կարող է արդյունավետ գործել, եթե դրա առանձին տարրերը ճիշտ են ընտրված: Արցախի պարագայում դա թերի է, որն ավելի պարզ կերևա ներկայացվող համեմատությունից: Այսպես, հետխորհրդային տարածաշրջանի երկրներից միայն

²⁴¹ 2014թ. ապրիլի 30-ին Աբխազիայի Հանրապետության Նախագահ Ալեքսանդր Անկվաբը ստորագրել է 2014թ. ապրիլի 14-ին Ազգային ժողովի կողմից ընդունված «Աբխազիայի Հանրապետության Սահմանադրության լրացումների մասին» սահմանադրական օրենքը, որով մտցվում է սահմանադրական դատարանի ինստիտուտը և որի վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում սահմանադրական դատարանի առաջին կազմի ձևավորումից հետո (տե՛ս <http://www.abkhazigov.org/president/press/news/2014-05-06-1>): Հատկանշական է, որ մինչև վերջին փոփոխությունները Սահմանադրության 73 հոդվածով սահմանադրական դատարանի մասով Գերագույն դատարանին վերապահված լիազորությունները չեն կիրառվել, որի հետ կապված խնդիրներից մեկը համապատասխան օրենքի բացակայությունն էր (տե՛ս Бутба С., Создание в Республике Абхазия Конституционного суда и его роль в формировании национальной правовой системы. Актуальные проблемы российского права. 2010, №3, էջ 404-413):

Ղրղզստանի Հանրապետությունում է գործում սահմանադրական վերահսկողության խառը մոդելը, որի հաջողությունը, մեր կարծիքով, պայմանավորված է Սահմանադրության մեջ խելամիտ լուծում գտնելու և իրականում գործելու հանգամանքով: Դա, մասնավորապես, բացատրվում է հետևյալով. Ղրղզստանի Հանրապետության Սահմանադրության 93 հոդվածի 3-րդ մասում նշված է, որ «Գերագույն դատարանի կազմում գործում է Սահմանադրական պալատը», իսկ 97 հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ «Գերագույն դատարանի Սահմանադրական պալատը սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմին է»: Այստեղ հիմնական հետևությունն այն է, որ ոչ թե Գերագույն դատարանն է իրականացնում սահմանադրական արդարադատություն, ինչպես ԼՂՀ-ում է, այլ դրա սահմանադրական պալատը, որին նման պայմաններում սահմանադրական վերահսկողությամբ օժտելը լիովին տեղավորվում է առողջ տրամաբանության մեջ:

Համեմատության համար նշենք, որ, օրինակ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 171 հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ «Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, Վճռաբեկ դատարանն է», իսկ 167 հոդվածի 1-ին մասում հստակ ամրագրված է, որ «Սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը»:

Քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ հիմնական եզրահանգումն այն է, որ ԼՂՀ-ում սահմանադրական վերահսկողության մոդելի որոշ տարրեր ճիշտ չեն ընտրված, որի հետևանքը սահմանադրական արդարադատության ներկայիս վիճակն ու անհեռանկար ապագան է: Կարծում ենք, որ սահմանադրական օրենսդիրը պետք է գնար ԼՂՀ-ում առանձին կազմով գործող մասնագիտացված դատական սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմին ունենալու ճանապարհով, ինչն

ավելի արդարացված կլիներ, եթե հաշվի առնենք երկրի առանձնահատկությունները:

Մեր խորին համոզմամբ՝ այս առումով բավականին ուսանելի է Ավստրիայի սահմանադրական դատարանի փորձը, ըստ որի՝ 14 հոգանոց կազմին (նախագահ, նախագահի տեղակալ և 12 անդամներ) միանում են նաև 6 պահեստային անդամները: Ավստրիայի Սահմանադրության 147 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «դատարանի նախագահը, նախագահի տեղակալը, մյուս 6 անդամները և 3 պահեստային անդամները նշանակվում են Դաշնային նախագահի կողմից Դաշնային կառավարության առաջարկությամբ. դատարանի այդ անդամները պետք է նշանակվեն դատավորների, կառավարման աստիճանավորների, համալսարաններում իրավական գիտաճյուղերի պրոֆեսորների թվից»: Սահմանադրական դատարանի անդամները նշանակվելուց հետո էլ շարունակում են կատարել իրենց նախկին աշխատանքը կամ նույնիսկ մնալ այլ դատական մարմինների անդամներ: Սահմանադրական դատարանն աշխատում է տարին 4 նստաշրջանով, երեք շաբաթ տևողությամբ՝ մարտին, հունիսին, հոկտեմբերին և դեկտեմբերին:

Կարծում ենք, որ Արցախում այս մոդելի որոշ տարրերի կիրառման դեպքում մեծ հետաքրքրություն կառաջանա հատկապես սահմանադրական իրավունքի հանդեպ, և այդ ուղղությամբ իրականացվելիք գիտական աշխատանքները միանշանակ իրենց նպաստը կբերեն սահմանադրական արդարադատության զարգացմանը՝ իրենց կազմում ընդգրկելով լավագույն մասնագետների:

Սահմանադրական արդարադատության ոլորտում առկա հիմնախնդիրների տևական ուսումնասիրությունը հաստատակամորեն վկայում է, որ այս ոլորտի առաջնային հիմնախնդիրը կապված է դիմումատուների իրավագիտակցության ոչ բավարար մակարդակի հետ: Այս կարծիքի հավաստիության մեջ կարող ենք համոզվել՝ ուսումնասիրելով հատկապես քաղաքացիների կողմից ԼՂՀ Գերագույն դատարանի սահմանադրական պալատ

ներկայացված դիմումները: Դրանց մեջ կարելի է հանդիպել այնպիսիք, որոնք իրենց մեջ իրավական պահանջներ չեն պարունակում²⁴² կամ ներկայացվում են օրենսդրության պահանջների խախտմամբ²⁴³: Նմանաբնույթ մի քանի դիմումների քննարկման ժամանակ ԼՂՀ Գերագույն դատարանի սահմանադրական պալատն արձանագրել է, որ «բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթների սահմանադրականության հարց, բայց ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով՝ որպես Գերագույն դատարանի սահմանադրական պալատի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Ուսումնասիրելով ԼՂՀ դատական պրակտիկան, ակնհայտ է դառնում, որ փաստաբաններն առավել շատ հակված են ներկայացնելու իրենց վստահորդների շահերը քաղաքացիական և քրեական գործերում, քան սահմանադրական: Ներկայացված տեսակետի համար որպես փաստարկ կարող է ծառայել այն, որ անհատական 6 դիմումներից միայն մեկի դեպքում է այն ներկայացվել փաստաբանի միջոցով, որը նույնպես մերժվել է: Այս վերլուծության ամբողջ տրամաբանության մեջ տեղավորվում է նաև այն իրողությունը, որ ԼՂՀ-ում չկա սահմանադրական ատյան դիմելու գործերում մասնագիտացված որևէ փաստաբան, որը, հավանաբար, պայմանավորված է առաջարկի ու պահանջարկի աններդաշնակության հանգամանքով:

Ժողովրդավարական ու իրավական ուղի ընտրած պետության գերխնդիրներից մեկն իրավագիտակից հասարակություն ունենալն է, որտեղ մարդիկ հմտորեն կարող են օգտվել իրենց

²⁴² Դիմումներից մեկում դիմումատուն սահմանադրական պալատին խնդրում է «կանխել, վերացնել իր նկատմամբ հանիրավի թույլ տրված անարդարությունը, վերացնել իր ապրուստի միջոց հողն ու այգին»:

²⁴³ Դիմումներից մեկի քննության ընդունումը մերժվել է ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

իրավունքներից ու ազատություններից և միաժամանակ կատարել իրենց վրա դրված պարտականությունները: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար այս հարցը ևս օրակարգային է, որի լուծումը կախված է ինչպես այդ ուղղությամբ պետական մարմինների վարած քաղաքականությունից, այնպես էլ քաղաքացիների ակտիվ կենսադիրքից: Սահմանադրական արդարադատության իրականացման ոլորտում իրավագիտակցության ոչ բավարար մակարդակի արդյունքում քաղաքացիների մի մասն անտեղյակ է սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի գործունեության մասին, մյուս մասի ներկայացրած անհատական դիմումները ձևակերպված են ոչ պատշաճ գրագիտությամբ կամ օրենսդրության խախտմամբ, իսկ մեկ այլ խումբ քաղաքացիներ որդեգրել են պասիվ կեցվածքով ապրելաոճը և նույնիսկ անհրաժեշտության դեպքում չեն ցանկանում ներգրավվել նման գործընթացների: Նման մոտեցումը քաղաքացիներին հեռու է պահում Սահմանադրությամբ և օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորություններից օգտվելու հնարավորությունից՝ դրանով իսկ չնպաստելով իրավական հասարակության ու ԼՂՀ Սահմանադրությամբ որպես նպատակ դրված ժողովրդավարական, իրավական ու սոցիալական պետության կառուցմանը:

ԼՂՀ-ում սահմանադրական արդարադատության չկայացած լինելը կապում ենք ոչ միայն վերը թվարկված խնդիրների, այլև ԼՂՀ Սահմանադրության 114 հոդվածի 1-ին մասում ամրագրված մի քանի ոչ կիրառական լիազորությունների ընտրության հետ: Հարցն այն է, որ ԼՂՀ Սահմանադրությամբ դատական սահմանադրական վերահսկողության օբյեկտների շրջանակը բավականին լայն է, և այս առումով սահմանադրական օրենսդիրը մեկտեղել է զարգացող և զարգացած շատ երկրների փորձն ու ամրագրել օբյեկտների առավել ամբողջական շարք:

Սակայն ԼՂՀ Սահմանադրությունը, լինելով նոր երևույթ և հանդիսանալով նոր տիպի սահմանադրական մշակույթի ձևավորման հիմք, երկրում սահմանադրականության հաստատման

նպատակով դատական սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմնին պետք է վերապահեր այնպիսի լիազորություններ, որոնց անհրաժեշտությունը պետությունն ու քաղաքացիներն ավելի շատ են զգում: Առաջին հայացքից ժողովրդավարական պետություններին ներհատուկ, իսկ ԼՂՀ-ի պարագայում ոչ կիրառական լիազորությունները²⁴⁴ ոչ այնքան պահանջված են մեր հասարակության համար, որքան, օրինակ, ԼՂՀ Սահմանադրության պաշտոնական մեկնաբանություն տալը, որի ամրագրվածությունը կխթաներ երկրում սահմանադրական իրավագիտակցության²⁴⁵ ու իրավական համակարգի ընկալունակության աստիճանի բարձրացմանը:

Այս տեսանկյունից հիշատակման է արժանի պրոֆեսոր Գ.Հարությունյանի այն տեսակետը, ըստ որի՝ «աշխարհում գործող բոլոր սահմանադրական դատարաններից առավել արդյունավետ սահմանադրական վերահսկողություն են իրականացնում այն ինստիտուտները, որոնք լայն իրավասություններ ունեն

²⁴⁴ Դրանցից կարելի է թվարկել հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերի լուծումը, Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտներն անհաղթահարելի կամ վերացած ճանաչելը, կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին օրենքով նախատեսված դեպքերում որոշում կայացնելը և այլն: Իհարկե, մենք ընդունում ենք, որ նման լիազորությունները ներհատուկ են ժողովրդավարական ու իրավական պետություններին, բայց հաշվի առնելով ԼՂՀ-ում ընտրական ու քաղաքական գործընթացների կազմակերպումը (նաև ձևավորված մշակույթն ու ավանդույթները), որոնք անցնում են առանց որևէ ցնցումների և արժանանում միջազգային դիտորդների բարձր գնահատականներին, պետք է նախապատվությունը տրվեր այն լիազորություններին, որոնք բացի գեղեցիկ ձևակերպված լինելուց, ԼՂՀ-ում կունենան նաև կիրառական նշանակություն:

²⁴⁵ Սահմանադրական իրավագիտակցության հիմքում ընկած է երկրի Սահմանադրությունը: Ի.Կրավեցի բնորոշմամբ՝ «սահմանադրական իրավագիտակցությունը համարվում է իրավագիտակցության հատուկ տեսակ, որում արտացոլվում են առանձին վերցրած անձի, սոցիալական խմբի, ամբողջությամբ հասարակության պատկերացումներն ու զգացմունքները Սահմանադրության, իրավական կարգավորման մեջ նրա դերի, մարդու իրավունքների, կառավարման արդար և ժողովրդավարական եղանակի մասին» (այս մասին տե՛ս Кравец И., Формирование российского конституционализма (проблемы теории и практики), М., 2002, էջ 328):

Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման ճանապարհով երաշխավորելու սահմանադրականության կայունությունը»²⁴⁶: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԼՂՀ-ում դատական սահմանադրական վերահսկողությունն իր մեջ պարունակում է ամերիկյան և առավել շատ եվրոպական մոդելի տարրեր, իսկ վերջինիս առանձնահատկություններից մեկը Սահմանադրության մեկնաբանումն է, սահմանադրական օրենսդիրը ԼՂՀ Գերագույն դատարանի սահմանադրական պալատին պետք է վերապահեր նման լիազորություն ևս, և առավել քան համոզված ենք, որ նման հարցերով դիմումների քանակը համեմատաբար ավելի շատ կլիներ²⁴⁷:

Հետաքրքրական է, որ ՀՀ սահմանադրական դատարանը Սահմանադրությամբ և օրենսդրությամբ բառացիորեն օժտված չէ Սահմանադրությունը մեկնաբանելու լիազորությամբ, սակայն մասնագետների կարծիքների²⁴⁸ և դատական պրակտիկայի

²⁴⁶ Հարությունյան Գ., Սահմանադրական նորմերի մեկնաբանման հայեցակարգային մոտեցումները Հայաստանի Հանրապետության սահմանադրական արդարադատության պրակտիկայում [էլեկտրոնային տարբերակ]. Մուտքի ռեժիմ – http://concourt.am/armenian/structure/president/articles/algiers2008_am.pdf - 09.11.2014.

²⁴⁷ Նման համոզման համար հիմք է հանդիսանում ԼՂՀ-ում ձևավորված ու գործող այն միտումը, ըստ որի՝ «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 88 հոդվածի 2-րդ մասով նախատեսված սուբյեկտները (մասնավորապես ԼՂՀ արդարադատության, ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի, ԼՂՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունները, ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայությունը, ԼՂՀ քաղաքացիական ծառայությունը և այլն) հաճախ ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա պարզաբանումներ են տալիս իրավական ակտի դրույթների վերաբերյալ, ինչը դիմողների իրավագիտակցության բարձրացման ևս մեկ լրացուցիչ խթան է: Պաշտոնական պարզաբանումները տե՛ս ԼՂՀ պաշտոնական տեղեկագրի և ԼՂՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրի առ 01.05.2015թ. համարներում:

²⁴⁸ Հարությունյան Գ., «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ»-ի 93-րդ հոդվածի մեկնաբանությունը: Ընդհ. խմբ. Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի: «Իրավունք», 2010, էջ 914-925: Հարությունյան Գ., Մանասյան Ա., Սահմանադրական վերահսկողություն: Ուս. ձեռնարկ բուհերի համար (լրամշ. իրատ.) խմբ.՝ Վ.Հովհաննիսյան. Երևան, Իրավունք, 2015, 240 էջ: Մանասյան Ա., Սահմանադրական դատարանի որոշումների տեղը ՀՀ իրավական

վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ Սահմանադրական դատարանն իր որոշումներում հաճախ մեկնաբանում է Սահմանադրության և այլ իրավական ակտերի դրույթները: Համեմատության համար նշենք, որ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 125 հոդվածի 5-րդ մասում ամրագրված է, որ «Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանը Ռուսաստանի Դաշնության Նախագահի, Դաշնության խորհրդի, Պետական դումայի, Ռուսաստանի Դաշնության կառավարության, Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների օրենսդիր իշխանության մարմինների հարցմամբ տալիս է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության մեկնաբանություն»²⁴⁹:

Որպես պարագրաֆի ամփոփում կարելի է նշել, որ ԼՂՀ-ում սահմանադրական արդարադատության սահմանադրական և օրենսդրական կիսալուծումները հեռանկարում պետք է վերափոխվեն այն գաղափարի կամ միտումի, որը ներհատուկ է տարածաշրջանային, զարգացած ու զարգացող և նույնիսկ հետխորհրդային տարածաշրջանի չճանաչված պետություններին, այսինքն հիմնավոր քայլեր կատարվեն առանձին կազմով գործող սահմանադրական ատյան կամ դատարան ստեղծելու ուղղությամբ, որի անհրաժեշտությունը պայմանավորված է, ինչպես բանաձևում է Գ.Հարությունյանը՝ «հասարակության սահմանադրականացման, մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի ապահովման, երկրում սահմանադրական ախտաբանություն անցկացնելու, վերափոխման մի շարք հիմնախնդիրներ լուծելու, նոր հազարամյակի սահմանադրական մշակույթ ձևավորելու հրամայականով»²⁵⁰: Այս տեսանկյունից ստեղծվելիք առանձին կազմով գործող սահմանադրական ատյանը կամ դատարանը կարող է նպաստել՝

համակարգում և դրանց դերը Սահմանադրության կայունության ապահովման գործում, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 117-144:

²⁴⁹ Конституция Российской Федерации, М., Проспект, 2010, էջ 28:

²⁵⁰ Арутюнян Г., Конституционализм: уроки, вызовы, гарантии: сб. избр. публ. и выступлений на междунар. форумах, посвящ. дан. проблематике. Киев., Логос, 2011, էջ 159:

- ինքնուրույն գործող մարմնի կողմից արհեստավարժ սահմանադրական արդարադատության իրականացմանը,
- սահմանադրական արժեքների բացահայտմանը, մեկնաբանմանը, իմաստավորմանը և հասարակության յուրաքանչյուր անդամի կենսակերպի մաս դարձնելուն,
- այլ երկրների սահմանադրական դատարանների հետ համագործակցության շնորհիվ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության ստեղծման օրինականության, ինչպես նաև պետականության և հատկապես արդարադատության ոլորտներում ձեռք բերված նվաճումները միջազգային տարբեր գիտական միջոցառումներում ներկայացնելուն և ինչ-որ չափով Արցախի միջազգային ճանաչմանը,
- սահմանադրական արդարադատության և սահմանադրական իրավունքի հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների համար գիտական հետազոտություն իրականացնելու համար անհրաժեշտ միջավայրի ստեղծմանը,
- նոր տիպի սահմանադրական մշակույթի ձևավորմանն ու սահմանադրական իրավագիտակցության բարձրացմանը:

Այս ճանապարհով ԼՂՀ-ում սահմանադրական արդարադատություն իրականացվելու դեպքում անպայմանորեն պետք է հաշվի առնվեն նաև տվյալ ատյանի դատավորին ներկայացվող պահանջները: Խնդիրը կայանում է նրանում, որ ԼՂՀ դատական օրենսգրքի 100-րդ հոդվածում տեղ գտած Գերագույն դատարանի դատավորին ներկայացվող պահանջները²⁵¹ չեն կարող

²⁵¹ ԼՂՀ դատական օրենսգրքով Գերագույն դատարանի դատավորին ներկայացվում են հետևյալ պահանջները՝ 1) Գերագույն դատարանի դատավոր կարող է լինել 35 տարին լրացած, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող, այլ պետության քաղաքացիություն չունեցող, բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող, հայերենին տիրապետող, սույն օրենսգրքի 89-րդ հոդվածի առաջին մասի պահանջներին համապատասխանող այն քաղաքացին, որը իրավունքի ասպարեզում ունի առնվազն տասը տարվա աշխատանքային ստաժ

համապատասխանել այն չափանիշներին, որոնք առկա են, օրինակ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ որի՝ «Սահմանադրական դատարանի անդամ կարող է լինել 35 տարին լրացած, Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող այն քաղաքացին, որը չունի այլ պետության քաղաքացիություն, ունի բարձրագույն իրավաբանական կրթություն կամ սահմանադրական իրավունքի ոլորտում գիտական աստիճան, ինչպես նաև իրավունքի ասպարեզում առնվազն տասը տարվա աշխատանքային ստաժ և տիրապետում է հայերենին»: Համեմատության համար նշենք, որ «Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածը²⁵² նույնպես սահմանում է նմանատիպ պահանջներ: Նման պահանջներ սահմանվելու դեպքում հնարավոր կլինի բարձր որակավորում ունեցող ու արհեստավարժ մասնագետների միջոցով ԼՂՀ-ում իրականացնել նոր որակի սահմանադրական արդարադատություն:

կամ առնվազն հինգ տարի աշխատում է վերաքննիչ դատարանի դատավորի պաշտոնում և չունի կարգապահական տույժ՝ նկատողության կամ խիստ նկատողության ձևով, կամ վերջին 12 տարվա ընթացքում առնվազն ութ տարի աշխատել է որպես դատավոր, 2) Գերագույն դատարանի դատավոր նշանակելիս հաշվի են առնվում նաև Գերագույն դատարանի դատավորի թեկնածուի բարոյական հատկանիշները:

²⁵² Հիշյալ հոդվածի համաձայն՝ «Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի դատավոր կարող է նշանակվել նշանակման օրն առնվազն 40 տարին լրացած՝ Ռուսաստանի Դաշնության անբասիր հեղինակությամբ այն քաղաքացին, որ ունի բարձրագույն իրավաբանական կրթություն և իրավաբանական մասնագիտությամբ առնվազն 15 տարվա աշխատանքային ստաժ և օժտված է իրավունքի ոլորտում ճանաչված բարձր որակավորմամբ»: Федеральный конституционный закон от 21.07.1994 N 1-ФКЗ «О Конституционном Суде Российской Федерации» (с изм. и доп.) // Собрание законодательства РФ, 25.07.1994, N 13.:

ԱՎԵՏԻՔ ՀԱՄԼԵՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ (ԱՐՑԱՆԻ) ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՄՓՈՓՈՒՄ

Մենագրությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ընդգրկված ութ պարագրաֆներից, հայերեն և ռուսերեն ամփոփումներից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Մենագրության **առաջին գլուխը**, որը վերտառված է **«Սահմանադրական արժեքանության դերն ու նշանակությունը սահմանադրականության զարգացման գործում»**, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «*«Սահմանադրական արժեքանություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը»*» վերտառությամբ, ուսումնասիրվել է «արժեք» հասկացության վերաբերյալ առկա բնորոշումները, որոնց հիման վրա Հեղինակը եզրահանգել է, որ արժեքները հասարակության մեջ գոյություն ունեցող այն նշանակալի երևույթներն են, որոնք մարդու համար ունեն անփոխարինելի ու հիմնարար նշանակություն և կենսունակություն են ստանում իրավական համակարգում ամրագրվելու և մարդու կողմից համարժեք վերաբերմունք դրսևորվելու դեպքում: Դրանից գատ, Հեղինակն առաջարկում է որոշակի հատկանիշներ, որոնց միջոցով հնարավոր է արժեքը տարբերել ոչ արժեքից:

Իրավական արժեքները դասակարգելով բարձրագույնի, հիմնարարի (կամ համընդհանուրի), հատուկի (կամ ճյուղայինի), օժանդակողի (կամ նպաստողի) և բերելով դրանց

օրինակները՝ հեղինակը միաժամանակ քննադատության է ենթարկում պրոֆեսորներ Վ.Ժուկովի և Օ.Մարտիշինի այն տեսակետը, համաձայն որի՝ «պետությունը և իրավունքը հանդես են գալիս որպես բազային կամ առավել կարևոր ընդհանուր արժեքներ», որից հետո եզրակացնում է, որ առավել կարևորը արժեքներն, առաջին հերթին, մարդն է, նրա իրավունքներն ու ազատությունները, որոնք ճանաչվում են որպես բարձրագույն արժեքներ:

Հեղինակն առաջարկում է սահմանադրական արժեքանության սահմանումը, ըստ որի՝ *սահմանադրական արժեքանությունը գիտաճյուղ է, որը կոչված է բացահայտելու Սահմանադրության (կամ սահմանադրական օրենքների) մեջ բովանդակվող արժեքները և սահմանելու օրենսդրության մեջ ամրագրման ճանապարհով դրանք իրավակիրառական պրակտիկայում իրացնելու, մարդկանց կենսակերպի անքակտելի մասը դարձնելու կառուցակարգերը, ինչպես նաև այդ արժեքների իրացման միջոցով երկրում սահմանադրականություն հաստատելու ուղիները:*

Ընդ որում, սահմանադրական արժեքանության գիտաճյուղի գլխավոր առաքելություններից մեկը երկրում սահմանադրականության հաստատումն ու դրա հետագա զարգացումն է:

Ինչ վերաբերում է սահմանադրական արժեքանության օբյեկտին, ապա այն սահմանադրության մեջ ամրագրված սկզբունքներն ու արժեքներն են: Որպես սահմանադրական արժեքանության սուբյեկտ հանդես է գալիս պետությունը՝ ի դեմս իշխանության տարբեր մարմինների, ինչպես նաև քաղաքացիները:

Սահմանադրական արժեքանության մասին կարծիքների հնարավոր երկակիությունից խուսափելու նպատակով հստակեցվել է սահմանադրական արժեքանության գիտաճյուղային պատկանելության մասին հարցը: Այս առումով Հեղինակը գտնում է, որ վերջինս խառն իրավաբանական գիտաճյուղ է, քանի որ արժեքների ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունը՝ արժեքանությունը, որը հանդիսանում է փիլիսոփայության բաժիններից մեկը, սահմանադրական իրավունքի բնագավառում

զբաղվում է զուտ սահմանադրական արժեքների բովանդակության բացահայտմամբ, իրացման հնարավորությունների հստակեցմամբ ու հասարակական հարաբերությունների վրա ունեցած ազդեցության գնահատմամբ:

Ցանկացած գիտություն արժեվորվում է այն դեպքում, երբ հաջողությամբ լուծում է իր առջև դրված խնդիրները կամ դրանց զգալի մասը: Հենց այս համատեքստում պետք է տեսնել սահմանադրական արժեքանության դերը երկրում սահմանադրականության հաստատման գործում: Այս տեսանկյունից տեղին է հիշատակել Մ.Պրեսնյակովի այն համոզմունքը, որ արժեքն ամենից առաջ իդեալ է, որը ցույց է տալիս ոչ թե «ինչպես անել», այլ «ինչին ձգտել»: Սահմանադրության մեջ ամրագրված նորմ-սկզբունքներն ու նորմ-նպատակները կազմում են այն հենասյուններն ու կողմնորոշիչները, որոնք իրենցից արժեք են ներկայացնում և որոնց վրա հիմնվելով պետությունը պետք է որոշակիորեն ուրվագծի իր հետագա զարգացման հայեցակարգը: Հենց այս համատեքստում է կարևորվում սահմանադրական արժեքանության դերակատարությունը: Իսկ վերջինս իր վերջնական նպատակին կարող է հասնել միայն այն ժամանակ, երբ սահմանադրական արժեքները գիտակցաբար ընկալվում և հետևողականորեն իրացվում են և՛ պետական իշխանության մարմինների ներկայացուցիչների, և՛ քաղաքացիների կողմից:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «ԼՂՀ Սահմանադրության արժեքանական ընկալումները» վերտառությամբ, Հեղինակը նշում է, որ ԼՂՀ Սահմանադրության ընկալումը և կիրառումը ոչ միայն պետության, այլև ամբողջությամբ վերցրած քաղաքացիների գործունեության առանցքն ու նպատակը պետք է հանդիսանա, ովքեր իրենց առօրյա կենսագործունեության ընթացքում իրավական բնույթի հարցերի առնչությամբ պետք է առաջնորդվեն հենց Հիմնական օրենքի նորմերով: Տվյալ պարագայում ընկալում ասելով պետք է հասկանալ Սահմանադրության մեջ բովանդակվող բոլոր դրույթների յուրացումը՝ անկախ դրա մակարդակից:

Այնուհետև Հեղինակն արձանագրում է, որ ԼՂՀ Սահմանադրության արժեքանական ընկալման հիմքերը դրվել են դեռևս Հիմնական օրենքի ընդունման նախօրեին, երբ Հեղինակի կողմից Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին առաջարկություն է ներկայացվել նախքան ԼՂՀ Սահմանադրության ընդունումը բացատրական, քարոզչական աշխատանքներ տանել Հանրապետության առավել խիտ բնակեցված բնակավայրերում, որի նպատակը կհանդիսանա ազգաբնակչության հետ անմիջական հանդիպումների, շփումների միջոցով երկրի Հիմնական օրենքի առավել կարևոր դրույթներին մեկնաբանություն տալն ու նրանց առաջադրած հարցերին պատասխանելը: Նման ծրագրի իրականացման հիմնական իմաստը կայանում էր նրանում, որպեսզի Հիմնական օրենքն գիտակցված և իմաստավորված ընդունվի քաղաքացիների կողմից:

Քանի որ Սահմանադրության գաղափարի և նրա արժեհամակարգի յուրացումը ժամանակատար գործընթաց լինելով հանդերձ մեծ ջանքեր է պահանջում ինչպես առանձին վերցրած անհատից, այնպես էլ հասարակությունից ու պետությունից, Արցախի Հանրապետության Սահմանադրության ընկալունակության աստիճանը բարձրացնելու նպատակով Հեղինակն առաջարկում է, որպեսզի ԼՂՀ հանրակրթական բոլոր դպրոցներում «Հասարակագիտություն» առարկայի կամ լրացուցիչ դասաժամի շրջանակներում ուսումնասիրվի ԼՂՀ Սահմանադրության վերաբերյալ նախնական նյութեր, իսկ ավելի բարձր դասարաններում՝ արդեն հնարավորինս ավելի խորությամբ, քանի որ նշված դասագրքերում անհրաժեշտ տեղեկատվություն չի պարունակվում ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունների վերաբերյալ:

Քանի որ յուրաքանչյուր երկիր որդեգրում է սահմանադրական արժեքանության իր դոկտրինան, ուստի ԼՂՀ Սահմանադրության արժեհամակարգի բացահայտումից առաջ պետք է նկատի առնել, որ այն արժեքների մեծ մասը, որոնք ամրագրված

են ԼՂՀ Սահմանադրության մեջ, երկրի ու ժողովրդի կյանքում արմատավորվել են դեռևս ԼՂՀ կազմավորման տարիներին, մասնավորապես՝ 1991 թվականի սեպտեմբերի 2-ին ընդունված «ԼՂՀ հռչակման մասին» Հռչակագրում, 1992թ. հունվարի 6-ին ընդունված «ԼՂՀ պետական անկախության մասին» Հռչակագրում, դրանից հետո ընդունված սահմանադրական օրենքներում և մոտ 15 տարվա «փորձաշրջան» անցնելուց հետո «հանգրվան» են գտել ԼՂՀ Սահմանադրության մեջ, ինչը վկայում է ոչ միայն դրանց անհրաժեշտության ու կենսունակության, այլև այն մասին, որ այդ արժեքները փոխառված չեն միջազգային հիմնարար փաստաթղթերից, այլ երկրների սահմանադրություններից, և տարիների ընթացքում դարձել են մարդկանց կենսակերպի անբաժանելի մասն ու իրավակարգավորիչ տարրը: Ուշագրավ է, որ ներկայիս Արցախի Հանրապետությունը կազմավորվել է պատմական Արցախ նահանգի մի մասի վրա, որտեղ դեռևս 5-րդ դարում Վաչագան Բարեպաշտ արքայի կողմից ընդունվել էր Կանոնական Սահմանադրությունը, որում հայ իրականության մեջ առաջին անգամ օգտագործվել է «**սահմանադրություն**» հասկացությունը, որն էլ նպաստել է թե՛ Արցախում, և թե՛ ընդհանրապես Հայաստանում սահմանադրական մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը:

Խոսելով արժեքների ձևավորման ու արմատավորման մասին՝ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հնարավոր չէ համեմատել ներկա պատկերացումների և իրավամտածողության հիման վրա ձևավորված իրավական արժեքներն ավելի վաղ ժամանակաշրջանում կիրառվող արժեքների հետ, առավել ևս, որ անցել են տարիներ ու հասարակարգեր: Սակայն արդի իրավական արժեքները տվյալ տարածքում իրացվելու աստիճանը կախված է նաև դրա նախադրյալների ու նախկինում ունեցած կենսունակության միջև եղած ներդաշնակությունից: Տվյալ պարագայում խոսքն Ադրբեջանական ԽՍՀ կազմում ԼՂԻՄ-ի գոյության, կարգավիճակի և հասարակության ունեցած դերակատարության մասին է, որն անհամեմատելի է ներկայիս Լեռնային

Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության սահմանադրաիրավական զարգացումների ու որդեգրած արժեհամակարգի հետ:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «ԼՂՀ Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունների հիմնական բնութագրիչները» վերտառությամբ, Հեղինակը կատարել է ԼՂՀ Սահմանադրության բովանդակային և կառուցվածքային արժեքանական վերլուծություն՝ վերհանելով ԼՂՀ Սահմանադրության առանձնահատկությունները, դիտարկելով սահմանադրական արժեքների ձևակերպումները և՛ տեքստային, և՛ համատեքստային առումներով, նաև արտասահմանյան առանձին երկրների (այդ թվում՝ չճանաչված պետությունների) համեմատական վերլուծությամբ:

ԼՂՀ Սահմանադրության արժեքանական առանձնահատկություններից առաջինն այն է, որ Սահմանադրության հիմքում ընկած արժեքները ոչ թե ներմուծված են, այլ ամրագրվել են պետության կազմավորման առաջին իսկ տարիներին ընդունված Հոչակագրերում և օրենքներում:

Չճանաչված պետությունների սահմանադրական իրավակարգավորումների համեմատությունը թույլ է տվել վեր հանել ԼՂՀ Սահմանադրության արժեքանական մի շարք առանձնահատկություններ, մասնավորապես՝

1. չնայած չճանաչվածությանը, Արցախի Հանրապետությունն իր որդեգրած արժեհամակարգով չի զիջում ոչ միայն չճանաչված, այլև միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ հանդիսացող պետություններին,

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը Սահմանադրության մակարդակով պատրաստակամություն է հայտնել և կամավոր կերպով պարտավորություն ստանձնել հետևելու միջազգային պայմանագրերին ու միջազգային իրավունքի նորմերին, չնայած այն բանին, որ դեռևս միջազգայնորեն ճանաչված չէ: Հատկանշական է, որ միջազգային փաստաթղթերի մի շարք կարևորագույն դրույթներ ամրագրված են ԼՂՀ օրենսդրության մեջ, իսկ վերջին շրջանում Արցախի Հանրապետությունը միացել է

մի շարք միջազգային փաստաթղթերի և կամավոր ճանաչել դրանց իրավազորությունը ԼՂՀ տարածքում,

3. հետխորհրդային տարածաշրջանի չճանաչված երկրներից Արցախի Հանրապետությունը միակն է, որն իրեն հոչակել է նաև որպես սոցիալական պետություն, երաշխավորվում է կյանքի իրավունքը և միանշանակորեն վերացված է մահապատիժը,

4. Արցախի Հանրապետությունը մյուս չճանաչված երկրներից տարբերվում է նաև նրանով, որ Սահմանադրության մեջ մարդու հիմնական իրավունքները և ազատությունները հոչակված են որպես բարձրագույն արժեք (համանման դրույթ կարելի է հանդիպել նաև Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության սահմանադրության մեջ),

5. չնայած այն հանգամանքին, որ քննարկվող չճանաչված երկրներից առաջինն անկախություն հոչակել ու սահմանադրություն է ընդունել Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետությունը, այնուհանդերձ, արժեքանական ծանրաբեռնվածությամբ աչքի է ընկնում Արցախի Հանրապետության Սահմանադրությունը, իսկ վերջինիս հիման վրա երկրում իրականացվող ժողովրդավարական գործընթացները, հատկապես տարբեր մակարդակների ընտրություններն ու հանրաքվեներն արժանանում են միջազգային դիտորդների բարձր գնահատականին և համարվում օրինակելի, այսինքն՝ սահմանադրական արժեքները (տվյալ պարագայում՝ ընտրական գործընթացներին առնչվող) ԼՂՀ-ում ոչ թե հոչակագրային բնույթ են կրում, այլ ապրող իրողություն են:

Հեղինակը չճանաչված երկրների անկախության հոչակման ու սահմանադրությունների ընդունման փաստերի միջև տեսնում է այնպիսի կապ, որն առավել շատ վերաբերում է Հիմնական օրենքի արժեքանական կողմին. հիշյալ երկրների մեծամասնությունը սահմանադրությունն ընդունել է պետության հոչակման առաջին իսկ տարիներին ու ամրագրել այնպիսի սահմանադրական արժեքներ, որոնցով նախկինում չի ապրել կամ ընդհանրապես որևէ իրավական փաստաթղթում ամրագրված չի եղել, իսկ Արցախի Հանրապետության պարագայում հարցին

մոտեցել են այլ տեսանկյունից. սահմանադրական արժեքները սկզբից ամրագրվել են հոչակագրերում, օրենքներում, որոնք տարիների ընթացքում ապացուցել են իրենց կենսունակությունը, որից հետո նոր տեղ են գտել ԼՂՀ Սահմանադրության մեջ:

Հղում կատարելով տարբեր միջազգային պարբերականների, հեռուստալիքների և փորձագետների հայտնած կարծիքների վրա և ներկայացնելով Amnesty International և Freedom House հեղինակավոր կազմակերպությունների գնահատականներն Ադրբեյջանի վերաբերյալ՝ Հեղինակը հիմնավորում է, որ այդ երկրում ոչ միայն ժողովրդավարությունը, այլև քաղաքակիրթ աշխարհին ներհատուկ շատ արժեքներ կենսունակ չեն. ընդամին, դրանց ոտնահարումը կրում է ամենօրյա բնույթ:

Այս և մի շարք այլ փաստարկներով հիմնավորվում է, որ Արցախի Հանրապետության իրավական համակարգը շահեկանորեն տարբերվում է հիշյալ պետություններում ձևավորված իրավական համակարգերից: Ինչպես չճանաչված պետությունների, որոնց մի մասում անգամ դեռևս չի ամրագրվել կյանքի իրավունքը, այնպես էլ ադրբեյջանական իրավական համակարգերն աղերսներ չունեն հիշյալ իրավունքի չափանիշների հետ, և տեսականորեն ղարաբաղյան խնդրի՝ իրենց տարբերակով լուծման պարագայում, անխուսափելի են դառնում իրավունքների ու ազատությունների ամրագրման ու դրանց պաշտպանության և երաշխավորման էական սահմանափակումներն ու հետընթաց զարգացումները:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ Հեղինակը միանշանակորեն պնդում է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ոչ միայն չի կարող գոյություն ունենալ Ադրբեյջանի կազմում, այլ դավանվող արժեհամակարգերն իրար հակապատկեր են՝ Արցախի Հանրապետության՝ ժողովրդավարական ու իրավական պետություն կառուցելու ընդգծված առավելությամբ:

Մենագրության մեջ ներկայացված է Հավելված 1-ը, որով ԼՂՀ Սահմանադրությունը մի կողմից համեմատվում է հետխորհրդային տարածաշրջանի չճանաչված, իսկ մյուս կողմից

ԼՂՀ-ին սահմանակից պետությունների սահմանադրությունների հետ: Համեմատության չափանիշներն ընտրելիս (որոնք սպառիչ չեն, այլ ընդհանուրի մի մասն են կազմում) հիմք են ընդունվել Սահմանադրության այն հատկանիշները, որոնք իրենցից արժեքանական հետաքրքրություն են ներկայացնում:

Մենագրության **երկրորդ գլուխը**, որը վերտառված է «**Սահմանադրական հիմնարար արժեքների ու սկզբունքների իրացումը ԼՂՀ սահմանադրական լուծումներում**», բաղկացած է երեք պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Իրավունքի գերակայությունը որպես սահմանադրական արժեք» վերտառությամբ, Հեղինակը կարծում է, որ իրավունքի գերակայության սկզբունքը սահմանադրական ու օրենսդրական մակարդակների հիմնախնդիրներ լուծելու միջոց կարող է ծառայել այն դեպքում, երբ ամրագրված լինի Սահմանադրության մեջ կամ ենթադրելի լինի դրա բովանդակությունը և ստեղծված լինեն անհրաժեշտ ու բավարար կառուցակարգեր դրա կենսագործումն ապահովելու համար: Այնուհետև, վերլուծելով սահմանադրական ու օրենսդրական հարթություններում իրավունքի գերակայության սկզբունքի ամրագրվածության հարցը, Հեղինակը գալիս է այն հետևության, որ եթե ԼՂՀ Սահմանադրության մեջ իրավունքի գերակայության սկզբունքի ամրագրման առումով գոնե կիսալուծում առկա է, այսինքն այն ենթադրելի է որոշ հոդվածների վերլուծությունից, ապա նույնը չենք կարող ասել օրենսդրության առումով, որտեղ այդ շղթայի շարունակականությունը ևս պետք է ապահովվեր որպես սահմանադրության պահանջ:

Հեղինակի կարծիքով՝ ԼՂՀ-ի պարագայում անհրաժեշտ է ոչ թե պատճենել ու տեղայնացնել հիշյալ սահմանադրական արժեքը, այլ պետության սահմանադրական մշակույթի վրա հիմնվելով՝ մշակել Արցախի Հանրապետության իրավական կյանքում իրավունքի գերակայության հայեցակարգը՝ հաշվի առնելով դրա վերաբերյալ սահմանադրագիտության արդի նվաճումները, որոնք կարող են նպաստել այդ արժեքի լիարժեք իրացմանն ու

դրա հիման վրա հասարակական կյանքն իրավունքի գերակայության վրա կառուցմանը:

Իրավունքի գերակայության վերաբերյալ միանշանակ մոտեցում և պատկերացում ձևավորելու նպատակով և հաշվի առնելով այն, որ վերջինս ամրագրված չէ ԼՂՀ Հիմնական օրենքում՝ առաջարկվում է ԼՂՀ Սահմանադրության մեջ իրավունքի գերակայությունն ամրագրել բառացիորեն, ինչպես դա արտացոլված է բազմաթիվ երկրների սահմանադրություններում, սահմանել դրա իրացման կառուցակարգերը, օրենսդրության մեջ տալ դրա բնորոշումը և սահմանել որպես սկզբունք, իսկ գործադիր իշխանության կողմից մշակել և ընդունել դրա իրացման գործնական հայեցակարգ:

ԼՂՀ Սահմանադրության մեջ իրավունքի գերակայության սկզբունքը բառացիորեն ամրագրվելուց բացի անհրաժեշտ է նպատակաուղղված աշխատանքներ տանել մարդու և քաղաքացու կյանքում դրա կարևորության և հիմնարար նշանակության, դրանով ապրելու և ղեկավարվելու գաղափարի արմատավորման, ինչպես նաև քաղաքացիների մոտ իրավագիտակցության բարձր ու պահանջվող մակարդակ ապահովելու, քաղաքացիների կողմից իրավունքի գերակայության ընկալման ու իրավական և քաղաքական մշակույթի ելակետային տարր դարձնելու ուղղությամբ՝ դրան զուգահեռ վստահություն ու հարգանք դրսևորելով իրավակիրառ մարմինների նկատմամբ:

Սահմանադրական արժեքանության դիրքերից ամփոփելով իրավունքի գերակայության վերաբերյալ դատողությունները՝ Հեղինակը եզրահանգում է, որ այն որպես սահմանադրական արժեք իրենից ներկայացնում է Աստծո կողմից տրված բնական իրավունքի առաջնայնություն պետության սահմաններում, որը ենթադրում է նաև օրենքների համապատասխանություն վերջինիս բովանդակությանը, իրավունքով անհատի և հանրային իշխանության մարմինների հայեցողության սահմանների սահմանափակվածություն, որն էլ նպաստում է «անհատ-հասարակություն-պետություն» շղթայի ամեն մի օղակի հավասարակշռության ապահովմանն ու համաչափ զարգացմանը:

Իրավաստեղծ ու իրավակիրառ գործունեության ընթացքում հաճախ անհրաժեշտություն է առաջանում հստակ տարանջատել իրավունքն օրենքից: Հարցն ավելի է սրանում, երբ փորձ է կատարվում օրենքի գերակայությունը տարանջատել իրավունքի գերակայությունից: Իրավագետները նշում են, որ իրավունքը չի կարելի նույնացնել օրենքի հետ, այդ երկու կատեգորիաներն իրար հետ հարաբերակցվող ու իրարից տարբերվող երևույթներ են: Կիսելով նշված ու մի շարք այլ գիտնականների տեսակետները՝ Հեղինակի կողմից փորձ է արվել Հավելված 2-ում ներկայացնել այն հատկանիշներն ու առանձնահատկությունները, որոնք ունեն իրավունքի և օրենքի գերակայությունները, ինչպես նաև այն չափանիշները, որոնց հիմքով վերջիններս տարբերվում են իրարից: Այդպիսի չափանիշներ են ընտրվել իրավունքի/օրենքի աղբյուրը, ձևավորման հիմքում դրված կամքը, սահմանափակվելու հնարավորությունը, դրանց փոխկապվածությունը, իրավական տարրի գոյությունն իրավունքում/օրենքում, իրավունքի/օրենքի միջոցով արտահայտվող կամքը, ինչպես նաև այն սուբյեկտների շրջանակը, որոնց վրա տարածվում է իրավունքը/օրենքը:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «ժողովրդահիշխանությունը որպես ժամանակակից պետությունների կազմակերպման հիմնարար սկզբունք» վերտառությամբ, հիմնավորվում է, որ հիշյալ սկզբունքը պետության կազմավորման օրվանից ամրագրվել է հիմնարար փաստաթղթերում ու օրենքներում, որի արդյունքը մի շարք համապետական ու այլ մակարդակների հանրաքվեների և ընտրությունների անցկացումն է:

Այնուհետև Հեղինակն առաջարկում է ԼՂՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ ժողովրդի կողմից իր իշխանությունը հանրաքվեների եղանակով իրականացնելու պահանջի նկատմամբ հետևողականություն դրսևորելու և Սահմանադրության 133, 134 և 135 հոդվածներում արտացոլվելու նպատակով Արցախի Հանրապետության Սահմանադրության մեջ կատարել որոշակի փոփոխություններ, մասնավորապես՝

սահմանադրական, օրենսդրական ու պետության համար կարևոր նշանակություն ունեցող հարցերով հանրաքվեների սուբյեկտ ճանաչել ժողովրդին՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ընդհանուր թվի առնվազն 10 տոկոսի ստորագրությունների առկայության պահանջով, իսկ օրենսդրական հանրաքվեի սուբյեկտների շարքին դասել նաև Նախագահին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա օրենսդիր մարմնում օժտված է օրենսդրական նախաձեռնության իրավունքով:

Տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունք ունեցող անձանց շրջանակն ընդլայնելու անհրաժեշտությունից ելնելով՝ պետք է օրենսդրությամբ հասարակական միավորումներին նույնպես վերապահել նման իրավունք, ինչպես նաև ԼՂ-ում ներդնել քաղաքացիների ժողովի ինստիտուտ, որի շնորհիվ հնարավոր կլինի տեղական նշանակության հրատապ հարցերին սեղմ ժամկետներում տալ լուծում և ավելի ակտիվացնել համայնքի ղեկավարի ու ավագանու գործունեությունը:

ԼՂ Սահմանադրության վերլուծությունից հետևում է, որ ԼՂ քաղաքացիներն ունեն միայն հանրաքվեներին մասնակցելու և ընտրելու իրավունք, այնինչ այդ իրավունքների հետ անխզելիորեն կապված է նաև պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունքի ամրագրումը: Այս առումով առաջարկվում է ԼՂ Սահմանադրության 32 հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Իշխանությունների տարանջատումը ԼՂ սահմանադրական լուծումներում» վերտառությամբ, նշվում է, որ ԼՂ-ում իշխանությունների տարանջատման սկզբունքի գաղափարը և կիրառությունը սկիզբ է առնում դեռևս պետության կազմավորման առաջին իսկ տարիներից, որից հետո անդրադարձ է կատարվում իշխանությունների տարանջատման համակարգում ԼՂ Նախագահի տեղի ու դերի հարցին: Այնուհետև նշվում է, որ Սահմանադրության 61 հոդվածի 2-րդ մասով ամրագրված Նախագահի՝ Սահմանադրության պահպանմանը հետևելու և օրենսդիր, գործադիր ու դատական

իշխանությունների բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ԼՂ Նախագահի աշխատակազմում կամ Նախագահին առընթեր ստեղծել մասնագիտացված ստորաբաժանում, որի հիմնական գործունեությունը կհանդիսանա Նախագահի կողմից Սահմանադրության հետևման և իշխանության երեք թևերի բնականոն գործունեության ապահովման ուղղությամբ գիտականորեն հիմնավորված և արհեստավարժորեն իրականացվելիք գործողությունների հիմնավորվածությունը ԼՂ Նախագահին ներկայացնելն ու դրանց ընթացքին հետևելը: Նման ստորաբաժանման առկայությունը Նախագահին հնարավորություն կտա նաև Սահմանադրության պահպանման շրջանակներում երկրում իրականացնել սահմանադրականության մշտադիտարկում:

Հեղինակն անդրադառնում է նաև իշխանության ամեն մի թևի գործունեության հետ կապված հարցերին՝ այդ համատեքստում առաջարկելով փոփոխություն կատարել ԼՂ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին մասի 1.5 կետում, որով Սահմանադրությամբ Նախագահին լիազորություն կվերապահվի հաղթահարելու այն արգելքը, որն առաջանում է վարչապետի թեկնածությունն Ազգային ժողովի կողմից երկու անգամ մերժվելու դեպքում:

Այնուհետև Հեղինակը քննարկում է Ազգային ժողովի կողմից Կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշում ընդունելուց հետո վարչապետի կողմից Հանրապետության Նախագահին Կառավարության հրաժարականի մասին դիմումի ներկայացման գործընթացի թերի կանոնակարգվածության հարցը, ինչի առնչությամբ առաջարկվում է ԼՂ Սահմանադրության 89 հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ:

Քննարկելով ԼՂ օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև զսպումների և հակակշիռների կառուցակարգի արդյունավետության բարձրացման հարցը՝ Հեղինակն առաջարկում է, որպեսզի ԼՂ պետական բյուջեով նախատեսված ծախսերի իրականացման արդյունքում յուրաքանչյուր եռամսյակը մեկ

կառավարությունը հիմնավորված (փաստաթղթավորված) հաշվետվություն ներկայացնի Ազգային ժողով: Կառավարության կողմից տարվա ընթացքում 2 անգամ բյուջեի կատարողականը խախտումներով ներկայացնելը պետք է դառնա նրա հրաժարականի հիմք ու ամրագրվի Սահմանադրության և «Ազգային ժողովի կանոնակարգ» ԼՂՀ օրենքի մեջ:

Վերլուծության ենթարկելով ԼՂՀ-ում կառավարման համակարգերի մասին հարցը՝ Հեղինակը կարծում է, որ 1994 թվականից մինչև ԼՂՀ Սահմանադրության ընդունումը երկիրը որդեգրել էր կառավարման նախագահական մոդելը, որին հաջորդել է ներկայիս կառավարման կիսանախագահական ձևը, որը, սակայն, զերծ չէ թերություններից ու սահմանադրական կիսալուծումներից: Վերջինս դրսևորվում է նրանում, որ երաշխավորված չէ միասնական գործադիր իշխանություն և բացակայում է գործադիր իշխանության (Հանրապետության Նախագահ և կառավարություն) իրական քաղաքական պատասխանատվությունը: Դրանից զատ, Հանրապետության Նախագահի ձեռքում կենտրոնացված է քաղաքական մեծ իշխանություն, սակայն գործադիր իշխանության համար Հանրապետության Նախագահը որևէ քաղաքական պատասխանատվություն չի կրում:

Ուսումնասիրելով և վերլուծելով իշխանությունների տարանջատման սկզբունքի իրացումը ԼՂՀ սահմանադրական լուծումներում՝ Հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ գործադիր իշխանության դուալիզմի, ինչպես նաև իշխանության ճյուղերի միջև զսպումների ու հակակշիռների մեխանիզմի անհստակության պարագայում կառավարման կիսանախագահական մոդելն այդքան էլ արդարացված չէ: Հաշվի առնելով Արցախի Հանրապետությունում խորհրդարանական կառավարման մոդելի անկենսունակությունը և կիսանախագահական մոդելի հարուցած բազմաթիվ խնդիրները, ինչպես նաև նկատի ունենալով դարաբաղա-ադրբեջանական հակամարտության դեռևս չլուծված լինելու իրողությունը և այս համատեքստում ուժեղ ու կենտրոնաձիգ իշխանության առկայության հրամայականը՝ Հեղինակը

կարծում է, որ Արցախի Հանրապետությունում սահմանադրական բարեփոխումների դեպքում նախապատվությունը պետք է տրվի կառավարման նախագահական ձևին:

Մենագրության **Երրորդ գլուխը**, որը վերտառված է «**Սահմանադրականության հետագա զարգացման հիմնախնդիրները ԼՂՀ-ում**», բաղկացած է երկու պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «ԼՂՀ Սահմանադրության, առկա իրավական համակարգի և իրավակիրառական պրակտիկայի հակասությունների հաղթահարման ուղիները» վերտառությամբ, քննության առարկա է դարձել ԼՂՀ Գերագույն դատարանի սահմանադրական պալատի կողմից յոթ տարիների ընթացքում կայացված թվով 15 որոշումներում երկու սահմանադրական արժեքների՝ իրավունքի գերակայության և տեղական ինքնակառավարման իրացման հետ կապված հարցը, որից հետո Հեղինակը եզրահանգել է, որ ԼՂՀ-ում սահմանադրական արդարադատության պրակտիկան չունի հարուստ փորձ, դեռևս ձևավորման փուլում է և դժվար է ասել, թե որքանով են սահմանադրական արդարադատության տեսանկյունից կենսունակ սահմանադրական արժեքները: Դրանից բացի, եթե իրավակիրառական պրակտիկայում սահմանադրական արժեքները խորը վերլուծության առարկա չեն դարձել, այդ արժեքներից ոչ բոլորն են ընկած եղել որոշումների կայացման հիմքում, ապա չենք կարող ասել՝ Գերագույն դատարանը շիտակ ձևով է այն մեկնաբանել, թե՛ ոչ:

Քանի որ քննարկման առարկա դարձած սահմանադրական արժեքներն իրավակիրառական պրակտիկայում չեն մարմնավորվել, ուստի հակասությունների հաղթահարման գործում ունեցած դերակատարության մասին նույնպես խոսք լինել չի կարող: Սակայն պետք է նկատի առնել, որ սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնի ցանկացած որոշում իր դրական ազդեցությունը պետք է թողնի հասարակության զարգացման վրա: Այստեղից էլ կարելի է հետևություն անել, որ Գերագույն դատարանի սահմանադրական

պալատի ընդունած որոշման որակն ուղիղ համեմատական է պետության և հասարակության կյանքում արձանագրված տեղաշարժերին:

Այս ամենով հանդերձ Հեղինակն առաջարկում է, որպեսզի ԼՂՀ Գերագույն դատարանի սահմանադրական պալատն ամեն տարի ընդունի հաղորդում երկրում սահմանադրական արդարադատության վիճակի մասին և այն քննարկի ԼՂՀ Նախագահի և Ազգային ժողովի պատգամավորների հետ՝ որպես ԼՂՀ Գերագույն դատարանի կազմը ձևավորող մարմիններ:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Սահմանադրական արդարադատության համակարգի հեղուկ զարգացման հիմնախնդիրները» վերտառությամբ, հեղինակն անդրադառնում է ԼՂՀ-ում սահմանադրական արդարադատության ինստիտուտի ձևավորման ու կայացման նախադրյալներին, ինչպես նաև առկա հիմնախնդիրներին:

Վերլուծության ենթարկելով դատական սահմանադրական վերահսկողության մոդելի հարցը՝ Հեղինակը եզրահանգում է, որ ԼՂՀ-ում որդեգրվել է սահմանադրական վերահսկողության խառը (հիբրիդային) ձևը, որն իր մեջ պարունակում է եվրոպական ու ամերիկյան մոդելների տարրեր:

Այնուհետև Հեղինակը ԼՂՀ Սահմանադրության 6-րդ գլխի վերլուծության արդյունքում փաստում է, որ ԼՂՀ Գերագույն դատարանը նույն կազմով երկակի գործառույթ է իրականացնում. մի կողմից սահմանադրական արդարադատություն, իսկ մյուս կողմից վճռաբեկության կարգով վերանայում է ստորադաս ատյանների դատական ակտերը: Հետխորհրդային տարածաշրջանի երկրներից նման մոդել գործում է միայն Ղրղզստանի Հանրապետությունում, որի գործունեության արդյունավետությունը պայմանավորված է նրանով, որ Գերագույն դատարանի կազմում սահմանադրական պալատը գործում է առանձին կազմով:

Հաշվի առնելով երկրի առանձնահատկությունները՝ հեղինակն առաջարկում է Արցախի Հանրապետությունում ներդնել

Ավստրիայի սահմանադրական դատարանի մոդելը, որը ենթադրում է սահմանադրական արդարադատության գործընթացին պահեստային անդամների ներգրավում:

Անդրադառնալով սահմանադրական արդարադատության գործունակությանը խոչընդոտող հիմնահարցին՝ Հեղինակը նշում է, որ դրանց շարքին կարելի է դասել ինչպես դիմումատուների իրավագիտակցության ոչ բավարար մակարդակը, քաղաքացիների մի մասի պասիվ կենսադիրքը, այնպես էլ ԼՂՀ Սահմանադրության 114 հոդվածի 1-ին մասում ամրագրված մի քանի ոչ կիրառական լիազորությունների առկայությունը:

Ամփոփելով լիազորությունների հետ կապված հարցը՝ Հեղինակը գալիս է այն եզրակացության, որ ԼՂՀ-ի պարագայում ավելի կիրառական կլինեն, օրինակ, Գերագույն դատարանի սահմանադրական պալատին Սահմանադրությունը մեկնաբանելու իրավասությամբ օժտելը, որը կխթաներ երկրում սահմանադրական իրավագիտակցության ու իրավական համակարգի ընկալունակության աստիճանի բարձրացմանը:

АВЕТИК ГАМЛЕТОВИЧ АРУТЮНЯН

**АКСИОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ КОНСТИТУЦИИ
НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ (РЕСПУБЛИКИ
АРЦАХ) И ПРОБЛЕМЫ ДАЛЬНЕЙШЕГО РАЗВИТИЯ
КОНСТИТУЦИОНАЛИЗМА**

РЕЗЮМЕ

Монография состоит из введения, трёх глав, включающих в себя восемь параграфов, резюме на армянском и русском языках, списка использованной литературы и приложений.

Первая глава монографии, которая называется «**Роль и значение конституционной аксиологии в деле развития конституционализма**», состоит из трёх параграфов.

В первом параграфе первой главы под названием «*Конституционно-правовое содержание понятия «конституционная аксиология»*» были изучены существующие определения понятия «ценность», на основе которых Автор резюмировал, что ценности – это те существующие в обществе значимые явления, которые имеют для человека незаменимое и фундаментальное значение и обретают жизненность в случае закрепления в правовой системе и проявления со стороны человека соответствующего отношения к ним. Кроме того, Автор предлагает определённые признаки, посредством которых можно различать ценность от неценности.

Классифицируя правовые ценности на высшие, базовые (или всеобщие), специальные (или отраслевые), способствующие (или содействующие) и приводя их примеры, Автор одновременно подвергает критике мнение профессоров В.Жукова и О.Мартышина о том, что «государство и право выступают как базовые или наиболее важные общие ценности», после чего заключает, что наиболее важными ценностями являются

в первую очередь человек, его права и свободы, которые признаются как высшие ценности.

Автор предлагает определение конституционной аксиологии, согласно которому: *конституционная аксиология – научная дисциплина, которая призвана выявлять содержащиеся в Конституции (или в конституционных законах) ценности и устанавливать посредством закрепления в законодательстве механизмы по их реализации в правоприменительной практике, превращению их в неотъемлемую часть образа жизни людей, а также пути утверждения в стране конституционализма через реализацию этих ценностей.*

При этом одной из главных миссий конституционной аксиологии является утверждение в стране конституционализма и его дальнейшее развитие.

Что касается объекта конституционной аксиологии, то ими являются закреплённые в конституции принципы и ценности. В качестве субъекта конституционной аксиологии выступает государство в лице разных органов власти, равно как и граждан.

Во избежание возможной двусмысленности мнений о конституционной аксиологии был уточнён вопрос, к какой научной дисциплине принадлежит конституционная аксиология. В этом плане Автор считает, что последняя является смешанной юридической научной дисциплиной, так как наука, занимающаяся изучением ценностей – аксиология, которая является одним из разделов философии, в сфере конституционного права занимается исключительно выявлением содержания конституционных ценностей, уточнением возможностей реализации и оценкой их влияния на общественные отношения.

Любая наука ценится в том случае, когда успешно решает поставленные перед ней задачи или значительную их часть. Именно в данном контексте надо рассматривать роль конституционной аксиологии в деле утверждения в стране конституционализма. С данной точки зрения уместно

упомануть утверждение М. Преснякова о том, что ценность – прежде всего идеал, который показывает не «как делать», а «к чему стремиться». Закреплённые в Конституции нормы-принципы и нормы-цели составляют те столпы и ориентиры, которые представляют из себя ценность и, опираясь на них, государство должно определённо проектировать концепцию своего дальнейшего развития. Именно в данном контексте придаётся важность роли конституционной аксиологии. А последняя может достичь своей конечной цели лишь тогда, когда конституционные ценности сознательно воспринимаются и последовательно реализуются как со стороны представителей органов государственной власти, так и со стороны граждан.

Во втором параграфе первой главы под названием «*Аксиологические восприятия Конституции НКР*» Автор отмечает, что восприятие и применение Конституции НКР является стержнем и целью деятельности не только государства, но и в целом граждан, которые в своей повседневной жизнедеятельности должны руководствоваться в вопросах правового характера именно нормами Основного закона. Под восприятием в данном случае необходимо понимать освоение всех содержащихся в Конституции положений, независимо от их уровня.

Далее Автор констатирует, что основы аксиологического восприятия Конституции НКР были заложены ещё накануне принятия Основного закона, когда со стороны Автора было представлено предложение председателю Национального собрания НКР провести перед принятием Конституции НКР разъяснительные, агитационные работы в наиболее густонаселённых пунктах Республики с целью комментирования посредством непосредственных встреч и общения с населением самых важных положений Основного закона страны и пояснений по поднятым вопросам. Главный смысл осуществления подобной программы заключался в том, чтобы Основной закон был принят со стороны граждан осознанно и осмысленно.

Ввиду того, что освоение идеи Конституции и системы её ценностей – процесс, требующий много времени и больших усилий как от отдельно взятой личности, так и общества и государства, Автор предлагает с целью повышения уровня восприятия Конституции Республики Арцах изучать во всех общеобразовательных школах НКР предварительные материалы относительно Конституции НКР в рамках предмета «Обществоведение» или дополнительного урока, а в более старших классах – уже по возможности более углубленно, ибо в указанных учебниках не содержится необходимой информации, как относительно Конституции Республики Армения, так и Конституции Нагорно-Карабахской Республики.

Поскольку каждая страна руководствуется своей доктриной конституционной аксиологии, перед раскрытием ценностной системы Конституции НКР необходимо учесть, что большая часть тех ценностей, которые закреплены в Конституции НКР, укоренилась в стране и народе ещё в годы формирования НКР, в частности, в Декларации «О провозглашении НКР», принятой 2 сентября 1991 года, в Декларации «О государственной независимости НКР», принятой 6 января 1992 года, а также в принятых после этого конституционных законах и, пройдя 15-летний «испытательный срок», они нашли «пристанище» в Конституции НКР, что свидетельствует не только об их необходимости и жизнеспособности, но и о том, что эти ценности не заимствованы из международных документов, конституций других стран, и в течение лет стали неотделимой частью образа жизни людей и праворегулирующим элементом. Примечательно, что нынешняя Республика Арцах сформировалась на части исторической провинции Арцах, где ещё в пятом веке царём Вачаганом Благочестивым (Вачаган Барепашт) была принята Каноническая Конституция, в которой впервые в армянской действительности было использовано понятие «**конституция**», что содействовало формированию

и развитию конституционной культуры как в Арцахе, так и в целом в Армении.

Говоря о формировании и укоренении ценностей, необходимо учесть также то обстоятельство, что невозможно сравнивать правовые ценности, сформировавшиеся на основе нынешних представлений и правового мышления, с ценностями, применявшимися в более ранний период времени, тем более что прошли года и изменились общественные строи. Однако степень реализации современных правовых ценностей на данной территории зависит также от гармонии между их предпосылками и жизнеспособностью в предыдущий период. В данном случае речь о существовании, статусе и роли общества НКАО в составе Азербайджанской ССР, что нельзя сравнить с конституционно-правовыми развитиями и ценностной системой нынешней Нагорно-Карабахской (Арцахской) Республики.

В третьем параграфе первой главы под названием «*Основные характеристики аксиологических особенностей Конституции НКР*» Автор сделал содержательный и структурный аксиологический анализ, выявив особенности Конституции НКР, рассматривая формулировки конституционных ценностей как в текстовом, так и контекстовом планах, а также произвёл сравнительный анализ отдельных зарубежных стран (в том числе непризнанных государств).

Первая из аксиологических особенностей Конституции НКР заключается в том, что ценности, лежащие в основе Конституции, не привнесены извне, а были закреплены в декларациях и законах, принятых в первые же годы формирования государства.

Сравнение конституционно-правового регулирования непризнанных государств позволило выявить ряд аксиологических особенностей Конституции НКР, в частности:

1. Несмотря на непризнанность, Республика Арцах не уступает по своей ценностной системе не только непризнанным, но

и государствам, являющимся полноправным субъектом международного права;

2. НКР на конституционном уровне выразила готовность и в добровольном порядке взяла на себя обязательства по соблюдению международных договоров и норм международного права, несмотря на то, что пока не признана на международном уровне. Примечательно, что ряд важнейших положений международных документов закреплён в законодательстве НКР, а в последний период Республика Арцах присоединилась к ряду международных документов и добровольно признала их юрисдикцию на территории НКР;
3. Республика Арцах – единственная на постсоветском пространстве из непризнанных стран, которая провозгласила себя также как социальное государство, где гарантируется право на жизнь и однозначно отменена смертная казнь;
4. Республика Арцах отличается от других непризнанных республик также тем, что основные права и свободы человека провозглашены в Конституции как высшая ценность (аналогичное положение можно встретить в Конституции Приднестровской Молдавской Республики);
5. Несмотря на то обстоятельство, что из рассматриваемых непризнанных государств первой провозгласила независимость и приняла Конституцию Приднестровская Молдавская Республика, тем не менее аксиологической нагруженностью выделяется Конституция Республики Арцах, а осуществляемые на её основе демократические процессы в стране, в особенности выборы и референдумы различных уровней, удостоиваются высоких оценок международных наблюдателей и считаются образцовыми, то есть конституционные ценности (в данном случае касающиеся избирательных процессов) в НКР носят не декларативный характер, а являются живой реальностью.

Автор видит между фактами провозглашения независимости непризнанных стран и принятия конституций такую связь, которая больше относится к аксиологической стороне Основного закона: конституции большинства упомянутых стран были приняты прямо в первые годы их провозглашения, закрепив такие конституционные ценности, которыми раньше не жили или вообще они не были закреплены в каком-либо правовом документе. А в Республике Арцах подошли к вопросу в ином ракурсе: конституционные ценности вначале были закреплены в декларациях, законах, которые в течение лет доказали свою жизнеспособность и лишь после этого нашли место в Конституции НКР.

Ссылаясь на экспертные мнения, выраженные в различных международных изданиях, телеканалах, и представляя оценки авторитетных организаций Amnesty International и Freedom House относительно Азербайджана, Автор обосновывает, что в этой стране нежизнеспособны не только демократия, но и многие ценности, свойственные цивилизованному миру, причём их попирание носит каждодневный характер.

Этим и другими аргументами обосновывается, что правовая система Республики Арцах выгодно отличается от систем, сформировавшихся в указанных государствах. Как правовые системы непризнанных государств, в некоторых из которых даже не закреплено право на жизнь, так и азербайджанская правовая система не имеет отношения к критериям указанного права и гипотетически к карабахской проблеме: в случае её решения по азербайджанскому варианту становятся неизбежными существенные ограничения по закреплению, защите и гарантиям прав и свобод, а также другие регрессивные процессы.

Обобщая вышеизложенное, Автор однозначно утверждает, что Нагорно-Карабахская Республика не только не может существовать в составе Азербайджана, но и исповедуемые ими

системы ценностей являются антиподами, при подчёркнутом преимуществе Республики Арцах, строящем демократическое и правовое государство.

В монографии представлено Приложение 1, в котором Конституция НКР с одной стороны сравнивается с конституциями непризнанных государств постсоветского пространства, а с другой стороны – приграничных с НКР государств. При выборе критериев для сравнения (которые не исчерпаны и составляют лишь часть общего) за основу были приняты те свойства Конституции, которые представляют собой аксиологический интерес.

Вторая глава, которая называется «**Реализация фундаментальных конституционных ценностей и принципов в конституционных решениях НКР**», состоит из трёх параграфов.

В первом параграфе второй главы под названием «*Верховенство права как конституционная ценность*» Автор считает, что принцип верховенства права можем служить средством решения проблем конституционного и законодательного уровня в том случае, когда будет зафиксирован в Конституции или же будут предполагаемы его содержание и созданы необходимые и достаточные механизмы для обеспечения его действенности.

Далее, анализируя вопрос закреплённости в конституционной и законодательной плоскостях принципа верховенства права, Автор приходит к выводу, что если в плане закрепления принципа верховенства права в Конституции НКР есть хотя бы полурешение, то есть оно предполагаемо из анализа определённых статей, то аналогичное нельзя говорить в плане законодательства, где последовательность этой цепи должна быть обеспечена как конституционное требование.

По мнению Автора, в случае с НКР необходимо не копировать и локализовать упомянутую конституционную ценность, а, опираясь на конституционную культуру государства,

разработать концепцию верховенства права в правовой жизни Республики Арцах, учитывая современные достижения конституционной науки, которые в состоянии содействовать полноценной реализации данной ценности, и на основании этого строить общественную жизнь на основе верховенства права.

С целью формирования однозначного подхода и представления относительно верховенства права и с учётом того, что последнее не закреплено в Основном законе НКР, предлагается текстуально закрепить в Конституции НКР верховенство права, как это отражено в конституциях многих стран, установить механизмы его осуществления, дать его определение в законодательстве и установить как принцип, а со стороны исполнительной власти разработать и принять практическую концепцию по его реализации.

